A II 5333	Ուսումնական Տ. Հնդրկան լեզուներ		
19/VI 70			1306
21/X 70			545

ՀԱՄՀ Ցերեվանի Պետհամալսարան
Մանկավարժական Ինստիտուտ

15
13

3

Մ.Ա. Մ Ա Զ Մ Ա Ն Ց Ա Ն

ՋԵՆԱՐԿ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

Ցերեվանի Մանկավարժական Ինստիտուտ
1939

A II
5333

ԳԼՈՒԽ I

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հոգեբանությունը զբաղվում է մարդու հոգեկան-գիտակցական պրոցեսների ուսումնասիրությամբ։

Սոցիալական մյուս գիտությունների համեմատությամբ հոգեբանության առանձնահատուկն այն է, որ նա աշխատում է պարզել յուրաքանչյուր մարդուն ծանոթ և ամեն մեկին հատուկ այնպիսի յերևույթների արմատները, որոնք են ասենք՝ կամքը, մտածողությունը, զգացմունքները, հիշողությունը, յերևակայությունը և այլն։ Հենց ինքը հոգեբանություն բառն էլ նշանակում է գիտություն հոգու մասին (հունարեն՝ «պսյուխե»— հոգի և «լոգոս»— խոսք, գիտություն)։

Թեև հոգեբանությունը շատ հին գիտություն է և իր սկիզբն է առնում մարդկային պատմության ամենահին շրջաններից, բայց նա միաժամանակ իսկական գիտություն է դառնում և իր զարգացման համար իսկական պայմաններ է ստանում այն ժամանակ միայն, յերբ մարդկության մեծ հանճարներ՝ Մարքսն ու Ենգելսը նախորդ գիտության քննադատական վերամշակման հիման վրա ստեղծում են պրոլետարիատի աշխարհայացքը՝ դիալեկտիկական մատերիալիզմը։

Լենինը հոգեբանության և նրա պատմության մեծ նշանակություն է վերագրում։ Հոգեբանությունը — գրել է նա — մասնավոր զարգացումը, կենդանիների մասին զարգացումն այն իմացական բնագավառների են, որոնցից, ինչպես և մարդկային իմացության զարգացման բոլոր բնագավառներից, գոյանում և մատերիալիստական դիալեկտիկայի իմացաբանությունը։ Լենինը միաժամանակ նշում է հոգեբանության տարրերությունը ի-

մացաբանութիւնից (տրամաբանութիւնից)։ Հոգեբանութիւնն զբաղվում է հոգեկան պրոցեսների և ձևերի նկարագրութեամբ և բացատրութեամբ այնպես, ինչպես նրանք փաստականորեն կատարվում են։ Իմացաբանութիւնը (վորը մատերիալիստական դիալեկտիկայի մեջ նույնանում է տրամաբանության հետ) հետազոտում է ժամանակութեան պատմութեան արդյունքները, բացատրում է, թե ինչն է կազմում մեր իմացութեան աղբյուրն ու բովանդակութիւնը, կարող են արդյոք մեր մատապատկերներն ու հասկացութիւնները արտաքին աշխարհի ճիշտ արտացոլումները լինել։ Արտաքին աշխարհի ճշգրիտ արտացոլման որենքների հարցը դիալեկտիկական մատերիալիզմի իմացաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է։

ՀՈԳՈՒ ԻԴԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Մատերիալիզմի և իդեալիզմի պայքարը, ընդհանրապես վերցրած, շատ հին պատմութեան ունի։ Իսկ այդ հոգեբանութեան ասպարիզում այնքան հին է, վորքան հին է ինքը՝ հոգեբանութիւնը։

Տարբեր դիանականներ, մեթոդոլոգիապես տարբեր կեցվածքներ ունենալով, հոգու հասկացողութեանը աշխատել են բացատրելու և յուրահատուկ մեկնաբանութիւն տալ, բայց այդ բոլոր մեկնաբանութիւններն էլ վերջին հաշվով, հանգել են կամ իդեալիզմին և կամ՝ մատերիալիզմին։

Հոգու սկզբնական հասկացողութիւնն առաջացել է շատ հին ժամանակներում, նախնադարյան հասարակութեան մեջ։ Կյանքի և մահվան առեղծվածը հասկանալի պատճառով զբաղեցրել է նաև նախամարդուն, վորն արտադրական շատ պրիմիտիվ պայմաններում դանվելով, իհարկե, անզոր էր տալու այս հարցի քիչ թե շատ իրականութեան մոտ մեկնաբանումը։ Ենգելսը կլասիկ պարզութեամբ բացատրել է հոգու անմահութեան պատկերացման ծագումը։

«Այն չափազանց հեռավոր ժամանակից սկսեն,—գրում է Ենգելսը,—երբ մարդիկ չունենալով առհասարին վոչ մի հասկացողութեան իրենց մարմնի կազմութեան մասին և չկարողանալով բացատրել երազը, յեկան այն պատկերացմանը, թե նրանց

մասնագոյության ու պղպատղությունների պատճառը վոչ թե իրենց մարմինն է, այլ մարմնից անջատ գոյություն ունեցող հոգին, վորը ճնում է մարմնի մեջ, քանի դեռ մարմինն ապրում է, և թողնում է այն, յերբ նա մեռնում է, այս ժամանակից արդեն նրանք պետք է խորհելին հոգու՝ դեպի արտաքին աշխարհն ունեցած վերաբերմունքի մասին։ Բանի վոր մահն այն է, վոր մարմնից անջատվում և կենդանի ճնացող հոգին, ապա հարկ չկա նրա համար հնարել առանձին մի մահ։ Այսպես դատեց պատկերացումը՝ հոգու անմահության մասին» (Ենգելս, «Լյուդվիգ Ֆեյերբախ», եջ 76, Պետհրատ 1933 թ.)։ Հետևաբար հոգու՝ վորպես ինչ վոր ինքնուրույն և անմահ գոյության՝ մասին պատկերացումը արդյունք և նախապարզունակ սահմանափակ և արդեն մտածողության։

Հոգու իդեալիստական-կրոնական պատկերացումը, վորի հիմքը կազմում էր նախամարդու կողմից հոգեկան կյանքի վոչ դիտական մեկնաբանումը, հետագայում ժառանգվեց իդեալիստական հոգեբանության կողմից և, չնայած տարբեր ծամծմուքներին, համարյա ամբողջովին պահպանվեց ու դարձավ իդեալիզմի հիմնաքարը։

Նույնիսկ իդեալիզմի այնպիսի բարդ ուղղությունները, ինչպիսիք են Պլատոնի ուսմունքը իդեաների մասին կամ Հեգելի՝ բացարձակ իդեայի ուսմունքը՝ իրենց խորհրդավորուսմունքների մեջ, վերջ ի վերջո, կրկնում են նախամարդու պատկերացումները, միայն թե ավելի խառնաշփոթ կերպով, պարուրված փիլիսոփայական պաճուճանքներով։

Իդեալիստական հոգեբանության կվինտեսենցիան, վերջին հաշվով, հանգում է հետևյալին։

Ցուրաքանչյուր մարդ բաղկացած է յերկու հյություններից՝ մարմնից և հոգուց։ Մարմինը ժամանակավոր է, մահկանացու և իր գոյությամբ ամբողջովին կախված է հոգուց։ Հոգին է, վոր մարմնին տալիս է կենսականություն, ուժ, բովանդակություն, գործողություն, շարժում։ Առանց հոգու մարմինը մեռած է, դրա համար էլ՝ մահը հոգու անջատումն է մարմնից։

Ինքը՝ մարմինը հոգու գոյության համար առանձին հյուկան նշանակություն չունի, վորովհետև հոգին ազատ կերպով

կարող է իր ստեղծագործող հատկությունները պահել և առանց մարմնի։ Մարմինը հոգու ժամանակավոր զեփելարանն է, վորին հոգին կարող է լքել յուր ցանկացած դեպքում։

Ինքը՝ հոգին այս աշխարհից չէ, նա անդրաշխարհյան է, հետևաբար մարմնական, ֆիզիկական աշխարհի հատկացողությունների և վոչ մեկը չունի։ Ըստ իգեալիզմի հոգու համար ամենահիմնականը նրա անմահ, մշտնջենական լինելն է, ուրեմն և կյանքի սկզբունքն է։

Իգեալիստները պնդելով հոգու անճանաչելի լինելու մասին, միաժամանակ գտնում են, վոր հոգին ֆիզիկական աշխարհին չի պատկանում, հետևաբար և նրա հյությունը մարդը լրիվ չի կարող իմանալ։ Մարգկային հինգ զգայարանները, վորոնցով նա ճանաչում է իր շրջապատը, բոլորովին կորցնում են իրենց ուժը, յերբ խնդիրը վերաբերում է անդրաշխարհյան հոգուն։

Այդ պատճառով էլ—ասում են իգեալիստները,—թեև հոգին յուր ստեղծագործական կարողությունները առատ կերպով հանդես է բերում ամեն տեղ, բայց իր հյությամբ նա մշտընջենապես անլուծելի մի առեղծված է մարդու համար։

Հոգին անճանաչելի չի, անդիտելի, անուսումնասիրելի, անխմանալի։

Ահա, համառոտ կերպով, այս է հոգու իգեալիստական մեկնաբանությունը։

ՀՈԳՈՒ ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Բայց հոգու իգեալիստական հատկացողությունից, անցյալում բավական տարածված և յեղել և այժմ էլ պաշտպանվում է բուրժուական մի շարք գիտնականների կողմից՝ մարմնի և հոգու փոխհարաբերության դուալիստական մեկնաբանումը։

Դուալիզմը հրաժարվում է գոյի և գիտակցության, ֆիզիկականի և հոգևկանի առաջնության հարցի դրությունից։ Նա գլուխ է հանում և, վոր հենց սկզբից էլ գոյություն են ունեցել իրարից անկախ, տարբեր աշխարհներին պատկանող ու տարբեր որենքներին չենթարկվող սուբստանցներ։ Ըստ դուալիզմի հոգին ու մարմինն իրենց հյությամբ յերկու տարբեր սկիզբներ են։ Դուալիզմի վորոշ ներկայացուցիչներ ընդունում են այս կամ այն

փոխհարաբերությունը, դրական կամ բացասական իմաստով, հոգեկանի և մարմնականի միջև և վոմանք էլ ժխտում են նրանց միջ յեղած ամեն մի կապ կամ փոխհարաբերություն։

Հոգու դուալիստական հասկացողության հիմնական ուղղությունները հետևյալներն են.

Ա) Հոգեֆիզիկական փոխազդեցության ուսմունքը. Այս ուղղության ներկայացուցիչները խոսում են մարդկային ընության յերկակի լինելու մասին։ Սուբյեկտը յերկու տարբեր հյությունների՝ հոգեկանի և մարմնականի բարեկամական աշխատանքի արգասիքն է. հոգեկանը չի կարելի վերածել նյութականի և ընդհակառակը։

Այս տեսության ներկայացուցիչներից մեկը՝ Ֆեխները հետևյալ տարբերությունն է դնում հոգեկանի և մարմնականի միջև։

Հոգեկանն անտարածական է և իրեն վոչ ֆիզիկական յերևույթ ուրիշների կողմից անուսումնասիրելի։ Նա ճանաչվում է միայն հոգեկան ապրումներ ունեցող մարդու կողմից։ Ֆիզիկականը՝ մարմինը դտնվում է ժամանակի և տարածության մեջ. նա ճանաչելի յե մարդու կողմից։

Հոգեֆիզիկական փոխազդեցության դուալիստական ուսմունքի ներկայացուցիչները դտնում են, վոր այդ եյապես տարբեր յերկու յերևույթների միջ ամուր կապ կա և անընդհատ փոխազդեցություն։

Իրենց անկախությունը չխախտելով՝ հոգեկան վիճակն ազդում է մարմնական դրության վրա, իսկ մարմնական պրոցեսները նրան էլ, իրենց հերթին, ազդում են հոգեկանի վրա։ Ցավը մարմինն առողջ է, ապա հոգեկան դրությունն էլ հավասարակշռված է լինում։ Ընդհակառակը վախը, հուզվելը, ուրախությունն իրենց հերթին ազդում են մարմնականի վրա, ուժեղացնելով կամ թուլացնելով որգանիզմի աշխատանքը։ Ցավ, այսպիսով, չնայած մեթոդոլոգիական վոչ ճիշտ յիլակետերին, իդեալիզմի և մատերիալիզմի միջև տատանվող հոգե-ֆիզիկական փոխազդեցության ուսմունքի ներկայացուցիչները մոտենում են մատերիալիզմին։

Բ) Հոգե-ֆիզիկական զուգահեռականություն կամ փենոմենիզմի ուսմունքը. Այս ուսմունքը վերջի վերջո հանգում է իդեալիզմին և տեղեռականությանը։ Ըստ այս տեսության ներկայացուցիչ-

նպատակն ու փիլիսոփայությունը վերջ միայն բոլորովին տարբեր ու իրարից անկախ տերմիններ են, այլև նրանց միջ բացակայում է վերև վերհատվելության թե պրակտիկ և թե բացատրական իմաստով։ Հոգեկանը և փիլիսոփայությունը դարձյանում են զուգահեռ կերպով, ըստ վերում, նրանց արտահայտման ձևերը նախապայմանավորելու համընկնում են միմյանց առանց մեկը մյուսին պայմանավորելու։ Հոգեկան վերև վիճակ ճիշտ կերպով համապատասխանում է մարմնական պրոցեսները և հակառակը, դրա համար էլ պետք է ընդունել ոչ թե հոգեկանի և փիլիսոփայության փոխադարձությունը, այլ նրանց նախապայմանությունը։ Իսկ այդ նախապայմանությունը հենց սկզբից կանխորոշված է նախախնամության կողմից։

Ինչպես լայբնիցն է ասում, հոգին և մարմինը զարգանում են նախատրված լրիվ ժամացույցների նման, որոնք այնպես են ուղղված, որպեսզի միշտ ճիշտ նույն ժամանակը ցույց տան։

Այս տեսության անհեթեթությունը պարզ է։ Դուրս և գալիս, որ մարդկային միտքը, կամքը և այլն ներկայիսորեն հետևում են մարմնականին և մարմնականն էլ՝ հոգեկանին։ Դուրս է գալիս, որ այդ միտքը լինելը թե չլինելը մարդկային վարմունքը պետք է արտահայտվի այնպես, ինչպես արտահայտվում է այժմ։

Վոչ մի կերպ չկարողանալով բացատրել հոգեկան և փիլիսոփայական երևույթների անկապտելիությունը, հոգեֆիզիկան զուգահեռականության տեսությունն առաջված է դիմելու կրոնին, ասածուն և այդ բացատրել ինչ որ նախախնամության կարգադրությամբ։

Իհարկե կրոնն ամենալավ ապաստարանն է հարցի գիտական բացատրությունից խուսափելու համար։ Կրոնն «ինչու»-ներ չի պահանջում, նրա հիմքը կազմում է կույր հավատը «ամենակարող ասածուն» կարգադրությունների նկատմամբ։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Հոգու մասին գիտությունը նույնպես հին պատմություն ունի, սակայն իր հետևողական զարգացումը և ամբողջականությունը նա ստանում է միայն դիալեկտիկական մատերիալիզմի միջոցով։

Դիալեկտիկական մատերիալիզմը շարունակելով ու զարգացնելով փիլիսոփայության մատերիալիստական սկզբունքը, բոլոր երևույթների հիմքը, նրանց սկզբնապատճառը համարում է նյութը, մատերիան։ Սակայն դիալեկտիկական մատերիալիզմը չի նում է մատերիայի անընդհատ զարգացման ու փոփոխման փաստից և հոգու մեջ տեսնում է մատերիայի յերկարատև կերպարանափոխման պրոցեսի բարձր ստիճանի արտահայտություն։ Մատերիայի բարձր տիպի այդ զարգացման — ուղեղի և նրա վերի կոնկրետ մեխանիզմը, վոր կազմում է հոգու ֆիզիոլոգիական հիմքը, կտեսնենք հետևյալ դրույցներում։ Այստեղ ընդգծենք միայն, վոր ընդհանրապես ասած՝ մատերիան օբյեկտիվ իսկականություն է և գոյություն ունի գիտակցությունից անկախ. նա գոյություն ունի ժամանակի և տարածության մեջ և անընդհատ զարգացման պրոցեսում է գտնվում։ «Համմ(բ)ի պատմության համառոտ դասընթաց»-ի IV գլխում հակիրճ և միաժամանակ սպառիչ խոսքերով շարադրված են մատերիայի շարժման ու զարգացման օրենքները, ուրեմն և դիալեկտիկական մատերիալիզմի հիմնական գծերը։ Մատերիան մեր զգայությունների և ճանաչման աղբյուրն է, մի իրրև օբյեկտ և մի իրրև հիմք, վոր-ի հատուկ կազմության հատուկ վորակն և նկարագրությունն այն, ինչ հոգի չեն ասում։ Բոլոր գիտությունները միասին վերցրած իրենց յերկարատև պատմական զարգացման ընթացքում ավելի ու ավելի մանրամասն են մատերիայի տարբեր ձևերի ճանաչմանը, մենք շարունակ ավելի կոնկրետ ու ամբողջական գաղափար ենք կազմում նյութի մասին։

Հետևաբար այն, ինչ վոր կոչվում է հոգի կամ հոգեկան, նյութական աշխարհից անջատ, նրա օրգանիզմներին չհենված յերևույթ չէ։ Ընդհակառակը յերևույթը նրա հետ միասին և հոգեկան յերևույթը նյութական է։ Մենք մտածում ենք ուղեղը, հատկապես նրա մոխրագույն շերտի միջոցով, վոր զգայությունքն և մտածողությունը, իսկ ուղեղային բջիջները, ինչպես և վողջ ներվային համակարգության ու նրա գործունեության սկզբունքները նյութական են, իրենց մեջ բնազանցական վոչինչ չունեն։ Ենգելսն իր «Բնության դիալեկտիկա»-ում տալիս և աշխատանքի պրոցեսում կապկի ուղեղից մարդու ուղեղին անցնելու պատկերը։

Այսպիսով մարքսիզմը փիլիսոփայորեն ապացուցում է հոգեկան երևույթների նյութական լինելը, վոչնչացնում է հոգու առաջնային համարելու իդեալիստական ուսմունքը և հոգեկանի ու նյութականի անջատման, իրար հակադրելու դասալիստական բացատրությունները։ Կա մեկն ու մի աշխարհ, մի սուբստանց, դա նյութն է։ Մատերիայից, նյութականից զատ և անկախ ոևէիշ վոչինչ գոյություն չունի և գոյություն ունենալ չի կարող։

Կանգնել այս միակ ճիշտ փիլիսոփայական տեսակետի վրա, այսինքն հոգեկանը չանջատել նյութականից, չհակադրել նրան, այլ բացատրել նյութականով, չի նշանակում հավասարություն նշան դնել հոգեկանի և նյութականի միջև, չի նշանակում ժխտել հոգեկան երևույթների առանձնահատկությունները, նույնացնել հոգեկանը մարմնականի հետ։ Ճիշտ է, հոգեկանը նյութական է, բայց ունի յուրահատուկ որինաչափություններ, վոր նյութի ամեն տեսակի արտահայտության համար չէ։ Նյութի զարգացման ընթացքում առաջացած վոչ յուրաքանչյուր կերպարանափոխում հոգեկան հատկություններ ունի, նյութի արտահայտման վոչ բոլոր ձևերի մեջ մենք գտնում ենք հոգեկանի առանձնահատկություններ։ Որինակ՝ այդպիսի հատկություններ մենք չենք գտնում անորգանական մատերիայի և նույնիսկ որգանական մատերիայի ամեն մի արտահայտության մեջ։ Հոգեկան առանձնահատկությունն առաջ է եկել շատ ավելի ուշ, նա զարգացման յերկարատև պրոցեսի և վորոշ պայմանների հետևանք է և կազմում է հատկությունը մատերիայի այն կտորի, վոր գլխի ուղեղ է կոչվում։

Մարդու հոգեկան հատկությունները (յերևակայությունը, մտածողությունը և այլն) հատուկ են միայն մատերիայի ամենազարգացած, պատմականորեն ամենակատարելագործված ձևին։ Հոգին բարձր կազմակերպված մատերիայի հատկությունն է և իրրև ամենաբարդ վորակ՝ ունի այնպիսի առանձնահատկություններ, զարգացման ու արտահայտության այնպիսի ձևեր, վորպիսիք մենք մատերիայի այլ արտահայտությունների մեջ չենք տեսնում։

Այստեղից չի կարելի հետևություն անել վոչ հոգեկանի և նյութականի անջատման կամ իրար բացարձակապես հակադրելու և վոչ էլ նրանց նույնացնելու ուղղությամբ. հոգեկանը և մարմ-

նականը հակապիր չէն, վորովհետև հոգևկանը նույնպես նյութական յերևույթ է՝ նրա սկզբնատարածառը մատերիան է, նույնը չէն, վորովհետև հոգևկանը նյութականի ամեն մի ձևվին հատուկ չէ, այլ նրա զարգացման բարձր կազմակերպված վիճակի հատկություններն է։

«Գիտակցությունը և կյանք, պատմությունը և նյութը,—գրում է ընկ. Ստալինը,—միևնույն յերևույթի յերկու տարբեր ձևվիներն են, յերևույթ, վոր կոչվում է, ընդհանրապես ասած, բնություն։ Ուրեմն նրանք չեն էլ բացառում մեկը մյուսին և միևնույն ժամանակ միևնույն յերևույթը չեն ներկայացնում իրենցից»... «Դուրս է գալիս, վոր բուն հոգևոր կողմի զարգացման համար անհրաժեշտ է որպես իմիմ այս կամ այն կառուցվածքը և նրա նյարդային սիստեմի զարգացումը. դուրս է գալիս, վոր հոգևոր կողմի զարգացմանը, գաղափարների զարգացմանը նախորդում և նյութական կողմի զարգացումը, կյանքի զարգացումը» (տես Բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», գլուխ II, «Մատերիալիստական թեորիայի մասին»)։

Այսպիսով, դիալեկտիկական մատերիալիզմը կանգնած է հասկացությունների միասնության տեսակետի վրա։ Ինքը՝ այդ հոգևկան վիճակն էլ անփոփոխ չէ, այլ հասարակական պրակտիկայի, հասարակական նյութական հարաբերությունների զարգացման ու ազդեցության հետևանքով փոփոխվում, իմաստաբանորեն վերածվում, նորանոր հատկություններ է ստանում, նոր վորակ դառնում։ Մարդու հոգևկանի հիմնական հատկանիշն այն է, վոր մարդը պատմականորեն զարգացած իր հոգևկան հատկությունների շնորհիվ, վորը նա ձեռք է բերել աշխատանքի պրոցեսում, կառուցանում է իր ղեկավարող պրակտիկ գործունեության միջոցով ճանաչել օբյեկտիվ իրականությունը, արտացոլել այդ իրականության բազմաթիվ հատկություններն իր ուղեղում և գործադրել այդ գիտելիքներն իրականության վրա աղդելու, բնության և ակտիվ հարմարվելու, իրենից անկախ տեղի ունեցող բնության ուրիենտացիաներն իմանալու և իր ոգուտին ծառայեցնելու համար։ Ըրկեկտիվ իրականությունը շարժվող մատերիայի, նյութական պայմանների բազմակերպ ձևվերն են։ Կյանքում,—ասում է ընկեր Ստալինը,—նախ փոփոխվում են արտա-

քին, նյութական աշխարհի պայմաններըը, ապա՝ նրանց համապատասխան և նրանց հետևանքով նաև՝ հոգեկան-գիտակցական յերևույթները։ Ըստ վորում արտաքին աշխարհը, նյութական պայմանները վոչ միայն բնության ֆիզիկական իրերն են, այլև հասարակական նյութական պայմանները, նյութական հարաբերությունները, վորոնք հիմք, աղբյուր և բովանդակություն են տալիս մարդու հոգեկան գիտակցական, իրենց նյությամբ հասարակական բնույթ ունեցող յերևույթներին*)։

Այսպիսով հոգեկան յերևույթների մատերիալիստական և միաժամանակ դիալեկտիկական բացատրությունն է, վոր հիմք և կազմում գիտական հոգեբանության։ Դիալեկտիկական մատերիալիզմը,—գրում է Լենինը,—բացատրելով «գաղափարների ընթացքի կախումը իրերի ընթացքից, միևնույն ժամանակ, վոր համապատասխանում է գիտական հոգեբանության հետ» (Լենին. Յերկեր, հ. I, եջ 79, 1930 թ.)։ Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը դեն և գցում հոգու՝ վորպես գերզգայական և գերբնական լինքնուրույն ու անփոփոխ արարչի պատկերացումը և զրազվում է հոգեկան կոնկրետ պրոցեսների, կոնկրետ ֆիզիոլոգիական և հասարակական պատմական միջավայրի ու պայմանների աղերսության տակ կատարվող յերևույթների ուսումնասիրությամբ։ Հոգեբանությունը չեր կարող հաստատ գիտություն դառնալ հոգեկան յերևույթների մետաֆիզիկական և իդեալիստական ըմբռնման դեպքում։ Այդ ըմբռնման հակագիտականության մասին Լենինը դեռ 1894 թ. հետևյալն է գրել. «Մետաֆիզիկ հոգեբանը դատում եր այն մասին, թե ինչ է հոգին։ Այստեղ հենց մեթոդն եր անհեթեթ։ Չի կարելի դատել հոգու մասին՝ չբացատրելով մասնավորապես հոգեկան պրոցեսները, այստեղ պրոգրեսը հենց այն պետք է լինի, վոր թողնենք ընդհանուր թեորիաները ու փիլիսոփայական կառուցումները այն մասին, թե ինչ է հոգին, և կարողանանք գիտական հողի վրա գնել այն փաստերի ուսումնասիրությունը, վորոնք բնորոշում են այս կամ այն հոգեկան պրոցեսները» (Լենին, Յերկեր. հ. 1-ին, եջ 84. 1930 թ.)։

Այսպիսով պսիխիկայի (հոգեկան յերևույթների) դիալեկտիկ մատերիալիստական ըմբռնումը միանգամայն հակադիր է մետաֆիզիկո-իդեալիստական հոգեբանության։ Բացատրելով պսիխիկայի նյութական-ֆիզիոլոգիական և հասարակական-պատմա-

*) Տես ԲԵՐԻԱ, «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը»։

կան բովանդակությունը (մատերիալիստական թեորիա), մենք միաժամանակ չենք մոռանում նրանց փոխադարձ կապը, պսիխիկայի վորակական յուրահատկությունը, նրա զարգացման ձևերի տարբերությունը, նրա հակասությունները (դիալեկտիկական մեթոդ)։ Բայց չպետք է ուռճացնել, չափազանցնել բացարձակի հասցնել այդ տարբերությունը (ինչպես անում է իդեալիստը, դուալիստը, մետաֆիզիկը)։ «Իդեալականի տարբերությունը մատերիականից նույնպես անպայման չէ, չափազանց չէ» (Լենին, «Փիլիսոփայական տետրակներ», էջ 113)։ Միաժամանակ հաշվի առնելով պսիխիկայի՝ վորպես մատերիայի հատուկ կազմակերպության (ուղեղի) բարձրագույն պրոդուկտի յուրահատկությունը, մարքսիստական հոգեբանությունն իր այդ կողմով ուղղված է մեխանիստական, պռնիկ մատերիալիզմի դեմ։ Ճեթե մեխանիստական մատերիալիստը ճիշտ է պսիխիկայի բովանդակության հարցում (քանի վոր նա այդ բովանդակությունը արտաքին աշխարհից է բղխեցնում), ապա նա սխալվում է պսիխիկայի զարգացման ձևերի հարցում, քանի վոր նա չի դնում վոչ արտաքին աշխարհի զարգացման և վոչ էլ նրա արտացոլումը հանդիսացող հոգեկան յերևույթների զարգացման ձևերի և սրենքների հարցը, մոռանում է հոգեկան-վիտալիստական յերևույթների հարաբերական ինքնուրույնության։ Պռնիկ մատերիալիստը հաճախ պսիխիկան պարզապես նույնացնում է ֆիզիոլոգիայի հետ։ Նախորդ շարադրանքից հետևում է նաև մի այլ կարևոր սկզբունք, վորով ընդգծվում է մարդու պսիխիկայի պիտակության պայմանավորված լինելը վոչ միայն ֆիզիոլոգիական, այլ և հասարակական-պատմական նյութական հարաբերությունների, մարդու և մարդկության (խմբերի, կուսակցությունների, դասակարգերի, սեռերի) հասարակական-պատմական պրակտիկայով։ Այդ՝ մարդու և նրա գիտակցության կոնկրետ-պատմական ըմբռնումն է, մի ըմբռնում, վորին չեն հասել վոչ միայն իդեալիստները, այլև նախամարքսյան մատերիալիստները, և բնավ չեն հասկացել գռնիկ մատերիալիստները։

Հոգեկան յերևույթների գիալեկտիկ-մատերիալիստական ըմբռնումը մշակվել է Մարքսի և Ենգելսի կողմից, կազմելով արտացոլման մարքսիստական-լենինյան ուսմունքի կարևորագույն մասը, նա իր հետագա զարգացումը և հարստացումն ստացել է

Մարքսի, Ենգելսի հեղափոխական գործի հանճարեղ շարունակողների, մեր դարաշրջանի մեծագույն մարդկանց՝ Լենինի և Ստալինի գործերում։

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀՈԳՈՒ ՀԱՄԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐԻ ՄՈՏ

Անակսիմենը (ծնվել է մոտավորապես 588 թ., մահացել մոտավորապես 524 թվին մեր երայից առաջ) առաջինն է հունական փիլիսոփաներից, ով խոսում է հոգու (պսյուխե) մասին։ Ըստ Անակսիմենի հոգին ոդ է կամ շնչառություն։ Անակսիմենն հոգին տարբերում է մարմնից։ Հոգու գործունեությունն արտահայտվում է շնչառության ֆիզիոլոգիական պրոցեսի մեջ։

Հերակլիտը (541—475 թ. մեր երայից առաջ) հոգևկանի, կենդանականի սկիզբն համարում է կրակը։ Հոգու կյանքն արտահայտվում է այրման, չերմարտադրության և շնչառության ֆիզիոլոգիական աշխատանքով։ Հերակլիտն առաջինն եր, ով ընդգծեց մտածողության և արտաքին զգայնությունների դործունեությունը։ Ըստ Հերակլիտի մտածողությունն ու զգայնությունները ինքնուրույն չեն, այլ պայմանավորված են ֆիզիոլոգիական և ֆիզիկական գործոններով, այսինքն՝ կրակով և այրմամբ։

Դեմոկրիտը (460—350 թ. մեր երայից առաջ) հին աշխարհի խոշորագույն մտածողներից է, ամենաառաջավոր մտածողներից մեկը, նա գտնում է, որ գոյություն ունեցող բոլոր մարմինները կազմված են ատոմներից, այսինքն նյութի ամենամանր, անբաժանելի մասնիկներից։ Ատոմները իրենց փոքրության պատճառով անըմբռնելի են մարդու համար։ Մենք նրանց մասին գաղափար ենք կազմում միայն մտածողության օգնությամբ։ Դեմոկրիտի կարծիքով հոգին և կյանքը անբաժանելի շարժման մեջ գտնվող ատոմների պատահական խառն և միացն է։ Հոգի ունեցող մարմինների շարժման աղբյուրը՝ ինքը հոգին է։ Հոգևկան են և ամեն տեղ գտնվող մարմինները շատ շարժուն են և ամեն տեղ թափանցում են։ Դրա համար էլ, բոլոր մարդկանցից, հոգևկան ատոմներ ունեն կենդանիները և բույսերը։ Դեմոկրիտը նայել է կեր-

պով կարծում է, թե հոգին բաղկացած է կլոր, նուրբ, բարակ և շատ շարժուն (կրակի նման) ատոմներից։ Հոգին մահկանացու չի, մարմնի հետ միասին նա չի մեռնում, ցրվում է։ Դեմոկրիտը մեր ճանաչողության աղբյուրը համարում է բանականությունը և գտնում է, որ մեր զգայարանները չեն տալիս հաստատ գիտություն։

Պլատոնը (427—347 մեր թվից առաջ) հոգու և հոգեկան երևույթների մասին խոսում է բավականին մանրակրկիտ կերպով։ Ըստ Պլատոնի, մարդկային հոգին բաղկացած է երկու մասից։ Առաջին և ամենացածր մասը զուտ կենդանական բնույթի չի և արտահայտվում է նրանով, որ մարմնական պահանջներ ունեցող մարդը այդ պահանջները բավարարելու հետևանքով ստանում է բավականություն։

Ցերկրորդ մասը հակակենդանական է, հակամարմնային, նա ինքնգիտական բանականությունն է, խելացի մասը՝ մտածողությունը։ Մարդկային բանական մասը գերբնական է, ընդհանուր, ոչ անհատական։

Ըստ Պլատոնի հոգու զգայնական մարմնային մասը մեռնում է, կործանվում, հոգու բանական մասն անմահ է, մշտնջենական և անփոփոխ։

Մարդու մեռնելուց հետո նրանից անհատական և ոչ մի հատկություն չի մնում։ Բոլոր անհատական գծերը, յուրաքանչյուր անհատականություն պատահական է, անցողիկ։

✗ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄՏՔԵՐԸ

Արիստոտելն ապրում էր մեր թվականությունից չորս դար առաջ։ Մարքսը և Լենինը մեծ արժեք են տալիս անտիկ աշխարհի գիտական-փիլիսոփայական մտքի զգալիության, հին աշխարհի ենցիկլոպեդիստ Արիստոտելի մտքերին։

—Արիստոտելի խորամտությունն ամենազարմանալի կերպով բաց և անում մտահայեցողության ամենանուրբ պրոբլեմները,—ասում է Մարքսը։

Արիստոտելը փիլիսոփաներից առաջինն էր, որ առանձնացրեց հոգեբանությունն իբրև գիտություն և նույնիսկ հոգեբանական խնդիրների շուրջը հատուկ աշխատասիրություն գրեց

(«Հոգու մասին» խորագրով, թարգմանված և նաև հայերեն, դրաբար լեզվով)։ Բացի դրանից, Արիստոտելը հոգեբանական կարևոր մտքեր ևր արտահայտել իր մյուս աշխատություններում («Մետաֆիզիկա», «Ետիկա», «Կենդանիների մասերի շուրջը» և այլն)։

Արիստոտելը մեծ նշանակություն և տալիս հոգու ունակությունների ուսումնասիրմանը, մարդու հոգեբանությանը։ Իր «Հոգու մասին» գրքում նա առաջնակարգ խնդիր և համարում հոգու հետազոտությունը, վորն ոգնում և, նրա կարծիքով, նաև բնության իմացությանը։

Ընկեր Լենինն իր «Փիլիսոփայական տետրակներ»-ում ընդգծում և, վոր Արիստոտելի յեղակետն ամենուրեք փոստորիկն մատերիալիզմն և, բայց նա տատանվում և մատերիալիզմի և իդեալիզմի միջև, ինչպես և պլատոնիկայի ու մետաֆիզիկայի միջև։

Արիստոտելը բնավ չի կասկածում արտաքին աշխարհի իրական լինելու մասին։ Նյութից, բնությունից, նրա կարծիքով, առաջանում են կոնկրետ իրերն ու առարկաները։ Մատերիան այն հիմնաքարն և, վորից ծագում ու գարգանում են բոլոր իրերը։ Առաջին մատերիան, կամ ընդհանրապես մատերիան պետք և ավելի վաղ լինի, քան ամեն մի գարգացում, ավելի վաղ, քան բոլոր իրերի սկզբնաուսումն և։ Նա պետք և գոյություն ունենա և գոյություն ունի ընդմիշտ։ Մատերիան վոչնչից չի ծագում և անցողիկ չե։ Մատերիան և սկիզբ և և պատճառ։

Նշելով Արիստոտելի մատերիալիստական այս մտքերը, պետք և ընդգծել նաև, ինչպես Լենինն և ասում, վոր «չնայած վոր նա ընդհուպ մոտենում և մատերիալիզմին», շատ բան կա և «մեռած» և իդեալիստական։ Արիստոտելն աշխարհի առաջացման մասին պատճառը միայն նյութը չի համարում։ Հարկավոր և նաև ձևը, առանց վորի կենդանի էյսկների և առարկաների առաջացումն ու գարգացումն անհնար կլինի։ Մատերիան միայն հնարավորություն և, նախապրյալ։ Ստանալով վորևե ձև, նա հնարավորությունից դառնում և իրականություն։ Աշխարհում վոչ մի առանձին իր ու առարկա չեր կարող լինել, եթե չլիներ ձևը։ Ձևի շնորհիվ և, վոր մի առարկա տարբերվում և մյուսից, դառնում և իրական։ Այսպիսով Արիստոտելի համար առաջ-

S333

մանրը (սկզբնատարաճառը) միայն մատերիան չի, այլև ձևը։ Ընդվզուած նա ձևին վերադրում է վճռորոշ նշանակություն։ Ավելին, ըստ Արիստոտելի մասնավոր ձևերի հետ մատերիան միասնություն է կազմում, բայց մասնավոր ձևերի մեջ մարմնա-նում է ընդհանուր ձևի իմաստ, ձևերի ձևը, աշխարհի սկզբնա-պատճառ ուժը — վերջին հաշվով աստված։ Այսպես Արիստոտելը մա-տերիալիզմից դուրս է գալիս և իդեալիզմին — աստվածավորվող չերկու ուղղու-թյունների միջև։

Արիստոտելի մոտ ուժով են նաև դիալեկտիկայի տարրերը։ Ինչպես Հերակլիտն է ասում, Արիստոտելն ամենուրեք հարցը դնում է դիալեկտիկորեն, պատմում է օբյեկտիվ դիալեկտիկայի շուրջը։

Ձևի և նյութի միասնությունից առաջանում է բնության։ Արիս-տոտելի մոտ բնությունն անընդհատ և առաջնահիմք միացումն է չերկու մեծ հիմունքների՝ մատերիայի և ձևի։ Բնության բոլոր իրերը, այսինքն կենդանիները և բույսերը շնչավոր են, ունեն կյանք, այսինքն իրենք իրենց մեջ ունեն շարժման և հանգստի պատճառներ, ունեն ինքնաշարժուժ, բնությունն ընդհանրապես ընդունվում է շարժումով և անցնում է հնարավորություններից դեպի իրականություն։

Հոգու հասկացողությունը Արիստոտելի մոտ. Ըստ Արիստո-տելի յուրաքանչյուր ինքնաշարժման մեջ գտնվող կենդանի ե-յակ տարրերվում է անշունչ տարրականներից նրանով, որ ունի հոգի (պսյուխե)։ Հոգին ֆիզիկական կազմակերպված մարմնի գոյության լուծությունն է։ Իրով գործունեության կյանքն ֆունկ-ցիան կամ ձևն է։ Հոգին մարմնի կենսական կենդանին է։ Մար-մինն այն տարածարար կամ տարբական է, որի մեջ այդ ձևը կենսագործվում է։ Հոգին իրրև ձև անմարմին է, բայց իրրև ակյալ մարմնի ձև նրանից անընդհատ է։ Հոգին առանց մարմնի, մարմնից անկախ, ընդհանրապես գոյություն ունենալ չի կարող։ Հոգին ծագում է մարմնի առաջացման հետ միասին և կործան-վում է, չերբ քայքայվում է մարմինը։ Մարմնի վերչացման հետ միասին վերչանում է և հոգու ֆունկցիան։ «Այսպիսով Արիս-տոտելը մերժում է անհատական հոգու անմահություն» (Մարքս)։ Ամեն տեսակի պրոցեսներ — անվհնդրություն, գաղտնի, հիզությունն և այլն առաջանում են հոգու մեջ մարմնի ազդե-ցության տակ։ Դրանով Արիստոտելն ընդհատ մոտենում է հոգու դիալեկտիկո-մատերիալիստական ընդունմանը։

Արիստոտելը բաժանելով Անակսագորի և Պլատոնի կարծիքը հոգեկան հատկությունների դասում և վոչ միայն մարդու, այլև բույսերի և կենդանիների մեջ։ Նրանց հոգիները միատեսակ են, սակայն նյարդերի հոգիները չեն կարող գոյություն ունենալ առանց բարձր նյարդերի հոգու. բարձր նյարդերն իրենց մեջ ընդգրկում են ցածրերի բոլոր հատկանիշները։ Բույսի, կենդանու և մարդու տարբերության հիմքը կազմում և նրանց պսիխիկայի ծավալը և լայնությունը։ Բուսական հոգին առանձնանում է միայն տարբական ֆունկցիաներով՝ 1) սնվել, 2) աճել, 3) բազմանալ։ Կենդանու հոգու մոտ արդեն նկատվում է արտաքինի և ներքինի տարբերությունը, բայց ըստ նրանց կենդանիները շարժվում են տարածության մեջ։ Բոլոր կենդանիները ունեն զգայություն, նրանցից բարձրները նաև հոգեկան բարձր այլ հատկություններ։

Բացատրելու մարդուն վերաբերող հատկությունը դա տեսական բանականություն է։ Նրան մնացած հոգեկան ֆունկցիաները մեր մարմինն են պատկանում, նրա հետ միասին, սակայն տեսական բանականությունը չի կարող մեր մարմնի հետ ֆունկցիան լինել և նրա կործանման հետ վոչնչանալ։ Նա բացարձակ կերպով անմահ է։ Նա գործ ունի ընդհանուր սկզբունքների ու ձևերի հետ, մտածողության և զգայությունների մեջ ճանաչվող առանձին առարկաներից անկախ։ Տիեզերական բանականությունը գոյություն է ունեցել ավելի կոնկրետ մարդկային հոգի ծնվելուց առաջ և նրա հետ վոչ մի կապ չունի։

Այսպիսով, բացի անմիջական զգայական մտածողությունից, Արիստոտելը մարդու համար հիմնականը համարում է տեսական բանականությունը, ընդունում այն մարդու գոյությունից անկախ։

Մտածողության այդպիսի գերմարդկային վերացական պատկերացումն Արիստոտելի հոգեբանական սխեմայի ամենաթույլ կողմն է։ Արիստոտելը խոսում է վոչ թե կոնկրետ, իրական հատկություններն արտացոլող մտածողության մասին, որը դասակարգային հասարակության մեջ դասակարգային է, այլ

ընդհակառակը, ժխտում և այդ բանը և դրանով իսկ կանգնում է մարդու նյության իդեալիստական մեկնաբանման անտեսնման վրա։

«Ամեն մի դարաշրջանում տիրապետող դասակարգի մըտքերը տիրող մտքերն են... Տիրող մտքերը ոչ այլ ինչ են, քան տիրող նյութական հարաբերությունների իդեալական արտահայտությունը» (Маркс и Энгельс, «Немецкая идеология», стр. 36—37)։

ԼՍՅԲՆԻՑ

Հոգու և մարմնի հակադրությունը, հոգին մարմնից անջատելը և յուրահատուկ համարելը հատկապես ուժեղ կերպով արտահայտվեց ռացիոնալիստական հոգեբանության կողմից։ Ռացիոնալիստական ուղղության խոշորագույն ներկայացուցիչն է գերմանական խոշոր փիլիսոփա-գիտնական Լայբնիցը (1646—1716)։ Հակառակ Արիստոտելի, ովքեր հոգու հիմնական հատկությունը համարելով մտածողությունը կարծում էր, թե հոգու մեջ հատուկ բնական սկզբունքներ կան, որոնք գերբնահատուկան են և դրված հավերժական, գործունյա և գերբնական, աստվածային սկզբնաշարժիչի կողմից՝ Լայբնիցը խոսում է մեկը մյուսից բոլորովին տարբեր, առանձին «անհատ հոգիների» մասին։ Լայբնիցը հոգեկանը համարում է մոնադ (միակը)։ Ցուրաքանչյուր կենդանիը նյակ յուրահատուկ մոնադ է, որքան անհատներ կան, այնքան էլ՝ մոնադներ։ Մոնադը հոգեկան ատոմն է, ամենափոքրը, միակը, որը մասերից բաղկացած չէ։ Մոնադի ամենափոքր հոգեկան ատոմ լինելուց բղխում են նրա հիմնական հատկանիշները։ Նա ձեվ չունի, որովհետև մասերից է կազմվում ձեվը, չունենալով ձեվ, նա տարածության մեջ տեղ չի զբավում, չենթակա չի նյութական աշխարհի օրենքներից և ոչ մեկին, ասենք, օրինակ, ձգողականության օրենքին։ Նա չի մեռնում, չի վոչնչանում։ Մոնադը անմահ է, որովհետև մեռնել նշանակում է տարրալուծվել, քայքայվել, իսկ մոնադը մասեր չունի, վորպեսզի քայքայվի։ Մոնադը անմահ լինելով, միաժամանակ և անսկիզբ է, անպատճառ, նա չի ծնվում և չի վոչնչանում։ Նա ստեղծված և վոչնչանում է միայն բարձրագույն մոնադի՝ ատոմ կողմից։

Ծուրաքանչյուր մարդու հոգին իր առանձնահատուկ գծե-րով ընածին և և միջավայրի ու դաստիարակության չենթակա չէ: Մարդկային հոգեկան հատկություններն ընդմիշտ գոյություն ու-նեն և դրանց փոփոխել վոչ մի կերպ, վոչ մի միջոցով չի կարելի: Ամբողջ ընությունը լցված է հոգիներով: Մարդկային հոգին կենա-րոնական բարձր մոնադն է, կյանքի կենդանության աղբյուրը: Առարկաները և կենդանիների ու մարդկանց մարմինները ար-տաքին ձևն են, յերևույթներ, վորոնց նյությունը հոգին է: Հոգու և մարմնի միջև նկրդաշնակություն կա, վորը կանխա-պես հաստատված է աստծու կողմից: Ծուրաքանչյուր մոնադ խիստ անհատական է և իր անհատականության մեջ բազմազանու-թյուն է ներկայացնում: Մոնադը, հոգին իրեն արտահայտում է մտածողության մեջ, մտածողությունը մոնադի արտահայտման հիմնական պայմանն է:

Այսպիսով, ռացիոնալիստ հոգեբանների մոտ, հոգու հաս-կացողությունը բոլորովին կորչում է նյութական հիմքերից և դառնում է ինքնուրույն, ինքնագործառնա և ընդունում է պեր-բընական, իդեալիստական բնույթ: Մյուս կողմից մարդու հյու-թյունը հասկացվում է աբստրակտ ձևով այնքան, վորքան ռա-ցիոնալիստների մոտ հոգեկան հատկությունները համարվում են մշտնջենական ու անփոփոխ, միջավայրին ու դաստիարա-կության չենթարկվող:

Ընդգծելով մտածողության՝ իբրեվ մարդու հյությունն ար-տահայտող միակ ֆունկցիայի դերը, ընդգծելով մարդու բանա-կանության ամենակարող լինելը, նրանք այդ բանականությու-նը, խելքը համարում են անսկիզբ ու անպատճառ, այն ըղձանգնա-լով հոգու, վորպես ինքնուրույն սուբստանցի հյությունից: Նրանք խելքը կարում են և պրակտիկայից, չհամակնալով, վոր «նույնիսկ մշուշապատ կառուցվածքներն անգամ մարդկանց ուղեղում, նրանք էլ, նրանց նյութական կենսական պրոցեսի անհրաժեշտ սուբլիմատներ (արդյունքներ) են, պրոցես, վորը կարող է փորձով հաստատվել և վորը կապված է նյութական նախադրյալների հետ» (Маркс и Энгельс, «Немецкая идеология», стр. 17):

«Այսպիսով գիտակցությունը հենց ամենասկզբից էլ հասարակական արդյունք է և այդպիսին կլինա այնքան, քանի դեռ մարդիկ ընդհանրապես գոյություն ունեն մարդիկ» (նույն տեղ, էջ 21)։

ԵՄՊԻՐԻՏԱԿԱՆ (ՓՈՐՁԱՌԱԿԱՆ) ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Եմպիրիստական հոգեբանության հիմնադիրն է համարվում անգլիացի Ջոն-Լոկը։ Ինքնուրույն եմպիրիստական հոգեբանության համար առաջին քննության կրող հարցերի քննարկումից հրաժարվելն է փորձի առաջադրումն ու հոգեկան երևույթների ուսումնասիրության ասպարիզում։ Լոկին ընդգծում է, որ նա իր ուսումնասիրությունները սահմանափակում է միայն հոգեկան հատկությունների արտահայտությունների և ոչ թե նրա պատճառների ուսումնասիրությամբ, որոնք մերթ արտահայտվում են, մերթ չեն արտահայտվում։ Հոգեկան արտահայտությունների պատճառների պարզման խնդիրներով նա չի զբաղվում։ Ինչպես Վունդտն է սրամիտ կերպով նկատում, ըստ եմպիրիստների դուրս է գալիս, որ գիտակցությունը նման է մի բեմի, որտեղ խաղացվում են տարբեր պիեսներ, որտեղ հանդես են գալիս ու անհետանում տարբեր յուրահատկություններ, հաճախ առանց հետևողականության։ Այսպիսով հոգեբանը նամանավում է հանդիսատեսի, որը բլոկնոտը ձեռքին միայն արձանագրում է այն, ինչ որ նա տեսնում է։ Պարզ է, որ սահմանափակվելով զուտ փորձով, չաշխատելով պարզել յուրահատկությունների հիմքը կազմող պատճառները, մնալով տեսության լույսից բոլորովին կտրված փորձի սահմաններում, եմպիրիստները պետք է առաջ գնային խարխափելով։

Մարդկային հոգեկան ապրումների բնույթի հարցում եմպիրիստները հակադրվելով ասոցիոնալիստներին, մարդկանց վարք հոգեկան-գիտակցական կյանքը բացատրում են միջավայրի ու դաստիարակության բնույթով։ Մարդը ծնվելիս իրենից «անգրել սախատակ է» ներկայացնում, որի վրա միջավայրն ամեն ինչ կարող է գրել, մարդը մոմի չի նմանվում, որին միջավայրն ինչ ձև ու ֆիգուրա ուզենա կտա։ «Մարդը միջավայրի ու դաստիարակության ծնունդ է»,—ասում են եմպիրիստները։ Այս տեսակետը մատերիալիստական լինելով հանդերձ (քանի որ ռեալ իրականությունն է համարում հոգեկան

կան պրոցեսների ազդյուրն ու բովանդակությունը), չի կարող բացատրել պսիխիկայի զարգացման օրենքները, քանի որ մարդը իր գիտակցությամբ գտնում է մի պատրաստի խաղալիք միջավայրի ձեռքին, և միջավայրից նրա կախվածությունը գտնում է ճակատագրական։ Եմպիրիկ հոգեբանության ներկայացուցիչները չեն հասկանում, որ մարդը անկարող, թույլ, պատրաստի մի էակ չէ, և կղզիացած չէ, այլ հասարակության մեջ ապրող և գործող կոնկրետ մարդ է։ Անմիտ կլինի պատկերացնել մարդուն պրակտիկայից դուրս,—մարդը ծնվում է, ապրում կոնկրետ միջավայրում, նա միջավայրի ծնունդ է, սակայն չպետք է մոռանալ մարդկային հեղափոխական պրակտիկայի դերը՝ աշխարհը փոխելու գործում։

X ԵՐՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Եքսպերիմենտալ հոգեբանության հիմնադիրն ու պլխավոր ներկայացուցիչն է հանդիսանում գերմանական խոշոր հոգեբան Վունդտը (1832—1920 թ.)։ Մինչև 19-րդ դարի վերջերորդ կեսը հոգեբանությունը չեր հանդիսանում ինքնուրույն գիտություն, այլ կազմում եր փիլիսոփայության բաղկացուցիչ մասերից մեկը։ Հոգեբանության մեթոդները զուտ մտահայեցողական բնույթի եյին։ Այդ պատճառով էլ մինչվունդտյան հոգեբանությունը գիտությունը բացատրում եր գիտական փորձը և բավարարվում միայն ինքնադիտողությամբ։

Վունդտի հիմնադրած եքսպերիմենտալ հոգեբանությունը համապատասխան ժամանակ և մատնանշական մեթոդներ։ Դրա փոխարեն Վունդտը աշխատում և ստեղծագործել ու մշակել հոգեբանության նոր մեթոդներ, չկենտրոնվել միայն մտահայեցողական, այլ բնական գիտությունների պրոբլեմներից։ Յեվրոհոգեբանությունը մինչ այդ վերապրական գիտություն եր, ուստի Վունդտը աշխատեց այն դարձնել բացատրական։ Բացատրական գիտությունը չի կարող սահմանափակվել ինքնադիտողությամբ, մարդը, Վունդտի կարծիքով, նկարագրելուց պետք չի գնում, այլ պետք է նրան ավելացնել իրրեվ հիմնական մեթոդ՝ գիտական փորձը, այդ գիտական փորձին հատուկ ամենանորրին դերձքերով կատարվող չափումները։ «Մեր գիտության չկարելին,—գրում է Վունդտը,—նորքին փորձի անատկելը չէ, ընդհակա-

ական, նա դրսից և դալիս, վորպեսզի թափանցի ներս, դրա համար էլ նա դործ և ածում բոլոր բնական պիտույքներին հատուկ՝ հքսպերիմենտալ մեթոդը»: Վունդտն աշխատում է բարդ հոգեբանական պրոցեսները վերլուծել դեպի այնպիսի հոգեբանական փաստեր, վորոնց հնարավոր և ուսումնասիրել ֆիզիոլոգիական մեթոդներով: Այդպիսի հոգեբանական տարրական փաստեր Վունդտը դտնում է զդայնության ֆունկցիայում:

Վունդտն իմարկե ճիշտ և վարվում, յերբ յելնում և վերլուծական մեթոդներից, բայց նա վերլուծման մեջտղով ստացված առանձին փաստերը շատ և ուռեցնում և աշխատում և մասերին տալ ամբողջի հատկություններ: Որինակ՝ այդպիսի բարդ հոգեբանական ֆունկցիաներ, ինչպիսին են մտածողությունը, յերևակայությունը, հիշողությունը և այլն, նա համարում և զդայնությունների մեխանիկական գումար, վոր, իմարկե, հիմնավին սխալ է. այս դեպքում կորչում են հոգեկան ֆունկցիաների առանձնահատկությունները: Այսպիսով Վունդտի շկալան սկզբնական ըդձանում բոլոր . աշխատանքը ստրում հոգեկան յերևույթների հիմքը կազմող նյութական սուբստրատի ուսումնասիրման ստպարիզում:

Հետազոտում, բարժուական դիտության ուժեղ ճղնաժամի հետևանքով, մասերիալիզմի և իդեալիզմի մեջ ստատնվող Վունդտը խիստ ըղջաղարձ կատարեց դեպի իդեալիզմն ու միտներ: Վունդտը վախեցավ մասերիալիզմին մոտենալ այն չափազանցություններից, վոր նա կատարել էր իր յերիտասարդ հասակում: Նա իր «Դասախոսություններ մարդու և կենդանիների հոգու մասին» դրքի յերկրորդ հրատարակության առաջաբանում (առաջին հրատարակությունը լույս էր տեսել 30 տարի առաջ) մասերիալիզմին մոտեցող իր տեսակետները համարում է «յերիտասարդության մեղքեր» և խոստում է այն մասին, վոր ինքը հրաժարվել է յուր նախկին մասերիալիստական սկզբունքներից և գիրքը վերամշակել և այնպես, վոր բնագիտական փորձը վոխարինվի մտածողությամբ:

Կանդնելով դատ մտածողության խնդիրների առաջև վրա, Վունդտը յուր «Հոգե-ֆիզիկական զուգահեռականության տեսություն»-ում բոլորովին անջատում և հոգեկանը

և նյութականը և նրանց մեջ, բայարձակ կերպով, չի գտնում վարևև պատճառակցական կապակցության, դրա փոխարեն Վունդտը խոսում է ինչ որ սինկերգական հոգու կոմիոյ սահմանված հոգևոր և մարմնական էներգիաների ներպաշտակության մասին, այսինքն ընկնում է անթափանցության գիրքը։ Ինչպես իրավացիորեն նշում և նշանավոր մատերալիստ-գիտնական Երնստ Հեկելը (1834—1919 թ.) Վունդտի այս ուժով չրջադարձը դեպի իդեալիզմը բնորոշ և նաև մյուս բուրժուական գիտնականների համար. «Փիլիսոփայական սկզբունքների այս ամբողջական հեղաշրջումը (ընդգծումը Հեկելինն է—Մ. Մ.), որ մենք այսօր հանդիպում ենք Վունդտի մոտ, ինչպես առաջ հայտարերել ենք, Կանտի, Վիրխովի, Դուբուա-Ռեյմոնի, նույնպես և Կարլ Երնստ Բերի և ուրիշների մոտ մեծ հետաքրքրություն և ներկայացնում իրենից» (Հեկել, «Տիեզերական առեղծվածներ», եջ 93)։

Եքսպերիմենտալ հոգեբանության լավագույն ներկայացուցիչներն անդամ, ստիճանաբար հրաժարվելով իրենց նախկին դիտական դրույթներից, ընկնում են իդեալիզմի ճանիճը։ Իմպրեսիոնիզմի դարաշրջանում բուրժուական միտքը վոչ միայն չի պարզանում, այլև ճահճանում և, գտնում և անակնկալի հնարանքներ։ Այս տեսակետից Վունդտի սրինակը խիստ սիմպտոմատիկ է։ Այսպիսով, չնայած այն ծառայությանը, որ Վունդտը վորոշ ժամանակ մատուցեց դիտությանը, նա ստիճանաբար պլորվեց իդեալիզմի դիրքերը։ «Վունդտը կանգնած է խաչաձևված իդեալիստական տեսակետների վրա» (Լենին)։

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Ժամանակակից բուրժուական հոգեբանությունը հայելու նման արտացոլում է այն ճգնաժամի բոլոր գծերը, որը հասավ և իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուական գիտությանը։ Նա վոչ միայն հետ և նահանջում պատմականորեն առաջադիմական այն մտքերից, որոն առաջադրել էին նրա հեղափոխական շրջանի գիտնականները, այլ և գտնում են ամեն տեսակի ռեակցիոն, իդեալիստական, հակագիտական մտքերի մի խառնաշփոթ։ Բուրժուական հոգեբանության համար բնորոշ է ուժեղ շրջադարձը դեպի միջնադարը, դեպի կրոնը։

և նյութականը և նրանց մեջ, բայարձակ կերպով, չի պահում վարևե պատճառակցական կապակցության, որ փոխարեն Վունդտը խոսում է ինչ որ սիմպերական հոգու կողմից սահմանված հոգևոր և մարմնական կենդանությունների նախապատմության մասին, այնինչ ընկնում է անթափանցության պրկում։ Ինչպես երևում է նշում և նշանավոր մասնավորապես-պիտական Երնստ Հեկկելը (1834—1919 թ.) Վունդտի այս ուժեղ շրջադարձը դեպի իդեալիզմը բնորոշ և նման մյուս բուրժուական գիտնականների համար. «Փիլիսոփայական սկզբունքների այս ամբողջական հեղաշրջումը (ընդգծումը Հեկկելինն է—Մ. Մ.), որ մենք այսօր հանդիպում ենք Վունդտի մոտ, ինչպես առաջ հայտարերել ենք, Կանտի, Վիլլմովի, Դեկարտ-Ռեյմոնի, նույնպես և Կարլ Երնստ Բեռի և ուրիշների մոտ մեծ հետաքրքրությունն և ներկայացնում իրենից» (Հեկկել, «Տիեզերական առեղծվածներ», էջ 93)։

Եքսպերիմենտալ հոգեբանության լավագույն ներկայացուցիչներն անգամ, ստիճանաբար հրաժարվելով իրենց նախկին դիտական դրույթներից, ընկնում են իդեալիզմի ճահիճը։ Իմպերիալիզմի դարաշրջանում բուրժուական միտքը վեչ միայն չի զարգանում, այլև ճահճանում և, պառնում է անակցիայի հնոտարանը։ Այս տեսակետից Վունդտի սրինակը խիստ սիմպտոմատիկ է։ Այսպիսով, չնայած այն ծառայությանը, որ Վունդտը վորոշ ժամանակ մատուցեց դիտությանը, նա ստիճանաբար պլորվեց իդեալիզմի դիրքերը։ «Վունդտը կանգնած է խաչաշավիղ իդեալիստական տեսակետների վրա» (Լենին)։

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Ժամանակակից բուրժուական հոգեբանությունը հայելու նման արտացոլում է այն ճգնաժամի բոլոր գծերը, որը հասուկ է իմպերիալիզմի դարաշրջանի բուրժուական գիտությանը։ Նա վեչ միայն հետ է նահանջում պատմականորեն առաջադիմական այն մաքերից, որոն առաջադրել էին նրա հեղափոխական շրջանի գիտնականները, այլ և դառնում են աչեն տեսակե ռեակցիոն, իդեալիստական, հակագիտական մաքերի մի խառնաշավիղ։ Բուրժուական հոգեբանության համար բնորոշ է ուժեղ շրջադարձը դեպի միջնադարը, դեպի կրոնը։

ձակվում են համպիրխատական հոգեբանության և նրա ամենա-
խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Վունդտի վրա, ասելով, որ
համպիրխատական հոգեբանությունն իր արմատներով կրոնական
և, վիտալիստական։ Իրավացի կերպով ընդգծելով ու պարզելով
այն հանգամանքը, որ ժամանակակից համպիրխատական հոգեբա-
նության հիմքը կազմում և «հոգու» քողարկված, հին, կրոնա-
կան հասկացողությունը, բիհեվիորիստները Վունդտին քննա-
դատում են մեխանիստական դիրքերից, իրենց հերթին կատա-
րելով մի շարք իդեալիստական, ապնոստիկական բնույթի սխըզ-
բունքային սխալներ։

Հոգու կրոնական հասկացողության դեմ պայքար հայտա-
բարելով, բիհեվիորիստներն առհասարակ դեն են նետում հոգու
հասկացողությունը և մարդուն ուսումնասիրում են այն մեթոդ-
ներով, ինչ մեթոդներով որ ուսումնասիրում են կենդանիներին։

«Ձեվ քանի որ մարդուն օրյեկտիվորեն ուսումնասիրելիս
բիհեվիորիստը չի պիտում որևե այնպիսի մի բան, որին նա
կարողանար անվանել գիտակցություն, զգացմունք, զղայնու-
թյուն, կերեվակայություն, կամք, նա այլևս չի կարող համա-
ձայնվել, որ այդ տերմիններով արտահայտում են իսկական
հոգեկան կերեվույթներ» (Ուատսոն)։ Այսպիսով բիհեվիորիստը
դրժի մի շարժումով դեն և ձգում աշխատանքի միջոցով ձեռք
բերած և աշխատանքի հիմք կազմող մատերիալին հատուկ հատ-
կությունները, նա բոլորովին զանհիմնում և մարդու հոգեբանու-
թյունը, ժխտելով նրա պատմական զարգացման վոլջ ճանապարհը,
մարդու ակտիվ կերը բնության իրեն ենթարկելու գործում։
Դիմադրության ամենահիշատ ճանապարհը գնացող բիհեվիորիս-
տին միանում և մի քայլ—հավասարության նշան դնելու մարդու և
կենդանու միջև։ Բիհեվիորիստը կատարում է այդ քայլը և կեզրա-
կացնում. «մարդու վարքի վրա կատարվող դիտողությունները
կարելի չի պատկերացնել սոմատոլների և ռեակցիաների ձևով»
(Ուատսոն)։ Ըստ Ուատսոնի՝ բիհեվիորիստը մարդու պրիմիտիվ-
յին մոտենալիս պետք է զրաղվի սոմատոլների և ռեակցիա-
ների ուսումնասիրությամբ, այսինքն զարգի, թե ինչպիսի
ներքին մարմնական օրգանական պրոցեսների շնորհիվ և, որ
մարդը կարողանում է համապատասխան վերաբերմունք ունե-

նալ արտաքին աշխարհից յեկած գրգիռների։ Կամ բիհեվիորիզմի՝ մարդը ծնվելիս իր հետ բերում է անհնարին քանակությամբ ամենատարբեր համոզիռնալ ընութքի ինստինկտիվ ռեակցիաներ, որոնք մարդու զարգացման ընթացքում բարդանալով կորցնում են իրենց ինքնուրույնությունը և հետզհետե վեր ածվում սովորությունների, այսինքն ներվային համակարգության գործունեության շնորհիվ ստացված պայմանական ռեֆլեքսների։

Ուրեմն մարդու վարքի հիմքը կազմում են վոչ թե գիտակից ու սոցիալական միջավայրով պայմանավորվող գործողությունները, այլ մեխանիկորեն գործող բիոլոգիական օրենքները։ Բիհեվիորիստները վերջ ի վերջո հանգում են մարդու ուսումնասիրման ֆիլիստրական ճանապարհին, գտնելով, վոր յեթե փիլիսոփան ուսումնասիրում է մարմնի առանձին ֆունկցիաները, ապա հոգեբանության պետք է զբաղվի այդ ֆունկցիաների մեխանության ուսումնասիրությամբ։

Բիհեվիորիստները չեն ստանձնափակվում միայն հոգեբանության շրջանակներով։ Նրանք աշխատում են բիհեվիորիզմի մեթոդը մտցնել նաև սոցիոլոգիայի և փիլիսոփայության մեջ։ Բիհեվիորիզմը բավականին ախիլիական և պարզ պատկերացնելու համար բերժուական հոգեբանության ճղնաժամի հետքերը, թեկուզ և նրա մեջ ամենատաղանդավորը համարվող ուղղության որինակով։ Շահագործման ու մարդի խեղճության պատճառով բիհեվիորիստները վոչ միայն չեն կարողանում ճշտորեն բացատրել իրենց կատարած բավականին հարուստ փորձերի արդյունքները, այլև փաստորեն կալ են դնում իրենց փիլիսոփայական ադքատիկ մտքին և փաստերը կամայականորեն բացատրելով ընկնում են իդեալիզմի և մեխանիզմի գիրկը։ Փոխանակ ներվային համակարգության գործունեության ուսումնասիրելու, վորպես հիմք հոգեկան յերեվույթների մատերիալիստական բացատրության համար, նրանք իրենց մեջ կուռած են թարթափող բիհեվիորիստները մարդու հետքերը տալիս են մեխանիստական, պասսիվիստական բացատրության։

Ուսումնասիրելով մարդուն գործունեության կոնկրետ վիճակը ունեցող մի մեքենա։ Բիհեվիորիզմը մարդուն դիտում է պիտակության, ակտիվության, գործունեության և նրան մեքե-

նայի մի կցորդ։ Դա ի հարկե հասկանալի չի, թե ինչու։ Կապիտալիստական հասարակարգում աշխատավոր մարդը հարկավոր և պետք միայն իրրև մեքենայի լրացուցիչ մի մաս, կամ իրրև թնդանոթային մխոց։ Մարդու ամառոտակի բնույթն և հարկավոր կապիտալիստին և ոչ նրա անհատականությունը։

Միայն մեր յերկրում, վորտեղ մարդը համարվում և ամենաթանկագին կապիտալը, ամեն ջանք գործադրված են բոլոր պայմանները մարդկային անհատական ուժերի և տաղանդի զարգացման համար, միայն մեր յերկրում է, վոր պատմության մեջ առաջին անգամ «մարդը հպարտ և հնչում» (Գորկի)։

ՊԱՎԼՈՎԱՆԱԼԻԶԻ ՈՒՄՈՒՆՔ

Պավլովանալիզը ժամանակակից բուրժուական հոգեբանության ուսմունքն է։ Ֆրեյդին (1856—1939), վորը համարվում և պավլովանալիզի հիմնադիրը, վորոշ առումով իրավամբ բուրժուական հոգեբանության Դոստոյևսկին են կոչում։ Ֆրեյդի աշխատությունները սկզբում մանրազնին բնույթ յեին կրում և նպատակ ունեյին յուրահատուկ հոգեբանական մեթոդներով ուսումնասիրելու և բուժելու պետության համար մինչև այժմ չպարզված մի շարք հոգևոր հիվանդություններ։ Իրրև մասնագիտական բուժիչ տեսություն, Ֆրեյդիզմն անշուշտ մի քայլ առաջ եր բուրժուական հոգեբուժության համար։ Ֆրեյդը վորոշ նշանակություն ունեցող դիտողություններ և արել նաև յերեխաների սեռական դաստիարակության ուղղությամբ։

Բայց բնորոշը Ֆրեյդիզմի համար այս չե։ Բնորոշն այն է, վոր հոգեբուժության ասպարիզում իր հանած յեղրակացությունները Ֆրեյդը վոչ միայն տարածում և հոգեկան հիվանդների, այլ և բոլորովին առողջ մարդկանց վրա։ Ֆրեյդիզմի մեթոդոլոգիական յելակետը տասնյորներն հետևյալն է.—հիվանդ և առողջ մարդկանց միջև սկզբունքային տարբերություն չկա։ Պրոֆ. Աստվածատուրովը ճիշտ և բնորոշում Ֆրեյդիզմի էությունը։ Ֆրեյդը,—ասում է Աստվածատուրովը,—ընդհանրացնում և մի քանի անբախտ մարդկանց վիճակը կազմող յեզակի հոգեախտաբանական դեպքերը։ Այդ հակագիտական ընդհանրացման

չափը Ֆրեյդի մոտ այնքան մեծ է, որ ընդգրկում է ոչ միայն առողջ մարդկանց, այլ և սոցիալական բարդ խանգարումները։

Ֆրեյդի կարծիքով մարդկային հոգեկան կյանքի հիմքը կազմում են բնազդները։ Մարդը բնազդներն աշխատում է կատարել այնպիսի գործողություններ, որոնք անձնական տեսակետից խիստ դրական են, ինչպես և խուսափում է անդրադրական եղելություններից։ Բնազդային այդ դրդումները չեն կարող հիմնական տիպի չեն—ինքնապաշտպանության և սեռական բնույթի։

Մարդն ապրելով սոցիալական միջավայրում՝ ստիպված է սահմանափակել իր պահանջները և նույնիսկ կարիք չունի դեպքում բոլորովին զրկվել այդ պահանջների բավարարումից։ Վարպետի ապրի, երբեմն հանցագործ չդերկայվի, մարդը հատկապես պետք է ճնշի իր բնական սեռական պահանջները կամ կարգավորի նրանց։ Հասարակական կյանքն իր տրադիցիաներով, արգելքներով, բարոյական նորմաներով խիստ կոպիտ ուսումնասիրություն է ներկայացնում և հակադրվում է միայն հաճույքի զգացմունքով ղեկավարվող անզուսպ սեռական բնազդին։

Ցնդ անա զարգանում է հոգեկան հատուկ ապարատը՝ գիտակցությունը։ Այդ ապարատը անգիտականության պահանջներն և արտահայտում, կանոնած և իրականության պաշտպանության դերբերի վրա։ Ցնդեն գիտակցությունը չսահմանը մարդկանց հաշվի առնել անգիտականությունը, այլ մարդկային տեսակը կվոչնչանար։ Այսպիսով, ըստ Ֆրեյդի, յուրաքանչյուր մարդ կիրկվության և ներկայացնում իրենից, որի մեջ շարունակ անդի է ունենում խիստ պայքար բնական-սեռական պահանջների՝ հաճույքի ձգտման և այդ ձգտումը ճնշող ապարատի՝ սենզոր գիտակցության միջև։ Այդ պայքարը գնում է ոչ միայն սեռականապես հասուն մարդկանց պսիխիկայում, այլ և կրնեխանների ու ծնրերի մեջ։ Ֆրեյդը գտնում է, որ փառորեն այդ պայքարն է, որ բնորոշում է տվյալ մարդուն։ Հաճախ սեռական զգայմունքները չկարողանալով անմիջական բավարարություն ստանալ, փոխարկվում են այլ ուղղության։ Ֆրեյդը վիետության, անխնիկան, սպորտը և այլն համարում է ոչ այլ ինչ, քան սեռական ենեգրիայի փոխանցում։ Հաճախ և սեռականի և

դիտակցության մեջ տարբեր պայքարը նայն անհատի մեջ այնքան ուժեղ և լինում, որ մարդը կորցնում է իր հավատարկշռությունը՝ պատնում և ջղային, հիստերիկ։ Այդ պայքարի մեջ վերջ ի վերջո հաղթանակը պատկանում է բնազդին սեռական-նին։ Ցավ ասա բոլոր վճռական մոմենտներում մարդու մեջ հաղթանակում է,—ասում է Ֆրեյդը,—բնազդայինը, պատմայինը։ Բոլոր վճռական կարևոր դեպքերում դիտակցությունը հետ է նահանջում, նա իր դիրքերը զիջում է, որի հետևանքով մարդը դառնում է գազան և գերի չի գնում արդեն վոչնչով չսահմանափակվող իր անասնական կրքերին։

Ահա այս է ֆրեյդիզմի խիստ համառոտակի էությունը։

Մենք մի քիչ մանրամասն կանդ առանք ֆրեյդիզմի վրա, որովհետև ֆրեյդիզմը խիստ բնորոշիչ է, ոչ միայն բուրժուական հոգեբանության, այլ և բուրժուական կուլտուրայի համար։ Այսպիսով ֆրեյդիզմի հասկանալական կողմը հետևյալն է։ Մարդն իր հիմնական հատկություններով շատ հեռու չի գնացել իր մամոնտ նախնիներից—գազաններից։ Մարդու էությունը բիոլոգիական է և ամբողջապես պայմանավորված այդ բիոլոգիական աշխարհի օրենքներով։ Մարդուն հատուկ գիտակցությունն անգամ գազանային է և ենթակա պատասխանական բնույթի բնազդին է ծառայում։

Ֆրեյդը չի կարողանում վեր բարձրանալ մանր բուրժուական ռեակցիոն աշխարհայեցողությունից։ Նա փոխանակ բուրժուական հասարակարգի գազանային օրենքներով ու եղերական դաստիարակությամբ բացատրելու վորոշ մարդկանց բնավորության անասնական գծերը, բիոլոգիացնում է այն, ընդհանրացնում։ Ֆրեյդը չի ուզում հասկանալ, վոր մարդու էությունը առանձին անհատների բիոլոգիական կառուցվածքով չէ, վոր պետք է բացատրել։

Ջրնդունելով մարդու էության սոցիալական ու ակտիվ բնույթը, չընդունելով մարդու գիտակցության պատմական լինելն ու նրա կարևոր դերը հոգախոսական պրակտիկայի գործում, կանգնած լինելով հակապատմական տեսակետի վրա՝ հասկանալի չէ, վոր Ֆրեյդը չեր կարող տալ վորևիցե գիտական հիմք՝ առողջ մարդկանց պսիխիկայի օրինաչափությունների բացատրման մասին։ Ընդհակառակը՝ Ֆրեյդիզմը լայն տեղ և թողնում իդեալիզմի և մեխանիցիզմի համար։

Սարուխանյան հոգեբանության ներկայացուցիչները, իրրեւ պսիխիկայի հիմնական սկզբունք առաջադրում են ըմբռնման և վերարտադրման ամբողջականությունը, ժխտելով պսիխիկայի մասերի առանձնահատկությունների նշանակությունը։

«Կան բարդ կառուցվածքներ, որոնց մոտ ամբողջի հատկությունները չի կարելի բացատրել մասերի հատկություններով և նրանց միացումներով, ընդհակառակը, այն, ինչ վոր կատարվում է մասերի մոտ, պայմանավորված է ամբողջի կառուցվածքի ներքին օրինաչափությամբ։ Սարուխանյան հոգեբանությունը հենց դա է, վոչ ավելի, և վոչ պակաս»,—ասում է բուրժուական հոգեբանության այդ ուղղության ներկայացուցիչներից մեկը՝ Վերդգեյմերը։ Սարուխանյան հոգեբանության ներկայացուցիչները խիստ կերպով քննադատում են համպերտոնական հոգեբանության այն հիմնական դրույթը, վոր, իբր թե, պսիխիկան կազմված է միմյանց հետ օրգանական կապ չունեցող մասերի մեխանիկական դումարից։

Ինչպես հայտնի է, Վունդտը հոգեկան բարդ յերեվույթները վեր էր ածում մասերի, պնդելով, վոր պայմանների դումարը տալիս է ըմբռնումներ, պարզ ըմբռնումներից ստացվում են ընդհանուր պատկերացումներ և այլն։

Ըստ սարուխանյան հոգեբանության՝ մենք վոչ թե ըմբռնում ենք առանձին տարրեր, մասեր, այլ յերեվույթների ամբողջականությունը։ Մեր ըմբռնման անմիջական դանվող մասերը կորցնում են իրենց ինքնուրույնությունը և հանդես են գալիս միայն իբրև ամբողջի հիմնական մասերը, վորոնք հայելու նման արտացոլում են ամբողջ կառուցվածքի բոլոր հատկությունները, այլ և ունենց ունեն վերականգնելու ամբողջական սիտուացիան։

«Ընդհանուրը,—ասում է Կոֆկան,—մասերի վերածվելու փոխարեն իրականում վորոշում է, թե ինչպիսին պետք է լինեն այդ մասերը»։

Սարուխանյան հոգեբանության արժանիքն այն է, վոր նա մի շարք նուրբ և սրամիտ փորձերով, վորոնք անդուրեկան վորոշ հետաքրքրություն են ներկայացնում, վերլուծական ճանապարհով այն կարծիքը, ըստ վորի, իբրև թե, հոգեկան կյանքը մեխանի-

կական գործարն և դանազան երևնևնաար զգայութիւններին։ Առաջնորդվելով յերևույթների բացատրման վոչ ճիշտ, ռեակցիոն, իդեալիստական մեթոդներով, նրանք չկարողացան այդ փորձերի դիտական բացատրությունը տալ։ Ըմբռնման սարքական կառուցվածքային բնույթը, սարքական հոգեբանների կողմից բացատրվում է բիոլոգիական ըմբռնող ապարատի՝ պրեֆրկայի առանձնահատկություններով։ Նրանք պնդում են, վոր ըմբռնումների ամբողջական բնույթն առաջնայինն և, հատուկ և կենդանիներին, և՝ նախամարդկանց։ Այսպիսով, յեթե յես ըմբռնում եմ այս կամ այն կերպ, վոչ թե այն պատճառով, վոր իմ ուղեղում արտացոլվող օբյեկտիվ իրականությունն և այդպես, այլ և վորովհետև իմ ըմբռնող ապարատն այդպիսի կառուցվածք ունի։

Սա սուբյեկտիվ իդեալիզմ է։

Մարքս-Լենինյան արտացոլման թեորիան էլ հենց այն է, վոր մենք պրակտիկայի պրոցեսում ճանաչում ենք իրերն այնպես, ինչպես վոր կան, այսինքն նրանց բաղադրիչով, փոխադարձորեն միմյանց պայմանավորող կապակցություններով։

Բոլորովին սխալ, մեխանիստական և լուծվում բիհեվիորիզմի կողմից նաև ամբողջի և մասի փոխհարաբերության խնդիրը։ Իհարկե, ճիշտ է այն, վոր յերբեք չի կարելի մասերի առանձնահատկություններից բացատրել ամբողջը։ Պարզ է, վոր ամբողջն ունի բարդ կառուցվածք, ունի յուրահատուկ վորակ, վորը մենք մասի մեջ գտնել չենք կարող։ Միևժամանակ բոլորովին ճիշտ չի լինի նաև մասը պրկել իր առանձնահատկություններից, ձուլել և չնդգրկնել ամբողջի մեջ։ Ամբողջի և մասի փոխհարաբերության հարցը հանճարեղ կերպով պարզաբանում է ընկեր Լենինը։

«...առանձինը գոյություն չունի այլ կերպ, քան այն կապերի միջոցով, վորը տանում է նրան դեպի ընդհանուրը։ Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով։ Ամեն մի առանձին (այսպես թե այնպես) ընդհանուր է։ Ամեն մի ընդհանուրն առանձին (մասնիկը կամ կողմը, կամ էությունն) է։ Ամեն մի ընդհանուր միայն մոտավորապես է ընդգրկում բոլոր առանձին առարկաները։ Ամեն մի առանձին լրիվ չի մտնում ընդհանուրի մեջ և այլն և այլն» (Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ», եջ 421)։ Այսպիսով, սարքական հոգեբա-

նութեան մէջ մենք հայելու նման տեսնում ենք բուրժուական հոգեբանութեան ճգաժամի բոլոր կողմերը։ Բուրժուական գիտնականը, վորը կատարում է մի շարք աշժեքավոր փորձեր փիլիսոփայութեան մաքի աղքատութեան պատճառով, վոչ միայն չի կարողանում այդ փորձերի ճիշտ բացատրութիւնը տալ, այլ և բացարձակորեն ընկնում է իդեալիզմի և մեխանիցիզմի ճահիճը։ Ներկայութիւնների ուսումնասիրման միակ ճիշտ մեթոդը և թեորիան պլեխանովական մատերիալիզմն է, վորը հնարավորութիւն է տալիս բնութեան, մտածողութեան, ինչպես և պսիխիկայի արենքները գիտականորեն ու խորը բացատրելու։

ՄԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական գիտնականների տեսակցութեան, հակագիտական մաքերը աշխատում էին իրենց տեսութեան ու պրակտիկայի մէջ անցկացնել, մեր յերկրում, հատկապես պղրոլետական տանգում տաքուկ տեղ պրաված կեղծ գիտութեան, այսպես կոչված մանկաբանութեան ներկայացուցիչները։ Նրանք յերեխային նայում էին իբրև բիոլոգիական և վոչ սոցիալական էակի և մերթում էին աշխատում էին «բացատրել» բիոլոգիական և սոցիալական անփոփոխ պայմաններով։ Ըստ այդ մանկաբանների՝ յերեխաների բախտը ճակատագրորեն կախված է ինչ վոր սահմանած ժառանգական և սոցիալական անփոփոխ գործոններից։ Այս տեսակցութիւնը միտքը տարածելով դպրոցական տեսարեկ, մանկաբանները խանգարում էին ուսուցչին կատարելու իր վրա դրված պարտականութիւնները, այսինքն պատասխանատու լինելու մանուկ սերնդի ուսուցման ու դաստիարակման գործի համար։ Յեթե յերեխան իր առաջադիմութեան մէջ կաղում է, կամ յերեխան չարաճճի յե, ապա, մանկաբանի կարծիքով, դրա պատճառը ժառանգական այն վատ գծերն են, վոր յերեխան, իբր թե, ստացել է իր նախնիներից, իբր թեկուզ և հեռավոր, ազգականներից վորևե մեկից։ Բուրժուական գիտնականների տեսութեան համաձայն մանկաբանները ծածկելով, իսկ իրականում վոչ մի պատասխան չտալով ժառանգականութեան արենքներից, այդ մանկաբանները և՛ պրակտիկայում, և՛ տեսութեան մէջ անցել էին կապիտալի «պսիխոլոգիական» հակալինինյան, բուրժուա-

ական տեսությունը։ Նրանք խանգարում էին ուսուցչության համապատասխան մտքերի ձևավորվելու, այսպես կոչված հատուկ գրականության, կերպարվեստի ոլորտում պայքարելու գործում աշակերտներին իսկական սնունդ տալու, կերպարվեստի ու թատրոնի թիվը մինիմումի հասցնելու համար։

Ձևերի հետամնացության պատճառները «պարզելու» համար՝ մանկաբանները դիմում էին ուսումնասիրման այսպես կոչված «տեստերի» մեթոդին։ Տեստերի մեթոդը բուրժուական գիտնականները Բինեի և ուրիշների առաջ է։ Իրենց դասակարգի պատվերը կատարելով, այդ մարդիկ փորձում են, ցույց տալու համար, որ իբր թե աշխատավորության կերեխաներն իրենց ընդունակությունների մեջ ցածր են կանգնած կապիտալիստների կերեխաներից։ Բինեն և ուրիշները դիմել են ժամանակակից բուրժուական գիտնականներից շատերին հատուկ մտքերին՝ կեղծելին։ Նրանք դիտավորյալ կերպով կերեխաներին տրվելիք այնպիսի հարցաշարեր են կազմել, որ նրանց կարողանար պատասխանել միայն բուրժուական միջավայրում մեծացած կերեխան, նրանք դիտավորյալ կերպով ընտրել են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են բուրժուական ընտանիքին և որոնց պատասխանը բոլորովին այլ պայմաններում մեծացած աշխատավորի կերեխան չի կարող տալ և կհամարվի «հետամնաց»։

Ահա թե ինչպիսի «մեթոդներով», այդ կեղծ գիտության մանկաբանության ներկայացուցիչները, հետամնաց էին հանում մեր առողջ, ընդունակ, աշխույժ խորհրդային մանուկներին և նրանց ճակատին կպցնելով «հավերժյան հետամնացի» յուրահատուկ պիտակ՝ ուղարկում էին «հատուկ», «հետամնացների» համար կազմակերպված դպրոցները, որտեղ ուսուցման ու դաստիարակման գործը խայտառակ հիմունքների վրա էր դրված։

Սողոսկելով պատասխանատու պաշտոններում, «տեսաբանի» հավակնություն ունենալով, այդ կեղծ գիտության ներկայացուցիչները աղտոտել էին և այլ գիտություններ՝ մանկավարժությունն ու հոգեբանությունը, անցկացնելով այնտեղ բուրժուական ռեակցիոն բնույթի բազմաթիվ մտքեր ու դրույթներ։

Հարկավոր եղավ բոլշևիկյան կենտկոմի և անձամբ ընկ

Սաալինի իմաստուն միջամտությունը, վորպեսզի մանկաբանության վրդովվեր մեր դպրոցներից, վորպեսզի ստեղծվեին բոլոր հնարավորություններն ուսուցչական աշխատանքի բարձրացման, մանկավարժության ու հոգեբանության այդ մանկաբանական ազատից մաքրելու ու դպրոցի պահանջներին ընդհատակ մատեցնելու համար։

Հարցեր կրկնության համար

1. Վիրն և հոգեբանության առարկան։
2. Ի՞նչ է ասում ընկ. Լենինը հոգեբանության նշանակության և դերի մասին։
3. Ինչպես և առաջացել հոգու նախնական հասկացողությունը։
4. Տվեք հոգու իդեալիստական մեկնաբանումը։
5. Տվեք հոգու դուալիստական մեկնաբանումը։
6. Դուալիզմի ինչպիսի ուղղություններ գիտեք։ Բնորոշեցեք նրանցից ամեն մեկը։
7. Բացատրեցեք դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքը՝ մատերիայի և նրա շարժման մասին։
8. Տվեք հոգու մատերիալիստական մեկնաբանումը։
9. Վորոնք են մարդկային հոգու հիմնական հատկանիշները։
10. Ի՞նչ են ասել հոգու մասին հին հունական փիլիսոփաները։
11. Վորոնք են Արիստոտելի հոգեբանական մտքերը։
12. Բնորոշեցեք ասոցիոնալիստական հոգեբանությունը։
13. Վիրն և հոգեբանության ենթիրխատական ուղղությունը։
14. Համեմատեցեք ասոցիոնալիստական և ենթիրխատական ուղղություններն իրար հետ և ասեք նրանց գնահատականը։
15. Ի՞նչ պայմաններում առաջացավ էքսպերիմենտալ հոգեբանությունը։
16. Ի՞նչ խնդիրներ դրեց իր առջև և ինչպես լուծեց այդ խնդիրները Վունդտը։
17. Բիհեվիորիստներն ինչպես են ուսումնասիրում մարդու վարքը։
18. Գիտակցականն ու անգիտակցականը մարդու մոտ՝ ըստ Ֆրեյդի։
19. Մանկաբանական աղավաղումների եությունը և խորհրդային հոգեբանությունը։

1. Маркс и Энгельс—«Немецкая идеология», стр. 10—11, 16—17, 20—21:
2. Ենգելս—«Լյուդվիկ Ֆեյերբախ», եջ՝ 76—78, Պետհրատ 1933 թ.
3. Ленин—«Философские тетради», стр. 77—90, 311—337.
4. Լենին—«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ», եջ՝ 143—15 և 414—424:
5. Բերիա—«Անդրիվկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը», եջ՝ 100—102:
6. «Համ կ(բ)կ պատմության համառոտ դասընթաց», IV գլուխ
7. «Психология», под ред. Корнилова, Теплова и Шпрա
8. Рубинштейн—«Основы психологии».
9. Կորնիլով—«Ձևաբանական հոգեբանության»:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ա. Մեթոդ և մեթոդոլոգիա.—*Մեթոդոլոգիան ուսմունք է նյութ* բոլոր *գիտահետազոտությունների համար ընդհանուր սկզբունքների մասին, սկզբունքներ, որոնք վերաբերում են և բնության, հասարակության, և մարդկային մտածողության: Մեթոդոլոգիա մեկնում է ժամանակի յուրաքանչյուրի ճանաչման որոշ կեղծանակ*

Առանց մեթոդոլոգիական յուրացման ոչ մի իսկական գիտական ուսումնասիրություն կատարել չի կարելի: Փիլիսոփայական սկզբունքների ինչպիսին լինելը, հենց սոցիոլոգիական կոնկրետ աշխատանքի ուղղությունը որոշում են: Մեթոդոլոգիայից հրաժարվելը և տարբեր այլ չափ գիտահետազոտական, միայն փոքրիկ շրջանակներում մնալը, նույնիսկ անկախ գիտական կոնկրետ նյութի ուղղակի դեպի էմպիրիզմ, կեղծ ոչ-մարքսիստական տեսությունների: Այդ թե ինչու Ենգելսը շեշտում է, որ վերլուծությունը վրնժհնդիր և լինում իրեն արհամարհողներին:

Միակ գիտական մեթոդոլոգիան, որը ճշգրիտ կերպով արտացոլում է իրականությունը, որը լուսաբանում և յուրաքանչյուր գիտական ճանապարհը, դիալեկտիկական մատերիալիզմն է: Առանց դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդոլոգիական ամենաբարձր և կատարյալ որևէ իսկական գիտական աշխատանքը ճանաչողության ինչպիսի ընդարձակումն էլ որը լի

Բայց քանի որ բնագիտության արտահայտությունները բազմաթիվ են, քանի որ բնագիտության զարգացման ամեն մի ձեվ ունի իր առանձնահատկությունները, ապա ճշգրիտ, իրական ուսումնասիրությունը չի կարող սահմանափակվել միայն նյութի բոլոր ձեվերին հատուկ ընդհանուր օրենքները նշելով, նա պետք է սերտի և ամեն մի առանձնահատկությունները, կոնկրետացնելով մեթոդի ընդհանուր սկզբունքները։

Տարբեր գիտություններ զարգ ունեն նյութի զարգացման տարբեր ձեվերի հետ։ Որինակ՝ ֆիզիկայի ուսումնասիրած երևույթները խիստ տարբերվում են կենդանաբանության օրյեկտներից։ Իսկ տարբեր յերևույթները պահանջում են մոտեցման տարբեր յեղանակներ։ Այդ պատճառով էլ յուրաքանչյուր գիտություն ունի իր ուսումնասիրման առանձնահատուկ պրոբլեմները։

Հոգեբանությունը ևս, իբրև գիտություն, ունի իր ուսումնասիրման հատուկ պրոբլեմները, ինչ օրյեկտ, այնինքն հոգեկան պրոցեսների ուսումնասիրման սպեցիֆիկ ձեվերը։ Յուրաքանչյուր հոգեբանական ուղղություն, յելնելով իդեալիստական, դուալիստական կամ մատերիալիստական նախադրյալներից, դիալեկտիկական կամ մետաֆիզիկական մեթոդոլոգիայից կիրառել և ուսումնասիրման իրեն հատուկ յեղանակներ կամ մեթոդներ։

Խոսելով հոգեբանության մեթոդների մասին, պետք է ասել, որ հոգեբանական ուսումնասիրությունը զարգ ունի բնագիտության ամենաթարգ ու աքանչելի մի կառուցվածքի՝ մարդու հետ։ Յուրաքանչյուր անհատի կյանքը պայմանավորող կոնկրետ պրոցեսները շատ են և հաճախ անհնարին է պահել այդ պրոցեսների միասնությունը, որը բնորոշում է ամբողջ մարդկային կյանքի հոգեկան ֆունկցիաների ինչ լինելը։ Հետևաբար և այդ բարդ մարդ կյանքի հոգեկան ֆունկցիաների ուսումնասիրությունը մեզանից պահանջում է ուսումնասիրման վոչ թե մի յեղանակ, այլ բազմակողմանի կոնկրետ ուսումնասիրություններ։ Ահա թե ինչու հոգեբանության մեթոդներն առանձին-առանձին վերցրած լիովին չեն կարող բավարարել մեզ մարդկային հոգեկան գործունեության օրենքները ուսումնասիրելու համար։ Մենք պետք է օգտագործենք մեր ձեռքի տակ գտնված բոլոր մեթոդները

ըը. մեթոդների միասնության ոչնութեամբ և, վոր վորոշ չափով
կուսումնասիրենք մարդուն։

Միաժամանակ պետք է ընդգծել, վոր միայն հոգեբանության մեթոդներով մարդու ուսումնասիրությունը լիովին սպառել չենք կարող։ Հոգեբանության մեթոդներով մենք ուսումնասիրում ենք մարդկային միայն վորոշ հատկանիշները և այդ լրացնում մյուս գիտությունների տվյալներով։

Ինքնադիտողության մեթոդը. Հոգեբանության ամենահին մեթոդներից և և հանդիսանում և սուբյեկտիվ հոգեբանության առանցքաքարը։ Այս մեթոդի կողմնակիցները կարծում են այդ դրույթից, վոր, իբր թե, ամենակարող գիտության առաջին հերթին միայն մարդկային հոգու գործերը։ Նրանք գտնում են, վոր ուրիշների հոգեկան կյանքը մեր կողմից ուսումնասիրելի չէ։ Ուրիշների անհատ ունի անձնական խոհեր, իղձեր, ձգտումներ, ապրումներ, վոր միայն նրա անհատականության ամենակարևոր բաղկացուցիչ մասն են կազմում։ Ուրիշներն այդ մասին չգիտեն և չեն էլ կարող իմանալ։ Ուրիշների անհատ մյուսի համար անդուրեկի մի առեղծված է։ Այդպես պատճառը, վոր մի մարդ մյուսին լիովին ուսումնասիրել չի կարող, ուսում և հոգեկան ապրումները կարելի չի կարելի ուսումնասիրել մյուս գիտություններից հատուկ օբյեկտիվ մեթոդներով։ Հետևաբար, վորպես հոգեկան երևույթների ուսումնասիրման միակ մեթոդը համարում և միայն հոգեբանության հատուկ մեթոդը՝ ինքնադիտողությունը։

Այսպիսով սուբյեկտիվ հոգեբանությունը կտրելով վերոհիշյալ դրույթներից, պնդնականին առաջադրում և հրամայական ուրիշների ապրումների ուսումնասիրությունից, դիմել ինքնադիտողության, այսինքն ուսումնասիրել իր իսկ ապրումները՝ արտահայտությունները։

Որպեսզի՝ ինքնադիտողության մեթոդով առաջնորդվի գիտնականը, ցանկանալով ուսումնասիրել մտածողության պրոցեսը, իրրև ուսումնասիրության օբյեկտ ընտրում և իրեն, այսինքն դիտում և մտածողության ծագումն ու զարգացումը, նրա վերլուծին լինելն իր վրա։

Ինքնադիտողության մեթոդի Աբելլևսյան դարշապար ուրիշների հոգեկան ապրումների անուսումնասիրելի լինելու հետ դրույթն և։ Մենք գիտենք, վոր մարդը ծնունդ և հ

սարակական հարաբերությունների, նրա բոլոր ուժերն ու կարողությունները զարգանում, վորոշվում, արտահայտվում են մարդկային հասարակության մեջ։ Մարդը ճանաչվում է իր աշխատանքով։ Նրա հոգևկան կյանքի հարստությունը վոչ միայն աշխատանքի հետևանք է, այլև մարմնավորվում է աշխատանքի մեջ, հետևաբար և՝ աշխատանքը՝ տվյալ մարդու դործունեության, և՝ այդ գործունեության հանրորդում լինելն այն միակ չափանիշն է, վորով առաջնորդվում ենք այս կամ այն մարդու հոգևկան ապրումներն ուսումնասիրելիս։ «Արդյունաբերության պատմությունը և նրանով առեղծվող առարկայական կեցությունը,—գրում է Մարքսը,—մարդկային ևյական ուժերի բաց արված գիրքն է, մեր առաջ զգայնապես կանգնած մարդկային հոգեբանության։ Հոգեբանությունը, վորի համար այս գիրքը, այսինքն պատմության զգայապես իրական, մատչելի մասը փակ է, չի կարող լինել իրապես բովանդակալից և իրական գիտություն» (Маркс и Энгельс, Соч. т. III, стр. 628—629)։

Այսպիսով, ինքնագիտակցության միջոցով առաջնորդվող սուբյեկտիվ հոգեբանության հիմնական գրույթը՝ մարդու կյանքն ուսումնասիրելու մասին՝ հակագիտական է, վորովհետև մարդուն դիտում է մեկուսացած, հասարակական հարաբերություններից ու մարդկային գործունեությունից դուրս, իսկ հոգեկան ապրումներն էլ համարում է ընդմիշտ գոյություն ունեցող, անփոփոխ, քարացած մի բան։ Բացի այդ, ինքնագիտակցությամբ մենք չենք կարող առանալ մեկընդմիշտ, առանց որի ճշտման չենթակա միանգամայն փաստեր, առանց վորի վորևե գիտական չկարակացություն, ընդհանուր որենքների հայտնաբերում հնարավոր չի։

Ինքնագիտակցությամբ գրաղվողի համար խիստ աբնեռատական և նույնիսկ ծիծաղելի գրություն է առեղծվում։ Պատճառն այն է, վոր հանդիսանալով ժամանակի՝ փորձարկու, և՝ փորձի արդիկա, միշտ հնարավոր չի գերկատվել։ Որինակ, չես կարող դայրացած ժամանակի՝ ապրել բնական դայրացման պրոցես, և՝ միաժամանակի իրենով գիտական գիտել թե այդ դայրույթն իմ մեջ ինչ որինաչափություններով է կատարվում—դա միչևնույնն է,— ասում է գիտնականներից մեկը,—աշխատել պատուհանից գիտել քո իսկ քայլելը պատուհանի առիվ։

Այսպիսով, պարզ է, որ ինքնադիտողականության մեթոդը չի բերում դիտա-հետազոտական մեթոդ լինել չի կարող։ Ամենաշատը, որ նա կարող է տալ, դա նկարագրական որոշ նյութերի և դիտողությունների կուտակումն է։

Օբյեկտիվ դիտողականության մեթոդ. Այս մեթոդն համպերիկ հոգեբանության հետևորդների մեթոդներից են համպերիկ հոգեբանության ներկայացուցիչները, գիտակցական պրոցեսների ուսումնասիրելի համարելով, աշխատում են իրենց հետազոտությունները առհասարակ մարդկային վարքի առանձին արտահայտություններով։ Հոգեկան յուրահատկություններն արտահայտվում են մարդկային կյանքի գործնական բնագավառներում. այս բանը հնարավորություն է տալիս դիտողականին բուհերում ձեռին դիտել մարդկային տարբությունները նրանց գործունեության տարբեր ոլորտներում և հավաքել փաստեր՝ համապատասխան յուրահատկությունների հանդուրժելու համար։

Այսպիսով օբյեկտիվ դիտողականության մեթոդով աշխատվող գիտնականն ինքը ոչ մի փորձ չի կատարում, ոչ մի արհեստական լաբորատոր պայմաններ չի ստեղծում, այլ ամբողջ կյանքը համարելով իր լաբորատորիան, դիտում է, ուսումնասիրում այն, ինչպես կա։

Թեև իրավ հոգեկան յուրահատկությունների անճանաչելի լինելու տեսությունը, մենք գտնում ենք, որ հոգեկան կյանքի հատկությունն արտահայտում է մարդկային տարբեր կյանքի տարբեր ոլորտներում և, հետևաբար, կարելի չէ ուսումնասիրել։ Այդ պատճառով էլ հոգեկան կյանքի կոնկրետ արտահայտությունները շատ բան կտան ուշիմ գիտնականին՝ այդ հատկությունների հատկությունների մեջ ներթափանցելու համար։

Ցեթե դրան ավելացնենք այն, որ Լենոն, Փաստո, Հայնափիր ապարատները և այլն հնարավորություն են տալիս լաբորատորիայում ձևական դիտողությունները որոշ տարրությունների ֆիքսացիայի ճանապարհով, այս մեթոդի խոշոր նշանակությունը մեզ համար պարզ կլինի։ Որինակ, ասենք, թե չի ուզում իմ ուսումնասիրել ուրախության դգացմունքը։ Դրա համար չես դիտում եմ բազմաթիվ մարդկանց բերկրանքի պահին, իմարկեն, այդ բանը նրանց զգալ չտալով, վորով և հանգում եմ

վորոշ յուրահատկություններ։ Այդպիսի աշխատանքը հետազոտողից պահանջում է նախապատրաստական աշխատանք, ուսումնասիրության համապատասխան պլան, ինչպես և անհրաժեշտ ունակություններ՝ այդ դիտողությունները կատարելու համար։

Բայց պետք է շեշտել, վոր օբյեկտիվ դիտողականության մեթոդը չի կարելի ուսումնասիրման սպառիչ միջոց համարել։ Նա ունի հետևյալ թերությունները.

1. Միշտ չէ, վոր հոգեկան ներքին ապրումներն անմիջապես արտահայտություն են գտնում այդ ապրումներն ունեցող մարդկանց մոտ։ Մենք պիտենք, վոր դոյություն ունի ինքնաուիրապետություն՝ իր զգացմունքների վրա իշխելը, վորը մարդկային լավ ընավորության ամենահիմնական գծերից մեկն է համարվում։ Միայն յերեխաներն են, վոր չունենալով ուժեղ ինքնաուիրապետում, ամեն քայլափոխում արտահայտում են իրենց շարունակ փոփոխվող զգացմունքները, այնպես վոր պետք է խիստ վերապահությամբ մոտենանք՝ արտաքինը ներքինի հայելին է ասացվածքին։

2. Դիտողություններ կատարելիս դիտնականը կարող է սուբյեկտիվ մոտեցում ունենալ դիտվող յերևույթներին։ Որինակ, յեթե յես մեծ հաճույք եմ զգում, յերբ ավտոն սլանում է մեծ արագությամբ, ապա հետազոտության ուսումնասիրության ընթացքում իմ այդ հաճույքը ակամայից կարող եմ տարածել և շոֆերի վրա։

3. Մյուսնույն հոգեկան յերևույթը տարբեր մարդկանց մոտ տարբեր կերպ է արտահայտվում, քանի վոր յուրաքանչյուրն ունի իր անհատականությունը։ Այստեղից էլ պարզ է, վոր օբյեկտիվ դիտողականության մեթոդով հնարավոր չէ հավաքել միայն նույն յերևույթի միօրինակ բազմաթիվ փաստեր, առանց վորի դժվար է ճշգրիտ գիտական յեզրակացությունների հանգել։

4. Կան բազմաթիվ յերևույթներ (սերը, զզվանքը և այլն), վորոնք դժվար են դիտվում և ուրիշների ինտիմ ապրումները լինելով, անհարմար և նույնիսկ աննպաստ են ուսումնասիրել։

Ահա թե ինչու, չնայած վորոշ արժեքավոր կողմերին, հնարավոր չէ մարդուն ուսումնասիրելիս առաջնորդվել միայն օբյեկտիվ դիտողականության մեթոդով։

Նբսպերիմենտալ մեթոդ. Եքսպերիմենտալ մեթոդն առաջացել է 19-րդ դարի երկրորդ կեսերին Վերեի, Ֆեխների, Վունդտի, Հելմհոլցի, Մյունստենբերգի և ուրիշների կողմից։ Ռուսաստանում եքսպերիմենտալ մեթոդի նշանավոր ներկայացուցիչներն են յեղել Զելպանովը, Լազարսկին, Նեչաևը և ուրիշները։ Եքսպերիմենտալ մեթոդն առաջացել է պիտությունների ու տեխնիկայի զարգացման աղերացության տակ և մեծ հեղաշրջում է մտցրել հոգեբանության ասպարիզում։

Ձեթե ինքնադիտողության և օբյեկտիվ դիտողության մեթոդների կողմնակիցներն աշխատում էին հոգեկան յերեվույթներն ուսումնասիրել այնպես, ինչպես կատարվում են նրանք, ապա եքսպերիմենտալ մեթոդն առաջադրում է գիտական փորձի լենդիլը։ Կատարել եքսպերիմենտ՝ նշանակում է սոսկական ուսումնասիրողի դերում չլինել, այլ առաջացնել այն յերեվույթները, վորոնց ուսումնասիրմանն ի դիմել հետազոտողը։ Եքսպերիմենտալ մեթոդը վոչ միայն հնարավորություն է տալիս եքսպերիմենտատորին առաջացնել ցանկացած յերեվույթը և ուսումնասիրել հաճախակի կրկնելով նույն հոգեկան ֆինոմենը, այլև սահմանում է պայմաններ ամեն-մի երևույթին ու կատարելագործված դործիքներով ստուգելու և լայնացնելու համար անձնական դիտողություններ։

Հոգեբանության մեջ եքսպերիմենտը լինում է յերկու տեսակի՝ սուբյեկտիվ կամ ներքին, օբյեկտիվ կամ արտաքին։

Սուբյեկտիվ եքսպերիմենտի հիմնական միջոցը յերեվակայությունն է։ Ծանկանալով մեր յերեվակայության ազնությամբ ուսումնասիրել այս կամ այն ապրումը (ասենք Աբսոն Դիմաքսյանի ապրումները), մենք աշխատում ենք մեզ զգեցնել Աբսոն Դիմաքսյան, ունենալ նմանորինակ ապրումներ և ուսումնասիրել Հնտաքրքիր և խորհրդային թատրոնի հանճար Ստանիսլավսկու սուբյեկտիվ եքսպերիմենտը։ Ստանիսլավսկին դերասանին դերի եյությունը հասկացնելու համար մոդելան «յեթե յես այսինչի տեղը լինեյի» բառերով սկսում է նրան մոտացնել իր սեփական յեսը և վորոշ ժամանակ տեղափոխվել ուրիշի հոգու մեջ, նրա ապրումները համարել իրենը և հանել համապատասխան յեզրակացություններ։

Սուբյեկտիվ եքսպերիմենտի ճշդրիտ ու ստուգված ձեվը մշակել և դերմանական հոգեբան Եբինգհաուզը, վորը հիշողության և հատկապես մոռացման որենքները ուսումնասիրելու համար մեծ հաջողությամբ և ոգտվել սուբյեկտիվ եքսպերիմենտից։

Սուբյեկտիվ եքսպերիմենտը նույնպես թեորի մեթոդ է։ Ինչ խոսք, վոր ինչքան էլ մարդն ուզենա, չերբեք ճիշտ և լրիվ չափով չի կարող ունենալ ուրիշների՝ վոչ իրեն հատուկ ապրումները, էլ չենք խոսում նրա արհեստական լինելու գիտակցության մասին։

Ոբյեկտիվ եքսպերիմենտը դործ ունի ուրիշների հետ։ Ծանկանալով ուսումնասիրել հոգեկան վորևե չերեվույթ, լաբորատոր պայմաններում, պսիխո-ֆիզիկական և ֆիզիոլոգիական ամենակատարելագործված գործիքների միջոցով այդ չերեվույթն ուրիշների մոտ առաջացնելով և ուսումնասիրվում։

Եքսպերիմենտալ մեթոդը հնարավորություն է տալիս, համապատասխան պայմաններ ստեղծելով, հնարավոր չափով վերացնել կողմնակի գրգիռների ազդեցությունը, կենտրոնանալով հիմնական գրգռիչի վրա։

Չնայած եքսպերիմենտալ մեթոդի անպայման արժանիքներին, նա ևս չի կարելի համարել ունիվերսալ և սպառիչ։ Եքսպերիմենտալ մեթոդի ամենաթույլ կողմն այն է, վոր նա մեկուսացնում է մարդուն, նկրվակում լաբորատորիայում և արհեստական պայմաններում աշխատում ուսումնասիրել այն, ինչ վոր պետք է արտահայտվի իրականում, հասարակական հարաբերությունների մեջ։

Մյուս վոչ պակաս թույլ կողմն էլ այն է, վոր լաբորատոր ուսումնասիրությունների ժամանակ հոգեկան առանձին ֆունկցիանները կտրատվում են միմյանցից, ուսումնասիրվում են մեկը մյուսից անկախ, հաշվի չառնելով, վոր այդ տվյալ ուսումնասիրվող ֆունկցիան գործում է մյուսների հետ համաչափ և պայմանավորված հոգեկան այլ ֆունկցիաների միասնական աշխատանքով։

Վերջապես, եքսպերիմենտալ մեթոդը չի կարող հաշվի առնել մարդու հետաքրքրությունների շրջանակները, նրա պատրաստվածությունը, վարժությունը, փորձառությունը, ներկա հոգեկան վիճակը և այլն։

Ներքաղաքական զարգացումները մշակվում են՝ ուշադրությամբ վիճակագրական մեթոդի շրջանակում, հատկապես խոշոր չափով առաջնորդվելով վարկային ապահովության հայեցակարգով։ Ինչ խոսք, վոր խիստ դժվար է թվերի լեզվով արտահայտել մարդկային հոգևոր բարդ ապրումները, եվ չենք խոսում այն մասին, վոր «մինչև» մարդ գոյություն չունի, այլ յուրաքանչյուր մարդ իրենից ներկայացնում է կոնկրետ անհատականության և հենց այդ կոնկրետ անհատների ուսումնասիրությունն է, վոր կորչում է ընդհանուր թվերի տակ։

Կլասիկների ոգուց գործածելը. Ընկեր Սահյանը գրողներին հաճախ մարդկային հոգու ինժիներներ համեմատելիս կլասիկները, ունենալով կյանքը վերակրելու ամենաուժեղ կարողությունը, իրենց բազմաթիվ վեպերում և չափածո գրվածքներում տվել են մարդկային հույզերի, ապրումների, հարաբերությունների այնպիսի մի վիթխարի, հարուստ, հաճախ ապտիչ ու տիպիկական նկարագրություններ, վորոնց կողքից և վոչ մի հոգևոր հետազոտող սառնասիրտ անցնել չի կարող։ Համաշխարհային կլասիկների արժեքն այն է, վոր նրանք մարդկային բազմաթիվ ու բազմաոճական ապրումներ չեն տվել միայն փաստացած, նկարագրական ձևով, այլ գործողության, դինամիկայի մեջ, իրենց ծագման, զարգացման պրոցեսում։

Վերցնենք վորևիցե մեր գրագողությունը, մինչև կարելի է ավելի ապտիչ տալ, քան տալիս է Վիկտոր Հյուգոն յուր «Փարիզի աստվածամոր տաճարը» վեպում, կամ մեծության ապրումների հոյակապ նկարագիրը՝ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպում և Ռոլանի «Ժան Քրիստոֆ»-ում։ Հրաշալի է յուր տրված խորամանկ, յերկերեսանի, հարմարվող Թշնամին, իժի նման խորամանկ Դոստոյևսկին տիպը Գորկու մոտ և այլն։

Մի խոսքով Դանթեն, Բոկաչիոն, Սերվանտեսն ու Շեքսպիրը, Շիլլերը, Գյոթեն, Լևասինգը, Բայրոնը, Պուշկինը, Զոլյան, Բայլզակը, Դոստոյևսկին, Տուրգենևը, Ձևխովը, Մոպասանը, Շիրվանզադեն և այլ ռեալիստ մեծ գրողները կարողացել են ընդգրկել մարդուն, տալ իրենց դարաշրջանի մարդկային կենդանի ապրումները։ Նրանց աշխատությունների ուսումնասիրությունը յուրաքանչյուր հոգեբանի առաջ շրջափակ ձևով բաց և անում մարդկային ներքինն իր ամբողջ գունեղությամբ

Մենք մեծ չափով ոգտվում ենք նաև խոշոր քննադատների հոդվածներից։ Բոցաշունչ Բելինսկուց, հանճարեղ Դոբրոլյուբովից, փաստերի յերկաթյա լոգիկայով պինված Պիսարեվից, Չերնիշևսկուց, Նալբանդյանից և այլն։

Մարդկային հոգու իսկական լաբորատորիա յեն հանդիսանում մեծ մարդկանց մեմուարները։ Բավական է հիշել Ռուսսոյի «Խոստովանանքը», Հերցենի բյուրեղի պես հստակ ու բազմափայլ «Անցքեր և խոհերը», Տոլստոյի «Մանկությունը և պատանեկությունը», Գորկու հաչակավոր ինքնակենսագրական աշխատությունների սերիան և այլն, և այլն։

Հոգեբանությունն ոգտվում է նաև այն մոնոգրաֆիկ աշխատություններից, վոր ավել են մի շարք տաղանդավոր անձնավորություններ, գիտական կամ վիպական ձևով, մեծ մարդկանց կյանքը մանրակրկիտ կերպով ուսումնասիրելով։

Հոգեբանության այլ մեթոդները. Հոգեբանությունն ոգտվում է և այլ մեթոդներից։

Բավականին արժեքավոր է զրույցի և հարց ու փորձի մեթոդը։ Հոգեկան վորևե ապրումի կյանքը պարզելու համար, առաջուց մշակված վորոշ հարցերով դիմում ենք նախորոք նշված մարդկանց։

Որինակ, ոգաչուի հոգեբանական վերլուծությանը չափազանց շատ և ոգնում փորձված ոգաչուներին դիմելը, խնդրելով պատասխանել անձնական զրույցի կամ դրավոր կերպով մեր կողմից նախորոք մշակված հարցերին։

Ցնորք զրույցը կամ հարց ու փորձը կատարվում է անձամբ և զրույցի ընթացքում նորանոր հարցեր են ծագում, վորը փոխում է նախորոք կազմած մեր հարցացուցակը, այսինքն զրույցն ավելի բազմակողմանի ուսումնասիրման այսպես կոչված կլինիկական մեթոդի հետ։ Կլինիկական մեթոդը շատ է տարածված Ամերիկայում, Շվեյցարիայում և այլն։ Շվեյցարիացի հայտնի հոգեբան Պիաժեն յերեխաների մտածողության որենքներն ուսումնասիրելիս հաճախ չափով ոգտվից կլինիկական մեթոդով։

Ախտահանչային մեթոդի կիրառությունը հնարավոր է. գիտնականն աշխատանքը պարզել այս կամ այն ըրոֆեսիայից պա-

հանդիսացող անհրաժեշտ հոգևոր հատկությունները (ուշադրություն, տեսակը, ռեակցիոների արագությունը և այլն), ինքը սովորում և այդ պրոցեսների անձամբ աշխատելով, աշխատանքից հետո կազմում է յուր այդ որևէ տարրերների արձանագրությունը և այդպիսի բազմաթիվ արձանագրություններից հանում եզրակացություններ։

Պետք է ասել, որ այս մեթոդը, չնայած իր արժեքավոր կողմերին, քիչ է կիրառելի, որովհետև հետազոտողից պահանջում է խիստ մեծ աշխատանք և հնարավորություններ։ Բացի դրանից, բարդ պրոցեսները (վիրահատի, դերասանի, նկարչի և այլն) աշխատանքային մեթոդով հնարավոր չէ ուսումնասիրել։

Հոգեբանության գրական ճշմարտությունը

Մեծ է և ակնբախ հոգեբանության տեսական ու գրական նշանակությունը մարդկային կյանքում։ Փիլիսոփայության ամենահիմնական հարցերից մեկը՝ իմացաբանության խնդիրները՝ անկարելի էր սպառիչ կերպով լուծել առանց այն տարաբաների (զգայնություն, ըմբռնում, ուշադրություն, մտածողություն և այլն) ուսումնասիրման, որոնց միջոցով մարդը փոխհարաբերության մեջ է մտնում բնության և հասարակության հետ։ Դրա համար էլ հոգեբանությունը նույնիսկ յերկար ժամանակ համարվել է փիլիսոփայության մի մասը։ Հին բոլոր խոշորագույն փիլիսոփաները (Արիստոտել, Դեկարտ, Լոկկ, Հեյգենից, Հելվեցիուս, Դիդրո, Հոլբախ, Կանտ, Յում, Հեգել, Ֆոյերբախ, Չերնիշևսկի և այլն) ամենայն մանրակրկիտությամբ ըզբաղվել են հոգեկանի հարցերով։

Այս տեսակետում հսկայական ժառանգություն են թողել մեզ մարքսիզմի կլասիկները։ Մարքսի, Ենգելսի, Լենինի դիալեկտիկո-մատերիալիստական ուսմունքը հոգեկան-գիտակցական պրոցեսների և ֆունկցիաների մասին (յերևակայություն, կամք, ղեկավարություն և այլն) հանճարեղ կերպով զարգացրել և մեր ժամանակների մեծագույն գիտնական ընկեր Ստալինը։ Ինչպես վերևում տեսանք, ընկեր Լենինը հոգեբանությունը համարում է դիալեկտիկական իմացության ակունքներից մեկը։ Խորը նշանակություն ունի հոգեբանությունը մարդկային կուլտուրայի մեջ

չարք առաջադրանքի համար, հատկապես արվեստի, գրականության, հաղորդակցության բազմաթիվ հարցերի լուծման համար։ Հիշենք, օրինակ, որ Ստանիսլավսկու «Դերասանի աշխատանքն իր վրա» գրքում ամենայն մանրակրկիտությամբ քննվում են զգացմունքները, կենտրոնությունը, ուշադրությունը, կամքը, կենսագիտակցականն և այլ հարցեր դերասանական վարպետության տեսակետից։ Մեր բոլոր լավագույն գրողները լավ ուսումնասիրել են մարդկային հոգեբանությունը, մարդու հոգին և տիրապետել նրա պիտակիքներին։ Հոգեբանությունից մեծ չափով օգտվում են նկարիչները, քանդակագործները, ճարտարապետները և այլն։ Հատկապես մեծ է հոգեբանության նշանակությունն իբրև ուժանդակ գիտություն՝ մանկավարժական պրոցեսում։ Այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք կենտրոնությունն է՝ կրթության հոգեբանության մեջ, կրթության զարգացման տարբեր աստիճաններում, դասը և ուշադրությունը, լավ ըմբռնելու պայմանները, յավ հիշելու օրենքները և այլն, մանկավարժական պրոցեսի ամենահիմնական մասն են կազմում։ Նույնիսկ գոյություն ունի հոգեբանության մի ճյուղը կազմող մանկավարժական հոգեբանությունը, որը քննում է կրթության պսիխիկական բոլոր հարցերը՝ մանկավարժական գործի կազմակերպման տեսակետից։

Հոգեբանության տվյալները մեծ չափով օգտագործում և նաև բժշկականությունը։ Հայտնի է, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի հիվանդի հանդեպ բժշկի ունեցած վերաբերմունքը։ Ծերբեմն բժշկի անզգույշ խոսքը կարող է հիվանդի մոտ ծանր բժշկի անզգույշ խոսքը կարող է հիվանդի մոտ ծանր հաճախ ճակատագրական հանդիպանալ, բժշկականությունը նույնիսկ ներշնչման միջոցով բուժման հատուկ միջոցներ ունի, կան բազմաթիվ աշխատություններ (կրկնվող և այլն) բժշկական հոգեբանության վերաբերյալ։ Հոգեկան հիվանդությունների ուսումնասիրությամբ ու բուժմամբ և զբաղվում պսիխատրիան, Պարզ է, որ յուրաքանչյուր պսիխիատր (հոգեբույժ) պետք է լավ ծանոթ լինի նորմալ հոգեբանությանը, որպեսզի հասկանա և բուժի նորմայից շեղվող ախտաբանական դեպքերը։

Հոգեբանության տվյալներից մեծ չափով օգտվում է և փիզիոլոգիան, հատկապես փիզիոլոգիայի բարձր ներվային հատ մակարգության գործունեության օրենքներն ուսումնասիրող մասը։ Փիզիոլոգիան տալով հոգեկան պրոցեսների ֆիզիոլոգիական

հիմունքները չի կարող լիարժեք սահմանափակվել զուտ ֆիզիկո-քիմիական բնույթի յուրահատկություններով։ Նա յուրաքանչյուր ճշտելու համար դիմում է հոգեբանության։

Հոգեբանության ամենաառաջադիմական ճյուղերից մեկն է պսիխոտեխնիկան կամ աշխատանքի հոգեբանությունը։ Պսիխոտեխնիկան մանրակրկիտ կերպով ուսումնասիրում է աշխատանքի (շոֆերի, քիմիկոս ապարատչիկի և այլն) հոգեբանական բնույթագիրը, ժամանակում և մասնագիտական կարողությունների ճիշտ ընտրության կատարելուն, զբաղվում է պրոֆկոնսուլտացիայի հարցերով, ղեկավարում է աշխատանքի ռացիոնալ կազմակերպման և այլն։ Պսիխոտեխնիկան զբաղվում է նաև հոգնածության, վարժվածության, հոգեկան տրամվի (աշխատունակության հանկարծակի, բայց ժամանակավոր կորուստ արտադրական աշխատանքի ժամանակ), ավարտների և այլ հարցերով։ Հոգեբանության ուսումնասիրությունները նաև իրավաբանական պրոբլեմների ճշտման համար մեծ նշանակություն ունեն։ Նրանց օգնությամբ ստեղծվում է պսիխոլոգիայի մի ճյուղը՝ դատական կամ կրիմինալ հոգեբանությունը, որը զբաղվում է այնպիսի հարցերով, ինչպիսիք են հանցագործի հոգեբանությունը, դատական քննությունների ընթացքի ուսումնասիրությունը, մոռացում և ցուցմունքների ճշտության հարցերով։

Խորհրդային Միության մեջ մեծ չափով զարգանում է նաև դիալեկտիկական իմացաբանության համար նշանակություն ունեցող մի ճյուղ՝ դոտոպսիխոլոգիան, որն ուսումնասիրում է կենդանիների վարքի էվոլյուցիայի օրենքները։ Այսպես կոչված համեմատական հոգեբանությունը նպատակ ունի տալու մի կողմից կենդանու և մարդու հոգեկանի և մյուս կողմից էվոլյուցիայի և մանկական պսիխիկայի զարգացման համեմատական նկարագիրը։

Հոգեբանությունը վոչ միայն ուշադրություն է դարձնում վերոհիշյալ ճյուղերի վրա, այլև ինքն էլ իր հերթին սերտորեն կապված լինելով նրանց հետ, լրացնում է նրանց տվյալներով, շատ դեպքերում հենվում է նրանց վրա և ուսումնասիրելով այդ ճյուղերի տվյալները, ստուգում, ճշտում, հարստացնում և իրեն

Ո՞ՒՄՈՒՆՔ ՀՈԳԵԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մինչև այժմ մենք խոսում էլինք հոգեկան գիտակցական յերևույթների ծագման, զարգացման ու այդ զարգացումը պայմանավորող արևնքների մասին ամբողջապես վերցրած։ Բայց հոգու լիակատար ուսումնասիրությունը պահանջում է կիրառել բոլոր գիտությունների համուռ անալիտիկ-սինթետիկական մեթոդը։ Չե՞ վոր ինքը՝ հոգեկան գիտակցական կյանքը բազմաթիվ ֆունկցիաների մի բարդ միասնություն է։ Մարդու գիտակցությունը մի ընդհանուր, ինքնամփոփ յերևույթ չէ, այլ ունի բազմաթիվ արտահայտություններ։

«Ամբողջական մարդու» հարաբերությունները գիտի արտաքին աշխարհը կատարվում են,—ինչպես Մարքսն է ասում,—«նրա անհատականության որպիսնիերով», այն է՝ տեսողությամբ, լսողությամբ, հոտառելիքով, ճաշակելիքով, զգացմունքներով, մտածողությամբ, հայեցողությամբ, գործունեության և այլն։

Մեր հետագա նպատակը պետք է լինի ավելի մանրամասն ուսումնասիրել այդ անհատականության որպիսնիերը կամ հոգեկան ֆունկցիաները, վորոնք անջատ-անջատ հանդես չեն գալիս, այլ սերտորեն կապված են միմյանց հետ և փոխադարձաբար պայմանավորված են։

Յեթե մարդը զուրկ լիներ յուր հինգ զգայարաններից, յերե պրակտիկ գործնական գործունեության ընթացքում արտաքին աշխարհից վոչ մի տպավորություն չստանար և չունենար այդ տպավորությունների ընդունող տպարանները, զգայարանները (աչք, ականջ և այլն), մենք բացարձակապես վոչինչ կիմանայինք մեր շրջապատի մասին։

Այնա թե ինչպես մենք մեր ուսումնասիրությունն սկսում ենք զգայություններով, վորոնք հատկանիշ են արտաքին աշխարհի ազդեցության՝ մեր զգայարանների վրա։

Բայց մարդը չի բավարարվում իրերի ու տարրականների առանձին հատկանիշները (գույնը, համը և այլն) ճանաչելով։ Պրակտիկ գործը և կատարված փորձը տանջադրում են մարդուն իր իմացությունը գործնել լրիվ, իրերի առանձին հատկությունների ճանաչումից անցնել այդ հատկությունները պայ-

մանավորող որենքներին։ Այս բանը կատարվում է ըմբռնման հոգեկան ֆունկցիայի միջոցով։

Ըմբռնումը պահանջում է ակտիվ ընտրողական վերաբերմունք դեպի շրջապատից ստացվող զգայնությունները։ Բոլոր տպավորությունները չեն, որ մարդու համար արժեքավոր են։ Բացի դրանից, մարդն ամեն ինչ միանգամից ըմբռնել չի կարող։ Նա պետք է ջոկի, ընտրի այդ տպավորություններից կարևորները և առաջնայնությամբ ճանաչի նրանցից ամեն մեկը։

Այդ բանը կատարվում է ուշադրության միջոցով։ Ուշադրությունը նման է լուսարձակի, որը լուսավորում է առարկաները և այսպիսով հնարավորություն տալիս մեզ կենտրոնանալու այս կամ այն իրի վրա, այն լրիվ ճանաչելու։ Այնուհետև իրերի ճանաչման սիստեմատիկ շարունակությունը պահանջում է ըմբռնածն ամրապնդել ուղեղում, պահպանել և կրկին յեղած դեպքում վերարտադրել ու ոգտագործել հասարակական պրակտիկայի մեջ։ Այդ կատարվում է հիշողության ֆունկցիայի միջոցով։ Իրայց մենք կարիք ունենք պատկերացնել և այն, ինչ որ անմիջապես ասենդ, շոշափել, առարկայորեն զգալ չենք կարող։ Այդ բանը կատարվում է յերեվակայության (ֆանտազիայի) միջոցով։

Հոգեկան այն ֆունկցիան, որի միջոցով մենք կարողանում ենք բավականին վառ ու կենդանի պատկերացնել այն, ինչ որ մեր փորձում չի յեղել, այսինքն այնպես, ինչպես այժմ պատկերացնում ենք, առաջներում չենք ըմբռնել, կոչվում է յերեվակայություն (ֆանտազիա)։ Յերեվակայության միջոցով մենք կարող ենք պատկերացնել հեռավոր ու մոտ անցյալը, ներկան և ապագան։ Իրերի և առարկաների ճիշտ ճանաչման նախապայմանը՝ դա նրանց փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների հայտնաբերումն է։ Մենք մեր գիտողությունները ընդհանրացնում ենք, աշխատելով յերեվան հանել միայն առարկան քնորոշող յեղակի հատկությունները, այլև յերևույթների ամբողջ խմբերին հատուկ որենքները, որինաչափությունները, մինչև մեծերական պրոցեսների ամբողջությունը։ Այդ կատարվում է մտածողության միջոցով։ Մտածողությունը հնարավորություն է տալիս մեզ արտացոլել իրերի և առարկաների օբյեկտիվ կապերի ամբողջությունը։ Ինքը՝ մտածողությունը սեր-

տորեն կապված է խոսքի հետ, վորը մարդկային փոխհարաբերությունների արգասիք է և մտածողության միջոցը։ Խոսքն իրականության արտացոլման յուրահատուկ ձևն է։ Մարդն անտարբեր չի կարող վերաբերվել ոչ միայն իր մարմնին, հիշողության երևույթներին ու զգացմունքներին, այլ և արտաքին աշխարհից եկած, քիչ թե շատ ուժեղ տպավորություններին։ Ցանկացած դեպքում մարդը հանդես է բերում իր վերաբերմունքը՝ ունակ իրականության փաստերի հանդեպ, զգացմունքների և եմոցիաների միջոցով։

Ցեխ, վերջապես, մարդու գործունեությունը ծրագրված է, խելացի, մտածված, նպատակադրված։ Խելացի կերպով առաջադրված նպատակն իրեն և ենթարկում մարդկային ուժերը, պայմանավորում մարդու գործունեության բնույթը։ Այդ բանը կատարվում է կամքի միջոցով։

Մենք հնարավոր եղանքին ուսումնասիրել հոգեկան վերոհիշյալ գործընկերությունները։ Մենք ոչ միայն պետք է պարզենք ամեն մի գործընկերության գործունեության առանձնահատկությունները, այլ և նրանց անքակտելի կապը, համեմատական գործունեությունն ու փոխադարձությունը։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ փոխհարաբերություն կա ընդհանուր մեթոդի և մասնավոր մեթոդների միջև։
2. Ի՞նչ սկզբունքներից են յելնում և ինչպես են մարդուն ուսումնասիրում ինքնադիտողության մեթոդի ներկայացուցիչները։
3. Տվեք օբյեկտիվ դիտողականության մեթոդի գնահատականը։
4. Ներպերիմենտալ մեթոդն ինչ փոփոխություններ մտցրեց հոգեկան հատկությունների ուսումնասիրման գործում։
5. Հոգեբանության ունի ինչ մեթոդներ գիտեք։
6. Ի՞նչ առարկեցներում և կիրառվում հոգեբանությունը։
7. Բնորոշեցեք հոգեկան գործընկերներից յուրաքանչյուրին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Психология», под ред. Корнилова, Теплова и Шварца.
2. Рубинштейн.—«Основы психологии».
3. Կորնիլով.—«Ձեռնարկ հոգեբանության»։

X ԿԵՆԴԱՆՈՒ ԽԵԼՔԸ ՅԵՎ ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կենդանիների հոգեկան կյանքի ուսումնասիրությունը վոչ միայն տեսական, այլև պրակտիկ խոշոր նշանակություն ունի։ Զի՞ վոր մեզ շրջապատող բնության մեջ կենդանական աշխարհը նշանակալից դեր և խաղում մարդկային կյանքի համար։ Յեթե գիշատիչները մարդկության բնական թշնամիներն են, ապա ընտանի կենդանիները, հատկապես շունը, ձին, կովը և այլն հանդիսացել են ամենավաղ ժամանակներից և մինչև հիմա էլ հանդիսանում են մարդկության ամենալավ ոգնականները. մարդն ինքը արդյունք և կենդանական աշխարհի յերկարատև զարգացման։ Ահա, թե ինչու կենդանիների հոգեկան կյանքը վաղուց ի վեր գրավել և գիտնականների խորհրդատու հետազոտությունների առարկան։

Ակադեմիկոս Պավլովը նշում է, վոր կենդանիների վարքի ուսումնասիրությունը մոտ յերկու հազար տարվա պատմություն ունի։ Կենդանիների վարքի մասին յեղած մեկնաբանությունները, սկսած ամենավաղ ժամանակներից մինչև այժմ, հիմնականում յերկակ տեսակ են։

Անտրոպոմորֆիստները (անտրոպոմորֆիզմ — բառացի — մարդաձևերություն) կենդանուն մարդկայնացնում են, այսինքն վոչ մի տարբերություն չեն դնում մարդու և կենդանիների հոգեկան կյանքի միջև։ Նրանք գտնում են, վոր մարդկային բոլոր զգացմունքները, խոհերը, խղճերը գոյություն ունեն նաև ձիով նաև կենդանիների մոտ։ Կենդանին էլ մարդու նման զգում է, ատելություն, ծիծաղում, տխրում, արհամարհում, վրդովվում, սիրում և ատում։ Վորոշ գիտնականներ այնքան հեռու յեն գնում, վոր կենդանիների կյանքը մարդուց ավելի իմաստալից են համարում։ Որինակ, անցյալ աշխարհի խոշոր գիտնականներից մեկը՝ Պլուտարքոսը գտնում է, վոր կենդանիների զարծողությունները ավելի խելացի յեն և վորոշ դեպքերում ավելի նպատակահարմար, քան մարդունը։ 18-րդ դարի ֆրանսիական անհատապետ Կոնդիլյակը գտնում էր, վոր կենդանու խելքը մարդու բանականությունից սկզբունքորեն չի տարբերվում, տարբերությունը միայն քանակի մեջ է։ 19-րդ դարի մի գիտնական չկարողանալով ոգիտալական անսպասելու-

թյուններին ու ապրատուրյան պատճառը գտնել, կոչ է անում բուրժուական պետական դեկավարներին, գնալ և մրջյուններից սովորել կերկիր կառավարելու ձևը։ Անարոպոմորֆիզմի տարրեր կան նաև մի շարք գրողների աշխատասիրություններում։ Որինակ՝ ամերիկայի խոշորագույն գրող Ջեկ-Լոնդոնը վոչ միայն պատմվածքների, այլև խոշոր վեպերի հերոսներ է դարձնում կենդանիներին, ժամանակ նրանց մարդկային բոլոր հատկություններով։ Հովհաննես Բուռնանյանը ապրատուրյան տենչը գնում է յեղնիկի մեջ, իսկ ծղրիտին՝ դարձնում բանական միջատ։ Ժողովրդական բանահյուսության ու հեքիաթների մեջ ևս կան անարոպոմորֆիզմի շուշված տարրեր (որինակ՝ Բուռնիկ Ջալալին դառում է, ունի պարտավորություն, ղազմուղաք, աղաչում է ասածուն և այլն)։

Մեխանիստները բոլորովին հակառակ տեսակետի վրա յեն կանգնած։ Նրանք կենդանական աշխարհում խելացի վարքի առնչություն չեն տեսնում։ Հոգեկան գործունեությունը վորևե նշույլ չեն գտնում։ Մեխանիստական տեսակետը, վորն առնուսուր կերպով առաջ քաշեց ֆրանսիական մեծ փիլիսոփա Դեկարտը, հանձինս ամերիկյան բիհեվիորիզմի ունի իր ամենամոլեռանդ հետևորդները։ Պետք է շեշտել, վոր ակադեմիկոս Պավլովի համակրանքը նուլդնեցս այս տեսության կողմն է, նա մեծ համակրանքով է խոսում Դեկարտի տեսակետների մասին՝ կենդանու վարքի մեխանիության առաջարկում։

«Ես ցանկանում եմ,—ասում է Դեկարտը,—վորպեսզի դուք համոզվեք, վոր կենդանի մեքենայի մեջ գործող բոլոր հիմնականները՝ սրտի բաբախում, սննդառություն, շնչառություն, արթուն վիճակը և քունը, ղազմուղությունը այդ մեքենայի բնական գործողություններն են—վոչ ավելի և վոչ պակաս, քան ժամացույցը կամ մի այլ մեքենա։ Կենդանիները նայում են և լսում, նրանք զգավում են, չնայականալով ցավը և այլն։ Զգա և վոչ մի կասկած... վոր կենդանիների մոտ խոսքան զգացմունքներ չկան, չկան նույնիսկ իսկական կրքեր, ինչպես մարդկանց մոտ, վոր կենդանիները վոչ այլ ինչ են, քան ավտոմատներ, թեև նրանք մարդու ձեռքով շինված ամեն մի մեքենայից ավելի լավ են պատրաստված։

Վիտալիստները կենդանիների վարքի մեջ գտնում են բարձրագույն նպատակահարմարության, թեպետ իրենք՝ կենդանիները բոլորովին զուրկ են բանականության ամեն մի արտահայտությունից։ Կենդանիները խելացի են գործում առաջնային ուժերի թելադրանքով։ «Կենդանիների անխելք գործողությունները,—գրում է վիտալիստ Ռեյմորուսը,— նրանց ծնվելուց առաջին իսկ օրից, բարձր բանականության աշխարհի հոգատարության հետևանքով ընտրոշվում ու նպատակահարմար ուղղության են ստանում»։ Այսպիսով, վիտալիզմը ամենավաթար իդեալիզմն է ու տերտերականության՝ կենդանիների վարքի բացատրման հարցում։

Ենգելսը, կենդանիների խելքի մասին իր բազմաթիվ դիտողություններում չափազանց խորը կերպով ավել է դիալեկտիկո-մատերիալիստական սկզբունքները կենդանիների պսիխիկան ուսումնասիրելու համար։ Նա քննադատության է ենթարկել և՛ անտրոպոմորֆիզմը, և՛ մեխանիցիզմը, և՛ վիտալիզմը։

Նշելով կենդանու և մարդու պսիխիկայի վորոշ նմանության և վարակական տարբերության, Ենգելսը գրում է.. «Ինքնին հասկանալի չի, վոր մենք մոտավորության չափերը բացատրելու ձգտվածք, կանխամտածված գործողության ունակությունը կենդանիների մեջ»... «Անգլիայում աղվես վարժեցնում, ամեն որ կարելի չի դիտել, թե ինչպես աղվեսը կերպասում և վայրերի իր ճանաչողությունը, հետապնդողներից ազատվելու համար և թե ինչպես լավ ճանաչում և ոգտագործում է հոսի նպատակը հասկանալը՝ իր հետքերը կորցնելու համար։ Մարդու հետ շփվելու շնորհիվ բարձր զարգացման հասած մի ընտանի կենդանիների մոտ ամեն որ կարելի չի նկատել նույն տատիճանի խորամանկության դեպքեր, ինչ վոր յերկխանների մոտ» (Ենգելս, «Բնության դիալեկտիկա», եջ 89)։ Կամ՝ «Խելքի ամբողջ գործողությունը... ընդհանուր և մեզ և կենդանիներին» (նույն տեղը, եջ 53)։ Այսպիսով, Ենգելսը հարցը դնում է վորոշակի։ Կենդանին խելք ունի, ծրագրված, կանխամտածված գործունեության ունակությունը կա կենդանիների մոտ, բայց կենդանու խելքի և մարդու մտածողության մեջ կա խոշոր պատմական վորակական տարբերություն։ «Դիալեկտիկական մտածողությունը հենց

այն պատճառով, որ կանխագրում և հակացուցվությունների բնույթի հետազոտություն, հատուկ և միայն մարդուն, այն էլ նրա զարգացման համեմատաբար բարձրագույն աստիճանի վրա...» (Ենգելս, «Բնության դիալեկտիկա», էջ 53—54)։ Անտրոպոմորֆիտները նույնացնելով մարդու և կենդանու հոգեկան կյանքի պրոցեսները, չեն տեսնում այն մեծ տարբերությունը, որ կա մարդու գիտակցության և կենդանու խելքի միջև, թե ըստ ծագման և թե ըստ էության։

Մեխանիստները ընկնում են հակառակ ծայրահեղության մեջ՝ ժխտելով խելքի գոյությունը կենդանիների մոտ։ Նրանք անտեսում են կենդանական աշխարհի զարգացման օրինաչափությունները ու առանձնահատկությունները, ժխտում են պատմությունն ու զարգացումը։

Ենգելսը տալիս է կենդանիների խելքի առանձնահատկությունների ուսումնասիրման ծրագիրը։ «Կենդանիների պլանային, գիտակցական գործունեությանն ունակությունը զարգանում է ընթացս նյարդային համակարգության զարգացման համընթաց ու հասնում է իր բարձր աստիճանին կաթնասունների մոտ»։

Այսպիսով, չի կարելի հավասարության նշան դնել միայն մեկնության և կենդանու, այլև տարբեր տեսակի կենդանիների միջև։ Կենդանին վորքան բարձր է իր նկարագրությամբ, այնքան նրա շարժումները խելացի են և ունեն ծրագրված, պլանային աշխատանքի ունակություններ։

Ելնելով Ենգելսի այս հանճարեղ դրույթից, ըստ կենդանու նկարագրության զարգացման աստիճանին, մենք արձանագրում ենք որգանական պսիխիկայի զարգացման հետևյալ աստիճանները։

Տրոպիզմներ. Հայտնի գիտնական Լյոբը մտցրեց տրոպիզմ տերմինը, բնորոշելու համար պարզագույն որգանիզմների հատուկ շարժումները արտաքին աշխարհի ֆիզիկո-քիմիական գրգիռների ազդեցության հետևանքով։ «Այսպիսի ռեակցիա գոյություն ունի նույնիսկ այնտեղ, վորտեղ չկա մի բջիջ, էլ չխոսենք նկարագրական բջիջի մասին» (Ենգելս)։ Այսպիսի բարձրագույն շարժումների որինակները կարող են հանդիսանալ և բուսական (արեվածաղիկ, միմոզա և այլն), և կենդանական

(ամիսներ, ինքնուրույն և այլն) աշխատելու վերջնական ձախողումներ (ջրային փայտոջիլ) ջրային պրիմիտիվ կենդանիներ. նա բոլորովին անտարբեր և լուսյա հանդիպեց նրա այդ անհաջողությունները կարելի չի դիտել, նրանք վերջնական և ձգձգված ժամկի մեջ մի քանի պաֆնիներ։ Իսկ նրանց ջանասիրությունը մի քիչ թեթևացնելու վորևե միջոց թեթևել, ասենք ածխաթթվով, այս դեպքում պաֆնիների վերաբերմունքը բոլորովին կփոխվի և նա մեծ հետաքրքրությունով առաջ կբերի լուսյա հանդիպել, կձգտի դեպի լուսյա։ Ինչ պատահեց. պատճառն այն է, վոր ածխաթթու գազը նշանակալի չափով կասեցնում է կենդանու կենսական գործողությունները։ Այդ պատճառով էլ նա ձգտում է դեպի լուսյա, վորի ազդեցության տակ կենսական պրոցեսներն ավելի ակտիվ են կատարվում։

Ինազդային շարժումներ. կենդանական աշխարհի զարգացման ավելի բարձր աստիճանում արդեն կենդանու կյանքում վճռական դեր է սկսում խաղալ ներվային համակարգությունը։ Ճիշտ է, արտաքին աշխարհի զգայողությունը չունեք է կապել միայն ներվային համակարգության հետ, վորովհետև պատասխանելու, զգալու ընդունակությունն առնասարակ հատուկ է պրոտոպլազմին։ Ներվային սիստեմը հնարավորություն է տալիս օրգանիզմին ավելի արագ ու դիպուկ պատասխանել գրգիռներին։ Ներվային բարձր համակարգությունը հիմնականում կարգավորում է օրգանիզմի և միջավայրի փոխհարաբերությունը։ Երկրպատասխ գրգիռներին տարբեր ու նպատակահարմար ձևով պատասխանելը մեծ նշանակություն ունի կենդանու գոյության կռվի համար և հետզհետե մացնում նրա հոգեկան վոլջ կյանքում։

Ինազդը հանդես է գալիս կենդանական աշխարհի զարգացման շատ բարձր աստիճանի վրա, այն ժամանակ երբ վոչ միայն ներվային համակարգի մեջ ժամանակավոր կապեր են առաջանում և առաջացել, այլ և կազմակերպվել են ռեֆլեկտոր շարժումները վերահսկող կենտրոնները, հատկապես վոլջնուղեղը։ Ինազդները, ինչպես Դարվինն է բնորոշում, կենդանիների ներվային սիստեմի կատարելագործով պայմանավորվող շարժումներն են, դրանք բնածին շարժումներ են «կամքից բոլորովին անկախ» և նշանակալից չափով անկախ նաև սովորություններից։

Այսպիսով կենդանական գործողությունների մեծ մասը բնազդային բնույթ ունեն, որոնք ել ավելի զարգանում ու կատարելագործվում են ավյալ կենդանու անհատական գոյության պայքարի ընթացքում։ Մենք հենց մեր առօրյա դիտողություններից գիտենք բնազդային նպատակահարմար գործողությունների բավականին շատ փաստեր, որինակ՝ բազմաթիվ կենդանիներ բնազդաբար ձմեռվա համար պաշար են հավաքում և կուտակում (մրջյունները, մեղուները, սկյուռները և այլն), թռչունները ցուրտ յերկրներից չվում են տաք յերկրներ, ամենափոքր կենդանին անգամ վտանգի պեպքում փախչում է, պաշտպանվում և այլն։

Ինչով բացատրել յերբեմն նույնիսկ ապշեցուցիչ թվող այն գործողությունները, որոնց հանդիպում ենք կենդանիների մոտ։ Պատճառը մեզ համար պարզ կլինի, յեթե հիշենք, որ այդ բնազդային շարժումների հիմքը կազմում է ավյալ կյանքի նախորդների կողմից հաղորդված ապրումների ընթացքում կուտակված, փոփոխության ու կատարելագործման յենթարկված փորձը։ Իսկ այդ փորձը ձեռք է բերվել բնական ընտրության ճանապարհով, գոյության պայքարում կավի ընթացքում։ Բնազդների նպատակահարմարության յերեք հիմնական ուղղությամբ և ընթանում՝

ա) ինքնապաշտպանության,
բ) սնունդ հայթայթելու և
գ) սերնդի պաշտպանության։ Վերոշ գիտնականներ նշում են նաև հոտառության բնազդի գոյությունը։

Ինքնապաշտպանության բնազդը արտահայտվում է նրանով, որ կենդանու գործողությունները նպատակահարմար են, նրանք, վոր կենդանու գործողությունները նպատակահարմար են, խնայում՝ ավյալ պահի գոյության պաշտպանության համար, վտանգի դեպքում համապատասխան ուժասիր շարժումներ կատարելու մեջ իր կյանքը փրկելու համար։

Սնունդ հայթայթելու բնազդն այն է, յերբ կենդանին կատարում է խիստ և ավյալ սիտուացիայի համար նպատակահարմար այնպիսի շարժումներ, որոնք գնում են մի հիմնական ուղղությամբ, այն է՝ բավարարել կենդանու օրգանական պահանջները կերակրվելու ուղղությամբ։ Բազմացման և սերնդի պաշտպանության բնազդը վոչ միայն միջեջնուն կենդանական

տեսակի չափու տարբեր տեսքի տեսական ձգտումներն են միմյանց հանդեպ, այլև հար և հատկապես մոր ծնողական զգացմունքներն են տնզար, նորածին զավակներին կերակրելու և պաշտպանելու մինչև այն ժամանակ, երբ ձագուկները հնարավորություն կունենան ինքնուրույն կերպով գոյության կռանքի ասպարեզ դուրս գալ։ Այդ մոմենտից, նույնիսկ ամենախելացի կենդանիների մոտ անգամ, ծնողական հոգատարությունը դադարում է և շատ կարճ ժամանակից հետո, նույնիսկ դուրսբուրող, սերտ մայրը մոռանում է իր ձագերին, և իր նախկին սիրեցյալների հետ խիստ պայքարի է մտնում։

Բնազդների նպատակահարմարությունը շարունակին ըստ է կրում ցածր կենդանիների մոտ, այսինքն միլիոնավոր պայմաններում, միլիոնավոր դրդռիչին նույն տեսակին պատկանող կենդանիները համարյա միշտ միատեսակ վերաբերմունք են ցուցաբերում։ Որինակ՝ սենյակի բոլոր ասրկերը միատեսակ են իրենց վոստայնը հյուսում ու ճանճ վորսում, բոլոր մրջյունները միատեսակ են պաշար պատրաստում, բոլոր ծղրիտները թեպետ չեն տեսնում իրենց ձագերին, վորովհետև ձու ածելուց հետո նրանք սատկում են, բայց առանց բացառության նախորոք ամեն ինչ պատրաստում են, վորպեսզի ձվից դուրս եկած ձագուկները միանգամ վորը, վոչնչի նեղություն չկրեն։

Այդ պատճառով էլ, եթե մենք կոպիտ կերպով միջամտենք ցածր կենդանիների կյանքին և նրանց դեռևս բոլորովին այլ, անծանոթ պայմանների մեջ, նրանք հնարավորություն չունենալով հարմարվելու բնության շատ հեշտությամբ կվոչնչանան։ Որինակ՝ եթե Մոսկվայի կենդանական այգու վիշապ ոձի բնակարանը տաքացնելու և կերակրելու հոգսը ձմռանը մարդիկ իրենց վրա չվերցնեին, նա կատուկը Մոսկվայի սառնամանիքներում, վորովհետև նա բերված է հեռու երկրներից, վորտեղ կլիման ուղիղ հակառակն է Մոսկվայի կլիմայի նկատմամբ։ Այն ժամանակ, երբ Մոսկվայում ձմեռ է, այդ վիշապի հայրենիքում ամառ է։ Ոձն էլ իր նախնիների օրենքի համաձայն քնում է ամռանը (այսինքն Մոսկվայի ձմռանը)։

Այժմ մի քանի խոսք մարդկային բնազդների մասին։ Ինչ խոսք, վոր մարդն էլ ունի բնազդային որգանական պահանջներ, վորոնք բղխում են մարդկային մարմնական կառուցվածքից՝

Այսինքն մարդը պետք է ուսի, խմի, պաշտպանվի, մասնի սերունդների ապահովման մասին, քանի նրանք հոգատարությամբ առանձին կարիք ունեն։ Բայց մարդու բնազդները, Մարքսի սերմինով ասած՝ վիտակցված են։ Մարդն իր բնազդների գերին չե, անասուն չե, նա վոչ միայն ազդում է իր բնազդների վրա, այլ նույնիսկ յոթե այդ պահանջում և հատարակական շահը, նա պատրաստ է ամեն ինչ զոհելու հատարակական նպատակի համար։ Բայց հատարակական շահերը տարբեր են լինում, պատմական ընթացքին զարգանում, փոփոխվում են հատարակության նյութական պայմանների համաձայն։ Հատարակական խմբերի, դասակարգերի տարբեր վոյձակները իրենց վճռողական կնիքն են դնում մարդկային բնազդների վրա։

Սովորություններ. Կենդանիների համարյա մեծամասնության մոտ բնազդային շարժումների հիման վրա, զարգանում են սովորությունները։ Սովորությունների մշակման ունակությունն ապացույց է կենդանու պսիխիկայի զարգացման բավականի բարձր աստիճանին։ Ռեֆլեքսոլոգիայի և զոո-պսիխոլոգիայի վերջին ավյալները ցույց են տալիս, վոր սովորությունների մշակումը հնարավոր է միայն այն կենդանիների մոտ, վորոնք ունեն գլխի ուղեղի կեղեվային շերտ, իսկ ուղեղային կիսագնդերի կեղեվային շերտը հանդիսանում է հիերարխային համակարգության զարգացման բարձր արդյունքը։ Պրոֆեսոր Զելիոննու և Գիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից պրոֆեսոր Ց. Հասրաթյանի փորձերն ապացուցում են, վոր վիրահատման շնորհիվ կեղեվային շերտից զրկված կենդանին վոչ միայն շուտով կորցնում է իր անհատական կյանքի ընթացքում ձեռք բերած բոլոր հատկանիշները, այլ և առհասարակ վորևե բան սովորել չի կարողանում։ Այսպիսով, յոթե բնազդը սերունդների փորձն է և անցնում է ժառանգաբար, ապա սովորությունը ավյալ կենդանու կոնկրետ կյանքի ընթացքում ձեռք բերած անհատական փորձն է։ Յուրաքանչյուր կենդանական սովորություն առաջանում է բնազդի հիման վրա և նպաստում է մի հիմնական նպատակի՝ ավելի նպատակահարմար դարձնել բնազդը, հետևաբար և ժամանակել ավյալ կենդանու գոյության պայքարին։

Սովորությունների առաջացումը կատարվում է հետևյալ որենքների շնորհիվ։

1. Կրկնության.—Վարպետի վարին շարժում դառնա սովորության, նա պետք է մի քանի անգամ կրկնվի։

2. Նպատակահարմարության.—Ամեն մի շարժում կրկնության դեպքում սովորության պատճառ չի կարող։ Սովորության են պատճառում կենդանիների մոտ կրկնվող բազմաթիվ շարժումները։ Նպատակահարմարները, այսինքն այնպիսի շարժումները, որոնց ոգուտն ու նպատակը հասկանում համար ակնարկ է։ Սովորության առաջացման այս օրենքը հոյակապ կերպով ոգտագործված է կենդանիներ վարժեցնող հայտնի Դուբրովյան ընտանիքի կողմից։ Նրանք վարժեցնելով կենդանիներին, դրսևորվում են ոգտակարկելով, ոգտվում են կենդանու յուրաքանչյուր հաջող շարժման դեպքում նրան կերակրելու սկզբունքից։

3. Զարգացման աստիճան.—Կենդանին որքան բարձր է կանգնած իր նախնական համակարգության զարգացման աստիճանով, այնքան նրա սովորությունային գործողությունները բարդ են և ուժեղ, խելացի, հակառակ բարձր աստիճանի վարժություններ են ձեռք բերում, մարդու հետ ունեցած շփման շնորհիվ, ընտանի կենդանիները։

Մարդկանց գործողությունների մեջ ևս սովորություններն աչքի ընկնող տեղ են գրավում։ Սովորությունը չափազանց հեշտացնում է մարդու աշխատանքը։ Շատ անգամ, առանց դիտակցության ոգնության, մեխանիկորեն կատարելով այս կամ այն գործողությունը (քայլել, լվացվել, հագնվել, դասեր գրել և այլն) մենք խնայում ենք հսկայական քանակությամբ մտավոր ու ֆիզիկական յուրանդ, և այդ խնայված յուրանդն ոգտագործվում է ավելի բարդ, անծանոթ ու կարևոր խնդիրները լուծելու համար։ Բայց այստեղ ևս մեծ է մարդու և կենդանիների սովորությունների առաջացման օրենքների տարբերությունը։ Մարդու մոտ սովորություններն անպետակցաբար չեն առաջ գալիս, ընդհակառակը, նրանք սկզբնական շրջանում մեծ մասամբ մտքի ու կենդրի հսկայական լարում են պահանջում։ Սկզբում նրանք դիտակցված և մեծ ջանք պահանջող շարժումներ են, որոնք աստիճանաբար կրկնվելու շնորհիվ դառնում են սովորություն։ Բացի դրանից մարդը աերն ու տիրականն է իր սովորությունների։ Այս տեսակետից պետք է վերապահորեն մոտենալ «Սովորությունը յերկրորդ բնավորություն է» հայտնի առածին։

Ցեխե մարդը գտնում է, որ ովյալ սովորությունը նրա անհատական և հասարակական գործունեությանը հակասում է, նա, որոշ կամքի ուժ գործ դնելով, կարող է իր մեջ մեռցնել այդ սովորությունը։

✝ ԿԱՊԻԿՆԵՐԻ ԽԵԼՔԸ

Կապիկների, հատկապես անտրոպոյիդների (մարդանման կապիկների) խելքի ուսումնասիրությունը մի շարք տեսակետներից խոշորագույն նշանակություն ունի։ Գիտականորեն ապացուցված է, որ և՛ մարդը, և՛ կապիկն ունեցել են միևնույն նախահայրը։ Հասկանալի չէ, որ պարզելու համար մարդու առաջացման պայմանները, մենք չենք կարող նկատի չունենալ այժմյան կապիկին, որը, ճիշտ է, իր բիոլոգիական կառուցվածքով շատ և շատ հեռացած է մարդանման կապիկից, բայց որոշ ովյալներ և տալիս դեռ ևս մարդ չդարձած մարդանման կապիկի հատկությունների ուսումնասիրման համար։ Բացի դրանից, քեե իր մարմնի և ներվային համակարգի կառուցվածքով և քեե իր խելքով կապիկը մարդուց հետ ամենամեծ կենդանին է, ուստի և պարզ է այն մեծ հետաքրքրությունը, որ հանդես է բերում դիտությունը կապիկների գործողությունների և խելքի ուսումնասիրման ուղղությամբ։

Առաջանանայան և խորհրդային գիտնականների կատարած փորձերից ու դիտողություններից հնարավոր է անել հետևյալ եզրակացությունները։

1. Կապիկների վարքում խելացի գործողությունները չեն դիջում անգիտակցական գործողություններին։ Ցեխե աննպատակայարմար գործում կապիկներին որոշ խոչընդոտներ ուսադրելն, նրանք խելացի վարմունք նկատելի կդնեին, իսկ որոշ դեպքերում հեշտությամբ կլուծեին ծագած խնդիրները։

2. Խնդրի լուծումը գտնելիս միանգամայն վախվում է կապիկի վարքը։ Նա անգիտակցական, պատահական շարժուձևներից միանգամից անցնում է խելացի, կենտրոնացած գործողության։

3. Իրենց այդ գործողությունների ընթացքում, խնդիրը լուծելիս կապիկները կարողանում են օգտվել շատ պարզ, հասարակ, պրիմիտիվ գործիքներից։

Բուրժուական վորոշ գիտնականներ չափազանցնելով այս փորձերի նշանակությունը, նույնիսկ այնքան հեռու չեն գնում, վոր կապկի և մարդու վարքի վորակական տարբերությունը դատելարակության արդյունք են համարում։ Բուրժուական գիտնականներից մեկը, նույնիսկ փորձ է արել նորածին չերեխային և նորածին կապկին մինչև որս պայմաններում մեծացնել, հույս ունենալով, վոր «կապիկն էլ մարդ կդառնա»։ Ինչ խոսք, վոր մետաֆիզիկորեն մոտենալ այդ գիտնականների նմանորինակ փորձերը պետք է ձախողվելին։ Բացարձակապես իդեալիստ ու ռեակցիոն մի շարք այլ գիտնականներ բոլորովին հակառակ տեսակետի վրա չեն կանգնած ու անդունդ են ձգում մարդու և կապիկների միջև, «ամոթ ու ավերտուրանին հակառակ» հավատալով մարդու և կապկի ազգակցության մասին նոր խոսակը։

ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ. ԿԱՊԿԻ ՄԵԼԲԸ

Ըստ արժանույնը տալով կապկի վարքի նկարագրությանը, մենք պետք է ընդգծենք, վոր դարվինյան այդ շրջանը խորթ ու ոտար չէր եղել մարդկության նախադրյալների համար։ Մեկի այդ ստեղծանն անալայման հատուկ է եղել մեր նախահորը, վորը դեռևս մարդ չէր դարձել։ Ընդհակառակը, գիտությունը պարզում է, վոր կապկանման մարդն իր բիոլոգիական զարգացումով շատ ավելի բարձր է կանգնած եղել այժմյան ամենանևելայի կապիկներից։ Ցեվ նկարագրել աշխատանքին անցնելու և աշխատանքի միջոցով մարդկային հատկություններ ստանալուն պետք է նախորդեր բիոլոգիական զարգացման բավականին մեծ ստեղծան, քան այժմյան կապիկներն ունեն։ Ենգելսը ընդգծում է բիոլոգիական զարգացման հատկապես կարևոր հիմնական նախապայման,—գլխի ուղեղի զարգացումը, վորը կատարվեց ուտելիքի փոփոխման՝ մսեղեն կերակրին անցնելու շնորհիվ, ձեռքերի զարգացումը և աշխատանքի վերջնական բաժանումը վերջավորությունների միջև ու աստիճանաբար կանգնած, ուղղահայաց դիրք ընդունելը։ Ինչպես վերևում տեսանք, կապկին մարդ դարձնելու բոլոր փորձերը հենց սկզբից անհաջողության են մատնված, վորովհետև հաշվի չի առնվում վորակական այն խոշորագույն տարբերու-

թյունը, վոր կա այժմյան կապկի և կապկանման մարդու միջև, ինչպես և անտես է առնվում զարգացման այն հսկայական ճանապարհը, վոր անցել է մարդը մարդ դառնալու ընթացքում։

Կապկի խելքը և մարդու գիտակցությունը բոլորովին այլ պայմանների ծնունդ են, զարգացման բոլորովին տարբեր որինաչափությունների յենթակա։ Ինչպես տեսանք կապկի և առհասարակ կենդանու խելքը, նրա շարժումները, խելացիությունն ամբողջովին պայմանավորված և նրա բիոլոգիական կառուցվածքով, նրա նեղվային համակարգության զարգացման աստիճանով, իսկ մարդու գիտակցությունը սոցիալական աշխատանքի ծնունդ է։ «Վորոշ առումով կարելի չի ասել, վոր աշխատանքը ստեղծեց մարդուն» (Ենգելս)։

«Գիտակցությունը չէրբեք չի կարող ավելի այլ բան լինել, քան գոյի գիտակցությունը, իսկ մարդկանց գոյը նրանց կյանքի եղական պրոցեսն է»... «Նույնիսկ մշուշապատ պատկերացումները մարդկանց ուղեղում, նրանց նյութական կյանքի անհրաժեշտ սուբլիմատներն (արդյունքները) են, կյանք, վոր կապված չի պարզել փորձի հիման վրա և վորը կապված է նյութական նախադրյալների հետ» (Маркс и Энгельс, «Немецкая идеология» стр. 16—17)։

Մարքսը և Ենգելսը «Գերմանական իդեոլոգիայում» նշել են մարդու գիտակցության ծագրական առանձնահատկությունները և զարգացման սկիզբները։ Մարդու գիտակցությունը հետևանք է այն փոխհարաբերությունների, վոր մտնում է մարդը հասարակական աշխատանքի միջոցով բնության և մարդկանց հետ։ «Այնտեղ վորտեղ գոյություն ունի մի վորևե հարաբերություն, գոյություն ունի ինձ համար, կենդանին չի հարաբերվում վոչինչի և ընդհանրապես չի «հարաբերվում»։ Կենդանու համար նրա հարաբերությունը վերջ ուրիշները գոյություն չունեն իբրև հարաբերություն։ Այսպիսով գիտակցությունը հասարակական արդյունք է և կլինա այդպիսին, քանի ընդհանրապես կան մարդիկ» (նույն տեղը, եջ 21)։

Այսպիսով, մարդը պրակտիկայի միջոցով առաջացնելով իր գիտակցությունը, այսինքն բնական ու հասարակական որինաչափությունների պատկերացումն ու արտացոլումը, կարողանում է տարածել այդ որինաչափությունների ճանաչումը բնությունը փոխելու, հա-

սարակական կյանքն ավելի խելացի կազմակերպելու համար։

Այդ գիտակցության ճշտությունը կախված է հասարակական պրակտիկայից։ «Եթե այդ ինդիվիդների իրական հարաբերությունների գիտակցական արտահայտությունները իլյուզոր են, եթե նրանք իրենց պատկերացումների մեջ իրականությունը գլխի վրա կանգնում, ապա այդ ևս նրանց նյութական գործունեության սահմանափակության և այստեղից բղխող հասարակական հարաբերությունների սահմանափակության հետևանքն է» (Маркс и Энгельс, «Немецкая идеология», стр. 16)։ Կենդանու ճանաչողության, նրա խելացի գործունեության սահմանն այն հնարավորություններն են, որ տալիս են նրա ներվերը, զգայարանները։ Որքան կատարելագործված են կենդանու զգայարանները, նա այնքան շատ բան է հասկանում՝ ամարկանների հատկությունների մասին։ Ինչ վերաբերում է զգայարանների կատարյալծքին, անկասկած է, որ որոշ կենդանիների զգայարանները ավելի լավ կատարելագործված, քան մարդունը։ Որինակ՝ բազեն 30—50 մետր բարձրության վրա նում է փախչող մկանը։ Շատ թույլ լույսի մեջ կապիկը տեսնում է 0,2 միլիմետր հաստություն ունեցող սև թելը 28 սանտիմետր հեռավորության վրա։ Կամ վերցնենք հոտառելիքի զգայարանը։ Պրոֆեսոր Բարովսկու տվյալների համաձայն շունն սմհ-նափոքր կոնցենտրացիայի ժամանակ անգամ (1/10.000 լ-ի մեջ) ապրհոտը զգում է, նույնը և խինինին, այնինչ մարդն ամենաուժեղ կոնցենտրացիայի մեջ անգամ սեզանի կամ խինինի հոտը չի զգում։

Չնայած վորոշ կենդանիների զգայարանների՝ մարդու զգայարաններից ավելի կատարելագործված լինելուն, կենդանին իրենք աշխարհների մեջ այնքան բան չի տեսնում, վորքան գտնում է մարդը։ Ինչպես ենթադրել է ընդգծում, ճիշտ են արծիվը մարդուց հեռու չի տեսնում, բայց մարդը շատ ավելի բան է տեսնում աշխարհների մեջ, քան արծիվը։ Շունն ունի ավելի նուրբ հոտառություն, քան մարդը, բայց նա չի տարբերում այն հոտերի մեկ հարյուրերորդ մասն անգամ, վոր մարդու համար աշխարհների իրական հատկանիշ է նշանակում։

Պատճառն այն է, որ կենդանու ճանաչման միակ նահանջը նրա զգայարաններն են, մինչդեռ մարդու զգայարանների յուրահատուկ կառուցվածքը յերբեք նրա ճանաչման նահանջը լինել չի կարող, մարդու ճանաչման կարողությունները անսահման են, որովհետև մարդու զգայարանները համերաշխ են գործում, ոչնում են միմյանց, հանդիսանում են ուղղի մերձակա գործակիցը։ Ամենահիմնականն այն է, որ զգայարանների գործողությունը միանում է մարդու անսահմանորեն առաջ գնացող գիտական մտածողությանը, իսկ ամենավճռականը, որը մարդու մտածողության վորակապես նոր ուղղություն է տալիս՝ մարդու ակտիվ արտադրական գործողությունն է, նրա հասարակական պատմական պրակտիկան։ Այդ պատճառով էլ բավական է ասենք, որ մարդ իր աչքին դնի դիտության միջոցով պատրաստած հեռադիտակը, վորպեսզի հարյուրապատկի իր տեսողությունը կամ դնի հեռախոսափողն ականջին, վորպեսզի լսի իր նման մարդու հազարավոր կիլոմետրերով հեռավից յեկող ձայնը։

Կենդանու խելքի և մարդու գիտակցության հետեվյալ վորակական տարբերությունն այն է, որ առաջինը պատճառական մտածողությունից զուրկ է։ Կենդանին կարող է խելացի վերաբերմունք հանդես բերել միայն այն ժամանակ, յերբ տեսնում, լսում, զգում է։ Որինակ՝ կենդանին խելացի կերպով կարող է թագնվել, պաշտպանվել անձրեվից կամ շոգ օրերին փախչել արեգակի այրող ճառագայթներից դեպի հովը, բայց կենդանու մտքից անգամ չի կարող անցնել, պարզել, թե ինչու չի անձրեվ գալիս, վորն է նրա պատճառը, կամ ինչ է արեգակը։ Ավելի հակիրճ ասած, կենդանին գործ ունի միայն յերեվույթների հետ, նա չի աշխատում և չի էլ կարող պարզել յերեվույթների պատճառները, էությունը։ Մարդը վոչ միայն չի բավարարվում այն ամենով, ինչ վոր տալիս է նրան բնությունը, այլ և բոլոր միջոցները գործ է դնում առաջացնելու, ուսումնասիրելու այն, ինչ վոր բնությունը նրան անմիջապես չի տալիս, այսինքն մարդը ցանկացած յերեվույթներն առաջացնելով և ուսումնասիրելով գաղափար է կազմում օբյեկտիվ իրականության, օբյեկտիվ պատճառների ու էության մասին։

Մարդը միայն սոցիալական հետաքրքրությունից դրդված չէ, որ կատարում է ծանր ու դժվարին աշխատանք՝ բնությունը ճանաչելու համար։ Նա ուսումնասիրում է, մտքի ուժով բացահայտելով բնության օրենքները, ազատվելով պատահականությունից, բնության խարդավանքից, իր կյանքն ավելի ազատ ու երջանիկ դարձնի։ Դեռ հին ռուս մեծ հանճար Լոմոնոսովը ընդգծում էր գիտության մեծ նշանակությունը մարդկության երջանկության համար։ Լոմոնոսովի մարգարեական խոսքերը իրագործվում են մեր մեծ ժամանակներում, սոցիալիստական հայրենիքում։

Այսպիսով, դուրս է գալիս, որ մեծ է, հպարտական կեցվածք ունենալը և մարդու գիտակցության տարբերությունը։ Այդ տարբերությամբ մենք պարտական ենք մարդուն ստեղծող, աղնվացնող աշխատանքին, այն աշխատանքին, որը մասնավոր սեփականատիրական հասարակակարգում դառնում է դառը, ծանր մի լուծ, իսկ մեզ մոտ, մեր երկրում աշխատանքը տասկել է իր վեհ նշանակությունը, և դառել է «պատվի գործ, փառքի գործ, արիության ու հերոսության գործ» (Ստալին, «Լենինիզմի հարցերը» 1937 թ. էջ 501)։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Կենդանիների վարքի ուսումնասիրման անհրաժեշտությունը։
2. Անտրոպոմորֆիանները կենդանու վարքի մասին։
3. Մեխանիստները կենդանու վարքի մասին։
4. Վիտալիզմի էությունը։
5. Ենդելսը կենդանիների վարքի մասին։
6. Ինչպիսի շարժումներն են արտահատական կոչվում։
7. Պատմենք մանրամասն բնազդների մասին։
8. Բնազդ և սովորություն, սովորությունների առաջացման ուղիները։
9. Ինչ կարգապահություններ կարելի է հանել կապկի խելքի ուսումնասիրելիս։
10. Բիոլոգիական անհրաժեշտ նախապայմանները կապկից մարդուն անցնելու համար։
11. Ինչպես հասկանալ Ենգելսի խոսքերը՝ «Աշխատանքը ստեղծեց մարդուն»։

12. Վորո՞նք են մարդու գիտակցության վորակական առանձնահատկությունները։

13. Վե՞րն է կենդանու ճանաչողության սահմանը։ Ի՞նչու մարդու ճանաչողությունը անսահմանափակ է։

14. Ի՞նչով է տարբերվում մարդու մտածությունը կենդանու մտածությունից։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Маркс и Энгельс.—«Немецкая идеология», стр. 10—11, 16—17, 20—21։

2. Ենգելս.—«Բնության դիալեկտիկա», եջ 53 և 79—94։

3. «Համ(բ)Կ պատմություն»։ Համառոտ դասընթաց, IV գլուխ։

4. Рубинштейн.—«Основы психологии».

5. В. М. Боровский.—«Психическая деятельность животных», Москва 1936 г.

6. Гос. институт психологий.—«Инстинкты и навыки», Москва 1935 г.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՊԱՎԼՈՎԻ ՈՒՍՄՈՒՆՔՆ ԱՆՊԱՅՄԱՆ ՅԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՌԵՖԼԵՔՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ճոշորադուն գիտնական ակադեմիկոս Պավլովը իր մի քանի տասնյակ տարիների քրտնաջան ու համառ աշխատանքով համարյա սպառիչ կերպով ուսից կենդանիների բարձր ներվային հատակագրության որենքների գիտական պատկերը։ Այնտեղ, վորտեղ իդեալիստ գիտնականները վնասում էին գերբնական ուժ, կենսուժ, Պավլովը յերեվան հանեց նյութական յերեվույթներ։ Կենդանիների վարքի նյութական որենքները, բարձր ներվային հատակագրության գործունեության բարդ որինաչափությունները հանճարեղ գիտնականի փորձերի լուսաբանությամբ ստացան հասկանալի, գիտական բացատրություն։ Շարունակելով իր մեծ նախորդ, ռուս մեծ նեղկայացուցիչ, ճոշորադուն Ֆիզիոլոգ Սեչենովի աշխատանքը, Պավլովն իր աշխարհահռչակ աշխատանքներով ուժանդակեց միակ գիտական աշխարհայացքին, մատերիալիզմի հաղթանակին ֆիզիոլոգիայի և ընդհանրապես կենսաբանության բնագավառում։

Պավլովը կենդանիների վարքի հիմքում դնում է ռեֆլեքսը։

Ռեֆլեքսը որգանիզմի պատասխանն է, ներվային մեխանիզմի միջոցով, միջավայրի գրգիռներին, վորն արտահայտվում է մկանային շարժման կամ նյութափոխության միջոցով։

Ռեֆլեքսները բաժանվում են յերկու մեծ խմբերի՝ անպայմանի և պայմանականի։

ԱՆՊԱՅՄԱՆ ՌԵՖԼԵՔՍՆԵՐ

Անպայման ռեֆլեքսներն այն բարդ բնածին շարժումներն են, վորոնք համաձայնեցված են, խիստ որինաչափ են և ունեն շղթայաձև բնույթ։ Այսպիսի բնածին կայուն ռեֆլեքսները հնարավորություն են տալիս կենդանուն ավելի հաջող



Ի. Մ. ՍԵՉԵՆՅԵՎ

հարմարվելու միջավայրին։ Նրանց համեմատաբար աշխատանքը կապված է շատ հին ծագում ունեցող ներվային համակարգության անատոմիական կառուցման, օրգանիզմի ներքին քիմիզմի և ներքին սեկրետոր գեղձերի գործունեության հետ։

Մեծ մասամբ այդ ռեֆլեքսները լինելով պաշտպան կենդանու ծնվելու որից և կատարելագործվելով գործունեության ընթացքում, նրանք պահպանում են իրենց արժեքը մինչև կենդանու վոչնչանալը։ Այդպիսի մշտական կայուն բնածին ռեֆլեքսները յերկու հիմնական բիոլոգիական խմբերի յեն բաժանվում.

1. սեռական ռեֆլեքսներ, վորոնք ոժանդակում են տեսակի պահպանմանը, 2. ինքնապաշտպանության ռեֆլեքսներ, վորոնք ինդիվիդումի գոյության պաշտպանության ոգուտին են գնում։ Ինքնապաշտպանության ռեֆլեքսներն իրենց հերթին յերկու տեսակի յեն բաժանվում.

1. Սննդային ռեֆլեքսներ—հյութարտազրման և շարժման կարգի, այսպես թե այնպես կապված կերակրի ընդունման հետ։

2. Պաշտպանողական—գլխավորապես շարժողական կարգի, վորոնք պաշտպանում են որգանիզմը թշնամական ազդեցություններից։

Անոպայման ռեֆլեքսի գործունեության պատկերը հետևյալն է.

«Այս կամ այն ռեցեպտորային ներվային ապարատը ազդվում և արտաքին կամ որգանիզմի ներքին աշխարհի այս կամ այն դրգռիչից։ Այդ գրգիռը վեր և ածվում ներվային պրոցեսի, ներվային գրգռականության յերևույթի։ Գրգիռը ելևկարոլաների նման ներվային թելերի միջոցով արագընթաց հասնում է կենտրոնական ներվային համակարգության և այստեղից, առեղծված կապերի շնորհիվ, այլ ելևկարոլաների միջոցով անցնում է բանվորական որգանին, իր հերթին վերածվելով այդ որգանիզմի բջջի առանձնահատուկ պրոցեսի» (Պավլով)։

Գրգռիչ ագենտի և որգանիզմի գործունեության կապը խիստ որինաչափ է և խոշոր նշանակություն ունի կենդանու կյանքի համար։ Կենդանին պետք է ձգտի դեպի այն գրգիռները, վորոնք նպատակավոր են նրա համար, առանց վորի նրա կյանքը կդադարի գոյություն։ Ցավ, ընդհակառակը, կենդանին պետք



Ի. Պ. ՊԱՎԼՈՎ

և խուսափի վնասակար ազդակներից, չլինի նա ուղում և ապ-
րել։ Որգանիզմի այդպիսի նպատակահարմար գործունեությունը,
նրա պատասխանը արտաքին և ներքին գրգիռներին, ինչպես
Պավլովն և ընդգծում, տեղի է ունենում մեքենայաբար, բնածին,
գործում և ծնված ուրից, այսինքն պայմանավորված և ավյալ
ներվային համակարգի կառուցվածքով։ Անպայման ռեֆլեքսները
յերկու տեսակ են՝ «կամ վորոշ գործունեությունն առաջացնող,
կամ դադարեցնող» (Պավլով)։

Անպայման ռեֆլեքսներից հիշենք թուքարտադրության
պրոցեսը, վորը կատարվում և կերակուր ընդունելուց, վտան-
գի դեպքում կենդանու փախչելուց և այլն։

Պայմանական ռեֆլեքսներ. Պայմանական ռեֆլեքսը տար-
բերվում և անպայմանից նրանով, վոր նա ժառանգական չէ,
այլ կենդանու անհատական փորձի արդյունք և։ Նա նոր ռեֆլեքս
և, վորը շատ հեշտությամբ և առաջանում։ Պայմանական

ռեֆլեքսի առաջացման հիմնական նախապայմանն այն է, որ նա առաջ է գալիս միայն և միայն անպայման ռեֆլեքսի հիման վրա։ «Յեթե կերակրի ընդունելությունը կենդանու մոտ համընկնում է այն ագենտի գործունեությանը, որը կերակրի հետ առաջ որևէ մի առնչություն չի ունեցել, ապա այդ ագենտը դառնում է նորից գրգռիչ, ինչպիսին էնքը կերակուրն է»։ Սահնք, յեթե նախ քան շանը կերակրելը զանգահարում ենք։ Զանգակի հնչյունը էնքընբսահնքյան վոչ մի կապ չունի սննդի ռեակցիայի, թուքարտադրության հետ, բայց յերբ մի շարք անգամ, նախ քան շանը կերակրելը, կրկնում ենք մեր փորձը՝ զանգահարումը, տեսնում ենք, որ զանգակի հնչյունը առանձին վերցրած պատճառ է դառնում թուքարտադրության, այսինքն իրենով գրգռիչ ագենտ նա փոխարինում է կերակրին։ Սա դառնում է պայմանական ռեֆլեքս։ Այսպիսով պայմանական ռեֆլեքսի առաջացման ամենահիմնական նախապայմանն այն ապրանշանն է, որ մենք ուզում ենք դարձնել պայմանական ռեֆլեքս, և անպայման ռեֆլեքսային գործողության համընկնելն է։ Իհարկե պարտադիր չե, որ իրենով ագենտ մենք վերցնենք զանգակը։ Կարող ենք վերցնել ցանկացած գրգռիչը, յեթե, իհարկե, նա իր ուժով չի գերազանցում անպայմանին։

Պայմանական ռեֆլեքսի առաջացման մյուս հիմնական պայմանն այն է, որ պայմանական գրգռիչը պետք է տալ անպայմանից առաջ, հակառակ դեպքում վոչ մի արդյունք չի ստացվի։ Որինակ, կրեսովնիկովի լաբորատորիայում զանգը, որը շատ հեշտությամբ դառնում է պայմանական ռեֆլեքս, յեթե շունը զանգի ձայնը լսում է մինչև ուտելը, նույնիսկ 274 անգամ կրկնելուց հետո ել չդառավ պայմանական, յերբ փորձեցին զանգահարել ուտելուց հետո։

Պավլովի փորձերից մեկի նկարագրությունը. Պավլովը պայմանական ռեֆլեքսների առաջացումը լավ կերպով դիտելու համար որդանիզմի ռեակցիաներից ընտրեց իր համար ամենանպատակահարմարը՝ թուքը։ Մի կողմից թուքի հետ կապված իր անհատական գործունեության համարյա անվտանգ լինելը, մյուս կողմից թուքի լորձունքոտ լինելը և նրա կատարված փոփոխելիության կայունությունը նրան դարձնում են փորձի հիանալի առարկա։ Բերանի խոռոչում, բացի թքի բազմաթիվ

մանը գեղձերից, գործում են յերիք զույգ խոշոր թքագեղձեր, վորոնցից մեկ զույգի գործունեության այլ նպատակին ոգտագործելը չի խանգարում բերանի խոռոչի աշխատանքին։ Այդ թքագեղձերից մի զույգի արտադրանքը թափվում է ոյտի վրա բաց արած անցքի մոտ ամրացրած հատուկ, թափանցիկ ապակե ամանի (փիստուլայի) մեջ։ Այսպիսով հնարավոր է պարզ տեսնել շան արտադրած թքի քանակը։ Յերբ վերջի նշանները բոլորովին անհետանում են, արդեն հնարավոր է անմիջապես անցնել փորձի։

Բերենք պայմանական ռեֆլեքս առաջացնելու փորձերից մեկն այնպես, ինչպես նկարագրում է Պավլովի աշքի ընկնող աշակերտներից մեկը՝ պրոֆ. Ֆրոլովը։

Ձեռնարկենք, վոր շանն ուտելու համար տալիս ենք 15 գրամ մսի և չորացրած հացի փոշի։ Շունն, ասենք, փոշին ուտում է 30 վայրկյանում և այդ ժամանակ մեր ապակյա ամանի մեջ թափվում է 20 կաթիլ թուք։ Այդ տվյալն արձանագրում ենք այսպես.

Վորքան ժամանակում է կերակուրն ուտում	Անպայման ռեֆլեքսի մեծությունը
30 վայրկյան	20 վայրկյան

Մեր արձանագրության առաջին մասի թիվը կլինի շան լավ ինքնազգացման չափանիշը։ Միայն ուժեղ կերակրված կամ հիվանդագին դեպքերում այդ թիվը կարող է ընկնել մինչև զերոյի։

Այս պայմանական գրգռիչի մեծության անփոփոխ լինելը հանդիսանում է միայն հիմնական փորձի նախադուռը։ Իրրև պայմանական գրգռիչ ընտրվում է այնպիսին, վորը վոչ շատ ուժեղ է, վոչ էլ շատ թույլ և կենդանու վրա առանձին ազդեցություն չի թողնում։ Այդպիսիներից ամենահարմարը մետրոնոմն է, մի գործիք, վորը ժամանակի վորոշ հերթականությամբ վոչ բարձր ձայն է հանում։ Ուրեմն փորձի նպատակն է մետրոնոմը դարձնել պայմանական ռեֆլեքս։ Դրա համար, ինչպես արդեն գիտենք, պետք է մետրոնոմի զարկը նախընթացավի շան կերակրելուն։ Փորձը կրկնվում է վոչ հաճախ, քան 8—10 րոպեն մի անգամ։ Ընդամենը մեկ որում կատարվում է

9—10 վորձ, վորի ընդհանուր տեվողությունը 1—1 $^1/_2$ ժամ է։

Սկզբում մետրոնոմի ձայնը վոչ մի ուշադրություն չի առաջացնում, բայց յերբ նախքան կերակրումը մի քանի անգամ լսում են մետրոնոմի հնչյունները, ձայնը լսելիս շան վարքը դառնում է ակտիվ և աշխույժ, շունը սկսում է շրթունքները լիզել և առաջին կաթիլ թուքը կաթում է տափակ մեջ։ Պայմանական ռեֆլեքսն սկսում է իրեն հայտնաբերել։ Թուքարտադրությունը հետզհետե սկսում է ավելանալ։ Արձանագրենք հետևյալը։

Պայմանական գրգռիչը տալու ժամանակ	№ № ըստ կարգի	Գրգռիչի անունը	Կաթիլների քանակը, պայմանական ռեֆլեքսի մեծությունը	Մետրոնոմի գործը սկսելուց քանի րոպե հետո
15 ժ. 20 ր.	1	մետրոնոմ	0	—
15 ժ. 28 ր.	2	մետրոնոմ	0	—
15 ժ. 35 ր.	3	մետրոնոմ	1	20 վայրկյան
15 ժ. 49 ր.	4	մետրոնոմ	3	10 վայրկյան

Այսպիսով պայմանական ռեֆլեքսի առաջացումը կատարվում է 7—10 որվա ընթացքում, նայած գրգռիչի բնույթին և շան ներվային համակարգության։ Բացի մետրոնոմից, գիտնականները շան մոտ պայմանական ռեֆլեքսի յեն վերածել էլեկտրական լապտերը, զանազան ձևերով ցույց տալով այն, էլեկտրական զանգը, շան մարմնի քորելը, տաքություն կամ ցրտություն տալը և այլն։

Առաջացած պայմանական ռեֆլեքսը յերկար չի մնում ուղեղում։ Յեթե մենք մի քանի անգամ խափում ենք շանը, այսինքն, ասենք, մետրոնոմից հետո չենք կերակրում, թքի քանակը սկսում է պակասել և վերջ ի վերջո հասնում է զերոյի։ Պայմանական ռեֆլեքսը հանգավ, նա արժեքազրկվեց։ Յեթե ուզում ենք, վոր նա նորից դառնա պայմանական, պետք է կրկնենք վորձը։ Պայմանական ռեֆլեքսի և անպայմանի միջև ստեղծվող կապերը դոյանում և ամրանում են ուղեղային կիսագնդերում։ Յեթե կիսագնդերի կնիքը հանվի, ինչպես յուրյ են տվել Ֆլուրանսի, Հոլլի և Պավլովի վորձերը, կենդանին կկորցնի պայմանական ռեֆլեքս առաջացնելու իր ընդունակությունը։

թեև անպայման բնազդային բնույթի ռեֆլեքսային շարժումները կլինան։ Շունը կարող է հարձակվել, կերակրվել, պահպանում և սեռական ընդունակությունը և այլն։

Արգելակման յերևույթը. Ինչպես տեսանք, յեթե մետրոնոմի պարկերը, վորոնք շան համար դառել էին պայմանական դրդռիչներ, չեն զուգակցվում շան կերակրման հետ, ռեֆլեքսը հանդչում է։ Ռեֆլեքսը կարող և հանդչել և այլ պատճառներից։ Յեթե շանը վախեցնում ենք կամ ջղայնացնում (հատկապես շանը շատ և ջղայնացնում կողմնակի մարդու ներկա լինելը փորձի ժամանակ) ռեֆլեքսը նույնպես հանդչում է, կամ ինչպես Պավլովն է ասում, արգելակվում է։

Արգելակումները լինում են յերկու տեսակ՝ արտաքին և ներքին։

Արտաքին արգելակումների պատճառները կողմնակի դրգռիչներն են (աղմուկը, ուժեղ լույսը, վախը, ցուրտը և այլն)։

Ներքին արգելակումների պատճառը արտաքին դրգռիչները չեն, նրանց պատճառները խոր են և ընկած են ներվային համակարգության հիմքում։ Ռեֆլեքսի հանդչելու այն դեպքը, վորը վերևում նկարագրեցինք, արդեն ներքին արգելակում է։

Ինքն իրեն արգելակում. 1922 թվին ակադեմիկոս Պավլովը Գիտությունների Ակադեմիայում զեկուցեց իր 20 տարվա փորձի յեզրակացություններից մեկի մասին։ Պավլովը հերքելով մինչ այդ յեղած բազմաթիվ տեսությունները՝ ապացուցեց, վոր քունը վոչ այլ ինչ է, քան ներքին արգելակում։ Յեթե շանն անընդհատ դրգռում ենք վորևե դրգռիչով, շունն սկսում է հորանջել, թմրում է և վերջապես քնում։ Հատկապես ջերմային քնույթի դրգիռները հեշտությամբ քուն են առաջացնում։ Շունն սկսում է ննջել և այն ժամանակ, յերբ պայմանական դրգռիչի և անպայմանի միջև յեղած ժամանակը հետզհետե յերկարացվում է։ Պավլովն այդպիսի արգելակումը բացատրում է հետևյալ կերպ։

Ջերմային դրգռիչի ազդեցությունը շան վրա առաջացնում է նրա վողջ գործունեության մասնակի դադարեցում։ Շունը շարունակ միևնույն դրգիռը ստանալով, հնարավորություն չունի այլևս ակտիվ պատասխանելու, վորովհետև ուժասպառ է։ Այդ մեծ ներգիա չի պահանջում։ Պատասխանի անհրաժեշտության բացակայությունը նրա մեջ առաջացնում է մասնակի արգելակում։

Գործունեության այդ մասնակի կրճատումը՝ մասնակի արգելակումը, շնորհիվ միևնույն կերպով կրկնվելուն և այլ գործունեության բացակայության, աստիճանաբար սկսում է ավելի և ավելի տարածվել մինչև դառնում է ընդհանուր արգելակում։ Գրգիռների բացակայությունն ուղեղի մի մասում արգելակումը տարածում է այդ մասից ամբողջ ուղեղը, արգելակվում է ամբողջ ներվային համակարգությունը, այսինքն սրտանիմը քնում է։

Նույն բանն է տեղի ունենում կենդանու մոտ, յերբ փորձ ենք կատարում նրա վրա։ Շարունակ գործունեության հանգիստ բերելը խանգարում է արգելակվելուն։ Բայց յերբ շունը դասվում է դաղջության վրա, կապված է, նա, ի հարկե, չի կարող գործունեության հանգիստ բերվել, դրա համար էլ նրա մոտ սկսվում են առաջանալ արգելակման պրոցեսները մի այն ուղեղի մի մասում, վորոնք հետզհետե տարածվում են ուղեղի ամբողջ կեղևի վրա և առաջացնում են քուն։ «Սրտաբին աշխատելի վորոշ դրգիռը կարող է ճնշել կենդանու ներվային համակարգը, անպայմանորեն առաջացնել հանգիստ, այնպես, ինչպես այլ դրգիռները առաջացնում են այս կամ այն ներվային բարդ ֆունկցիաները»։ Այլ կերպ ասած՝ «բազմապիսի ակտիվ ռեֆլեքսների կողքին կան և պասսիվ քնարեր ռեֆլեքսներ» (Պավլով)։

Այսպիսով՝ «նորմալ քունը հոգնածության նախապատրաստողն է, կեղևային ներքին գործունեության արթուն պահակը։ Կեղևային էներգիան չպետք է ծախսվի առանց հաշվի և գիշերը և ցերեկը... նա պետք է խնայողաբար ոգտագործվի» (պրոֆ. Ֆրոլով)։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Վերն է ակադեմիկոս Պավլովի աշխատությունների խոշորագույն նշանակությունը։ Ի՞նչպես բացատրեց Պավլովը կենդանիների հոգեկան գործունեության սրենքները։

2. Տվեք ռեֆլեքսի բնորոշումը և նրա սխեման։

3. Անպայման ռեֆլեքսի հյուրությունը, տեսակները, նշանակությունը և հատկությունները։

4. Բնորոշեցեք պայմանական ռեֆլեքսը, թվեցեք նրա հատկությունները, նշեցեք անպայման և պայմանական ռեֆլեքսի փոխհարաբերությունը։

5. Նկարագրեցեք շան վրա պայմանական ռեֆլեքս առաջացնելու փորձը։

6. Ի՞նչ բան է արգելակումը։ Տվեք ներքին և արտաքին արգելակների բնորոշումը։

7. Պավլովն ինչպես է բացատրում քնի յերևույթը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Павлов И. П.—«Лекции о работе больших полушарий головного мозга».

2. Ю. П. Фролов.—«И. П. Павлов и его учение об условных рефлексах».

3. Шаргородский.—«Вегетативная нервная система».

Ռուսերենից ոգտվել չկարողացողների համար՝

1. Կաբանով.—«Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա», Պետհրատ 1937, եջ՝ 192—206։

2. Ցե. Հասրաթյան.—«Պայմանական ռեֆլեքսների ուսումնասիրը»։

Առաջադրություններ.

3. Դ. Դզիգյան.—Ֆիզիոլոգիայի առաջադրություններ։

ՆԵՐՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԴԵՐԸ*)

Կենդանի որգանիզմը բազմաթիվ թելերով կապված է նրան շրջապատող արտաքին միջավայրի հետ։ Բնական է, վոր որգանիզմը պետք է այնպիսի կառուցվածք և ֆիզիոլոգիական հատկություններ ունենա, վորով կարողանա կոոռդինացնել շրջապատող միջավայրի բարեհաջող և անբարեհաջող պայմաններին, վորպեսզի նա կարողանա հաղթահարել դժվարությունները։ Բացի այդ, կենդանին պետք է անընդհատ հարմարվի շրջապատի փոփոխվող պայմաններին, ամբացնի հարմարվելու շնորհիվ առաջացած փոփոխությունները և այդպիսիք ժառանգաբար փոխադրի իր սերունդներին, հակառակ դեպքում կենդանու այդ տեսակի գոյությանը վտանգ է սպառնում։

Կենդանի աշխարհի զարգացման ցածր աստիճանը միաբջիջ որգանիզմներն են։ Նրանց վողջ մարմինը բաժանվում է յերկու շերտի, արտաքին—նուրբ, թափանցիկ միաձուլակ (ակտոպլազմա) և ներքին—հատիկավոր, զանազան լցվածքներով և կորիզով (էնտոպլազմա)։ Արտաքին շերտը, վորն անմիջապես ընդունում է արտաքին աշխարհի գրգիռները, գլխավորապես ծառայում է կենդանու շարժման համար։ Կենդանու շարժումը կատարվում է կամ մերթ ընդ մերթ բուսնող կեղծ վոտիկների, կամ թե չունեցող մտրուկիկների, լախտուկիկների միջոցով։ Շարժման այդ որգանները հաճախ ծառայում են նաև կերակուրը բռնելու համար։ Ներքին մասում կերակուրը մարսվում է, ինչպես և հավաքվում է մարսված և յուրացված նյութերի պաշարը։

*) Այս գլուխը կազմված է ըստ Շարդոլոզովու «Вегетативная нервная система» աշխատության։

Արդեն մի քանի աստիճան բարձր բազմաբջիջների մոտ մենք հանդիպում ենք մարմնի բավականին բարձր կառուցված-քի։ Որգանիզմի բջիջների և թելիկների մեջ արդեն կա մասնագիտացում՝ աշխատանքի բաժանում։ Դրանցից մի մասը միջավայրի հետ հաղորդակցելու դերն են կատարում։ Նրանք զգայուն են դառնում միջավայրից յեկած վորոշ տեսակի գրգիռների հանդեպ (ընդհանրապես գրգռվելու ընդունակությունը հատուկ է բոլոր տեսակի որգանիզմներին)։ Զուգվում են հատկապես տեսողական և լսողական գրգիռներ ընդունող բջիջները։ Մյուս մասը ծառայում է նյութերի փոխանակության, սերնդի պաշտպանության և այլ նպատակների համար։ Վորքան բարդ է կառուցված կենդանու որգանիզմը, այնքան նրա բջիջների մասնագիտացումը ուժեղ է, հետևաբար ավելի հարուստ է և այն որգաններով, վորոնց միջոցով նա փոխհարաբերության մեջ է մտնում շրջապատի հետ։ Բացի այդ, անհրաժեշտ է լինում հատուկ ապարատ, վորն արդեն պետք է կանոնավորի բարդ կենդանու բազմաթիվ որգանները։

Միջավայրի հետ փոխհարաբերությունը պայմանավորող, ընչպես և ներքին որգանների գործունեության կարգավորող ապարատը հիմնականում արտակարգ կերպով բարդ կառուցված ներվային համակարգություն է։ Համեմատաբար արդեն ցածր աստիճանում գտնվող կենդանիների մոտ (պոլիպներ, մեդուզաներ, հիդրոններ) եպիթելային բջիջների շարքում հանդիպում ենք ուժեղ գրգռականության՝ այսպես կոչված ներվային բջիջներ։ Ցածր կենդանիների մոտ այդ բջիջներն ավելի մոտ են գտնվում ծայրամասին, այսինքն արտաքին միջավայրին, վորտեղից կենդանիները գրգիռներ են ստանում։

Կենդանու որգանիզմի կառուցվածքի բարդացման, փոփոխման հետ միասին, փոխվում է նաև ներվային սիստեմը։ Փոփոխությունը կատարվում է յերկու ուղղությամբ։ Մի կողմից այդ ավելի զգայուն և գրգռվող ելեմենտները գնում են ավելի խորը, դեպի մարմնի տակ, բայց կազմակերպվածությունն արդեն բարդացնում է որգանիզմի պատասխանը արտաքին աշխարհից յեկող գրգիռներին։ Այդ պատասխանն արդեն միշտ չէ, վոր կարիք կա տալու անմիջապես՝ գրգիռն ստանալու վայրկյանին։ Ինքը՝


գլխուղեղը արդեն պետք է կապված լինի այն վողջ օրգանների հետ, որոնք գտնվում են օրգանիզմի ներսում։ Բացի այդ հարկավոր է պաշտպանել ներվային քնքուշ տարրերը վնասումից։ Այստեղից պարզ է ներվային համակարգության զարգացման ուղղությունը, որը կայանում է նրանում, որ դեռևս իրենց կառուցվածքով պարզ ներվային ապարատները պերիֆերիայից շարժվում են դեպի օրգանիզմի խորքը, ծայրամասերից հեռու։ Իբրև ազդանշան ովողներ, ծայրամասերում մնում են այսպես կոչված միայն զգայնության օրգանները (տեսողության, լսողության, հոտառելիքի և այլն), որոնք սերտ կապված են դեպի խորքը գնացող ներվային ապարատների հետ։ Այդ ազդանշան ովողներից մեկը մենք կարող ենք դիտել անձրեվավորդի աչքի վրա։ Այդ շոշափելիքային օրգանը, որը սենսիլ է կոչվում, բաղկացած է անձրևավորդի վերևի մասերում մնացած զգացող բջիջների մի խմբից, որը շրջապատված է հատարակ էպիթելայով և գլխին ուղղարկում է էպիթելայի տակ, ներվային նրբին թելիկներին։

Ցերկրորդ փոփոխությունը կատարվում է նաև կառուցվածքի բարձրացման, ներվային տարրերի խմբավորման ուղղությամբ։ Անվողնաշարավորների մոտ (ըստ Դոգելի) մենք հանդիպում ենք ներվային համակարգության կառուցվածքի չորեք ավելի բարդ տիպերի։

Առաջին, ամենապարզ տիպը ներվային պարզ անկանոն փնավորումներն են։ Ներվային բջիջները, որոնք ցրված են ներվային հյուսվածքների մեջ, բազմաթիվ ճյուղավորումների, թելիկների միջոցով, առանց որևէ կարգի, հյուսվում են միմյանց հետ, առեղծելով ցանց կամ հյուսվածք։

Ցերկրորդ տիպը ներվային կծիկային տիպն է։ Ներվային թելերի յուրաքանչյուրը որոշ ճշդիտ կարգով հավաքվում են, կազմում կծիկներ։

Ցերրորդ, բարձր տիպը ներվային հանգույցներն են կամ գանգլիոնները, որոնք զարգացման ընթացքում մեծանում են։ Նրանք ներկայացնում են կենտրոնական ներվային ապարատի առաջին ակնարկը և բաղկացած են ներվային բջիջների կուտակվածքներից, որոնք կարծես թե սահել են ծայրամասերից դեպի օրգանիզմների որոշ մասեր և կապված են նրա հետ թե-



Մարդու ներվային համակարգության ընդհանուր տեսքը։

Աչքի միջոցով։ Ներվային համակարգության այդպիսի տիպ ավելի հաճախ պատահում է փափկամարմինների և հոդվածոտանիների մոտ։

Ներվային համակարգության ավելի բարդ կառուցվածք ունեն ողնաշարավորները։ Ողնաշարավորների մոտ որգանիզմի վորոշ, լավ կերպով պաշտպանված մասերում մենք տեսնում ենք ներվային մասսայի՝ ըղեղների և թելիկների կուտակում, վորոնցից կազմված է այսպես կոչված բարձր ներվային համակարգությունը։

Կենտրոնական ներվային համակարգությունը ներվային թիւերի միջոցով կապված է մեր որգանիզմի ամենահեռավոր մասերի հետ։ Որգանիզմի այդ ներվային հոսանք-հաղորդիչ բազմաթիվ այն թելիկները, վորոնք տարբեր ուղղություններով գնում են դեպի որգանները և հյուսվածքները, կոչվում են ծայրամասային (պերիֆերիկ) ներվային համակարգություն։ Այդ հաղորդիչներից մի մասն առանձնահատուկ պարտականություն ունի այն և, վոր նրանք գրգիռը ծայրամասերից տանում են կենտրոն։ Այդ պատճառով էլ նրանք կոչվում են կենտրոնամիտ կամ զգացող հաղորդող ներվեր։ Այդ հաղորդիչների մի այլ մասը գրգիռը կենտրոններից տանում է դեպի ծայրամասերը և կոչվում է կենտրոնախույս կամ շարժող։

Վորպեսզի պարզ լինի, թե վորքանով և բարդանում ներվային համակարգը բարձր որգանիզմների մոտ, բերենք մի որինակ։ Պարզ կենդանիների մոտ ներվային բջիջների քանակը միայն հարյուրներով կարելի է հաշվել, մինչդեռ մարդու գլխի ուղեղի կեղևում, վորի մեծությունը 1700—2200 քառ. սանտիմետր է, ներվային բջիջների քանակը մոտ 17 միլիարդի է հասնում։ Մարմնի առանձին մասերի գործունեության ժամանակիտացումը ավելի ուժեղ և արտահայտված ներվային համակարգում։ Բարդ որգանիզմներն իրենց որգանիզմում չունեն վորևե մաս, վորն այս կամ այն ձևով կենտրոնական ներվային համակարգության հետ կապված չլինի։

Բացի այդ նեղ մասնագիտացումից, բարձր կազմակերպված կենդանիների մոտ առաջանում են ներվային համակարգության ավելի խոշոր բաժիններ մասնագիտացում, այս անգամ ավելի ընդհանուր բնույթի։ Այդ մասնագիտացումը կապված է ներվային սիստեմի հիմնական աշխատանքի հետ՝ կառավորող, համաձայնեցնող, կարգավորող։

Կառավարող, համաձայնեցնող, կարգավորող ապարատը բաղկացած է յերկու մեծ բաժիններից։ Այդ բաժիններից առաջին մասը կրում է ցերեբրոսպինալային (ողնուղեղային) կամ անիմալային (կենդանական) անունը, մյուսը—վեգետատիվ (բուսական) կոչումը։

Ներվային համակարգության այդ յերկու խոշորագույն բաժանմունքների գործունեությունը, չնայած նրանց մասնագիտացմանը, խիստ համաձայնեցված է, կապված մեկը մյուսի հետ այնպես, ինչպես առհասարակ վորջ որգանիզմի գործունեությունը։ Պարզ է, վոր որգանիզմի այդ յերկու սիստեմների ներդաշնակ գործունեության համար կարիք կա ավելի կենտրոնացած ղեկավար ապարատի։ Ցերեբրոսպինալ և վեգետատիվ ներվային սիստեմների կատարելագործված, համերաշխ, ներդաշնակ գործունեության հնարավորությունը բարձր կենդանիների և մարդկանց մոտ պայմանավորված է կենտրոնական մոխրագույն զանգվածների (հյուսվածքների կուտակում), ինչպես և հիպոֆնդերի կողմից առաջացման հետ։

X ՆԵՐՎԱԾԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնական ներվային համակարգությունը որգանիզմի բոլոր մասերի, ինչպես և ծայրամասերի հետ կապված է ներվային թելիկների խիստ տարածված ցանցով։ Այդ թելիկների միջոցով կենտրոնական ներվային ապարատը միշտ տեղյակ է լինում շրջապատի որգանիզմի համար վորևե նշանակություն ունեցող փոփոխություններին, ինչպես և ներքին անոթաշարժ որգանների գործունեությանը։ Միաժամանակ նա շարժող կամ կենտրոնախույզ ներվերի միջոցով հակում է, կարգադրություն անում, կարգավորում որգանիզմի առանձին մասերի աշխատանքը։

Ինքը, կենտրոնական ներվային համակարգությունը գլխուղեղում և վոսկրային պինդ կառուցվածքների մեջ՝ վողնաշարում, վորը բաղկացած է իրար հետ կապակցված վողներից (այստեղ և գանգվում վողնուղեղը) և գանգային արկղից (այստեղ է տեղավորված գլխի ուղեղը)։

Նույնիսկ այդ վոսկրային պատյանների ներսում կենտրոնական ներվային համակարգը շրջապատված է մի շարք ծածկույթներով։ Այդ հագուստներից ամենաարտաքինը կոչվում է ուղեղային կարծր թաղանթ, վորը խիստ ամուր կերպով հագցված, համեմատաբար պինդ, կոպիտ մի հյուսվածք է։ Ներվային համակարգությունը պատող մյուս յերկու թաղանթների մեջ կա վորոշ տարածություն, լցված հատուկ թափանցիկ ուղեղային հեղուկով։ Ուղեղային հեղուկն իր կառուցվածքով նմանվում է արյան պլազմային։ Այսպիսով ներվային համակարգությունն ամուր կերպով պաշտպանված է ամեն տեսակի ջնջոտկան ազդեցություններից։

Վորպեսզի կենտրոնական ներվային համակարգը կարողանա ճիշտ կերպով դեկավարել, նա մի կողմից անընդհատ կապ պետք է ունենա ծայրամասերի հետ՝ շարունակ տեղեկանքներ ստանալու համար, մյուս կողմից նա պետք է հնարավորություն ունենա անհրաժեշտ դեպքում դեպի ծայրամասն ուղարկել համապատասխան կարգադրություններ։ Կարճ ասած՝ նա պետք է յերկկողմանի կապ ունենա։

Ցավ իսկապես այդ վոսկրային արկղիկի բազմաթիվ անցքերով ուղեղից դեպի ծայրամասերը և ծայրամասերից դեպի

ուղեղն են գնում բազմաթիվ զանգուղեղային և վողնուղեղային ներվեր, վորոնք իրենց բազմաթիվ ճյուղավորումների հետ միասին սաեղծում են սպիտակ թելերի մասսա։ Ներվային ճյուղավորումների այդ վողջ մասսան, ինչպես ասացինք, ծայրամասային (պերիֆերիկ) ներվային համակարգը են կոչվում։ Այդ սիստեմի մի մասը բաղկացած է այնպիսի թելերից, վորոնք դրդիռը պերիֆերիայից տանում են դեպի կենտրոն (կենտրոնաձիգ ներվեր) և ներվերից, վորոնք կենտրոնի կարգադրությունները հաղորդում են պերիֆերիային (կենտրոնահասույց ներվեր)։

Ներվային թելիկի կազմությունը.—Դեկավարման այդ բարդ սիստեմը բաղկացած է հետեվյալ տարրերից. 1. ներվային բջիջ, 2. ներվային թելիկ, 3. ներվոգլիա,—ներվային վերջույթներ։ Ներվային բջիջներից յուրաքանչյուրի մեջ տեղում նկատվում է ավելի լուսավոր մի մաս, վորն իր մեջ ունի ավելի նուրբ փոքրիկ մասնիկներ։ Դա կորիզն է և կորիզիկը։ Կորիզի դերը հսկայական է։ Նրա կործանումով վոչնչանում է նաև վողջ ներվային բջիջը, քանի վոր կորիզը բջիջի ամենահիմնական մասն է։ Կորիզի արտաքին միջավայրը կազմում է բջիջային մարմինը։ Կեղևի կիսաթափանցիկ թաղանթը շրջապատված է գազանման և հեղուկ նյութերով։ Այդ նյութերը ծառայում են նյութերի աշխույժ փոխանակության համար. նրանցից մի մասը յուրացվում է, ասիմիլացիայի յենթարկվում, մյուսը միանում է պրոտոպլազմային, մի այլ մասը ելնում է բջիջում։ Նյութի այդ աննդավերամշակումը, յուրացումը, ասիմիլացիան կորիզի բացակայության դեպքում չի կարող կատարվել։

Բջիջային կորիզի չորս կողմում յերեվում են մուգ կոշտեր, վորոնք իրենց արտաքին տեսքի շնորհիվ ստացել են վագրատուրն կամ նիսլիի մարմնիկներ անունը։ Յերբ համեմատում ենք աշխատող բջիջը հանգիստ վիճակում գտնվող բջիջի հետ, հանդիպում ենք մի հետաքրքիր յերեվույթի։ Աշխատող բջիջների մեջ վագրանման մարմնիկների քանակը պակասում է, այդ պատճառով էլ կորիզային շրջապատը բաց դուրն է տանում։ Այստեղից հետևցնում են մի կարևոր յեղրակացություն, թե վորի վագրանման մարմնիկները բջիջի աշխատանքի համար անհրաժեշտ ենթերքային պահեստն են։ Վագրանման մարմնիկների

կոշտուկների մեջ նկարման դեպքում յուրահատուկ են ներքագույն թելիկների՝ նեյրոֆիբրիլների խիտ միավորումները։ Այդ նեյրոֆիբրիլները ներվային դրվեների հիմնական հաղորդիչներն են։ Այդ ներվային դրվեի նյության մասին մինչև հիմա մենք դեռևս լրիվ պատկերացում չունենք։ Գիտնականների բոլոր ջանքերը՝ ներվային դրվեը վերածել միայն ֆիզիկական կամ միայն քիմիական յուրահատկների, անհաջողության են մատնվել։ Հետևյալ փաստերը խոսում են ներվային դրգռի ե-յությունը մեկուսմանիորեն հասկանալու դեմ։ Եթե բաց արած ներվի մեջքին մասը դնենք, ասենք, թթվածնից դուրկ կամ խլորոֆորմ պարունակող կամերայի մեջ, մենք կտեսնենք, որ հոսանքի ուժն այդ մասերում թուլանում է։ Բայց հենց որ ներվային հոսանքն անցնի վերոհիշյալ մասերով, նա անմիջապես կստանա իր նախկին ուժը։ Իսկ ֆիզիկայից հայտնի է, որ ֆիզիկական պրոցեսները (ձայն, լույս) թուլանալուց հետո այլևս չեն վերականգնում իրենց նախկին լարվածությունը։

Մյուս կողմից դուռ քիմիական պրոցեսը պահանջում է ավելի մեծ քանակություն քան որքան իրականում ծախսվում է ներվի աշխատանքի ժամանակ։ Չափելու նրբագույն դործիքների միջոցով հնարավոր եղավ պարզել, որ ներվի դործունեության ժամանակ շատ քիչ չափով բարձրանում է որգանիզմի ջերմությունը։ Աշխատելու ժամանակ թթվածնի պահանջը շատ քիչ քանակությամբ է աճում, ինչպես և ավելանում ածխաթթվի արտադրությունը։

Վերջին ժամանակներս, ֆիզիկական քիմիայի խոշորագույն նվաճումների շնորհիվ, հնարավոր եղավ առաջադրել նոր թեորիա՝ ֆիզիկո-քիմիական տեսություն։ Այդ տեսությունը դլխավորապես կապված է Ներնստի, Լազարեվի և Կոթի աշխատությունների հետ։ Ներվային պրոցեսի ֆիզիկո-քիմիական տեսության եությունը հիմնականում հետևյալն է։

Ըստ ակադեմիկոս Լազարեվի ուսմունքի, ներվային դրգռիդը կապված է ներվային հաղորդիչների մեջ իոնների կենտրոնացման փոփոխության հետ։ Իոնների կոնցենտրացիայի փոփոխությունները և դրգռման հետագա պրոցեսը պայմանավորված է այն դիմադրությամբ, որը ցույց են տալիս իոնների շարժման հաղորդիչի մի քանի անթափանցիկ թաղանթները։ Այդ

իոնային պրոցեսը, որն ըստ էության ներվային հյուսվածքի էլեկտրական կազմում, ըստ Լազարևի կարելի չի համեմատել պայթյունի ալիքի կամ վառոդի բոցավառման հետ։ Այդ բոցավառումը հազարհետ ավելի փոքր վարակից արագությամբ հասնում է մինչև վերջը, հետևաբար անցնելով միևնույն կետից դեպի մյուսը, ըստ որում հոսանքի ալիքն անկախ դրգռման ուժից՝ վոչնչացնում է բոլոր դպչուն և դրգռվող մարմինները։ Այսպիսով ներվային դրդիռը կարելի չի պատկերացնել իբրև իոնների կոնցենտրացիայի ալիքանման տեղափոխություն՝ ներվային թելի միջոցով։ Ելեկտրական այն եֆեկտը, որն առաջվում է իոնների կոնցենտրացիայի տեղափոխության միջոցով, դրգռվելով մի մասում, առաջացնում է դրգռվածություն հետևյալ ողակում և այլն։ Ներվային թելի միջոցով դրդռի տեղափոխվելու արագությունը, մարդու մոտ, մեկ վարկյանում հասնում է 120 մետրի։

Իոնային տեսությամբ աշխատում են ապացուցել և ներվային համակարգության հիմնական ֆունկցիոնալ առանձնայնությունները՝ դրգռվելը և արգելակվելը։ Տարբեր իոններ գործում են տարբեր կերպ։ Այսպես կոչված միավալենտ իոնները— կալիումը (K) և նատրիումը (Na) դրգռիչ իոններ են, մինչդեռ, յերկվալենտ իոնները, գլխավորապես կալցիումը (Ca), առաջացնում են արգելակման պրոցես։ Դրգռող և արգելակող իոնների փոխհարաբերության փոփոխումը պայմանավորվում է արգելակման կամ դրգռման պրոցեսի առկայության հետ, ըստ որում նրանք կարող են փոխադարձաբար հաղորդել միմյանց։ Նրբին հետազոտությունների շնորհիվ պարզվել է, որ ներվի ամենամաքսիմալ դրգռվածությունը 25 մմ. և հասնում (միլիվոլտ), ներվային ալիքի յերկարությունը 5,4 սանտիմետր է։

Ճիշտ կլինի արդյոք ներվային հոսանքի վոլջ հյուսվածքը բացատրել զուտ ֆիզիկո-քիմիական յերևույթներով։ Ընդունած, որ այդ յերևույթները ներվային պրոցեսների հիմքն են կազմում, ֆիզիոլոգիայի մի շարք ավյալներն ասում են, որ ներվային պրոցեսները դրանով չեն սահմանափակվում։ Ներվային պրոցեսը ֆիզիկո-քիմիական պրոցեսներից ծնված յուրահատուկ ֆիզիոլոգիական բարդ յերևույթ է և ուժեղ և ավելի բարդ որինաչափություններով, քան ֆիզիկո-քիմիական որինաչափությունները։ Դիտականներն զբաղված

են այդ ֆիզիոլոգիական առանձնահատկությունները պարզելու ճանապարհով։ Ներվային բջիջի վերոհիշյալ կառուցվածքները գտնվում են նրա պրոտոպլազմայի մեջ, որը կիսահեղուկ կոլոիդային մասին է՝ բաղկացած սպիտակուցներից, ճարպերից և ածխաջրերից, իր մեջ պարունակում է 75—95 տոկոս ջուր, որի մեջ լուծված են գանազան աղեր։ Բացի դրանցից կա և հատուկ մուգ կառուցվածք, որը գտնվում է պրոտոպլազմայի ներսում, բջիջի անկյուններից մեկում։ Այդ մուգ մարմինը բոլոր բջիջների մեջ չենք նկատում։ Նա մեռած, մաշված նյութ է և առաջանում է միայն ծերության, զառամության ժամանակ, երբ ոլգանիզմն սկսում է քայքայվել։ Քանի որ այդ մարմնիկը ներկված է, այդ պատճառով էլ նրան անվանում են պիգմենտ։ Բացի դրանից, բջիջի մարմնից դուրս են գալիս յելուստներ։ Այդ յելուստներից մեկը, որը միշտ կամ մեծ չափով ճյուղավորված է, կոչվում է դենդրիտ։ Այդպիսի յելուստներից սովորաբար յուրաքանչյուր բջիջ մի քանի հատ ունի։ Մյուսները ձգվում են ուղիղ թելի նման գլանաձև առանցքի նմանությամբ և ոչ մի ճյուղավորություն չունեն։ Դրանք այսպես կոչված առանցքագլանաձև յելուստներ են կամ աքսոններ։ Յուրաքանչյուր բջիջից սովորաբար դուրս է գալիս միայն մեկ ակսոն։ Այդ յերկու յելուստները ոչ միայն տարբեր կառուցվածք ունեն, այլև տարբեր դեր են կատարում այն ժամանակ, երբ գրգիռները այլ բջիջներից ստացած գրգիռները միշտ տեղափոխում են դեպի կենտրոնական բջիջները, դեպի կենտրոնները։ Նրանք կենտրոնաձիգ են, իսկ աքսոնները, ընդհակառակը, կենտրոնի կարգադրությունները տանում են դեպի ծայրամաս, այսինքն կենտրոնախույս են։

Ֆունկցիոնալ տեսակետից այս կարևոր տարբերությունը կոչվում է «դինամիկ բևեռականացման օրենք»։

Աքսոնի կառուցվածքը. Ծանոթանանք աքսոնի կառուցվածքի հետ։ Բջիջից նա մի քիչ հեռանալով, ծածկվում է թաղանթներով վորոնք նրա համար պատյանի դեր են կատարում։ Այդ տեղ աքսոնն ստանում և առանցքային գլան անունը։ Առանցքային գլանն իր թաղանթների հետ միասին կոչվում է ներվային թել։ Միատեղ համախմբված թելերի մի խումբ կոչվում է ներվ։ Այն թաղանթը, որն անմիջապես պատում է աքսո-

նին, քնքուշ մի նյութ է, որի կողմի մեջ մտնում են ներվային թելի հաճար խիստ կարևոր նշանակություն ունեցող տարրեր—լուսածին, ճարպանման նյութեր և այլն։ Այդ թաղանթը կոչվում է միելինյան կամ փոփոխի թաղանթ։ Նրա դերը, ըստ յերևույթին, այն է, որպեսզի ազդանի միջով անընդհատ անցնող ներվային հոսանքին թույլ չտա սրվելու և տարածվելու։ Ավելի պարզ ասած, միելինյան թաղանթը նման է նյութին, որը պատող մեկուսացուցիչ նյութերին։ Մեկուսացնող նյութը—միելինը խոշոր նշանակություն ունի ներվային հոսանքի արագության հաճար։ Այդեն մի ներվային թել, այսինքն առանցքային գլան, իր թաղանթներով վորևե ներվային բջիջի շարունակությունն է կազմում։ Ներվային բջիջը իր յերկատոնուքի հետ միասին կոչվում է նեյրոն։

Ցնցերբոսպինալ ներվային սիստեմի բոլոր հաղորդիչները բաղկացած են իրար հետ կապված նեյրոններից շղթայից։ Հենց այստեղ է տեղի ունենում գրգռի ընդունումն ու պատասխանը։ Համաձայն գրգռի, բոլոր ներվային վերջավորություններն բաժանվում են յերկու մասի՝ ֆիկատորի (այսպես կոչված շարժողական սեկրետորի) և զգացողի։

Վողնուղեղ. Ինչպես տեսանք, ներվային համակարգության զարգացման հետևանքով առաջանում և փոխկցիաների մասնագիտացում։ Անպայման ռեֆլեքսները, վորոնք չափազանց արագ և ավտոմատիկ կերպով են կատարվում, առանց գիտակցության մասնակցության կենսագործվում են ներվային համակարգության այն մասի կողմից, վորը գտնվում է վողնների մեջ և կրում է վողնուղեղ անունը։ Վողնուղեղը պետք է հնարավորություն ունենա մի կողմից վորևե ճանապարհով սիրելիֆերիֆերայից տանալու ներվային գրգիռը, մյուս կողմից համապատասխան կարգադրություն անելու շարժվող ներվների միջոցով։ Այսպիսով վողնուղեղի գործունեությունը կարծես թե ամբողջական փակ բնույթ է կրում և իր զգացող, շարժող ներվերի հետ միասին նամանում է ռեֆլեքս։

ՈՒՂԵՂՆԵՐԻ ԱՇԽ.

Ռեֆլեքսաբ ասելի այն մասը, վորը պրիմար հայրամասակից բերում է դեպի վողնուղեղը՝ զգացող (կենտրոնածիգ) մաս

և կոչվում։ Ռեֆլեկտոր ողնուղեղի մյուս մասը, որը տանում է ողնուղեղի պատասխան-իմպուլսները և առաջացնում շարժողություն, կոչվում է ռեֆլեկտոր ողնուղեղի շարժող (կենտրոնատուչ) մաս։ Ծանոթանանք ռեֆլեկտոր ողնուղեղի տարրերի հետ։ Զգացող ներվի ճանապարհին, ողնուղեղից վոչ հեռու, մենք տեսնում ենք ներվային բջիջներից ու նրա յելուստներից բաղկացած մի հանգույց, որը կոչվում է միջվողնային հանգույց։ Զգացող հաղորդիչի այն մասը, որը ձգվում է այդ հանգույցից դեպի մաշկը, կազմում է պերիֆերիկ զգացող մասը։ Ցեթե մենք ողնուղեղը մեջտեղից կտրենք, կտեսնենք, որ նա բաղկացած է յերկու միմյանցից տարբեր, վոչ միատեսակ մասերից։ Նրա ներսում գտնվող և հիմնականում ներվային բջիջներից բաղկացած մոխրանման շերտը նման է թիթեռնիկի։ Այդ մասը բոլոր կողմերից շրջապատված է մեծ քանակությամբ կուտակումից առաջացած սպիտակ, հաղորդող սիստեմին պատկանող թելիկներով։ Այդ սիստեմի միջոցով ողնուղեղը կապված է կենտրոնական ներվային համակարգության հետ։

Այսպիսով ողնուղեղի հետ կապված են հատարակ ռեֆլեկտոր գործողություննները։ Նրա ղեկավարությամբ են կատարվում մարմնի շարժումները, ինչպես և զգայնության պրոցեսը։

✗ ՑԵՐԿԱՑՆԱՁԻԳ ՈՒՂԵՂ

Ամեն բարդ բնույթի ռեֆլեկտոր շարժումները (կուլ տալը, շնչելը, փռշտալը և այլն) պահանջում են մի քանի ներվային կենտրոնների համերաշխ աշխատանք։ Պարզ և, որ հարկավոր է այնպիսի մի բարդ մարմին, որը ղեկավարի մի քանի ներվային կենտրոնների միացյալ աշխատանքը։ Այդ բարդ շարժումները ղեկավարող ուղեղը գտնվում է ներվային սիստեմի այն մասում, որը կազմում է ողնուղեղի դեպի գլուխը գնացող մասի շարունակությունը։ Շարժումների կոորդինացիաների կենտրոնը յերկայնաձիգ ուղեղն է։ Ցերկայնաձիգ ուղեղում գըտնվում են նաև բազմաթիվ կենտրոններ ու համարյա միատեսակ ֆունկցիա կատարող ներվային բջիջների կուտակումներ։ Այսպիսի կուտակումներից մեկը որգանիզմի կյանքի համար վճռական նշանակություն ունի, դա թափառող ներվի բջիջային հանգույցն է։ Այդ ներվը կարգավորում է սրտի, շնչափողի,

կերակրափողի, թոքերի, ստամոքսի, աղիքների և այլ օրգանների աշխատանքը։ Ամեն մի վնասվածք կերկայնափող ուղեղի ամենափոքր մասում անդամ, կեթե վերաբերում է թափառող ներվի հանգույցներին, անհապաղ մահ առաջ կբերի։

Ուղեղիկը (мозжечок) նման է կերկու իրար միացած կիսագնդերի և գտնվում է ուղեղային ստեղնի (ствол) առի։ Նա անմիջական մասնակցություն է հանդես բերում մարմնի հավասարակշռության պահպանման գործում, ինչպես և կատարում է տոնուսի ֆունկցիան։

Նույն չենթակեղևային բջիջային կուտակումներին են պատկանում նաև, ներվային համակարգության շատ կարևոր մասը կազմող, տեսողական բլթակները (տալամուս) և նրա վերևում գտնվող կառուցվածքները։ Տեսողական բլթակները կենդանի օրգանիզմի ամեն տեսակի զգայմունքների կենտրոնացումն են կազմում։ Օրգանիզմի վորևե մասի աշխատանքի ամենափոքր խանգարումն անգամ զգացող ներվերի կողմից անմիջապես հաղորդվում է տեսողական բլթակներին։ Այսպիսի զրգիռներն ստեղծում են տհաճության զգայմունքներ։ Տհաճ վիճակը ստիպում է մարդուն համապատասխան միջոցների դիմել։ Ընդհակառակը, կյանքի պրոցեսների նորմալ ընթացքը պատճառ է դառնում հաճոյալից հոգեկան վիճակի։

Այսպիսով մարդկային և կենդանական զգայմունքների ներվային ղեկավարությունն ընկած է տեսողական բլթակների վրա, վորոնք անմիջականորեն կարգավորում են զայրույթը, լացը, ուրախությունը, արհամարհանքը և այլն։

ԳԼԽԻ ՈՒՂԵՂԻ ԿԻՍԱԳՆԴԵՐԸ

Մարդու մոտ, հակառակ ցածր կենդանիների, չափազանց մեծ չափով զարգացած և գլխի ուղեղի կեղևը, վորը բարակ մոխրագույն շերտով տարածված է ուղեղային կիսագնդերի վրա։ Այդ մոխրագույն շերտն ունի բազմաթիվ ակոսիկներ (գալարներ) ու կնճիռներ (վոսկրկներ), վորոնց շնորհիվ մեծ չափով մեծանում է նրա մակերեսույթը, վորի ծավալը հավասար է 1700—2200 քառ. սանտիմետրի։ Գլխի ուղեղի կեղևային շերտը բաղկացած է հետևյալ մասերից. 1. Ճակատային մաս, վորը

բարձր հոգևոր և շարժուձևերի ֆունկցիաների գործունեության ասպարիզում բացառիկ դեր է կատարում։ 2. Առաջին կենտրոնական կենիռ, որը կամավոր շարժողական գործողությունների կենտրոնն է։ 3. Հետևի կենտրոնական կենիռ և գագաթի մաս, որը զգայնության և վարժության շնորհիվ ձեռք բերված գործողությունների բարձրագույն կենտրոնն է։ 4. Ճակատային մաս, որը լսողական տպավորությունների գլխավոր կենտրոնն է։ 5. Ծոծրակային մաս, որը տեսողական տպավորությունների կենտրոնն է։ Բացի դրանից, ուղեղում կան տեղեր, որոնց քայքայումն առաջացնում է խոսելու, գրելու, յերաժշտական տպավորություններ ստանալու ընդունակությունների խանգարում։

Բազմաթիվ ներվային բջիջները (մոտ 17 միլիարդ) ուղեղային կիսագնդերում կազմում են մեկը մյուսի տակ գտնվող վեց շերտավորումներ։ Այդ ամեն մի շերտում վերջանում և նրանից սկիզբ են առնում որպանիզմի բոլոր մասերը կեղեվի հետ կապող բազմաթիվ ու բարդ ներվային թելիկներ։

Այսպիսով գլխի ուղեղի կիսագնդերի մոխրագույն շերտի վրա գրված է մի շատ կարևոր պարտականություն։ Նա մի կողմից հանդիսանում է անհատական կենսափորձի շահմարանը, մյուս կողմից՝ մենք նրա ղեկավարությամբ կատարում ենք գիտակցական շարժուձևեր, այսինքն ոգտագործում ենք կուտակված այդ հսկայական փորձը բնության վրա ազդելու, ավելի խելացի կյանք ստեղծելու համար։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Որգանիզմը և միջավայրը։
2. Նկարագրեցեք միաբջիջ որգանիզմներից վորևե մեկի կազմը։
3. Բազմաբջիջ որգանիզմները և աշխատանքի բաժանումը՝ մարմնի տարբեր մասերի միջև. ներվային համակարգության առաջացումը։
4. Ներվային համակարգության զարգացման ընթացքը։
5. Ի՞նչպես և պաշտպանված կենտրոնական ներվային համակարգը։

6. Կենտրոնաձիգ և կենտրոնախույզ հաղորդիչներ։

7. Ներվային սիստեմի տարբերը։ Ներվային բջիջի կազմությունը։

8. Վողնուղեղի ֆունկցիան։ Հատկացողություն ռեֆլեկտոր աղեղի մասին։

9. Յերկայնաձիգ ուղեղ և ուղեղիկ։

10. Յենթակեղևային չերտեր։

11. Գլխուղեղի կեղևի կազմության ֆունկցիանները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Проф. Шаргородский.—«Вегетативная нервная система».

2. Յե. ՀԱՄՐԱԹՑԱՆ.—«Պայմանական ռեֆլեքսների ուսումնքը»։

3. Դ. ԴԶԻՋՅԱՆ.—«Ֆիզիոլոգիայի առաջադրություններ ըստ Բաբսկու»։

4. ԿԱԲԱՆՈՎ.—«Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա»։

5. Բժ. Դ. Տ. ՄԿՐՏՉՅԱՆ.—«Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա», առաջադրություններ։

ՆԵՐԶԱՏՄԱՆ ԴԵՂՁԵՐԻ ՄԱՍԻՆ

Որգանիզմի բոլոր մասերի համերաշխ, կանոնավոր ու նորմալ գործունեության համար վիթխարի նշանակություն ունեն ներվային համակարգության վերահսկողությամբ աշխատող ու փոխադարձաբար նրա վրա ազդող ներզատման գեղձերի սիստեմը։ Գիտնականները մինչև 19-րդ դարի յերկրորդ կեսերը համարյա բոլորովին անտեղյակ էին որգանիզմի համար այդքան կարևոր նշանակություն ունեցող «ներքին սեկրեցիաների» գոյության մասին։ Ներզատման գեղձեր (ներքին սեկրեցիա) տերմինն առաջին անգամ գործածել և խոշորագույն ֆիզիոլոգ ու բժիշկ Կլոդ Բերնարը 1855 թվին։ Կլոդ Բերնարը հայտնեց այն կարծիքը, որ որոշ որգաններ (հատկապես լյարդը) բացի այլ նյութերից արտազրում են նաև արյան շրջանառության ուղիով տարածվող հատուկ նյութեր, որոնք ազդում են տարբեր որգանների գործունեության վրա։ Ինտուիտիվական թվական-

6. Կենտրոնաձիգ և կենտրոնախույզ հաղորդիչներ։

7. Ներվային սիստեմի տարբերը։ Ներվային բջիջի կազմությունը։

8. Վողնուղեղի ֆունկցիան։ Հատկացողություն ռեֆլեկտոր աղեղի մասին։

9. Յերկայնաձիգ ուղեղ և ուղեղիկ։

10. Յենթակեղևային չերտեր։

11. Գլխուղեղի կեղևի կազմության ֆունկցիանները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Проф. Шаргородский.—«Вегетативная нервная система».

2. Յե. ՀԱՄՐԱԹՑԱՆ.—«Պայմանական ռեֆլեքսների ուսումնքը»։

3. Դ. ԴԶԻՋՅԱՆ.—«Ֆիզիոլոգիայի առաջադրություններ ըստ Բաբսկու»։

4. ԿԱԲԱՆՈՎ.—«Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա»։

5. Բժ. Դ. Տ. ՄԿՐՏՉՅԱՆ.—«Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա», առաջադրություններ։

ՆԵՐԶԱՏՄԱՆ ԴԵՂՁԵՐԻ ՄԱՍԻՆ

Որգանիզմի բոլոր մասերի համերաշխ, կանոնավոր ու նորմալ գործունեության համար վիթխարի նշանակություն ունեն ներվային համակարգության վերահսկողությամբ աշխատող ու փոխադարձաբար նրա վրա ազդող ներզատման գեղձերի սիստեմը։ Գիտնականները մինչև 19-րդ դարի յերկրորդ կեսերը համարյա բոլորովին անտեղյակ էին որգանիզմի համար այդքան կարևոր նշանակություն ունեցող «ներքին սեկրեցիաների» գոյության մասին։ Ներզատման գեղձեր (ներքին սեկրեցիա) տերմինն առաջին անգամ գործածել և խոշորագույն ֆիզիոլոգ ու բժիշկ Կլոդ Բերնարը 1855 թվին։ Կլոդ Բերնարը հայտնեց այն կարծիքը, որ որոշ որգաններ (հատկապես լյարդը) բացի այլ նյութերից արտազրում են նաև արյան շրջանառության ուղիով տարածվող հատուկ նյութեր, որոնք ազդում են տարբեր որգանների գործունեության վրա։ Ինտուիտիվական թվական-

ներին նշանավոր գիտնական Բրոուն Սեկարը, արդեն ծեր հասակում, կատարեց մի նշանավոր գյուտ։ Նա յուր կշռվի տակ սրսկելով կենդանիների սեռական (սերմային) գեղձերի հորմոնները, արտասովոր կերպով ուժեղացրեց յուր ֆիզիկական-հոգեկան կարողությունները։ Թեև հետագայում պարզվեց, վոր Բրոուն Սեկարի «յերիտասարդացման» պատճառները մեկն էլ ուժով լինքնաներշնչումն եր, բայց, այնուամենայնիվ, գիտության համար պարզ դարձավ, վոր սեռական գեղձերը, բացի բազմացման որգան լինելուց, կատարում են և այլ ֆունկցիա։ Նրանք արտադրում են հատուկ նյութ, վորը խիստ անհրաժեշտ է որգանիզմի ուժերի վերականգնման ու թարմացման համար։ Գիտնականները հետզհետե յերևան հանեցին և ուսումնասիրեցին ներզատման այլ գեղձեր։ Ժամանակակից ֆիզիոլոգիան և բիոլոգիական քիմիան բավականաչափ պարզեցին ներզատման գեղձերի նյությունը և այն ազդեցությունը, վոր նրանք ունեն նյութերի փոխանակության և նեղքին որգանների կառուցման ու աշխատանքի գործում։

Ներզատման գեղձերը դանվում են որգանիզմի տարբեր մասերում։ Նրանք արտադրում են հատուկ հյութեր՝ հորմոններ (հունարեն «յես սուիդում եմ» բառից)։ Այդ հորմոններն արտադրվում են անմիջապես արյունատար և ավշային անոթների մեջ և դրա շնորհիվ տարածվում են և ազդում մարմնի բոլոր մասերի վրա։ Ներզատման գեղձերի արտադրանքը քանակով մեծ չի, բայց ազդեցությունը հսկայական է։

Այսպես, որինակ, տիբրոկսինի (վահանաձև գեղձերի հորմոն) մեկ միլիոներորդական մասը մեծ չափով արագացնում է շնչափուչների գործի վերածվելու պրոցեսը։ Ներզատման գեղձերը և նրանց հորմոնները սերտորեն կապված են իրար հետ և փոխադարձաբար պայմանավորում են մեկը մյուսի աշխատանքը։ Նրանց գործունեությունը կամ համերաշխ է աշխատանքի խիստ բաժանումով, կամ նրանք դրական են ազդում իրար վրա, կամ փոխադարձաբար արգելակում են միմյանց։

Ծանոթանանք նրանցից մի քանիսի հետ։

Վահանաձեվ գեղձը գտնվում է պարանոցի տակը։ Վահանաձեվ գեղձի աշխատանքի թուլացումը խիստ բացասաբար է ազդում մարմնի աճման ու մտավոր գործունեության վրա և նույ-

նիսկ հատուկ հիվանդության՝ միկսեդեմի պատճառ է դառնում։ Թուլանում են մարդու մտավոր կարողությունները, յերբեմն նույնիսկ հասնում ապուշության աստիճանին, առաջ է գալիս ծուլություն, մոռացկոտություն, մարմինն սկսում է քրտնել մազերը թափվում են և այլն։

Այսպես կոչված կրետինիզմը (գաճաճությունը) նույնպես վահանաձեվ գեղձի խիստ աննորմալ ու թույլ աշխատանքի հետեվանքն է հանդիսանում։ Կրետիններները շատ կարճ հասակ ունենալով հանդերձ, շատ հաստ են լինում, նրանց ճաղարը դնում է լայնության ուղղությամբ։ Նրանց գլուխը մեծ է, յերեսն ուռած, գանգի վրա սակավաթիվ մազեր են բուսանում։ Կրետինները այլանդակ են վոչ միայն իրենց կառուցվածքով, այլ և իրենց վարքով։ Լինելով չափազանց դանդաղաշարժ, ծույլ և կիսապուշ, նրանք պրակտիկ կյանքի վոչ մի ասպարիզի համար պիտանի չեն։ Կրետիններին բուժման համար գործ են ածում կենդանիների վահանաձեվ գեղձերից պատրաստած հատուկ դեղորայքներ (տիրեոիդին)։

Վահանաձեվ գեղձի ուժեղ աշխատանքը պատճառ է դառնում բազեդովյան հիվանդության առաջացմանն։ Բազեդովյան հիվանդության յերեք նշանակա յեն գերազանցապես մի քիչ տարիքի տեր մարդիկ։ Բազեդովյան հիվանդությամբ տառապող մարդկանց զարկերակն արագ ու խիստ անկանոն է աշխատում, մարմինը շատ շուտ քրտնում է, մատները դողում են, նրանք տապում են անքնության համար։ Նա միաժամանակ ջղայնության, ցրվածության ու հոգնածության պատճառ է դառնում։

Վահանաձեվ ու շրջվահանաձեվ գեղձերի վոչնչացումը կենդանու մահվան պատճառ է դառնում։

Ուղեղային հավելվածը կամ հիպոֆիզը մարդու մոտ սիսեռի մեծության ունի։ Նրա քաշը վաթսուն միլիգրամից ավելի չէ։ Մեծ է հիպոֆիզի հորմոնի նշանակությունը նյութերի փոխանակման և հատկապես աննդատության պրոցեսի ընթացքում ստացված նյութերի որգանիզմի հյուսվածքների կողմից յուրացնելու գործում։ Հիպոֆիզի արտազրանքի քչացումը թզուկային հասակի պատճառ է դառնում։ Ընդհակառակը, հիպոֆիզի հորմոնի գերարտազրանքը խիստ աննորմալ կերպով բարձրացնում է մարդու հասակը, հատկապես վոսկորները։ Այսպիսով հիպոֆիզն որգա-

նիզմի, հատկապես վոսկրների աճման հիմնական-խթան է հանդիսանում։ Բավական է վոչնչացնել կենդանու հիպոֆիզը, վորպեսզի նա այլևս դադարի աճելուց։

Տիմուսը գործում է մինչև 13—14 տարեկան հասակը, վորից հետո աստիճանաբար հետ է զարգանում և մոտավորապես 25 տարեկան հասակում բոլորովին անհետանում է։ Տիմուսը սեռական գեղձերի զարգացումն արգելակում է։ Այդ պատճառով էլ նրա գործունեության շրջանում սեռական զարգացում տեղի չի ունենում։ Տիմուսի արտազրանքի թուլացումն անհրաժեշտ նախապայմանն է սեռական հասունացման համար։ Սեռական անհորմալ և վաղաժամ զարգացումն առաջանում է այն դեպքում, յերբ տիմուսը ժամանակից շուտ դադարում է գործելուց։

Վերյերիկամային գեղձն արտազրում է ադրենալին կոչված հորմոնը, վորի քիմիական բաղադրությունը գտել են գիտնականները և նույնիսկ կարողանում են արհեստական ադրենալին պատրաստել, վորն իր ազդեցությամբ վոչնչով չի տարբերվում օրգանիզմի կողմից պատրաստված իսկական ադրենալինից։ Մանավանդ արյան մեջ, ադրենալինը դրգռիչ կերպով է աղդում վեգետատիվ ներվային համակարգության սիմպատիկ ներվերի վերջավորություններն վրա, վորի շնորհիվ առաջանում է անոթների կծկում, արյան ճնշման բարձրացում, սրտի բաբախման արագացում և ուժեղացում, աղիքների և շրջանառության ապարատների գործունեության դանդաղում, արգանդի գրգռվածություն և այլն։ Ադրենալինը հակայական նշանակություն ունի վորոշ զգացմունքների և՝ աֆֆեկտների (հուզմունք, զայրույթ և այլն) առաջացման համար։

Սեռային գեղձերը. Եգերի մոտ դա ձվարանն է, իսկ արուների մոտ ամորձիքը, բայի բազմացման օրգան լինելուց, կատարում են նաև ներքսման գեղձերի ֆունկցիաներ։ Տղամարդու կոշտ ձայնը, առատ մազոտությունը, կոշտ կաշին, չզարգացած ստնքագեղձը—ամորձիքի հորմոնների ազդեցության հետևանք են։ Ընդհակառակը, բարակ ձայնը, մազերի փոքր քանակությամբ ծածկված, փափուկ կաշին, լավ զարգացած ստնքագեղձը—այս ամենը ձվարանի հորմոններից է կախված։

Մեռելան գեղձերը խոշոր չափով ազդում են համարյա որ-
գանական բոլոր պրոցեսների վրա և օրգանիզմի նորմալ աշխա-
տանքի կարեւոր նախապայմաններից մեկն են հանդիսանում։

Արյան քիմիզմը. Օրգանիզմի տարբեր մասերի փոխազդե-
ցությունը և կապը հնարավոր է միայն արյան քիմիական բա-
ղադրության փոփոխության շնորհիվ։ Նա կանոնավորում է
ներքսաման գեղձերի աշխատանքն ու համերաշխ գործունեու-
թյունը և պայմանավորում է ուղեղի գրգռվածության աստի-
ճանը։ Այդ պատճառով էլ և՛ ներքսաման գեղձերը, և՛ ուղեղի
մոխրագույն շերտերը շրջապատված են արյունատար անոթների
խիտ ցանցով։ Ներվային համակարգ չունեցող պարզ օրգանիզմ-
ների գործունեության կարգավորումը կատարվում է արյան
քիմիական կազմի փոփոխության շնորհիվ։

Այսպիսով ներվային համակարգության ներքսաման գեղ-
ձերի և արյան քիմիզմի փոփոխության ազդեցությունը օրգա-
նիզմի բոլոր մասերի աշխատանքի կարգավորման ու փոխազդե-
ցության վրա կատարվում է այդ երկուք ֆակտորների համա-
բաշխ ու ամբողջական աշխատանքի հետևանքով։

ԶԳԱՅՆՈՒԹՅՈՒՆ· ՆՐԱ ԻԴԵԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ. ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Զգայնութ յունը համարվում է հոգեկան ամենապարզ, հասրաբերականորեն այլևս չտարբերվող փուլնկ յիս։ Զգայնութ յունն առաջ է գալիս այն ժամանակ, երբ արտաքին աշխարհի իրերը, առարկաները ազդում են մեր զգայարանների վրա։ Զգայնական-պրակտիկ գործունեության շնորհիվ մարդը հնարավորութ յուն է ունենում ճանաչելու իրի կամ առարկայի այս կամ այն հատկանիշները—գույնը, ձայնը, համը, հոտը և այլն։ Զգայնութ յունները բաժանվում են երկու մեծ խմբերի՝ արտաքին և ներքին զգայութ յունների։ Արտաքին զգայնութ յան են պատկանում՝ տեսողութ յունը, լսողութ յունը, շոշափելիքը, հոտառելիքը, ճաշակելիքը և մասամբ էլ ելեկտրական զրգռռնիռի զգայնութ յունը։ Ներքին զգայնութ յունների զրգռիչները բղխում են որգանիզմի ներքին որգանների գործունեութ յունից և մկանային-ջիլային շարժուձևերից, ուրեմն նրանք յերկուսն են՝ որգանական և մկանային։

Զգայնութ յունը մեր ճանաչողութ յան առաջին աստիճանն է, անմիջական աղբյուրը։ Այն՝ ամենը, ինչ մենք գիտենք շրջապատի ու մեր մասին, կատարվում է զգայնութ յունների միջոցով։ «Իմացութ յան թեորիայի առաջին նախադրյալը,—գրում է ընկեր Լենինը,—անտարակույս, այն է, վոր մեր գիտելութ յուններիս մեկ աղբյուրը զգայութ յուններն են» (Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», 1933 թ. եջ 140)։ Ճիշտ և հեղինակությամբ, յերբ գրում է, վոր վերջի վերջո մարդկային հոգեկան բոլոր փուլնկ յիանների հիմքը կազմում է զգայնութ յունը։ Չկա վոչինչ մեր ինտելեկտում, վորն առաջներում զգայնութ յունների մեջ չդրած չլիներ,—ասում էին անգլիական և ֆրանսիական մատերիալիստները։

XVIII դարի առաջադիմական մարդ ու մտածողներից մեկը՝ Վոլտերը (1694—1778), ցանկանալով ցույց տալ մարդու զգայ-

նութիւնների վճռական նշանակութիւնը իմացութեան համար յուր «Միկրոմեգաս» փիլիսոփայական պատմվածքում նկարագրում է մի զրույց, որն իբր թե տեղի է ունենում Սիրիուս աստղի և Սատուրն մոլորակի բնակիչների միջև՝ տիեզերքի էության մասին։

—Ասացեք խնդրեմ, ձեր մոլորակի բնակիչները քանի զգայարաններ ունեն—հարցնում է Սիրիուսի բնակիչը Սատուրնի բնակչին։

—Երանց թիվը մեզ մոտ 72 է,—պատասխանում է Սատուրնեցին, բայց որ չի անցնում, որ մենք դարձ չանենք նրանց քանակի փիչ լինելու մասին...

—Դա զարմանալի չէ, ասում է Սիրիուսցին,—մեր մոլորակի բնակիչներն ունեն միայն շուրջ հազար զգայարաններ, և այնուամենայնիվ զժգոհ ենք մեր դիտելիքների սահմանափակ լինելու համար։

Ի պատիվ Վալտերի, պետք է ասել, որ խոսելով մեր չերկրի բնակիչների իմացութեան մասին, նա ճիշտ և ընդգծում այն հանգամանքը, որ մեր մարդու զգայարանների շատ փոքր թիվ (հինգ զգայարան) լինելը չերբեք էլ նրան տգետ չի դարձնում։ Գիտական մտածութեան գործունեութիւնը՝ միանալով հինգ զգայարանների հետ, ամենակարող է դարձնում նրանց։

Այսպիսով, փիլիսոփաների և գիտնականների հսկայական մասը կանգնած է նեոնատալիզմի տեսակետի վրա, այսինքն մեր ճանաչողութեան հիմքում դնում են զգայնութիւնները։ «Բայց այս տեսակետը (ամբողջ իմացութիւնը զգայնութիւններից է—Մ.Մ.) տանում է դեպի փիլիսոփայական արմատական ուղղութիւնների՝ իդեալիզմի և մատերիալիզմի՝ տարբերութիւնը,—գրում է բնկեր Լենինը,—և վեչ թե վերացնում է նրանց տարբերութիւնը... Ցեվ սոլիպսիստը, այսինքն սուբյեկտիվ իդեալիստը, և մատերիալիստը կարող են զգայութիւնները ճանաչել մեր իմացութիւնների աղբյուր... Զգայութիւններից չելնելով՝ կարելի չէ գնալ սուբյեկտիվիզմի գծով, որը հասցնում է սոլիպսիզմին («մարմիններն զգայութիւնների կոմպլեքսներ կամ կոմբինացիաներ են») և կարելի է գնալ օբյեկտիվիզմի գծով, որը հասցնում է մատերիալիզմին (զգայութիւնները մարմինների, արտաքին աշխարհի պատկերներն են)։ (Լենին, «Մատերիալիզմ և իմպիրիոկրիտիցիզմ», 1933 թ. եջ 139—140)։

Մատերիալիստները զգայնությունը համարելով ճանաչողության միակ աղբյուրը, չէնում են օբյեկտիվ աշխարհից և մեր զգայարանների վրա նրա գործած ազդեցություններից։ Զգայնությունների միջոցով մենք միայն ճանաչում ենք, ընկալում այն, ինչ ելը գոյություն ունի մեզանից, մեր զգայնություններից անկախ. «մատերիալիզմի համար էական է օբյեկտիվ ճշմարտության ճանապարհը» (Լենին)։

Սուբյեկտիվ իդեալիստները (սոլիպսիստները), հակառակ գիտության ու առողջ բանականության, չեն ընդունում օբյեկտիվ իրականության գոյությունը։ Նրանց կարծիքով աշխարհի գոյությունը կախված է մարդու զգայնություններից։ Զգայնությունն է իրականության ստեղծողն ու պատճառը։ «Նրանք չեն ճանաչում օբյեկտիվ, մարդուց անկախ ռեալականություն, վորպես աղբյուր մեր զգայությունների։ Նրանք զգայությունների մեջ չեն տեսնում այդ օբյեկտիվ ռեալականության հարազատ նկարը, ուղղակի հակասության մեջ ընկնելով բնագիտության նկատմամբ և դուս բանալով ֆիդեիզմի*) համար» (Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», 1933թ. էջ 142—143)։

Մարդկային զգայնությունները, բացի իմացության աղբյուր լինելուց, ճանաչողական (գեղագիտական) և ֆիզիոլոգիական հաճույքների միակ աղբյուրն են։ Առանց տեսողության զգայարանների մենք կզրկվեյինք գեղարվեստական և ֆիզիոլոգիկ բնույթի բազմաթիվ, հրաշալի ապրումներ առաջացնող ընդհանուրներից։ Առանց լսողության՝ մենք զգալափար չեյինք ունենա երաժշտության հոյակապ ու «կախարդիչ» աշխարհի մասին։ Առանց հոտառության մենք զրկված կլինեյինք այն մեծ բավականությունից, վոր ստանում ենք հոտավետ ծաղիկներից, զեղեցիկ ոծանելիքներից և այլն։

ԶԳԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զգայնությունն ունի հետևյալ հատկությունները՝ մոդալականություն, վորակ, ինտենսիվություն, ժամանակի պարագա, տարածության պարագա։ Բացի դրանից, յուրաքանչյուր զգայ-

*) Ֆիդեիստները հրաժարվում են իրերի դիտական բացատրությունից և առաջնորդվում են կույր հավատով։

նութիւն անպայման վորոշ անհատական ապրումների կամ ֆիզիոլոգիական զգացմունքի առաջացման պատճառ և հանդիսանում։

Մոդալականութիւնը յուրաքանչիւր զգայնութեան բնորոշ գծերի միահամութիւնն է կամ ամբողջութիւնը։ Մոդալականութիւնը ամեն մի զգայնութեան առանձնահատկութիւնն է, այն էական կողմերը, վորոնք մի զգայնութիւնը տարբերում են մյուսից։

Վորակը բնորոշում է վորևէ զգայնութեան էական կողմերից յուրաքանչիւրի սպեցիֆիկան։ Վորակով է, վոր տարբերում ենք մեկնուն զգայնութեան ներսում գեղած առանձին հատկութիւնները՝ մեկը մյուսից։ Որինակ՝ մարդու տեսողական զգայնութիւնն ունի հետևեալ վորակները. լույս, աղջամուղջ, առանձին գույներ (կարմիր, սպիտակ և այլն)։ Համի զգայնութեան բնորոշ վորակները չորսն են, դառն, թթու, աղի և քաղցր։

Ինտենսիվութիւնը՝ դա վորակի լարվածութեան, նրա արտահայտման ուժի աստիճանայուղյուն է։ Որինակ՝ Ջերմազգայնութիւնը կարող է լինել տաք և այրող, կապույտ գույնը կարող է մուգ լինել կամ բաց, ձայնը շշուկային, ցածր և բարձր և այլն։ Պետք է ընդգծել, վոր զգայնութեան ինտենսիվութիւնը կախված է մի շարք պայմաններից։ Այդ պայմանները միայն գրգռիչ ուժից և զգայնութիւն առանալու միջավայրից և հետևողութիւնից չեն կախված։ Զգայնութեան ինտենսիվութեան համար մեծ նշանակութիւն ունի նաև գրգռում ընդունող անհատի վիճակը։ Զգայնութեան ինտենսիվութեան համար ամենակարևոր պայմանը հանդիսանում է ուշադրութիւնը։ Մեզանից ամեն մեկն իր անձնական փորձից գիտի, թե զգայնութիւնների և ըմբռնումների համար ինչ վճռական դեր է խաղում ուշադրութիւնը։

Ուշադրութեան բացակայութեան ժամանակ ամենախոշոր գրգիռները անգամ կարող են չնկատվել, այսինքն զգայնութիւն չպառնալ։ Ցրված մարդը վոչինչ հատուկ ըմբռնել չի կարող, վորովհետև հնարավորութիւն չունի իր ուշադրութիւնը կենտրոնացնելու տրտաքին աշխարհի գրգռումներից վորևե մեկի վրա, վորովհետև նրա ուշադրութիւնն անընդհատ մի կետից մյուսն է թափառում։ Զգայնութեան ինտենսիվութեան համար խոշոր նշանա-

կութիւն ունի նաև անհատի հոգեկան վիճակը։ Որինակ, հայտնի չէ, վոր խոր վիշտը կամ սարսափը մարդուն ժամանակավրպես անասրբեր և զարձնում շրջապատի գրկիանների հանդեպ, բթացնում և նրա նկարների գրգռունակութիւնները, ընդհակառակը՝ բոլորովին անտեղի հորթային հրճվանքը կարող է գլխապտույտ բերել մարդուն և թոյլ չտալ ընդունել արտաքին աշխարհի գրգիռները այնպես, ինչպես նրանք կան. ինտենսիվութեան հարցում խոշոր նշանակութիւն ունի նաև անհատի ֆիզիոլոգիական վիճակը—հոգնածութիւնը, սոված լինելը, առատնացաւը և այլն։

Զգայնութեան լարվածութիւնը և ուժը մեծ չափով կախված են և այն պայմաններից, վորոնց մեջ առացվում են գրգիռները։ Որինակ՝ յեթե զասարանում աղմուկ է, ուսուցիչը վորքան էլ գոռա, նրա ձայնը հարկ չեղած ազդեցութիւնը չի թողնի յերեխաների վրա։ Ձերը տաք սենյակից դուրս ես գալիս փողոց, ոդի ցրտութիւնն ավելի չի զգացվում, քան իրականում է և այլն։

Գրգիռի ժամանակի պարագան նույնպես խիստ կարևոր է զգայնութիւններն ուսումնասիրելու համար։ Ցուրաքանչյուր զգայնութեան պատճառ հանդիսացող գրգիռը գործում է մի-այն վորոշ ժամանակ, այսինքն ունի առաջացում, տեվողականութիւն և վերջ։ Գրգռի տեվողականութիւնը, նույնիսկ հարյուրերորդական վայրկյաններով չափելու համար ստեղծված են ամենանրբին խրոնոսկոպներ (ժամանակաչափեր)։ Զգայնութեան ինտենսիվութիւնը միշտ չէ, վոր կախված է գրգիռի տեվողութիւնից, որինակ՝ մթութեան մեջ և վայրկենական լավող ճիչը շատ ավելի ազդեցիկ է, քան ավելի յերկար տեվող վորևէ այլ գրգիռ։ Հայտնի չէ, վոր յերկարատև, միալար ու միատեղաղաղ կրկնվող գրգիռները կարող են նույնիսկ բոլորովին բթացնել մարդու զգայնութիւնը։ Որինակ՝ սենյակի նկատած ոդում յերկար ժամանակ նստած անձնավորութիւնը չի զգում այդ։

Տարածութեան պարագան գրգռի աղբյուրի՝ նրա վորտեղից առացվելու գիտակցութիւնն է. պետք է ասել, վոր բոլոր դեպքերում չէ, վոր մենք ճիշտ կերպով կարող ենք նշել գրգռի տեղը։ Հատկապես դժվար է վորոշվում լողոտքերի և հոտոտելիքի գրգռի տեղը։ Այդ տեսակետից մեծ դժվարութիւն է նկատվում

նում հասկացվում որպեսական զգայնությունը։ Որինակ, մենք հաճախ զգվարանում ենք ճիշտ ցույց տալ, թե մեր մարմնի որ մասն է ցավում։

Ցավ, վերջապես, յուրահատուկ զգայնություն զգացմունքային գունավորում է ստանում։ Ցնդեն զգայնությունն արտաքին աշխարհի, իրերի, առարկաների տղեցության հետևանքն է մեր զգայարանների վրա, ապա զգացմունքը, դա մեր վերաբերմունքն է հանդեպ այդ գրգիռը, որպանիզմի վիճակի այն արտահայտությունը, որը հետևանք է տվյալ զգայնության։ Որինակ՝ մկրատաղճոտ մի յեղանակ լսելիս յես ախորժում եմ. պայծառ լույսը կամ գույնը կարող է պատճառ դառնալ որամադրության բարձրացմանը։ Արտաքին կամ ներքին գրգիռներն ինձ համար կարող են կամ դուրեկան լինել, կամ անդուրեկան։ Ֆիզիկական զգացմունքները զգայնությունների հետ համեմատած ավելի ըորդ են, վորոշ չափով տարատեսակ և անհատական գունավորում ունեն։ Որինակ, վորևե կերակրի հոտ կարող է մեկի համար դուրեկան լինել իսկ մյուսին՝ անդուրեկան։ Դեղին գույնը մեկը կարող է սիրել, մյուսը վոչ։ Այսպիսի դեպքերում մարդը նույնիսկ ջժվարանում է իրեն հաշիվ տալ իր որպեսական զգացմունքների այսպիսին կամ այնպիսին լինելու պատճառների մասին։ Իզուր չի ասված՝ «ճաշակի խնդիր է»։

ԶԳԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽ ԱՇԽԱՏԱՆՔԸ—ՍԻՆԵՍԹԵԶԻԱ

Զգայնության մյուս բնորոշ կողմը մեր զգայարանների համերաշխ աշխատանքն է, նրանց փոխադարձ ոժանդակությունն իրար։ Իրականության մեջ շատ քիչ է պատահում, վոր մենք վորևե տպավորություն ստանանք միայն մի զգայարանի միջոցով։ Նույնիսկ այն դեպքում, յերբ հնարավոր չէ մյուս զգայարանների գործունեությունը՝ համապատասխան գրգռիչ չլինելու պատճառով, մենք դիմում ենք մեր յերևակայության ոգնությանը և նրա միջոցով լրացնում պակասը։ Այսպիսով, զգայնությունը մյուս ֆունկցիաներից անջատ, առանձին յերևույթ չէ։ Ցուրաքանչյուր զգայնություն իր մեջ արդեն ունի իրերի բազմակողմանի ուսումնասիրության՝ ընդհանուր տարրեր մի կողմից, մյուս կողմից էլ տպավորությունների ընդհանրացումներ՝ իրերի ու առարկաների կապակցության հիմնական ձևերի, այսինքն մտածողության սաղմերը։

«Հոտառելիքն ու ճաշակելիքը,—գրում է Ենգելսը,—վաղուց արդեն ճանաչվել են վերջին ազդակից, համապատասխան զգայություններ, վերջնական համապատասխան, իրոք ոչ նույն, հատկություններին ենք ըմբռնում։ Տեսողությամբ և լսողությամբ ըմբռնում ենք ալիքների տատանումները։ Շոշափելիքն ու տեսանելիքը իրար փոխադարձաբար լրացնում են այն աստիճան, որ մի առարկայի տեսքից սենք հաճախ կարող ենք բավարար չափով կանխատես նրա շոշափական հատկությունները» (Ենգելս, «Բնության Դիալեկտիկա», 1936 թ. էջ՝ 130)։ Որինակ, իրերեք հնարավոր չի ընդհանրական պատկերացում կազմել հաճի, հոտի զգայության մասին։ Մենք միշտ պատկերացում և զգում ենք կոնկրետ առարկանների հոտը կամ հաճը։ Որինակ՝ վարդի հոտ, կաթի հաճ։ Իսկ վարդի տեսքը, գույնը, գեղեցկությունը նպաստում են հոտի զգայության ուժեղացմանը։ Նույնը պետք է ասել և կաթի հոտի համապատասխան ազդեցության մասին՝ նրա համի վրա։ Կամ, ասենք, թե լսում ենք իրերդչության իրերը։ Ինչ խոսք, որ նրա դիմաքծները, մխիթարն, իրերի արտահայտման ֆիզիկական ձևը, նույնիսկ նրա հագուստը նպաստում են և ոչ թե խանգարում նրա ձայնն ավելի լավ զգալուն, միանում են, նպաստում ձայնային զգայությանը։ Նույնիսկ այն դեպքում, իրերը լսում ենք վորևե իրերդ պատեճոնի կամ ռադիոյի միջոցով, մենք պատկերացնում ենք իրերդչին, նրա դեմքը, հագուստը, շարժուձևերը և այլն։

Զգայությունների համերաշխ աշխատանքի լավագույն որինակը հանդիսանում է շատ հետաքրքիր ու քիչ ուսումնասիրված հոգեկան մի իրևույթ՝ սինեսթեզիան։

Սինեսթեզիան այն իրևույթն է, իրեր վորևե մի զգայարանի գործունեությունը ավելի մանրակրկիտ բնորոշելու համար, չենք սահմանափակվում միայն տվյալ զգայությունը բնորոշող բառերով, այլ փոխ ենք առնում այնպիսի տերմիններ, վորոնք գործ են ածվում այլ զգայություններին ասպարիզում։ Որինակ՝ հաճախ գործ ենք ածում առաջին պահ տարորինակ թվացող այսպիսի նախադասություններ. «Նա թավշյա ձայն ունի», «Ինչ աղտոտող գեմք ունի այսինչը», «Ինչու չես այսոր գեմքդ թեթևացրել», «Քաղցր ձայն եմ լսում», «Ինչ համով հոտ է գալիս» և այլն։

Առաջին պահ թվում է, որ այդպիսի բնորոշումները խիստ անհեթեթ են։ Ցեղ խնայելս, ինչպես կարելի է ճանչը շոշափել, կամ համեմատել խմանալու համար նրա քաղցր կամ փոփոխ լինելը, ինչպես կարող է հայացքը բութ լինել կամ ազդակոտ չի՞ որ հայացքը տեսողության զգայարանին է վերաբերում, բութը՝ շոշափելիքին, իսկ ազդակոտն էլ լսողությանը։ Հարց է առաջ գալիս այդպիսի տերմիններըի ու բնորոշումների գործածության օրինականության մասին։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այստեղ վոչ մի անհեթեթություն չկա, այլ գործ ունենք հեշտությամբ բացատրվող ու մեզ համար արժեքավոր յերևույթների հետ։

Սինեսթեզիայի գաղտնիքը պետք է գտնել վոչ թե անմիջապես իրենց զգայնությունների, այլև նրանց մեր վրա ունեցած ազդեցության, զգայնությունների շնորհիվ մեր մեջ առաջացած զգացմունքների մեջ։

Մենք արդեն տեսանք, որ յուրաքանչյուր զգացողություն մեր մեջ առաջացնում է որոշ սուբյեկտիվ վերաբերմունք, դուրեկանության ու անդուրեկանության, հաճույքի և տհաճության ապրումներ։ Բանից դուրս է գալիս, որ մոդալական բոլորովին տարբեր զգայնություններ կարող են առաջացնել մեր մեջ հարյուր միատեսակ ապրումներ։

Որինակ՝ վարդի հոտը, լազուր յերկինքը, հանդարտ ու վեհ հոսող Վոլգան և քնքուշ ու մեղմ յերգը մեր մեջ կարող են առաջացնել յուրատեսակ հանգստության, անդորրության, մեղմության, յերազկոտության խիստ դուրեկան զգացմունքներ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՄ ՈՐԳԱՆԱԿԱՆ ԶԳԱՑՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն բոլոր զգայնությունները, որ առաջվում են մեր որգանիզմից և վորոնք բնորոշում են մեր որգանիզմի վիճակը, կոչվում են ընդհանուր զգայնություններ կամ ինքնազգացմունք։ Դրանք են հոգնածությունը, ծուլությունը, քաղցի, ծարավի, սեռական ցանկության, կուշտ լինելու, ցավի, ծանր շնչելու և այլ զգայնությունները։ Այդ ընդհանուր զգայնություններն առաջվում են ամբողջ մարմնից, և որգանիզմում կատարվող ֆիզիկո-քիմիական պրոցեսների հետևանք են։ Սովորաբար ընդհանուր զգայ-

նութ յունները ազդակ են հանդիսանում մեզ համար։ Ցերը որպանիզ մի բոլոր պրոցեսները նորմալ են կատարվում, մենք ընդհանուր զգայնութ յուններ համարյա չենք ունենում։ Բավական է միայն վորևե որպանի գործունեության խախտում կամ խափանում, վորպեսզի առաջանան որպանական զգայնութ յուններ։ Որինակ՝ աղիքների և ստամոքսի աշխատանքը մենք սովորաբար զգում ենք միայն նրանց աննորմալ գործունեության դեպքում։

✕ ՄԿԱՆԱՅԻՆ ԶԳԱՑՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մկանային զգայնութ յունները մեզ տեղեկացնում են մեր որ-գանիզմի շարժուն մասերի դրութ յան և գործունեութ յան մասին։ Մենք կարող ենք փակված աչքերով շարժել մեր ձեռքերը, ձեռ-քի մատները, գլուխը և այլն ու յուրաքանչյուր անգամ ճիշտ իմանալ, թե շարժումը ինչպես և ինչ ուղղութ յամբ է կատար-վում։

Մկանային զգայնութ յունները սերտ կերպով կապված են ջղաձգական զգայնութ յունների հետ։ Վերջ ի վերջո նրանք հանդում են ճնշման, կծկման, լարվածութ յան և այլ զգայնու-թ յունների։ Այդ պատճառով էլ վորոշ հոգեբաններ պնդում են, վոր հոգեբանական տեսակետից նրանք հատուկ խումբ չեն ներ-կայացնում իրենցից, այլ ձուլվում են ջղաձգականի հետ։ Վերջին հետազոտութ յունները ցույց են տվել, վոր այդ յերկու զգայնու-թ յունները նույնացնել չի կարելի։ Այսպես, վորոշ հիվանդու-թ յունների դեպքում մարդը կարող է կորցնել ջղաձգականի ըն-դունակութ յունը, բայց պահել մկանային զգայնութ յունը։

Մկանային զգայնութ յունների որգանը գտնվում է մարմ-նի այն բոլոր մասերում, վորտեղ կատարվում է շարժումը (մկաններ, հոդեր, ջլեր և այլն)։ Բոլոր շարժվող մասերից դնում են դեպի ուղեղը հատուկ ներվեր, վորոնք և հաղորդում են ու-ղեղին՝ մարմնի դիրքին վերաբերվող յուրաքանչյուր փոփոխու-թ յունների մասին։

Մկանային զգայնութ յունը շատ նուրբ է և ճշգրիտ։ Նրա դերը մեր կյանքում չափազանց մեծ է։ Առանց այդ զգայնու-թ յունների անհնար կլիներ քայլել, ցատկել, գրել, սովորել, պա-րել, խոսել, տիրապետել նոր ձայնին և այլն։

Ստատիկ կամ զլխի և մարմնի հավասարակշռության շնորհիվ մենք հնարավորություն ունենք տեղեկանալ մեր մարմնի հավասարակշռության խախտման ամեն մի դեպքի մասին և համապատասխան միջոցներ ձեռք առնել։ Նույն այդ զգայնության շնորհիվ և, վոր հնարավորություն ունենք ջրի մեջ սուզվելիս՝ տարբերել վերևը ներքևից։ Հավասարակշռության օրգանը գտնվում և ներքին ականջում, յեթե լաբիրինթոսը և վոլջ կոտյան օրգանը ծառայում և լսողության պրոցեսին, ապա ներքին ականջում գտնվող կիսաշրջանակային անցքը հանդիսանում և հավասարակշռության օրգանը։ Ի միջ այլոց դրա համար և, վոր խուլ և համրերը ջրի մեջ սուզվել չեն կարողանում, նրանք հեշտությամբ կխեղդվեն, վորովհետև ջրի մեջ չեն կարող տարբերել վերևը ներքևից։

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեսողական զգայնության դերը վիթխարի յե մարդու կյանքում։ Բավական և ասել, վոր արտաքին աշխարհից յեկած տպավորությունների համարյա լինն տասներորդն աղդում և տեսողության զգայարանի վրա յեվ ճանաչվում նրա միջոցով։

Առանց տեսողության զգայնության մենք վոչ մի գաղափար չեյինք ունենա արտաքին աշխարհի մի շարք կարեվոր հատկությունների մասին՝ լույսի, աղջամուղջի, բազմերանգ դույների յեվ այլն։ Խիստ պակասավոր կլինեյին առաքինների ձեվերի ու նրանց տարածության մեջ վորոշ տեղ գրավելու ըմբռնումները, վոչինչ չեյինք իմանա տարածության յերրորդ հատկանիշի՝ խորության մասին և այլն։

Տեսողական զգայության պակասությունը խիստ կազդեր մարդու զարգացման վրա և մարդը կդառնար անզոր մի շարք բնության ձեռքին, վորովհետև նա առաջ կդնար խարխափելով։

Աշքը և լույսի ֆիզիոլոգիական-կենսական նշանակությունը։ Լույսի ճառագայթները, բացի հակայական բուժիչ նշանակությունից, կարևոր դեր են խաղում օրգանական պրոցեսների նորմալ գործունեության համար։ Այդ և պատճառը, վոր ուժեղ լույսի տակ հանգստանալը խիստ դժվար և, քանի վոր

այդպիսի պայմաններում որդանիզմն ստիպված է ակտիվ աշխատել։ Վերջապես, մենք գիտենք, թե ինչպես քույրի տեսնելը արհգակի ճառագայթների ազդեցության տակ անորդանական նյութից պատրաստում են օրգանական նյութ։

Լույսն ունի և մեծ հոգեբանական նշանակություն։ Հայտնի չի, որ մթության, խավարը խիստ ճնշիչ տպավորություն են թողնում մարդու վրա։ Մթության մեջ մարդը վոչ միայն ստիպված է խարխափելով գործել, այլև կորցնում է իր ակտիվ, կենսական ուժերի մեծ մասը։ Այդ է պատճառը, որ բանտարկյալները միշտ հոգեկան դառն, անհուսալի վիճակը համեմատում են մթության հետ, իսկ վրկությունը, ազատությունը՝ լույսի։ Ռուս մեծ քննադատ Դոբրոլյուբովը՝ Ոստրովսկու կողմից նկարագրված ռուսական չինովնիկների ու վաճառականների սոսկալի ու զզվելի ճահճային կյանքը բնորոշում է իբրև խավարի թագավորություն։

Բանաստեղծ Վահան Տեքյանը, ցույց տալու համար իր հոգեկան ծանր ու անտանելի վիճակը, դիմում է այսպիսի ցնցիչ համեմատության.

Ինձ հեռվից, լույս փարոս չի կանչում,
Չի ժպտում, ինձ խաղաղ հանգրվան...
Անթափանց մութ, մշուշ և միայն...

Տեսողության զգայարանն ունի և մեծ եստետիկական նշանակություն։ Առանց աչքի մենք չէինք ստանա այն մեծ գեղարվեստական հաճույքը, որ ունենում ենք խոշոր նկարիչների հոյակապ մարքեր պարունակող նկարները դիտելիս։ Առանց տեսողության մենք չէինք հիանա հոյակապ քաղաքներով, չէինք ապրի լայնուր լերկնքով, կապույտ ծովով, գիղեցիկ լեռներով, խոր ու մթին ձորերով։

Տեսողության որգանը՝ աչքը գանվում է աչքի խոռոչում։ Նա բաղկացած է յերեք լուսաբեկիչ մարմիններից, «ջրային միջավայրից», «վոսպնյակից» և «ապակենման մարմնից»։ Այդ լուսաբեկիչ մարմինները շրջապատված են յերեք կոնցենտրիկ թաղանթներով՝ յեղջերաթաղանթով, անոթաթաղանթով և ցանցաթաղանթով։

Տեսողության համար ամենակարևորն նշանակություն ունի վերջին ներքին շերտը՝ ցանցաթաղանթը։ Ցանցաթաղանթն իր

բննից ներկայացնում և մոլեկուլային ներվային էլեմենտներից բաղկացած և մոտ տասը շերտի բաժանված մարմին, որի ներվային էլեմենտները տեսողության ներվի միջոցով անմիջապես միացած են լսողության կենտրոններին հետ։

Այդ ներվային էլեմենտները, որոնցից կազմված է ցանցաթաղանթը, սրվակաձև և ցուպիկաձև են։ Ցուպիկները, որոնց թիվը հասնում է մոտ 130 միլիոնի, գտնվում են ցանցաթաղանթի ծայրամասերում, իսկ սրվակաձև ներվային էլեմենտները տարածված են ցանցաթաղանթի կենտրոնական մասերում։

Լույսի ռեցեպտորներից ամենացայտունը գտնվում է աչքի կենտրոնի մոտ և կրում է դեղին կետ անունը։ Դեղին կետը բաղկացած է բացառապես սրվակաձև էլեմենտներից, որոնք սովորականից մի քիչ հաստ են և խիտ տեղավորված։ Առարկան լավ նայելու համար մենք մեր տեսողությունն այնպես ենք ֆիկսացիայի յենթարկում, որպեսզի լույսի ճառագայթներն անմիջապես ընկնեն դեղին կետի վրա։ Դեղին կետից վոչ շատ հեռու գտնվում է մի այլ փոքրիկ մաս, որը բոլորովին աղքատ է ներվային էլեմենտներով։ Տեսողական նյարդի դուրս գալու տեղումն է գտնվում այդ մասը և կրում է կույր կետ անունը։ Ըստ յերևույթին, լույսն ազդելով ցանցաթաղանթի վրա, քայքայում է նրա ներվային էլեմենտների մի մասը և վեր ածում լուսազգաց մարմինների և պիգմենտների, որոնք հետո, լույսի բացակայության հետևանքով, նորից վերականգնվում են։

Աչքի ակոմոդացիան

Աչքի ակոմոդացիայի յերևույթն առաջին անգամ հայտնաբերված է Կեպլերի (1611 թ.) և Շեյների (1619 թ.) կողմից։

Ակոմոդացիա ասելով պետք է հասկանալ այն հարմարվելու ընդունակությունը, որ ունի մեր աչքը հեռու կամ մոտիկ տարածության վրա գտնվող տեսանելի առարկաներն ըմբռնելու համար։ Յեթե ակոմոդացիայի ընդունակությունը չլիներ, հեռու գտնվող առարկաների պատկերը չեր հասնի ցանցաթաղանթին, այլ նրանից առաջ կընկներ, իսկ մոտ առարկաների ապավորությունը կանցներ ցանցաթաղանթի վրայից, առանց նրան դյուրելու։ Առարկաները մենք կարող ենք պարզ տեսնել միայն

այն դեպքում, երբ նրանց պատկերը ուղղակի ընկնի ցանցաթաղանթի վրա և վոչ նրա հետևում կամ առաջում։ Շնորհիվ բնածին և անհատական կյանքի ընթացքում վարժվող ունակությունների, բյուրեղիկը մոտ առարկաների տպավորություններն ընդունելիս ավելի ուռուցիկ և դառնում, վորի հետևանքով աչքի վրա ազդող ճառագայթներն ուժեղ բեկվելով չեն անցնում ցանցաթաղանթի սահմաններից, այլ ուղղակի ընկնում են նրա վրա։ Հետև առարկաներին հայելիս բյուրեղիկը տափականում է և դրա շնորհիվ չի ցրում ճառագայթները, վորի հետևանքով նրանք ցանցաթաղանթին հասնելու հնարավորություն են ստանում։ Ձերբ աչքը վոչ մի վորոշակի առարկայի չի նայում, բյուրեղիկն ընդունում է իրեն հատուկ բնական դիրքը։

ԳՈՒՅՆԱՅԻՆ ԶԳԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գույնային զգացողությունները ըստ գրգռի բնույթի բաժանվում են յերկու մասի—հասարակ և խառը։ Հասարակ գույները մենք զգում ենք այն ժամանակ, յերբ մեր ցանցաթաղանթի վրա ազդում են միատեսակ լուսային ճառագայթներ, այսինքն այնպիսի ճառագայթներ վորոնք ունեն ալիքների հավասարաչափ յերկարություն և կրկնվում են մի վայրկյանում միատեսակ հաճախականությամբ։ Խառը գույները մենք զգում ենք այն ժամանակ, յերբ ճառագայթները բազմատեսակ են, այսինքն ունեն ալիքների տարբեր յերկարություն և հավասարաչափ կերպով չեն կրկնվում։ Հասարակ կամ մաքուր գույներ են համարվում սպեկտրի հինգ գույները 1. կարմիրը, 2. դեղինը, 3. կանաչը, 4. մանիշակագույնը, 5. կապույտը։ Ավելի ուշադիր դիտելու դեպքում կնկատենք, վոր դեղին և կապույտ գույները հապարակ են միայն հարաբերական իմաստով, քանի վոր դեղին գույնը կարելի յե ստանալ կարմիրի և կանաչի կոմբինացիայի հետևանքով, իսկ կապույտն ըստացվում է կանաչի և մանուշակագույնի խառնուրդից։ Դրա համար էլ իրրև բացարձակորեն պարզ գույներ կարելի յե ընդունել միայն յերեքը — կարմիրը, կապույտը և մանիշակագույնը։

Հոգեբանական տեսակետից բոլոր տեսակի գույներն էլ հասարակ են, քանի վոր գույների հասարակ կամ խառը տիպին պատկանելը մենք սովորական աչքով պարզել յերբեք չենք կա-

ղող, այլ դիմում ենք ֆիզիկական կամ ֆիզիոլոգիական ապա-
բատների ոգնությանը։ Ամուր գույներն ընդհանուր առմամբ
նման են յերկու այլ գույների, որինակ՝ նարնջագույնը նման
է մի կողմից դեղինին, մյուս կողմից կարմրին, բայց նարնջա-
գույն առարկան տեսնելիս մենք այդ բանը չենք նկա-
տում։

Լրացուցիչ գույները նրանք են, վորոնց յերկուսի միա-
ցումից ստացվում է սպիտակ գույնը, այդպիսին են կարմիրը և
դեղնավուն կապույտը, դեղինը և լեղակապույտը, կանաչը և ծի-
րանին։ Սպեկտորի բոլոր գույների ընդհանուր միացումը
տալիս է այն սպիտակ գույնի զգայնությունը, վորը ցերեկային
է կոչվում։

Կոնտրաստի յերևույթը. Յեթե մենք մոխրագույն
թղթի կտորները դնենք այլ գույնի նյութերի վրա, կտեսնենք,
վոր մոխրագույն թղթի կտորը յուրաքանչյուր դեպքում տար-
բեր ուժ կստանա։ Այն կտորները, վորոնք դրվում են ուժգ
գույների վրա, մեզ ավելի պայծառ կթվան, իսկ ամենից ավելի
լուսավոր կլինի մեզ համար սևի վրա դրված մոխրագույն թղ-
թի կտորը։ Կարմիր ատտաուի վրա նա կանաչավուն կլինի, իսկ
կապույտի վրա դեղնավուն։ Ինչպես այս որինակը ցույց է տա-
լիս, լույսի ուժը և առարկայի գույնային տոնը կախված է այն
շրջապատից, վորի մեջ կատարվում է զգայնությունը։ Կոնտը-
րաստային գույներ կոչվում են այն յերկու գույները, վորոնք
ամենաբիչ չափով ունեն նման հատկություններ։ Կոնտրաստա-
յին միջավայրը հնարավորություն է տալիս և՛ ամենաարագ կեր-
պով տարբերել նրանց մեկը մյուսից, և՛ ուժեղացնել նրանցից
մեկից ստացած տպավորությունները։ Կոնտրաստային գույների
համաձեռնումը գեղագրական տեսակետից ճաշակավոր է։

Իրար հաջորդող պատկերներն այն ուժեղ գույնային տպա-
վորություններն են, վորոնք դրգռի դադարումից հետո վորոշ
ժամանակ շարունակում են ազդել մեզ վրա։ Իրար հաջորդող
պատկերները կարող են լինել դրական այն ժամանակ, յերբ
դրգռի թողած հետքերը վերարերում են նույն գույնին, իսկ
բացասական այն դեպքում, յերբ մենք տեսնում ենք վոչ թե
մինչ այդ մեր տեսողության վրա ազդող գույնը, այլ նրա կոն-
տրաստային գույնը։ Որինակ՝ յեթե յերկար ժամանակ կարմիրը

դիտելուց հետո, արագությամբ մենք մեր հայացքը դարձնենք դեպի սպիտակ պատը, նրա վրա կտեսնենք կանաչ յերիզներ։

Կինեմատոգրաֆիան հիմնված է իրար հաջորդող պատկերների սկզբունքի վրա։ Կինոյի ժամանակ մեր աչքի առաջից արագ կերպով անցնում են միշարք լուսանկարներ, վորոնք բոլորը միանում ու կազմում են մի ընդհանուր շարժվող պատկեր։

Ալխրոմատիկ և խրոմատիկ գույներ. *Ախրոմատիկ կամ չեզոք են կոչվում այն գույները, վորոնք ստուիճանաբար վորոշ հերթականությամբ տարբերվելով իրարից, կազմում են մի գույնից դեպի մյուսը վերանցվելու օրինական մի շարան։* Ախրոմատիկ գույներն սկսվում են սպիտակով, ստանում են մոխրագույնի տարբեր արտահայտություններ և վերջանում են սև գույնով։ Ախրոմատիկ գույները իրարից տարբերվում են միայն լույսի պայծառությամբ։ Լույսի պայծառությունը կախված է նրանից, թե ավյալ գույնն իր մեջից ինչ քանակություն ճառագայթներ և բաց թողնում. Ամենից ավելի թափանցիկ և լուսավոր սպիտակ գույնը, ամենից ավելի մութ է սև գույնը, վորն իր վրա ազդող համարյա բոլոր ճառագայթները կլանում է։ Ախրոմատիկ գույները հետևյալներն են. 1. կարմիր, 2. նարնջագույն, 3. դեղին, 4. կանաչ, 5. յերկնագույն, 6. մանուշակագույն։ Սպեկտրի այդ գույները հետզհետե փոխանցվում են մեկը մյուսին։ Կարմիրն անցնում է նարնջագույնից դեպի դեղինը, դեղինն անցնում է կանաչի, կանաչը—կապույտի, իսկ կապույտը՝ մանուշակագույնի միջոցով նորից մտանում է կարմրին։

Խրոմատիկ գույները սովորաբար դասավորվում են հետևյալ կարգով. նարնջագույն, կարմիր, ծիրանի, մանուշակագույն, ևղպակագույն, յերկնագույն, կապտավուն-կանաչ, կանաչ-դեղնագույն, կանաչ և դեղին։

Խրոմատիկ գույներն ունեն հետևյալ հատկությունները. ա) գույնային տոնը, բ) ինտենսիվություն կամ ուժ, գ) հագեցվածության աստիճան և պայծառություն։

Գույնային տոնը *այն հատկանիշների գումարն է, վորի շնորհիվ մենք տարբերում ենք սպեկտրի հինգ գույները մեկը մյուսից։*

Ինտենսիվությունը կամ լույսի ուժը կախված է յուրաքանչյուր ալիքների լայնությունից, այսինքն ալիքների բարձրությունից (ամպլիտուդայի մեծությունից)։

Գույնի հագեցվածությունը կախված է նրանից, թե տվյալ գույնի մեջ ինչ քանակությամբ խառնված է սպիտակ կամ սև գույնը. որինակ՝ կապույտ գույնը կարող է լինել խիստ կապույտ, գունատ կապույտ և վոչ վորոշակի կապույտ։

Գույնի պայծառությունը կախված է նրանից, թե մի տվյալ նույն լույսի տակ գտնվող գույները վորքան են մոտենում սպիտակին, վորն ամենապայծառ գույնն է։ Գույներն ըստ պայծառության իրար հետևյալ կերպ են հաջորդում. սպիտակ, դեղին, նարնջագույն, կարմիր, կանաչ, յերկնագույն, կապույտ, մանուշակագույն։ Սև գույնը վոչ մի պայծառություն չունի։

Գույների ներդաշնակությունը. XVIII դարի ֆիզիկոս Նյուտոնը առաջադրեց մի միտք, ըստ վորի վոչ միայն հնչյունները կարող են ներդաշնակորեն կապակցվել մեկը մյուսի հետ, այլ և գույները։ Շեվրեյլը (1786–1889թ.թ.), Ռոլֆիլին և այլն զարգացնելով վերոհիշյալ դրույթը, ստեղծեցին գույների զամմանները, բաղկացած յոթ գույների փոխհարաբերություններից։ Շեվրեյլը կարծում է, վոր ներդաշնակ ու ճաշակավոր կարելի չի համարել հետևյալ գույների միասին հաամաեղումը. կարմիրը և կանաչը, կապույտը և նարնջագույնը, կանաչավուն-դեղինը և լուսավոր մանուշակագույնը, կապույտը և սևը։ Նա անճաշակ, վոչ ներդաշնակ և համարում հետևյալ զույգերը՝ կապույտ-մանուշակագույնը, կարմիրը-նարնջագույնը, կանաչը-վարդագույնը և այլն։ Միաժամանակ նա գրում է, վոր այդ զույգերն այնքան էլ ներդաշնակ չեն թվում, յեթե նրանց մեջ խառնվի սպիտակ կամ սև գույնը։ Ֆրյուկին ներդաշնակ է համարում այն զույգ գույները, վորոնք ամենամեծ չափով տարբերվում են մեկը մյուսից։

X. ԳՈՒՅՆԱՅԻՆ ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ

Գույնային կուրությունը լինում է յերկու տեսակ—ընդհանուր և մասնակի։ Ընդհանուր գույնային կուրության ժամանակ մարդը վոչ մի խրոմատիկ գույն չի ջոկում, այլ բոլոր խայտաբղետ գույները տեսնում է իբրև սև, սպիտակ կամ մոխրա-

գույն, այնպես, ինչպես մենք տեսնում ենք լուսանկարը։ Մասնակի գույնային կուրության ժամանակ մարդը գաղափար չունի մի վարևե գույնի մասին և այդ գույնի փոխարեն տեսնում է անորոշ մոխրագույնը կամ մեկ ուրիշ գույն։ Հելմհոլցը կարծում է, որ մասնավոր կուրությունը կարող է նկատվել հետևյալ յերեք գույներից մեկն ու մեկի նկատմամբ—կարմրի, կանաչի և մանուշակագույնի։

Գյորինգը տարբերում է հետեվյալ մասնակի գույնային կուրությունների արտահայտությունները.

1. հանդեպ դեղինի և կապույտի, յերբ մարդը տեսնում է միայն կարմիր և կանաչ գույները։

2. Հանդեպ կարմրի և կանաչի, յերբ մարդը չի տարբերում այդ գույներից վորևե մեկը կամ յերկուսն էլ։

Գույնային կուրության ամենից ավելի շատ քանակն ընկնում է կարմրի վրա։ Կարմիր չզգացող մարդիկ հայտնի քիմիկոս Դալտոնի անունով (վոր ինքը ևս տառապում էր կարմրային կուրությամբ) կոչվում են դայլտոնիկներ։ Դայլտոնիկները կարմրի փոխարեն տեսնում են կամ մոխրագույն, կամ կապտավուն գույնը, իսկ մանուշակագույնի փոխարեն՝ կապույտը։ Հետազոտությունները ցույց են տվել, վոր մարդկանց մոտ յերեք տոկոսը տառապում է գույնային կուրությամբ։ Վորոշ հեղինակներ այդ տոկոսը հասցնում են վեցի։ Հետաքրքրականն այն է, վոր կանանց մոտ գույնային կուրության դեպքերը հազվագյուտ են (մոտ 0,3 տոկոս)։ Պատմում են, վոր մի քանի նկարիչներ տառապելով գույնային կուրությամբ, նկարում էին միայն սև գույնով սպիտակի վրա։ Գույնային կուրությունը կարող է կամ բնածին լինել, կամ նա կարող է հետևանք լինել թունավորման, թոքախտի, ջղայնության և այլն։

✝ ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆԸ

Լսողության որգանը շատ բարդ կառուցվածք ունի. բաղկացած է յերեք մասից, վորոնք կոչվում են արտաքին, մեջքին և ներքին ականջներ։

Արտաքին ականջը բաղկացած է ականջի խեցուց և ձայնանցքից. միջին ականջից լաժանված է թմբկաթաղանթով։ Մի-

Ջին ականջը ոդով լցված մի սավևրատուն (камера) և և միաց ցած է հատուկ Ցևվատախյան խողովակով քթի և բերանի դատարկ տարածության հետ։ Այդ սավևրատան մեջ են գտնվում «լսողական վոսկրիկները»՝ մուրճը, սալը և սանդղակը, վորոնք թմբկաթաղանթի շարժումները փոքրիկ լծակի նման տեղափոխում են ներքին ականջը։ Ներքին ականջը կամ ականջային լաբիրինթոսը բաղկացած է իրար հետ հաղորդակցության մեջ գտնվող ջրահեղուկով լցված յերեք մասերից։ Այդ մասերից ամենակարևորը խխունջն է, վորն իր թիթեղիկով հանդերձ կազմված է լսողական նևրվային մի քանի հազար թելերից։ Այդ թելիկները հիշեցնում են դաշնամուրի լարերը։ Նրանք վորքան ավելի մոտ են գտնվում խխունջի գագաթին, այնքան ավելի կարճ են։ Ցուրաքանչյուր ձայնին իրենց թրթռացով պատասխանում են լսողական նյարդի վորոշակի մի շարք թելիկներ. նրանք նման են դաշնամուրի լարերին։ Խխունջի թիթեղի վրա առանձին ձևով տեղավորված են այն բջիջները, վորոնք կազմում են այսպես կոչված կորտյան որգանը։ Այս բջիջներն աչքի ցանցաթաղանթի ցուպիկների և սրվակների նման հանդիսանում են լսողական թելիկների այն ծայրային ապարատները, վորոնք ձայնի տատանումներից գրգռվում են։ Թիթեղի այս կամ այն թելիկի թրթռոցը հաղորդվում և կորտյան որգանի այն մասին, վորը գտնվում է այդ թելիկների վերևում։ Այստեղից ձայնի գրգիռը հաղորդվում է ուղեղ մեծ կիսագնդերի կեղևի լսողական կենտրոններին։

Լսողական գգայնությունն ըստ վորակի բաժանվում է յերկու խմբի. Ա. ճիշտ և պարզ կերպով տարբերվող հնչյուններ (որինակ՝ մարդու ձայնը, յերաժշտական գործիքներից մեղ հասած ձայները և այլն), Բ. աղմկի (քամու վուռնոցը, ճաղկոտոց և չխչխկոցը և այլն)։ Այդ յերկու վորակի պատճառն ել ողի ալիքների տատանումներն են։ Եթե այդ տատանումները պարբերական ճիշտ են, այսինքն միատեսակ ձև ու արագություն ունեն և մեկը մյուսին հաջորդում է ռիթմիկորեն, առաջվում է յերաժշտական հնչյուններ։ Իսկ յերբ այդ տատանումները ճիշտ չեն, այսինքն ունեն տարբեր ձև ու արագություն և մեկը

մյուսին հաջորդում են առանց վորևէ կարգի՝ սուացվում է աղմուկ։

Լսողական զգայնությունների ամենաապարդ վորակը համարվում է տոնը, այսինքն ավելի պարզ հնչյունային էլեմենտը։

ՇՈՇԱՓԵԼԻՔԻ ԿԱՄ ՄԱՇԿԻ ԶԳԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ

Շոշափելիքի որգանը մաշկն է, վորը բաղկացած է յերեք շերտերից.—1. եպիթերմիսից, 2. իսկական մաշկից կամ կորիոնից և 3. յենթամաշկային ճարպային շերտից։

Եպիթերմիսը մաշկի ամենաապարդ և պաշտպանողական արտաքին շերտն է՝ բաղկացած յեղջուրային նյութից և նրա տակ գտնվող կենդանի բջիջներից։ Եպիթերմիսի յեղջուրային շերտը կարելի յի տեսնել ձեռքը այրելիս (կաշվի պղպջակները), ինչպես և մազոլի դեպքում։ Այդ շերտը շարունակ մաշվում է (թեփ և դառնում) և փոխարինվում է նորով։

Կորիոնը կամ իսկական մաշկը, վորը կազմում է միջին շերտը, վորոշ կենդանիների մոտ, շատ հաստ է։ Մարդիկ կոշիկներ և կաշվե այլ իրեր պատրաստում են այդ շերտից։ Մարդու մոտ նա շատ բարակ է և յերկու-յերեք միլիմետրից չի անցնում։ Նա կազմված է պինդ թելերից, վորոնց արանքները լցված են մանր ու խիտ արյունատար անոթիներով։ Այդ մասում գտնվում են նաև հատուկ բարձրացող պտուկներ, վորոնց մեջ գտնվում են շոշափելիքային ներվերի թելիկները։ Կորիոնում են գտնվում նաև քրտնքային և ճարպային գեղձերը։

Յենթամաշկային-ճարպային շերտը փխրուն է և բաղկացած է ճարպերով հագեցված մկացուցիչ թելերից։

Շոշափելիքային պտուկները, վորոնք, ինչպես ասացինք, գտնվում են մաշկի միջին կորիոնի շերտում, յերբեմն այնքան մեծ են, վոր բարձրացնում են եպիթերմիսը և կազմում ձեռքերի թաթերի և մատների վրա գտնվող գծերը։ Այս շոշափելիքային պտուկները կամ մեյսներովյան մարմնիկները իլիկանման են և միկրոսկոպային մեծություն ունեն։ Նրանք տարածված են մաշկի տարբեր մասերում վոչ համաչափ կերպով այդ պատճառով էլ մարմնի տարբեր մասերի շոշափելիքային ընդունակությունը տարբեր է։ Ըստ Վեբերի դիտողություններին, ամենից ավելի զգայուն է շոշափելիքի տեսակետից լեզվի ծայ-

րը, ապա մատների ծայրը։ Ամենից ավելի անզգայուն է մեջքը։ Ըստ Վեբերի, մեջքի միջին մասը 68 անգամ ավելի քիչ զգայուն է, քան լեզվի ծայրը և 34 անգամ ավելի քիչ զգայուն, քան մատների ծայրերը։

Պետք է ասել, որ վարժվելու միջոցով մենք կարող ենք ավելի ուժեղացնել և յերբեմն նույնիսկ անհավատալի չափերի հասցնել մատների ծայրերի զգայնության կարողությունը։ Այդ ամենից ավելի լավ կարելի յե դիտել այն մարզվանց վրա, որոնք զուրկ լինելով այլ զգայարաններից (տեսողության, լսողության), ստիպված են օգտվել միայն շոշափելիքից։ Ամերիկուհի Լաուրա Բրիջմանը յեվ կույր եր, յեվ խուլ ու համր, նա միայն շոշափելիքի զգայարանի ոգնությամբ նշանակալից չափով զարգացրել եր իր ժառանգ կարողություններըւ Զնոքը դնելով բանալիի անցքին, Լաուրան ոգի հոսանքից հասկանում եր սենյակում մարդ կա, թե ոչ։ Ծանոթների հագուստի ծայրերին դիպչելով, նա հեշտությամբ ճանաչում եր նրանց։ Շատերին էլ ճանաչում եր քայլերի հնչունքով առաջացած ոգի շարժումներից (տես Крейбиг. «Органы чувств у человека»)։ Մի ուրիշ կույր խուլ և համր—Ցիլենա Կելլերը ճիշտ և արագ կերպով կարդում եր սովորականից մի քիչ ավելի շատ մուր քաշած տառերը։ Իզուր չե, որ Կոնդիլյակը չափազանցություններին մեջ ընկնելով՝ մյուս բոլոր զգայարանների հետ համեմատած դերակատարությանը տալիս եր շոշափելիքին։

Շոշափելիքի զգայնությունը մեզ վորոշ տեղեկություն է տալիս արտաքին աշխարհի իրերի և առարկաների կառուցվածքի մասին։ Պինդ առարկաներից մենք առանում ենք հեռվյալ վերակի զգայնությունները՝ կոշտ, փափուկ, անհարթ, վողորկ (հարթ), տուր, բութ։ Զգայնություններ կարող ենք առանձնացնել յեվ հեղուկ և գազանման նյութերից։

Շոշափելիքն ունի ըստ դրսիններն տղեկության հետևյալ առանձնահատկությունները—շփում, հպում, ճնշում, ցավ։ Ցավն առաջանում է այն ժամանակ, յերբ ուժեղ ճնշման հետևանքով որպանիզմի վորոշ կենդանի բջիջներ քայքայվում են։

Տաքի և ցրտի զգայնությունները նմանապես պատկանում են շոշափելիքին։ Մաշկի բոլոր մասերում վոչ հավասարաչափ տարածված են ցրտության և տաքության ընդունող ներվային

կետեր։ Ինչպես հաշվարկումները ցույց են տվել, մեր մարմինն ավելի հակում ունի ցուրտը ընդունելու, քան տաքը, վորովհետև ցրտի կետերը ավելի քան ութ անգամ շատ են տաքի կետերից (մեր մարմնում կան 250.000 ցուրտ ընդունող և 30.000 տաքը ընդունող կետեր)։

Ցրտի զգայնությունը հետևանք է այն հարաբերության, վոր կա մաշկի և շրջապատի ոդի ջերմության միջև։ Ցերեկ ոդի ջերմաստիճանը հասնում է 16—18 ըստ Ցելսիուսի, իսկ մաշկինը 25—30 աստիճան է, մինչ վոչ ցուրտ են զգում և վոչ տաք, այդ պատճառով էլ այդ ջերմությունը կոչվում է «զերոյի ֆիզիոլոգիական կետ»։

ՀԱՄԻ ՑԵՎ ՀՈՏԻ ԶԳԱՑԱՐԱՆՆԵՐԸ

Համի զգայարանը գտնվում է լեզվի վրա և բաղկացած է այսպես կոչված ճաշակելիքների պտուկներից։ Պտուկները ծածկող բջիջների մեջ կան այնպիսիները, վորոնք ծառայում են վորպես ապարատ՝ իրենց հետ շփման մեջ մտնող ճաշակելի նյութերից սառցված գրգիռն ընդունելու համար։ Այս բջիջները կազմում են գլխուղեղի մեկ զույգ նյարդային վերջավորությունները, վորոնք գրգիռները հաղորդում են գլխուղեղին։ Վորպեսզի նյութը կարողանա նյարդերի ճաշակող վերջավորությունների վրա ազդել, նա պետք է լուծվի ջրի, կամ թքի մեջ։ Շաքարի քաղցրությունը մենք զգում ենք միայն այն ժամանակ, յերբ շաքարն սկսում է լուծվել։

Ճաշակելիքային պտուկների մեծ մասը գտնվում է լեզվի հիմքում, վերջում և ծայրամասերում։ Լեզվի հիմքն ամենից ավելի զգայուն է համի հանդեպ, մեջտեղը բոլորովին զգայուն չեն։ Լեզվի հիմքը հատկապես լավ է զգում դառը համը, վերջավորությունը՝ քաղցրը, իսկ ծայրամասերը՝ թթուն։ Ճաշակելիքի ուղեղային կենտրոնները գտնվում են կիսագնդերի քիմքային մասում։ Գրգռիչը քիմիական բնույթի յե։ Համի զգայնությունը կարելի յե չորս հիմնական վորակի բաժանել՝ թթու, քաղցր, դառը և աղի։ Մնացած համերը կամ սրանց տարբեր արտահայտություններն են և կամ խառնուրդ են։ Այդ նշած չորս տեսակի համերը կարող են կամ մեկը մյուսին լրացնել, կամ չե-

զոքացնել։ Որինակ՝ աղին և քաղցրը միացնելիս առացվում է անորոշ համ—անհամ։ Քաղցրի և թթվի միաժամանակ գործունեությունը, ընդհակառակը, ուժեղացնում է միմյանց։

Հոտառելիքի վորակներն այնքան շատ են, վոր հաշվելն անգամ անհնար է։ Նույնիսկ մինչև հիմա չի հաջողվել նրանց դասավորել, վորովհետև հոտառելիքի զգայությունը՝ չափազանց նուրբ է և յերբեմն ամենափոքր խառնուրդն անգամ զգացվում է։ Որինակ՝ կամֆարայի մի միլիգրամի հազարերորդ մասի խառնուրդի հոտն անգամ զգում ենք։ Այդ պատճառով էլ մենք սովորաբար հոտառելիքի տեսակը արտահայտում ենք նրա պատճառ դարձող առարկայով՝ վարդի հոտ, յուղի հոտ և այլն։ Տարբեր տեսակի հոտերը միանալով կամ չեզոքացնում են, կամ լրացնում մեկը մյուսին։

Բերի խոռոչի վերին մասում գտնվում են այսպես կոչված հոտառության բջիջները, վորոնցից դեպի ուղեղն են գնում հոտային ներվերը։ Հոտավետ նյութերը ազդում են հոտառության բջիջների վրա գազային վիճակում։ Նրանց ազդեցությունը քիմիական է։ Համի զգացումը սերտորեն կապված է հոտառության հետ, մի շարք գրգիռներ իրենցից ներկայացնում են համի և հոտի զգայունությունների խառնուրդ։ Հոտառելիքի ուղեղային կենտրոններն ըստ յերևույթին գտնվում են մոխրագույն շերտի քունքային մասում։

ՎԵՐԵՐԻ ՑԵՎ ՖԵՒՆԵՐԻ ՈՐԵՆՔԸ

Ծանոթանալով զգայության վորակի հետ, անցնենք նրա ինտենսիվության ուսումնասիրությանը։ Դրանցից ամենահիմնականն արդեն մեզ հայտնի է։ Զգայության ինտենսիվությունն ամենից առաջ կախված է արտաքին գրգիռների ուժից։ Ուժեղ լույսն, ի հարկե, ավելի ցայտուն է յերեվում, քան թույլը, բարձր ձայնն ավելի լավ ենք լսում, քան ցածրը։ Տասը գրամանոց կշռաքարը ավելի քիչ է ճնշում մեր մկաններն, քան տասը կիլոանոցը։ Վորպեսզի բարձրացնենք քսան կիլո ծանրություն, ավելի շատ մկանային ուժ պետք է գործադրենք, քան տասը կիլո բարձրացնելիս։ Բայց կարելի է արդյոք այս որինակներից յեզրակացնել, վոր զգայության լարվածությունը կամ զրգռի ուժին ուղիղ համեմատական են միմյանց։ Կարելի է

ասել վոր բոլոր պայմաններում գրգռի ուժեղացումն ուժեղացնում է նաև զգայնության ինտենսիվությունը։ Յերե պիտենք վաստակի ոգնության, մենք կտեսնենք, վոր միշտ այդպիսի հաստատ համոզմունք հայտնել չենք կարող։ Բավականին թույլ գրգիռը վոչ մի զգայնություն առաջացնել չի կարող։ Որինակ, մենք չենք լսում մեր գրպանում յեղած ժամացույցի չխչխկոցը, թեպետ, ի հարկե, նրա ձայնը հասնում է մեր ականջին։ Յերե ձայնի ալիքի տատանումները մի վայրկյանում 16-ից քիչ են, մենք չենք լսում, թեպետ, և անկասկած, այս դեպքում ձայնաներևույթը վորոշ ֆիզիոլոգիական փոփոխության են յենթարկվում։ Ա.յսպիսով, կա մի սահման, վորից ցածրը զգայնություն չի առաջացնում։ Այդ սահմանը փոփոխվում է տարբեր զգայությունների ժամանակ, ինչպես և նույնը չե տարբեր մարդկանց մոտ։ Կա նաև մի բարձր սահման, վորից վերև զգայնությունը կրճատավում է։ Ֆիզիոլոգիական գրգռի ամենացածր ատաիճանը, վորը մենք կարող ենք զգալ, կոչվում է գրգռի ներքին շեմք, բարձր ատաիճանը՝ գրգռի վերին շեմք։

Նույնպիսի յերևույթ է կատարվում այն ժամանակ, յերբ գրգիռը թույլ է լինում վոչ թե ինքնըստինքյան, այլ միաժամանակ տեղի ունեցող նույնանման այլ գրգիռների հետ համեմատած։

Ցավ, իսկապես, յերե մեր բարձրացրած մեկ կիլոգրամին ավելացնենք յերկրորդ կիլոգրամը, ծանրության ուժեղությունն իսկույն զգալի կլինի։ Իսկ յերե տասը կիլո ծանրության ավելացնենք մեկ կիլո, արդեն ծանրության ավելանալը այնքան մեծ չափով զգալի չի լինի։ Իսկ յերե նույն մի կիլոն ավելացնենք հիսուն կիլոյին, ծանրությունը համարյա թե զգալի չի լինի։ Մթության ժամանակ վառենք ելեկտրական լապտերը, պարզ է, վոր լույսի ուժեղացումը խիստ նշանակելի կլինի։ Փորձեցեք նույն գործողությունը ցերեկը և կտեսնենք, վոր լուսավորությունը բոլորովին չուժեղացավ։ Մի կտոր շաքարը թեյը քաղցրացնում է, իսկ նույն կտոր շաքարը մեղրը քաղցրացնել չի կարող։ Այս որինակներից տեսանք, վոր նույն գրգիռը մենք մերթ ուժեղ ենք զգում, մերթ թույլ և մերթ էլ բոլորովին չենք զգում, նայած, թե նա ինչ հարաբերության մեջ և գտնվում միևնույն ժամանակ գոյություն ունեցող միատե-

սակ գրգռի հետ։ Այսպիսով գրգռի ինտենսիվությունը կախված է միայն գրգռի ուժից, այլև գրգիռների փոխադարձ հարաբերությունից։ Ուրեմն, ըստ իրենց ինտենսիվության, զգայնությունները հարաբերական են։ Վեբերի և Ֆեխների փորձերը պարզեցին, որ այս դեպքում զգայնության ինտենսիվության փոփոխությունը կատարվում է միշտ որևէ հարաբերությամբ։ Լույսի գլխիկը պետք է ուժեղացնել յուրաքանչյուր անգամ $^1/_{100}$-ով, որպեսզի ինտենսիվության փոփոխությունը զգալի լինի, մկանայինը՝ $^1/_{17}$-ով, ճնշմանը՝ $^1/_3$-ով, ձայնայինը՝ $^1/_{10}$-ով։ Ի հարկե այս թվերը միայն մոտավոր են։ Հիմնականն այն է, որ ավելացման տոկոսը չի փոխվում առարկայի ինտենսիվության ուժեղացման հետ միասին։ Որևէ ճնշման ուժեղացումը պետք է $^1/_3$-ով լինի, որպեսզի ավելացումը զգանք, ապա այդ հարաբերությունը կպահի և 100 գրամ ծանրություն վերցնելու և 100 կիլոյի դեպքում։ Այս յուրահատկության օրենքները Վեբերն արտահայտեց հետևյալ մատեմատիկական ֆորմուլայով՝ «Ցեթե զգայնությունն աճում է թվաբանական պրոգրեսիայով, ապա նրան համապատասխանող գրգիռը պետք է աճի երկրաչափական պրոգրեսիայով»։

Այս օրենքները հայտնաբերեց Վեբերը, իսկ մաթեմատիկորեն ձևակերպեց Ֆեխները։ Այդ պատճառով էլ այդ կանոնները կոչվում են Վեբեր-Ֆեխների օրենքներ։

ԾԵՐԵԽԱՑԻ ԶԳԱՑՈՒԹՈՒՆԸ*)

Ինչ վերաբերում է յերեխաների զգայնական սֆերայի զարգացմանը, բոլոր եքսպերիմենտալ հետազոտությունները ապացուցում են, որ այն ժամանակ, յերբ նորածին յերեխայի մոտ գործում են ճաշակելիքային, շոշափելիքային և հոտառելիքային զգայնությունները, նա բոլորովին անտարբեր է վերաբերում տեսողական և լսողական գրգիռներին։ Ծնեբեխան ծնվում է իբրև խուլ և համր, իսկ նրա ճաշակելիքային զգայնությունների վերաբերյալ գիտնականները մեծ մասն այն կարծիքն ունի, որ յերեխայի այդ զգայնությունները բոլորից շուտ են զարգա-

*) Շարադրում ենք ըստ Կորնիլովի աշխատության։

նում, վորովհետև նրանք կապված են յերեխայի ամենահիմնական պահանջի՝ սնվելու կարիքի հետ։ Յերբ նորածին յերեխայի բերանը դնում ենք խիխինի, կամ շաքարի լուծույթի, նա համարյա թե նույն կերպ և վերաբերվում, ինչպես մեծերը։ Իր ծնունդից մի քանի որից հետո նորածին մանուկն արդեն վորոշակի կերպով տարբերում է քաղցր ջուրը կաթից, ինչպես և այդ նույն քաղցրացրած ջուրը սովորական ջրից։ Մի տարեկան հասակում յերեխայի ճաշակելիքն ավելի զգայուն է դառնում, իսկ չորս տարեկան հասակում նրա ճաշակելիքն այնքան է նրբանում և զարգանում, վոր նրա չսիրած կերակրի թեկուզ տեսքը նրա մոտ սրտախառնություն է առաջ բերում։

Բայց պետք է նշել, վոր յերեխայի վերաբերմունքն այս կամ այն կերակրի հանդեպ կախված է ոչ միայն ճաշակելիքից, այլ և հոտառելիքից։ Ահա թե ինչու վորոշ հետազոտողներ յեկել են այն յեզրակացության, վոր նորածին յերեխաների մոտ հոտի և համի զգայարանները առանձնացված չեն, այլ միացված, կապակցված։ Բայց այդ այդպես չէ։ Միայն 15 րոպե ապրած նորածինների վրա կատարվող փորձերը ցույց տվին, վոր անգոսրնական հոտ ունեցող կերակրի միայն հոտը, առանց համի զգայության, բավական է, վորպեսզի յերեխան բացասական վերաբերմունք հանդես բերի դեպի տվյալ կերակուրը։

Մի որևէան մանուկին արդեն դնում ենք գդալի նավթի չնչին լուծույթի մեջ թաթախված ծծուկը։ Իր կյանքի առաջին շաբաթում, մոր կաթին սովորած յերեխան հրաժարվում է կովի կաթից՝ միայն նրա հոտի պատճառով։ Այսպիսով, նորածինի մոտ տեսնում ենք հոտառելիքային զգայարանների զարգացած վիճակ, ըստ վորում այդ զգայարանները կատարելագործվում են ճաշակելիքի հետ միասին։ Իսկ այն դեպքում, յերբ հոտն առանձնացված է համից, յերեխաներն ավելի քիչ զգայնություն են հանդես բերում։ Այսպես՝ հայտնի հետազոտող Պրեյերի 11 ամսական յերեխան դեռ չէր կարողանում հոտառելիքային զգայնությունը համի զգայնությունից, այդ պատճառով էլ յերբ նրան հեղուկ տվին հոտառելու համար, նա այդ հեղուկը տարավ իր բերանը, ոչ թե դեպի քիթը։

Ինչ վերաբերում է շոշափելիքային ռեցեպտորներին, պետք է ասել, վոր նրանցից յերեխայի հատկապես լեզուն ու շրթունք-

նեքն առավելապես զգայուն են, հավանաբար նրա համար, որ նրանք մասնակցում են սննդառության պրոցեսին։

Շոշափելիքային զգայարանները յերեխաների մոտ ավելի յեն զարգացած։ Մի քանի հետազոտողներ նույնիսկ կարծում են, որ շոշափելիքն այն առաջին զգայարանն է, որ բոլորից շուտ է զարգանում յերեխայի մոտ։ Ըստ որում շրջապատի առարկաների հետ ծանոթանալու միջոցը յերեխայի համար միշտ ձեռքը չի հանդիսանում։ Որքան փոքր է յերեխան, այնքան ավելի մեծ դեր է խաղում նրա շրթունքները իբրև մարմնի ամենից ավելի զգայուն մասերը։ Ահա թե ինչու դեռ յերկու առաջին տարվա վերջին յերեխաները իրենց ձեռքն ընկած առարկան հաճախ տանում են բերանը, որից հետո միայն ծանոթանում են իրի հետ ձեռքի միջոցով։

Այսպիսով, տեսնում ենք, որ հոտառելիքը, ճաշակելիքը և շոշափելիքը գործում են յերեխայի կյանքի հենց առաջին րոպեներից։

Բոլորովին այլ պատկեր ենք նկատում, յերբ ուսումնասիրում ենք բարձր զգայարանները՝ լսողությունը և տեսողությունը։ Ցերեխան համարյա թե խուլ է ծնվում, որովհետև նրա ձայնային անցքը լցված է խիտ հեղուկով, որը մաշկի կողմից ծծվում է միայն մի քանի որից հետո։ Ցերեխան լսում է մեծ մասամբ միայն յերկրորդ որվանից։ Պրեպերի յերեխան սուլոցի և ծափի ձայնը լսեց միայն չորրորդ որում։ Շինի դիտողությունների՝ յերեխան թղթի ազմուկին պատասխանեց առաջին շաբաթում։ Նկատվել են դեպքեր, յերբ յերեխան սկսում է լսել միայն յերրորդ շաբաթում։ Համենայն դեպս, յեթե այդ ժամանակից հետո էլ յերեխան չի լսում, հիմք կա յենթադրելու, որ նա խուլ է և համր։ Ցերրորդ շաբաթից մինչև չորս ամսական յերեխաների վրա մեծերի ձայնի հանդիսատ տոնը մեղմացուցիչ և ազդում, իսկ ջղային ձայնը գրգռում է։ Ցերգն ու յերաժշտությունը միշտ բարեհաջող են ազդում յերեխայի վրա։ Մեկ ու կես ամսական յերեխան արդեն որոշ ուշադրություն է դարձնում ու հաճույք զգում յերաժշտություն լսելիս։ Ցերկու-յերեք տարեկան հասակում յերեխան աշխատում է կրկնել իրեն դուր յեկած մոտիվները։ Ցերկրորդ տարվա վերջին և յերրորդ տարվա սկզբին յերեխան արդեն կարող է որոշ յե-

բաժշտական ձայները հանել և յերգել ամենաապարզ յեղանակները։ Յերեք տարեկանից նա բավականին ճիշտ և տալիս է տակտը, և՛ յեղանակը, թեպետ այստեղ կան անհատական մեծ տարբերություններ։ Համաձայն Մոնտեսսորու ճիշտ դիտողության, փոքր յերեխաները ընդհանրապես ավելի քիչ զգայուն են դեպի յերաժշտական տոնը քան նրա ռիթմը։

Քայլի զգայարանը զարգանում է ու կատարելագործվում յերեխայի աճման հետ միասին։

Տեսողության օրգանը զգայարանների մեջ ամենից ավելի բարձրն է համարվում, վորովհետև նա ամենաթանկարժեք զգայություններն է տալիս մարդուն։ Այդ ապացուցվում է աչքի բացառիկ բարդ կառուցվածքով։ Ամեն մի յերեխա կույր է ծնվում։ Նորածինը վոչ միայն չի տարբերում վորևե առարկա, այլ և չի կարողանում համապատասխան կերպով կառավարել իր աչքերի շարժումը։ Կառավարել իր աչքերը և հետևել լուսավոր, շարժող առարկաներին, յերեխան սկսում է միայն յերկու ամսականից, իսկ հետևել, որինակ, թռչունի թռչելուն՝ 6—7 ամսական հասակում։

Նա հետզհետե կարողանում է վոչ միայն գլխի շարժումներով հետևել հեռացող առարկաներին, այլ և աշխատում է բռնել առարկան՝ անկախ նրա հեռավորությունից։ Նա ձեռքը ձգում է դեպի արևը, պատից բարձր կախված նկարը և այլն։ Այսպես, որինակ, Պրեյերի յերեխան, յերբ յերկու տարեկան եր, աշխատում եր առաջին հարկից ձեռքով մի թղթի կտոր հանձնել յերկրորդ հարկում գտնվող մարդուն։ Յերեխան ընդհանրապես տարածության մասին գաղափար է կազմում միայն այն ժամանակ, յերբ սկսում է ազատ կերպով քայլել և, այսպիսով, կապ ստեղծել մկանային և տեսողական զգայությունների միջև։ Գույների տարբերության զգայությունն սկսվում է 5—6 ամսական հասակից, բայց նույնիսկ 3 տարեկան հասակում յերեխան ավելի լավ է ճանաչում միայն սպիտակ, սև և կարմիր գույները։ 14 տարեկան հասակից և, վոր յերեխան կարողանում է ջոկել բոլոր գույները։

Զգայական որգանների դաստիարակությունը. Մեզ համար արդեն պարզ է, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունեն մեր հոգեկան կյանքում մեր զգայարանները, վորոնք, Լենինի խոս-

քերով ասած, հանդիսանում են «գիտակցության անմիջական կապն արտաքին աշխարհի հետ»։ Պարզ և, վոր վորքան կատարելագործված լինեն մարդու զգայարանները, մենք արտաքին աշխարհից այնքան ավելի շատ տպավորություններ կստանանք և, ընդհակառակը, մեր զգայարանների ամեն մի պակասությունը համապատասխան ազդեցություն կթողնի մեր զգայնությունների վրա։ Այսպիսով մարդու զգայարանների զարգացումը նրա մտավոր զարգացման հիմնական մոմենտներից մեկն է։ Բացի դրանից, զգայական օրգանների դաստիարակությունն ուժեղացնում է ու քնքշացնում մեր հույզերն արվեստի ասպարիզում և մարդու վարքի վրա բարեհաջող ազդող եսաեսիկական հաճույքների աղբյուր է դառնում։

Վերջապես, զգայարանների դաստիարակությունը կարևոր նշանակություն ունի մեր պրակտիկ կյանքում՝ բազմաթիվ մասնագիտական աշխատանքներում, օրինակ՝ բժշկականության, տրանսպորտի, ղինվորական ու ծովային, հեռախոսի, տելեգրության և այլ ասպարեզներում, վորոնք պահանջում են զարգացած զգայարաններ։

Ահա թե ինչու զգայական օրգանների դաստիարակությունը խիստ անհրաժեշտ է։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Վիրն է զգայնության ֆունկցիան։
2. Ի՞նչ նշանակություն ունի զգայնությունը մարդու հա՜մար։
3. Վիրն է զգայնությունների մատերիալիստական և իդեալիստական բացատրությունը։
4. Ի՞նչ բան է զգայնության մոդալականությունը, վորակը, ինտենսիվությունը, ժամանակի պատրագան, տարածության պատգամ։
5. Վորո՞նք են գրգռի ինտենսիվության կամ ուժի սուբյեկտիվ և օբյեկտիվ պայմանները։
6. Համեմատեցեք զգայնությունը և զգացմունքն իրար հետ։
7. Ինչպե՞ս է արտահայտվում մեր զգայարանների հավելքաշխ աշխատանքը։
8. Վիրն է սինեսթեզիա կոչված երևույթը։

9. Ինչպիսի գործոններով է պայմանավորված որգանական զգայունությունը։

10. Ինչպես ենք ստանում մկանաշարժողական զգայունությունները, վիճրն է հավասարակշռության որգանը։

11. Տեսողության զգայնության նշանակությունը. ինչ ֆիզիոլոգիական կառուցվածք ունի աչքը։

12. Ինչպես ենք ստանում լսողական և դույնային զրգիռները։

13. Ինչպես է արտահայտվում աչքի ակկոմոդացիան։

14. Վարժենք են դույնային զգայունությունները, ինչ տարբերություն կա հասարակ և խառը դույների միջև։ Վիճրն է դույնային կոնտրաստը։

15. Ինչպիսի տեսողական պատկերներ իրար հաջորդող են կոչվում։

16. Վարժենք են ախրոմատիկ և խրոմատիկ դույները, ինչ է նշանակում դույնային տոն, ինտենսիվություն, հագեցվածության աստիճան, պայծառություն։

17. Ինչպես ներդաշնակել դույները։

18. Ի՞նչ է դույնային կուրություն։ Ովքե՞ր են դալտոնիկները։

19. Ականջն ինչպես է կառուցված. ինչպես է կատարվում լսողական պրոցեսը։

20. Ի՞նչ է ազմուկը, յերաժշտական ձայնը, տոնը։

21. Ինչպիսի կառուցվածք ունի շոշափելիքի զգայարանը։

22. Շոշափելիքի զգայարանի նշանակությունն ու հատկությունները։

23. Տաքի և սրտի զգայնությունների մասին։

24. Համի և հոտի զգայնությունները։

25. Ի՞նչ է նշանակում զրգռի վերին և ներքին շեմք։

26. Վիճրն է վերների և ցեխների յերկրորդ որենքը։

27. Ի՞նչ կասեք յերևույթի զգայնությունների մասին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լենին.—«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ»։
2. Крейбик.—«Органы чувств у человека».
3. Կարաևով.—«Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա»։
4. Կորնիլով.—«Հոգեբանության ձեռնարկ»։
5. Рубинштейн.—«Основы психологии».
6. «Психология», под ред. Корнилова, Теплова и Шварца.

ԸՄԲՌՆՈՒՄ

Ընդհանումը բնության իրերի ու յերեվույթների բավականաչափ ամբողջական ճանաչումն է, նրանց արտացոլումը մեր ուղեղում։

Մենք արդեն տեսանք, վոր այդ իրերն ու առարկաները ունեն բազմաթիվ վորակներ։ Այդ վորակները ճանաչելու համար մարդն ունի զգայարաններ։ «Մեր տարբեր զգայարանները կա-րող են հաղորդել մեզ վորակապես բացարձակորեն տարբեր տպավորություններ» (Ենգելս)։ Տարբեր զգայարաններ և տպա-վորություններ հետևանք են իրերի ու յերևույթների ազդեցու-թյան՝ մեր զգայարանների վրա. վորակապես տարբեր իրերի ու յերևույթների որյեկտիվ գոյությունը ապացուցն ու բովանդակու-թյունն է կազմում մեր ընդհանումների։

Բայց մարդը չի բավարարվում իրերի ու առարկաների ա-ռանձին հատկություններն ուսումնասիրելով։ Չի բավականանում, վորովհետև, ինչպես նախորդ գլխում տեսանք, բնության մեջ մարդու, մեկը մյուսից անկախ, մեկուսացված վորակներ գոյու-թյուն չունեն։ Իրականում յուրաքանչյուր առարկա բնորոշվում է բազմաթիվ հատկությունների միասնությամբ, որինակ՝ ծաղիկի համար բնորոշ է ոչ միայն նրա հոտը, այլև ձևը, մհծությունը, գունդը, համը և այլն։ Ծաղիկն ինքն այդ հատկու-թյունների մեխանիկական գումարը չէ, նա ամբողջական է, անքակտելի՝ յուր բազմակողմանիության մեջ։

Դրա համար էլ մարդն իր ճանաչողությունը լրիվ, ճշգրիտ դարձնելու համար աշխատում է և պետք է աշխատի լրիվ ճանա-չել առարկան, ունենալ իր ուղեղում այդ առարկայի ճշգրիտ, իրական մտապատկերները։ «...միշտ միևնույն չեսն է, վոր այս բոլոր տարբեր զգայական տպավորություն-ները ընդունում է ու վերամշակում, հետևաբար՝ մի միության մեջ ընդգրկում. ինչպես և այս տարբեր տպավորություններն առաջվում են միևնույն առարկայից, «յերևույթն» են այդ առար-

կայի ընդհանուր հատկությունների և ոգնում են, որ այդ առարկան իմացվի» (Ենգելս, «Բնության դիալեկտիկա», 1936թ. էջ 180)։

Այսպիսով ըմբռնումներն ու զգայնությունները իրար բոլորովին հակադիր, առանձնացված պրոցեսներ չեն։ Յուրաքանչյուր զգայնություն արդեն յուր հիմքում ունի ըմբռնման տարրեր և միաժամանակ յուրաքանչյուր ըմբռնման միակ միջոցը, միակ աղբյուրն ու որդանը զգայնություններն են, այնինքն մեզանից անկախ գտնվող աշխարհի իրերի ու յերևույթների ազդեցությունները մեր զգայարանների վրա։

Ըմբռնումը, որը հնարավորություն և տալիս ճանաչել արտաքին առարկան այնպես, ինչպես նա կա իր անմիջականությամբ, յուր զգայնական կոնկրետ ամբողջականությամբ, անպայման մի աստիճան և դեպի առաջ՝ արտաքին աշխարհը ճանաչելու ուղղությամբ։

ԸՄԲՌՆՈՒՄ ՑԵՎ ՄՏԱԾՈՒԹՅՈՒՆ

Բայց սխալ կլիներ կարծել, որ մարդկային ըմբռնումն հավասարազոր է և իրականության ճանաչումը։ Այդ այդպես կլիներ, յեթե բնությունն իրենից ներկայացներ անշարժ, քարացած, իրենից միանգամայն անկախ, առանձին անփոփոխ առարկաների մի գումար։ Գիտությունը, պրակտիկան որըստորե կուսակվող առատ նյութերով ցույց է տվել, որ բնությունն իրենից ներկայացնում է «կապակցությունների ու փոխադրեցությունների մի անվերջ միահյուսում, որտեղ վոչ մի բան իր նախկինն ոչ մնում է և իր նախկինն վերադառնում չի ունում, այլ ամեն ինչ շարժվում է, փոփոխվում, ծագում է ու չքանում» (Ենգելս, «Անտի-Դյուրինգ» 1932 թ. էջ 24)։ Բնության յուրաքանչյուր յերևույթ, իր, առարկա բազմաթիվ կապերով շաղկապված է ունացած իրերի և առարկաների հետ։ Այդ կապակցությունները պատահական չեն, այլ եյական են վոչ միայն ընդհանրապես բնության ուսումնասիրության համար, այլև ավյալ յեղակի առարկան ճշգրիտ, խորը կերպով ճանաչելու համար։ «Բնության արտացոլումը մարդու մտքում,— գրում է Լենինը—, պետք է հասկանալ վոչ «մեռած», վոչ «վերացական», վոչ առանց շարժման, վոչ առանց հակադրությունների, այլ շարժման հավիտենական պրոցեսում, հակադրությունների ծագման ու նրանց լուծման մեջ»։ (Ленин, «Философские

тетради» стр. 188)։ Որինակ՝ ինքը չես ուզում եմ ըմբռնել վո-
րևէ իր, դրա համար ամենից առաջ պարզում եմ այդ առարկայի
ինչ լինելը։ «Սա հակապաղ է»,—ասում եմ չես, այսինքն նախքան
տվյալ իրի կոնկրետ հատկանիշների ուսումնասիրության անց-
նելը, չես ամենից առաջ աշխատում եմ պարզել տվյալ իրի ինչ
լինելը, այսինքն այն, թե նա օբյեկտիվ աշխարհի մյուս իրերու-
նների, իրերի և առարկաների մեջ ինչ տեղ է զբաղեցնում, յուր հատ-
կություններով նրանցից որոշ շարքին է նման։ Դրանով իսկ
չես կատարում եմ մտածողական ակտ, այսինքն համեմատում
եմ իմ ըմբռնման տեսադաշտի մեջ գտնվող իրը մյուս իրերի հետ,
որպեսզի այդ իրի ինչ լինելը պարզ լինի ինձ համար։ Դրանով
իսկ չես ըմբռնման պրոցեսի մեջ մտցնում եմ մտածության
ելևէնտները, որոնց հետ չես չես որոշ ընդհանրացումներ
չկատարել, կոնկրետ իրն ըմբռնել չեմ կարող։

Իհարկե ըմբռնումը դեռ մտածություն չէ, թեև յուրաքան-
չյուր մտածություն կենտում է ըմբռնումից։ Ըմբռնումը՝ առար-
կաների արտացոլման պարզ, հատարակ ձևն է, նա մտածությու-
նից տարբերվում է նրանով, որ կոնկրետ է, անմիջական, չես-
պակի։ Բայց լինելով չեզակի, ըմբռնումն իր մեջ արդեն ունի
մտածության հիմունքներն իրրև անհրաժեշտ տարր։ Ձեվ սա
նորից ապացույց է մեր հոգեկան ֆունկցիաների շաղկապի, ներ-
քանց միասնական, համերաշխ աշխատանքի։ Այսպիսով մարդ-
կային ըմբռնումները խոհական են, խելացի, մտածված։ Խոհակա-
նությունն արտահայտվում է նրանով, որ մարդը չեզակի առար-
կա քննդոշելու համար, աշխատում է պարզել նրա կապակցություն-
ները, գտնել նրա տեղն ու դերն արտաքին աշխարհի մյուս իրերու-
ների և առարկաների շարքում։

Մարդկային ըմբռնման խոհական լինելու մյուս հատկա-
նիշը հետևյալն է։ Մարդու ճանաչողությունը սոսկական հետա-
քրքրության արդասիք չէ։ Մարդն աշխարհը ճանաչում է որ-
ոշ պրակտիկ նպատակներից ելնելով։ Մարդկային պրակտի-
կայի նպատակն է՝ ընդլայնել ուսումնասիրել այն վերափոխե-
լու համար։ Այդ է պատճառը, որ մարդն առարկան ըմբռնելիս
չի սկսում աշխատում է պարզել տվյալ առարկայի ինչ լի-
նելը, այլև նրա նշանակությունը մարդկության համար։ Մարդը
առարկան և նրա հատկանիշներն ուսումնասիրում է, որպեսզի

այն ծառայեցնի յուր ոգուին, ստիպի բնության՝ առատորեն բավարարելու մարդու կենսական պահանջները։ Մարդկային ըմբռնումները նպատակահարմար են, խելացի, ծրագրված։

X ԸՄԲՌՆՈՒՄԸ ԾԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Բնությունը մարդու կարիքներին ի սպաս դնելու համար հարկավոր է, որ մարդը կարողանա ճիշտ արտացոլել նրա բազմաթիվ արտահայտություններն։ Սխալ, սակայն ճիշտ, իկյուղիոնալ ըմբռնումը մեծ չափով դժվարացնում է բնության ոգտագործումը. «Իմացությունը,—գրում է Լենինը,—ըիելոլիստական կարող է լինել ոգտակար, մարդու պրակտիկայում, կյանքի պահպանման, տեսակի պահպանման մեջ ոգտակար միայն այն ժամանակ, երբ նա արտացոլում է մարդուց կախում չունեցող օբյեկտիվ ճշմարտությունը» (Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», 1933 թ. էջ 155)։

Բնությունը ճանաչելու համար պետք է ազդել նրա վրա։ Հասարակական պրակտիկ գործունեության ընթացքում են, որ մարդը իրերի ու յերևույթների մասին ունեցած յուր տեղեկությունները ճշտում, առուգում, լրիվ ու բազմակողմանի յե դարձընում՝ մարդու իմացության չափանիշը հենց մարդկային պրակտիկան է։ «Ցուրաքանչյուր հասարակական կյանք, բուն էյության պրակտիկ կյանք է։ Բոլոր գաղտնիքները (խորհրդավորությունները), որոնք թեորիան միստիցիզմի մեջ են դնում, իրենց բնական լուծումը գտնում են մարդկային պրակտիկայում և այդ պրակտիկայի ըմբռնման մեջ» (Մարքս, 8 թեզ Ֆեյերբախի մասին)։ Պրակտիկան վոչ միայն ճանաչողության հիմքն է և չափանիշը։ պրակտիկայով մարդը փոխում է շրջակա միջավայրը, կուսական բնությունը դառնում է մարդկային։ Բնության վրա ազդելով, փոխելով բնությունը, մարդն իր և բնության մեջ դնում է արհեստական միջավայր։ Որինակ՝ յուրտը, կարկուտը, անձրևը և այլն այլևս մարդու վրա անմիջականորեն ազդել չեն կարող, վորովհետև իր իսկ բնության նյութից մարդը պատրաստել է հագուստ, վառարան, հովանոց, տուն և այլն։

Բնությունը մարդկային պրակտիկության փիլիսոփայության սկսած, վերացական հասկացողությունը, Մարքսը գրում է.

«Նա (Ֆեյերբախը) չի նկատում, որ իրեն շրջապատող զգայնական աշխարհը... պատմական արդյունք է, մի շարք սերունդների գործունեության հետևանք...» (Маркс и Энгельс, «Немецкая идеология», стр. 33)։

Մենք շարունակ անմիջականորեն գործ ունենք այնպիսի առարկաների հետ, որոնք ստեղծված են մարդու կողմից—բնության նյութից, մեկ միայն մեր բնակարանում, գրասենյակում, այլև փողոցում, դաշտերում, համարյա ամեն տեղ ստանում ենք տպավորություններ մեզ թե «մաքուր» բնության նյութից, այլ մենք գործ ունենք «մարդկայնացված», մարդու կողմից մշակված բնության արտահայտությունների հետ։ Միջավայրի զգլխոնների փոփոխումը, բնականաբար փոխեց նաև մարդկային զգայնական ըմբռնումների բնույթը։

«... Զգայնությունները և հատկությունները,—գրում է Մաքքսը,—գործեն մարդկային, ինչպես սուբյեկտիվ, նույնպես և օբյեկտիվ իմաստով։ Աչքը գործում մարդկային աչք, այնպես ինչպես նրա առարկան գործում հասարակական, մարդկային առարկա, մարդու կողմից ստեղծված՝ մարդու համար... Պարզ է, որ մարդկային աչքը տեսնում է այլ կերպ, քան կոպիտ; ինչ մարդկային ականջը, որ մարդկային անասնջը լսում է այլ կերպ, քան կոպիտ ականջը և այլն» (Маркс и Энгельс, Соч. Т. III, стр. 626)։ Մարդկային զգայնական ըմբռնումների փոփոխությունը հնարավորություն է տալիս նաև յուրահատուկ մարդկային վերաբերմունք ունենալ հանդեպ բնության, մի կողմից մարդն իր շրջապատող ըմբռնում է իրերն իրենից անկախ գոյություն ունեցող օբյեկտիվ իրականության, որը քմահաճ է, բնության խորհրդավորությամբ լեցուն հանդեպ յուր գործը՝ մարդը։ Մյուս կողմից էլ մարդն աստիճանաբար հասնում է այն գիտակցությանը, որ ինքը, այդ բնության մի մասնիկը միաժամանակ հանդիսանում է յուր ակտիվ գործունեությամբ այդ բնության վերափոխողը, նրա բազմաթիվ ձևերի կերտողը։ Այսպիսով, մարդու պատկերացումը բնության մասին, հետզհետե, իրերն ինչ որ ամենակարող ու իրեն հակադիր ոտար ուժի, արմատապես փոխվում է։ Մարդն սկսում է հասկանալ, որ բնությունը բացարձակապես իրեն ոտար չէ, որ նա գործունեության ու մարդկային կարիքների բավարարման օբյեկտ է։

Մարդկային ըմբռնումները փոխվում են վոչ միայն նյութական կուլտուրայի, այլև հասարակական հարաբերությունների զարգացման հետևանքով։ Հատկապես զգայարաններից յերկուսը՝ տեսողության և լսողության զգայարանները իրենց այժմյան կարողությունների համար պարտական են հասարակական կենցաղին։

Աշխատանքը պատճառ դառավ հասարակության առաջացմանը։ Աշխատանքի շուրջը համախմբվեցին մարդիկ, վորոնց մոտ առաջացավ անհրաժեշտ, ստիպողական կարիք՝ միմյանց բան ասելու, մտքեր հաղորդելու։ Այդ կարիքն ստեղծեց հնչյունային և գրավոր խոսքը։ Հնչյունային խոսքն ազդեց լսողության որգանի նրբացման ու կատարելագործման վրա, իսկ գրավոր խոսքը, և առհասարակ քաղաքակրթությունը զարգացրին աչքը, ականջը, շոշափելիքը և այլն։ Զգայարանների կատարելագործումն ավելի լրիվ ու ճշգրիտ դարձրեց մարդկային ըմբռնումների բնույթը։

Այսպիսով, հասարակական ակտիվ, պրակտիկ գործունեությունը հարստացրեց մարդկային ըմբռնումը և փոխեց այդ ըմբռնումների բնույթը, այսինքն մարդու հասկացողությունները բնության մասին, և միաժամանակ կատարելագործեց, աշխարհաճանաչման հատուկ և ամենակարող գինք դարձրեց մարդկային զգայական ապարատը։

«Դրա համար էլ,—գրում է Մարքսը,— հասարակական մարդու զգայնություններն այլ են, քան վոչ հասարակականինը։ Միայն շնորհիվ (առարկայական) մարդկային էության օբյեկտիվորեն զարգացած հարստության, սուբյեկտիվ մարդկային զգայնության հարստությունը, սուբյեկտիվ մարդկային զգայնության հարստության, սուբյեկտիվ յերաժշտական ականջը, ձևի գեղեցկությունը հասկանալ կարողացող աչքը, մի խոսքով մասամբ առաջին անգամն են ծնվում և մասամբ էլ զարգանում են հաճույք ստանալու ընդունակ զգայնությունները, զգայնություններ, վորոնք հաստատվում են իրրև մարդկային կյանքի ուժեր։ Վոչ միայն սովորական հինգ զգայությունները, այլև այսպես կոչված հոգևոր զգացմունքները, պրակտիկ զգացմունքները (կամքը, սերը և այլն), մի խոսքով մարդկային զգացմունքները, զգայական որգանների մարդկայնությունը դարձում է միայն իրենց՝ առարկայի գեղեցկության շնորհիվ, բնու-

թյան մարդկայնացման շնորհիվ։ Հինգ զգայնությունների առաջացումը—համաշխարհային պատմության արտադրանքն է» (Маркс и Энгельс. Соч. Т. III, стр. 627)։

× ԸՄԲՌՆՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒԹԸ

Մարդկային ըմբռնումները վոչ միայն կախված են շրջապատի առարկաներից, այլև նրանցից, թե ըմբռնող անհատը յուր զգայնական միջավայրի հանդեպ ինչպիսի դիրք է բռնում, վորն է այդ մարդու հասարակական դոյությունը։ Պարզ է, վոր ըմբռնողի դասակարգային պատկանելությունը, նրա գնահատականն ու վերաբերմունքն իր զգայական միջավայրի հանդեպ, մեծ չափով ազդում է ըմբռնման բնույթի վրա։ Որինակ՝ անլեզու կերպով լուսաձած կոմունիստական թռուցիկը արտահայտվում կապիտալիստի մոտ առաջացնում է անզոր կատաղություն ու վախ, իսկ աշխատավորի մոտ հույս, հավատ, պայքարի ձգտում։

Բուրժուական պատմաբանը պատմության փաստերին մոտենում է վոչ թե այնպես, ինչպես վոր նրանք կան, որյեկտիվորեն, այլ սուբյեկտիվորեն, այսինքն այնպես, ինչպես բուրժուազիային հաճելի կամ տեսնել ըստ վորում հարկավոր չի անտեսյալման, վոր բուրժուական գիտնականը սուբյեկտիվորեն փաստերը կեղծելու ցանկություն ունենա։ Բուրժուական գիտնականի դասակարգային դույզ սոխում և նրան փաստերը վոչ ճիշտ ըմբռնել։ Այսպիսով, ըմբռնման համար շատ կարևոր է այն, թե մարդիկ ինչպես են մոտենում բնության յերևույթներին, ինչն են ուզում տեսնել, ինչ վերաբերմունք ունեն հանդեպ իրենց տեսածի, հաճելի կամ այդ թե վոչ։ Դասակարգային պատկանելությունը ազդում և նաև զգայարանների ուժի և կարողության վրա՝ նրանց բթացման կամ կատարելագործման ուղղությամբ։

Աշխատանքի վատթար, հակասանիտարական պայմանները, ծանր, յերկարատև ու հոգնեցուցիչ աշխատանքը, վատ սնունդը, բնակարանային սոսկալի պայմանները, վորոնց մեջ գտնվում և կապիտալիստական յերկրներում բանվորը, անպայման խիստ բացասաբար են ազդում զգայարանների կարողության, հետևաբար նաև ըմբռնման ուժգնության վրա։

Կապիտալիստական յերկրներն ինչպես կարճատեսության, այնպես և աչքի մյուս դեֆեկտների, լսողության զգայարանի անկարողության հսկայական տոկոսներ են տալիս։ Զանազան հիվանդությունները (տրախոմա, մենինգիտ և այլն) կուրերի և խուլերի թիվը յեռապատկում ու քառապատկում են. յեթե ղրան ավելացնենք պատերազմի հաշմանդամների թիվը, ապա պարզ կլինի կապիտալիզմի խիստ բացասական ազդեցությունն աշխատավորի զգայնական կարողությունների վրա։ Աշխատանքի կազմակերպումը՝ կապիտալիստական դործարանում՝ բթացնում է մարդու հոգևոր բոլոր հատկությունները, նրան դարձընում մեքենայի կցորդ։

Յուրաքանչյուր հարստության աղբյուրն աշխատանքն է։ Կապիտալիստական յերկրներում բանվորի արտադրած ապրանքը կորցնում է իր անմիջական սպառողական նշանակությունը կապիտալիստի համար։ Կապիտալիստը մտածում է միայն այդ ապրանքը վաղի վերածելու մասին, դրա համար էլ արտադրած նյութերի անմիջական, կենսական հատկությունները նրա համար նշանակություն չունեն։ Նրա չափանիշը փողն է։

Ինչ վերաբերում է բանվորին և աշխատավորին, ապա նրա վերաբերմունքի մեջ ուժեղ է անտարբերության մոմենտը։ Ինչ արժեք կարող է ունենալ նրա համար ապրանքների բազմաթիվ կողմերը և ուշադրություն հրավիրող հանգամանքները, յեթե նա միջոց չունի ոգտվելու այդ ապրանքների զգայական հարբուսությունից։

Միայն մեր, սոցիալիզմի յերկրում է, որ մարդը հանդիսանում է իր ընջապատի ստեղծողը, տերն ու տիրականը։ Նա լրիվ հնարավորություն ունի զարդացնելու, կատարելագործելու յուր զգայնությունների կարողությունը, և այդ ի սպաս դնելու հասարակական բարորության։ «Մասնավոր սեփականության վոչնչացումը մարդկային բոլոր զգայնությունների ու հատկությունների լրիվ ազատագրումն է հանդիսանում» (Մարքս)։

+ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԵՆՍԱՓՈՐՁԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՄԲՌՆՄԱՆ ԴՈՐԾՈՒՄ

Անհատական կենսափորձը, մարդու դիտակիքների պաշարը խոշոր նշանակություն ունի ըմբռնման գործում։ Նա մի կողմից ստիպում է մեզ, բացի ամբողջական ըմբռնումներից, ուշադրու-

թյուն դարձնել մեզ հետաքրքրող ժանրամանուկյունների վրա, մյուս կողմից մանուկ և ըմբռնման մեջ իրեն նրա կարևոր բաղկացուցիչ մասը։ Առանց կենսափորձի ու պիտելիքների պարզարի, ըմբռնման պրոցեսը վոչ միայն կդժվարանա, այլ և նա կլինի դժգոհ, վոչ լրիվ։ Միաժամանակ խիստ դանդաղ կկատարվի ըմբռնումը։ Անծանոթ իրը ճանաչելու, հասկանալու համար, մենք միշտ աշխատում ենք նրա մոտ դնել մեզ համար ծանոթ հատկություններ, համեմատել նրան մեր իմացած առարկաների հետ և այստեղից սկսել ճանաչումը։ Դրա համար էլ մանկավարժական կարևոր սկզբունքներից մեկն է հանդիսանում հետևյալը։ Սկսել ծանոթից, մոտիկից և գնալ դեպի անծանոթը, հետուն այնպես, վորպեսզի յուրաքանչյուր նոր դաս նախորդի կողմից վոչ միայն նախապատրաստված լինի, այլ և նախորդ դասի որգանական շարունակությունը կազմի։

Միաժամանակ, ինչպես ասացինք, անհատական կենսափորձը ազդում է նաև ըմբռնման մանրամասնությունների վրա։ Որինակ՝ մի ինչուչ նկարագրումը պիոներ հետ մարզկանց տարվորությունները, բացի ընդհանուր պատկերացումներից, նույնատեսակ լինել չեն կարող։ Անշուշտ, բացի ընդհանուր ըմբռնումներից, դերձակն ավելի ուշադրությամբ կդիտի և կհիշի դերձակների հագուստների մանրամասնությունները, լեզվաբանը հատուկ ուշադրություն կդարձնի լեզվի վրա և այլն։

ԸՄԲՌՆՄԱՆ ԿՈՆՏԱՆՏ ԼԻՆԵԼԸ

Մարդկային ըմբռնումների հյուսվածքի հատկանիշներից մեկն էլ կոնտատատն (հատատատուն) լինելն է։ Առարկաների մասին մենք առաջին իսկ հայացքից հիմնական գաղափար չենք կազմում կամ անմիջապես փոխում այդ առարկայի մասին առաջուց ունեցած մեր հասկացողությունը։ Առարկաների գնահատականին մենք շատ շուտ ենք անցնում և հիմնում ենք վոչ միայն անմիջական, զգայի և տեսողական տպավորությունների, այլ և մեր նախկին փորձում ձեռք, պրոպրիոցեպցիայում ըստուգված տվյալների։ Այս պատճառով առարկաների մեծության, ձևի, գույնի, քաշի և այլ հատկությունները մեզ համար հարաբերականորեն են հաստատուն։ Որինակ՝ աշնանը ծառի տերևների դեղնելը բուսյի կանաչ լինելու մասին մեր ունեցած պատկերացումը չի փոխում։ Ձերը սավառնակից դիտում ես

Ցեբեվանը, նա յերեվում է փոքրիկ մի կետ, բայց դա դեռ չի նշանակում, վոր Ցերեվան հասկացողությունը մեր աչքում փոխվեց և մեծ ու բազմաժարդ քաղաքն իր յուրաքանչյուր կյանքով վերածվեց անշարժ մի կետի, կամ, ասենք, միևնույն գույնի ըմբռնումը տարբեր պայմաններում։ Որինակ՝ սպիտակ գույնը տարբեր լույսի տակ տարբեր հատկություններ է արձակում, բայց մենք և՛ ազջամուղջում, և՛ պայծառ լույսի տակ, և՛ ևս ֆոնի վրա միշտ սպիտակ կավիճն ըմբռնում ենք իբրև սպիտակ կավիճ։

«Հեշտ է հասկանալ,—գրում է Ռուբինշտեյնը,—թե վորքան խոշոր և մեծությամբ, ձևի և գույնի մշտական լինելու պրակտիկ նշանակություն։ Եթե մեր ըմբռնումը կոնստանտ չլիներ, տակավայր պայմաններում, մեր առնչ մի շարժման դեպքում, տարակույսից մեզ բաժանող տարածության յուրաքանչյուր փոփոխության դեպքում, լույսի տատանման կամ մեր գլխի ամենափոքր շարժման դեպքում, անընդհատ պետք է փոխվեին նաև տարբերանքի այն հիմնական հատկությունները, վորոնց միջոցով մենք ճանաչում ենք տարբերանքը։ Ցեվ ընդհանրապես տարբերանքի ըմբռնում չեր լինի, այլ ըմբռնման փոխարեն կլիներ անընդհատ կերպով շարժվող, մեծացող ու փոքրացող, հյուսվող և քանդվող ծեների և փայլուն գծերի աննկարագրելի խայտաբղետության վայրկենական շարժողությունը միայն»։

X ԺԱՄԱՆԱԿԻ ՑԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Մեղնից յուրաքանչյուրն արտաքին աշխարհի իրերն ու տարբերանքն ըմբռնում է տարածության մեջ։ Յուրաքանչյուր իր, տարբեր գտնվում է բնության վորևե մի տեղում, ինչպես և գտնվում է այլ տարբերանքներից վորոշ հեռավորության վրա։

Ժամանակի և տարածության ըմբռնման հիմքը կազմում է ոբյեկտիվ իրականությունը։ Մատերիալիզմի համար ժամանակը և տարածությունը մատերիայի գոյության ձևերն են. «...ամեն մի կեցության հիմնական ձևերը,—գրում է Ենգելսը,—տարածությունն ու ժամանակն են, իսկ արտաժամանակյա կեցությունը նույքան խոշոր անհեթեթություն է, վորքան և արտատարածական կեցությունը»։ («Անտի-Դյուրինգ», 1936 թ. եջ 70)։

Բուրժուական գիտնականները, իդեալիստները, աշխատում են ապացուցել վոր ժամանակն ու տարածությունը ոբյեկտիվ

պոյաձևեր չեն, հետևաբար և բնության հատկություններին հետ վոչ մի առնչություն չունեն։ Ըստ այդ դիտակոնների՝ վերոհիշյալ պատկերացումները սուբյեկտիվ են, մարդու ստեղծագործության արդյունք, հետևաբար և նրանք գոյություն ունեն միայն մարդու գիտակցության մեջ, դրսյական ըմբռնումներին հետևանք չեն։

Ժամանակի և տարածության իդեալիստական մեկնաբանումը հոգեբանության մեջ ունեցել և մի շարք անհետևություններ, վորոնք վերջին հաշվով հանգում են յերկու ուղղություններին՝ նատիվիստների և գենետիստների։

Նատիվիստները (ներկայացուցիչներն են Հյոլբինգը, Ջեմսը, Շտումպֆը) կարծում են, վոր իրերն ու տարրականները ժամանակի և տարածության մեջ ըմբռնելու հատկությունը մարդիկ ստանում են ժառանգաբար, վոր նա գիտակցության և զգայարանների բնածին փունկցիան է։ Ըստ նատիվիստների, մարդն իր հետ լույս աշխարհ է բերում զգայնությունների և շարժման համար պատրաստի ֆիզիոլոգիական ապարատ. մարդը բնական ընդունակություն ունի աչքերը թեքելու դեպի տարրականները, նրանց շարժումները կոորդինացիայի յենթարկելու և այն համարեցնելու տարբեր շարժումներին, վոր տարածությունը՝ իր չափման յերեք ևլեմենտներով՝ (յերկարություն, լայնություն և խորություն) մենք ընդունակ ենք հասկանալու հենց մեր ծնվելու օրից։

Գենետիստները կամ եմպիրիկները (Միլլ, Սպենսեր, Բեն, Վունդտ, Հելմհոլց) կարծում են, վոր տարածության ըմբռնումը բնածին չեն, այլ առաջանում է անհատական փորձի մեջ ոգով և զարգանում է աստիճանաբար։ Այս մարդիկ կանգնելով սուբյեկտիվ իդեալիստական տեսակետի վրա, գիտակցական յերևույթները հակադրում են նյութական յերևույթներին։ Գիտակցությունն իբրև վոչ նյութական յերևույթ,—ասում են գենետիստները,—տալիս է իրերի բնածին հատկություն, չի կարող ունենալ տարածության ըմբռնումը։ Տարածությունը նրանք համարում են իրերի ըմբռնման ձև։ Յեթե մենք տարրականները չտեղավորենք տարածության մեջ, ապա չեր լինի և տարածության ըմբռնումը, վերջինս կհանգեցնի տրտունջ և, զարգանում և աստիճանաբար, մենք տարածում ենք իրերն ու ա-

ուրիշներըը տեղավորել վորոշ տարածության մեջ։ Սկզբում շոշափելիքի և տեսողության միջոցով մենք առարկաների չափսերության ու լայնության մասին հասկացողություն ենք ունենում, իսկ հետո կել, այդ չափսու զգայարանների համերաշխ աշխատանքի շնորհիվ, առաջանում է խորության ըմբռնումը։

Ցեվ նատիվիստները, և՛ դենետիստները, չնայած տարբեր դիրքավորումներին, վերջ ի վերջո, յուրահատուկ ճանապարհներով հանգում են այն ընդհանուր իդեալիստական-հակագիտական յեզրակացության, վոր ժամանակի ու տարածության ըմբռնումը սուբյեկտիվ է, անհատական, և չի հանդիսանում իրականության արտացոլումը։ Նատիվիստները պնդում են, վոր իրերի ժամանակի և տարածության մեջ ըմբռնումը վոչ թե որևկե իմ աշխարհի արտացոլման հետևանք է, այլ ըմբռնող սուբյեկտիվ ֆիզիոլոգիական ապարատի բնածին հատկությունն է, վորի շնորհիվ մենք առարկաների մեջ տեսնում ենք այն, ինչ վոր նրանք կարող են և չունենալ։ Դենետիստները նույնպես, վերջ ի վերջո, հանգում են նույն յեզրակացության, քանի վոր տարածության ըմբռնումը նրանք համարում են վոչ թե իրերի և առարկաների հատկությունը, այլ կամավոր, մարդու կողմից առաջադրված ըմբռնման ձև։

ԻԼՅՈՒԶԻԱ ՑԵՎ ՀԱԼՅՈՒՑԻՆԱՑԻԱ

Ըմբռնման իլյուզիան առաջանում է այն ժամանակ, յերբ մենք ճիշտ չենք պատկերացնում ըմբռնվող իրը։ Իլյուզիայի պատճառն ըմբռնվող առարկան չի, այլ անհատը։ Իլյուզիայի ժամանակ մարդը վորևե պատճառի հետևանքով (լարված սպասողական դրություն, ջղային, շատպղղական վիճակ և այլն) վոչ թե տեսնում է առարկան այնպես, ինչպես այն կա, այլ այնպես, ինչպես կուզեը ինքը տեսնել։ Որինակ, յերբ յես անհամբեր սպասում եմ վորևե մեկին և նա ուշանում է, այդ դեպքում հեշտությամբ կարող եմ խաբվել և բոլորովին անծանոթ մարդուն ծանոթի տեղ դնել։ Պատճառն այն է, վոր իմ զգայարաններն այս դեպքում լարված, սպասողական դրության մեջ լինելով, ամենափոքր նմանությունից անգամ կարող են շփոթվել։ Իլյուզիան լինում է վոչ միայն տեսողական, այլ և լսողական, շոշափելիքային, հոտոտելիքային և այլն։

Հալյուցինացիան (մտքի պատրանք) առաջանում է իլյուզիայից նրանով, որ նրա առաջացման համար որևէ անմիջական պատճառ չկա, կամ պատճառը չափազանց չնչին է։ Հալյուցինացիան ուղղի պատրանք է և վոչ թե խավուսին զգայությունն։ Հալյուցինացիայի ժամանակ մենք տեսնում ենք, թեպետ և տեսնելու վոչինչ չկա, լսում ենք, թեպետ և վոչ վոք չի խոսում և այլն։ Մարդը «տեսնում» և «լսում է» այն մարդկանց, վորոնք չկան, բայց «տեսնում» և «լսում է» այնպես, որ չի՛ք չի կարող կասկածել նրանց գոյության մասին։

Հալյուցինացիայի պատճառն ուժեղ, անսպասելի, ցնցիչ գրգիռն է, վորի հետքերն անգիտակից վիճակում, չերկար ժամանակ մնում են ժողովուրդ ուղղում և չեն վոչնչանում։ Ցնծ տանրանք չերբեմն հայտնաբերում են իրենց և առաջացնում ցնորքային ապրումներ։ Այսպիսի պայմանները են առիթվում հատկապես վթռւթյան, մենակության, խաղաղության ժամանակ։ Հալյուցինացիայի կրկնության դեպքերում այդ պայմանները կարող են կորցնել իրենց նշանակությունը։ Փիզիոլոգիական տեսակետից հալյուցինացիայի առաջացման պատճառը կարող է լինել հետևյալը։ Ուղեղի զգացող կենտրոնները ներքին գրգիռների աղբյուրթյան տակ առաջացնում են այնպիսի ապրումներ, վորոնք ուրիշ դեպքում կառաջանային այն ժամանակ միայն, յերե լինեյին արտաքին աշխարհի նույնատեսակ գրգռիչներ։

ՅԵՐԵԽԱՅԻ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

Բազմաթիվ յերևույթները, վորոնց վրա մենք վոչ մի ուշադրություն չենք դարձնում, յերեխաների մոտ առաջացնում են անսահման հետաքրքրություն և հրապույրանք։ Շատ բան նրանց համար նորություն է, անսպասելություն։ Մանուկները քիչ ծանոթություն ունեն այն միջավայրի մասին, վորի մեջ պետք է ապրեն, մեծանան, աշխատեն։ Նրանցից յուրաքանչյուրն աշխատում է ամեն կերպ լրացնել այդ բացը, լրիվ ու ժամանակից ծանոթանալ այդ շրջապատի հետ։ Յերեխաների ընթերցումները ուսումնասիրող պիտակիանները բազմաթիվ օրինակներ են բերում յերեխայի դիտողության զարգացման նրբության մասին։ Գրեթե Արկինը յուր յերեխայի մասին պատմում է, վոր նա յե-

ընդ առաջիկան հասակում գնացքի հեռվից լսվող շչակի ձայնից միշտ անսխալ կիմացավ կարող էր ասել, թե յեկող գնացքը մարդատար է, ձեռնթափ, թե ապրանքատար (յերեխան ապրում էր յերկաթուղային մի փոքր կայարանի մոտ)։ Ջեմս Սյուլլին պատմում է յերկու տարեկան և 11 ամսական մի յերեխայի մասին, որը յերկաթգծերի վրայից անցնելիս նկատեց այն չնչին տարբերությունը, որ կար իրենց կայարանի և այդ կայարանի գծերի միջև։ Հաճախ յերեխան այնպիսի նուրբ դիտողություններից յեզրակացել հարցեր է տալիս մեծերին, որ մեծահասակները բավականին անհարմար դրության մեջ են ընկնում, չկարողանալով պատասխանել նրա հարցերին։ Հարցասիրությունը բնորոշ է յերեխաների համար՝ սկսած 2 ու կես—3 տարեկան հասակից։

Պրեյերի յերեխան յուր առաջին հարցը՝ «ուր է մայրիկը» տվեց 28 ամսական հասակում։ Սյուլլին ընդգծում է, որ ամենատժվար հարցասիրության շրջանը, նախադպրոցական հասակի սկզբնական տարիներն են։ Յերեխայի զարգացման հետ միասին նրա հարցերն էլ ավելի իմաստալից ու բովանդակալից են դառնում։ Յերեխայի սկզբում յերեխային հետաքրքրում էր առարկայի ինչ լինելը—«սա ինչ է», «ինչպես է կոչվում», ապա հետագայում արդեն նա ուզում է իմանալ նրանց նշանակությունը, պատճառները—«ինչու յի այդպես», «իսկ սա ինչի համար է»։

Մի կողմից անհատական կենսափորձի հարստացման ու տրամաբանական մտածության զարգացման հետևանքով և մյուս կողմից էլ ուսուցման ներգործությամբ, յերեխան կարողանում է ավելի լրիվ ճանաչել իրերն ու առարկաները, պարզել նրանց փոխհարաբերությունները ու փոխադրության յունները։ Միաժամանակ յերեխան յուր սկզբնական, պրոստարկուն նեն այլևս չի ընդունում իբրև ռեալ ճշմարտություն, այլ աշխատում է տուգել, համոզվել իր դիտողությունների ճիշտ լինելու մասին։

Յերեխայի ըմբռնումների զարգացման առաջնահերթը վոչ հետազոտողները (Բինե, Դեկրոլի, Տերման, մասամբ Շտերն) համարում են քարացած, ընդարմացած և ընդմիշտ տրված։ Այսպես օրինակ, Շտերնը նշում է ըմբռնումների զարգացման հետևյալ աստիճանները՝ առարկայական, վորը հատուկ է մինչև

1 ու կես տարեկան հասակին։ Այդ տարիքին, ըստ Շաեբնի, բնորոշ է նրանում, որ այդ հասակում յերեխաները բավարարվում են միայն առարկաները ցույց տալով։ Մեկ տարեկան և 9 ամսական հասակից յերեխան անցնում է գործունեության աստիճանին, այսինքն նա ցույց է տալիս, թե առարկայի հետ ինչ է կատարվում։ Յերկու տարեկան 9 ամսական յերեխաները սովորական աստիճանում են գտնվում, նրանք իրենց նախադպրոցական մանկության մեջ տալիս են առարկաների զանազան հատկությունները կամ վորակները։ Շաեբնի և մյուսների կոնցեպցիայի հիմքը կազմում է մետաֆիզիկան և իդեալիզմը, նրանք մի կողմից առանձին տարիքներ և մյուս կողմից մտածողությունը, մեկնաբանումը համարելով զարգացման ավելի ուշ շրջանի արդյունք, չեն բռնում զգայնական ըմբռնումներից։ Իրավացիորեն քննադատելով Շաեբնի և մյուսների դրույթները այս հարցում պրոֆ. Ռուբինշտեյնը գրում է, վոր «ներանց կողմից «ինտերպրետացիան» (մեկնաբանումը) չի ընդունվում իբրև նախադպրոցականի յուրահատկություն։ Ըստ նրանց, իբր թե, նախադպրոցականին մատչելի չի միայն առանձին առարկաների լուծ թվարկումը։ Նկարագրելը, վորը կապված է միայն արտաքին հարաբերությունների պարզաբանման հետ, նույնպես համարվում է զարգացման ավելի ուշ շրջանի հատկություն։ Այդ կոնցեպցիան կապակցված է շատ տարածված ու արմատացած, բայց հիմքից անհեթեթ այն իդեալիստական տեսության հետ, ըստ վորի կապերը, փոխհարաբերությունները, փոխպայմանությունները վոչ թե իրենց զգայնական հիմունքներն ունեն ըմբռնումների մեջ, այլ առաջանում են վերացական մտածողությունից։ Այդ պիտողության աստիճանների տեսության մեջ պարփակում է յերկու վոչ ճիշտ նախադրյալներ, առաջին՝ վոր յերեխան չի կարողանում յուր ըմբռնածի մասին, չի մտածում, այլ միայն ըմբռնում է և յերկրորդ՝ վոր ըմբռնումը տալիս է զգայությունների անկապ քաոսը միայն, իսկ կապերը և փոխհարաբերությունները ըմբռնման մեջ մտցնում է մտածողությունը»։

Դոցենտ ընկ. Ի. Հովսեփյանը յուր «Գիտողությունների զարգացումը յերեխաների մոտ» դիսերտացիոն աշխատության մեջ հետաքրքիր փորձերով աշխատեց ցույց տալ, վոր սովորա-

բար «զուտ, անխառն թվաբանման, նկարագրման ու մեկնաբանման ստատիստիկա տերմին չեն ընդունում, այլ ամեն մի «ստատիստիկան» յուր մեջ ունի այլ «ստատիստիկաների» վորոշ էլեմենտներ»։

Ըմբռնումների զարգացման, ընդհանրացման լայնացման հետևանքով, յերեխան լայնացնում և խորացնում է իրերի ու առարկաների ճանաչումը, ել ավելի խորացնում յուր տրամաբանական մտածողությունը։

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ է ըմբռնումը։
2. Ըմբռնում և զգայնություն։
3. Կոնկրետ ըմբռնումը և ընդհանրացումները. ըմբռնման և մտածողության փոխհարաբերությունը։
4. Ինչպե՞ս յի մարդկային ըմբռնումը խոհական։
5. Վերն և աբստրակցման լենինյան տեսությունը։
6. Ի՞նչ է նշանակում «մարդկայնացված», մարդու կողմից մշակված բնություն։
7. Հասարակական գոյը և ըմբռնման դասակարգային բնույթը։
8. Ի՞նչ նշանակություն ունի անհատական կենսափորձը ըմբռնման զարգացման։
9. Ի՞նչ նշանակություն ունի մարդու ըմբռնումների կոնստանտ լինելու հանգամանքը։
10. Ժամանակի և տարածության մարքսիստական հասկացողությունը։ Նատիվիստները, գենետիստները ժամանակի և տարածության ըմռնման մասին։
11. Ի՞նչ է իլյուզիան, հալյուցինացիայի բնորոշ գծերը։
12. Յերեխայի ըմբռնումների առանձնահատկությունները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Маркс и Энгельс —Соч. т. III, стр. 626—627.
2. Ենգելս.—«Բնության դիալեկտիկա», եջ 130.
3. Ленин.—«Философские тетради», стр. 188.
4. Ленин.—«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», եջ 155։
5. Рубинштейн.—«Основы психологии».
6. «Психология», под ред. Корнилова, Теплова и Шварца.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մեզնից ամեն մեկն արտաքին աշխարհից ստանում է բազմաթիվ տպավորություններ։ Մարդը կենդանիներից հենց այդ դեպքում տարբերվում է նրանով, որ նա իր ակտիվ վերաբերմունքն է հանդես բերում այդ գրգիռների հանդեպ։ Նա ջոկում է այդ տպավորություններից իր հասարակական ու անհատական կյանքի համար կարևորները, նրանց ավելի լավ ճանաչելու համար անուշադրության է մատնում չկարևորդականը տպավորությունները և կենտրոնանալով դրանց վրա, ավելի լավ է ճանաչում և ըմբռնում։ Այս բանը կատարում է հոգեկան կյանքում կարևոր նշանակություն ունեցող ուշադրությունը։ Ֆունկցիայի միջոցով, Այսպիսով ուշադրությունն այն պրոցեսն է, որի շնորհիվ մարդը կարգավորում է ընտրել տպավորություններից մի քանիսը և կենտրոնանալ նրանց վրա՝ ավելի լավ ճանաչելու համար։ Դրա շնորհիվ, այն օբյեկտները, որոնց վրա մենք ուշադրություն ենք դարձնում, մեզ համար դառնում են ավելի վարող, պարզ, ցայտուն, իմանալով։ Օրինակ, երբ ես փողոցում լսում եմ իմ ծանոթի ձայնը, անմիջապես մոռանում եմ տալիս փողոցի ամբողջը և իմ լսողական օրգանի ուշադրությունը լարում եմ բազմաթիվ ձայներից մեկի՝ իմ ծանոթի ձայնը պարզ լսելու համար։ Այսպիսով այն օբյեկտը, որի վրա ես ուշադրություն եմ դարձնում, ավելի մոտենում է ինձ համար դառնում է բացահայտ և տիրապետող։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այսպիսով ուշադրության կենտրոնացման շնորհիվ մարդկային ըմբռնումները ու խոհերը ավելի պարզ ու լրիվ են դառնում։ Բացի դրանից ուշադրությունն աղղում է նաև մեր պատկերացումների ընթացքի վրա։ Ես ջոկում եմ այս կամ այն տպավորությունը և կենտրոնանում նրա վրա, ես դրա մի-

ջոցով առաջին պլանի վրա չեմ դնում այդ տպավորությունը մյուսների հետ համեմատած։ Այդ պատճառով էլ այն տպավորությունները, որոնք մինչև այս ռեֆլեկտիվ էին, դառնում են գիտակցական։ Ուշադրության շնորհիվ է, որ մեր գիտակցությունը դառնում է ընտրողական, կազմակերպված և կողմնորոշակի։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ակադեմիկ Պավլովը և Ուխտոմսկին ուշադրության ֆիզիոլոգիական պատճառները բացատրում են այսպես.

"Կենտրոնական ներվային ապարատում գրգիռների այս կամ այն խմբի ուղեցուցության տակ առաջանում է ավելի կամ պակաս չափով կայուն, ապրիմալ (ամենից ավելի) գրգռվածության տեղամաս։ Մնացած բոլոր գրգիռները, անկախ ղեկավոր գրգռի հետ ունեցած վարվեկապից, գալիս են և ուժեղացնում այդ ապրիմալ գրգռվածության տեղամասը և դրանով իսկ արգելում ուղեղային մյուս տեղամասերի գործունեությունը։ Այդ ղեկավոր գրգիռները, կարծեք թե, դեպի իրենց են քաշում ու իրենց ուժին միացնում մնացած բոլոր գրգիռների ներգիռն։ Ահա այդ տիրապետող ուղեղային օջախը, տեղամասը, որը մեծ չափով կանխորոշում է ընթացիկ ռեակցիաների բնույթը, կոչվում է դոմինանտ (գերիշխող) ռեֆլեքս։ Դոմինանտը ճնշում է մնացած բոլոր ռեակցիաները և նրանց ներվային ներգիռն ոգտագործում իր համար։ Որինակ, երբ ուշադիր մտմենամաում գրում եմ այս տողերը, իմ ուշադրությունը կենտրոնացած է գրականության և տեարակի վրա։ Դրսում անձրև է գալիս, տանը վորոշ ժամուկ կա, փողոցով խոսկալով մարդիկ են անցնում, լսվում է ավտոների ձայնը և այլն, բայց ուշադիր մտմենաին այդ բոլորը չեմ լսում, վորովհետև կենտրոնացած եմ տեարակի վրա։ Այդ բոլոր տպավորությունները, որ թվին, ինձ համար անոգուտ չեն անցնում, այլ միանալով հիմնականն, գերիշխող, դոմինանտ ռեֆլեքսին՝ գրքին և տեարակին, ավելի են ուժեղացնում նրանց։ Բայց ասենք, թե այս մտմենաին փոփոխում նվագիր նվագախումբը, որովհետև նվագախմբի ձայնն ավելի գերիշխող կլիներ, տպա այդ դեպքում չեմ անմիջապես կկենտրոնանայի նվագախմբի ձայնի վրա, քան որ

բում ավելի մեծ ուշադրությամբ, քան սովորական ժամանակ։ Այդ դեպքում իմ գրելու ուշադրությունն էլ կմիանար նվաճ- ված ձայնի լսելուն և ավելի ուժեղ կդառնար այդ ձայնի ըմբռնումը։

Ահա այսպես և ֆիզիոլոգիապես բացատրվում ուշադրու- թյան կենտրոնացումը։ Ներքին և արտաքին ազդակներից ստաց- ված ուժեղ գրգիռները դոմինանտ դառնալով՝ կանխորոշում են հետագա ռեակցիաների բնույթը և ավելի ուժեղացնում դոմինան- տը, ինացած բոլոր գրգիռների ուժը կապելով նրա հետ։ Պարզ է, որ այդպիսի դոմինանտները կարող են առաջ գալ միայն այն ժամանակ, երբ այդ գրգիռները կլինեն ուժեղ, նշանակա- լից և վորոշ չափով էլ յերկարատև։ Բայց, իհարկե, դոմինանտի թագավորությունը յերկար չի տևում։ Մեծ ուժված գրգիռներից վորևե մեկը (սուբդոմինանտը) հետզհետե ուժեղանում է և պայ- քարի մանելով մինչև այդ գերակշռող դոմինանտի հետ՝ վոչ միայն հաղթանակում է նրան, այլ և նրա ուժը խլելով միաց- նում է իր նեղվային էներգիային։ Այլ կերպ ասած՝ նա դառ- նում է դոմինանտ, իսկ նախկին դոմինանտը՝ սուբդոմինանտ։ Այսպես և տեղի ունենում ուշադրության անցումը մի առարկա- յից դեպի մյուսը։

Մարմնի դիրքը։ Ուշադրության ժամանակ, տալավորությունն- երն ավելի լավ ըմբռնելու համար, մարդու մարմինը համապա- տասխան նպատակահարմար դիրք է ընդունում։ Այսպես որինակ, դասախոսին ավելի լավ լսելու համար՝ թեքում ենք մեր գլու- խը դեպի դասախոսը, ձեռքերս տանում ենք մեր ականջի մոտ և լարված լսում ենք։ Ձերը պատրաստվում ենք վազելու, նույնպես մեր մարմինն ավյալ նպատակի համար ամենաշահա- կար դիրքը տալով, վոզջ որգանիզմով ապաում ենք վազքի հրա- մանին։ Այսպիսով, ուշադրությունը վոչ միայն գիտակցության կենտրոնացումն է, այլև շարժումների կոնցենտրացիան։

Պերցեպցիա և ապերցեպցիա. Ինչպես տեսանք, յուրաքան- չյուր գրգիռ, ինչպիսի հաճախականությամբ էլ կրկնվի, յեթե մեր ուշադրությունն իր վրա չի գրավում, պատասխանի չի ար- ժանանում։ Մեզ համար կարևորություն չունեցող այդ տալա- վորությունները գիտակցվել չեն հասնում, գիտակցություն չեն դառնում և ծուում են յենթակեղևային շերտերում։ Որինակ՝ յես

կարող եմ տասնյակ տարիներ նայել իմ ժամացույցին և մի գլխավերևում պատից կախված խալիչային, բայց չեթե հանկարծ ինձ հարցնեն, ինչպես ժամացույցի ցիֆերբլատի վրա գրված թվերի, այնպես էլ խալիչայի մանրամասնությունների մասին, վորոնց ամեն որ տեսնում եմ, չեմ կարող բացատրել և շատ քիչ բան կարող եմ ասել այդ ամենի մասին։ Պերցեպցիան ասա այն հոգեկան յերևույթն է, յերբ զգայնները կան, բայց նրանք մարդու կողմից չեն գիտակցվում։

Ընդհակառակը, ապերցեպցիան խոշոր նշանակություն ունի ըմբռնման գործում։ Ապերցեպցիա բառը լատիներեն է և նշանակում է դիտել, տեսնել, ճանաչել։ Ապերցեպցիան կենտրոնացած ուշադրությունն է, միացած անցյալի փորձի հետ, նա գիտելիքների մոբիլիզացիան է նոր, անծանոթ կամ քիչ ծանոթ յերևույթը հասկանալու, ըմբռնելու համար։ Ապերցեպցիան մեզ հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ ու ճանաչել յերևույթներն ու գնահատել նրանց հատկությունները, բացատրել յերևույթները վոչ միայն ինքն իրենով, այլ և ուրիշ, նախորոք դիտած ըմբռնումների ոգնությամբ։

Ուշադրության տեսակները. Ուշադրությունն ունի իր առաջացման մի քանի ձևերը։ Ամենից առաջ ուշադրությունը լինում է ներքին և արտաքին։ Ներքին ուշադրությունն առաջանում է այն ժամանակ, յերբ կենտրոնանում ենք մեր մտքի խոհերի և զգացմունքների վրա։ Ներքին մարդն այնպես է խորացած լինում իր մտքերի մեջ, վոր այդ ժամանակ նա կողմնակի վոչինչ չի տեսնում կամ լսում։ Ներքին ուշադրությունը հատկապես կատարվում է այն ժամանակ, յերբ մեր միտքը լարված է վորևե դժվարին խնդիր կամ հարց լուծելու համար, ինչպես և մտածողության դեպքերում։ Ներքին պատահում է, վոր մտքով տարվելով, մենք փողոցով անցնելիս չենք տեսնում և չենք բարևում մեր ամենամտերիմներին անգամ։ Արտաքին ուշադրությունն այն վիճակն է, յերբ մենք կենտրոնանում ենք մեզ շրջապատող առարկաներից մեկի կամ մի քանիսի վրա։ Արտաքին ուշադրությունը կարող է լինել տեսողական, լսողական, հոտառելիքային և այլն։

Ավելի նշանակալից է անմիջական և վոչ անմիջական ուշադրությունների տարբերությունը։ Անմիջական ուշադրությունն

առաջանում է այն դեպքում, երբ վորևե առարկա անմիջական-նորեն, առանց միջանկյալ ողակների, գրավում և մեր ուշադրությունը։ Որինակ՝ հանկարծակի ուժեղ ցավը մարդուն ստիպում է անմիջապես կենտրոնանալ այդ ցավի վրա, կամ, որինակ, հաճույքի ուժեղ զգացմունքը և շատ դուրեկան մի բանի համար անհամբեր կեպտով սպասելը մեզ ստիպում է անմիջականորեն կենտրոնանալ միայն մեկ առկայի վրա։ Ցավոտուն, հանկարծակի տպավորությունները, որինակ, մթության մեջ շողշողող փայլուն լույսը, մթության և խաղաղության մեջ լսվող ջրթաքի ձայնը և այլն անմիջականորեն գրավում են մեր ուշադրությունն առանց վորևե այլ կողմնակի փաստերի։ Ճիշ այսպես, ուշադրության անմիջական կենտրոնացման պատճառներն են հանդիսանում՝ մի կողմից գրգռի հանկարծակիությունն ու ինտենսիվությունը, մյուս կողմից՝ այդ գրգռի կապը վորևե դուրեկան կամ անդուրեկան զգացմունքի հետ։

Հակառակ դրան, վոչ անմիջական ուշադրությունն առաջանում է այն ժամանակ, երբ վոչ թե ինքը՝ գրգիռն անմիջականորեն, այլ նրա հետ կապված հուշերը կամ այլ հանգամանքներ պատճառ են դառնում նրա առաջացմանն։ Որինակ, դասախոսությունը ըրված լող ուսանողը հանկարծ լսելով իրեն ծանոթ մի նյութ, անմիջապես կենտրոնանում է դասախոսի ասածի վրա։

Պարզ է, վոր այստեղ ուշադրության լարման պատճառը վոչ թե դասախոսի արտասանած նախադասության հետաքրքիր լինելն է, այլ նրա հետ կապված և իր համար հարազատ հուշերը, զգացմունքները և մտքերը։ Ուշադրությունը լինում է նաև կամավոր կամ ակտիվ և ակամա կամ պասիվ։ Կամավոր ուշադրությունն առաջանում է այն ժամանակ, երբ անհատն ինքը, կամքի ուժ գործադրելով, գիտակցաբար լարում է իր մտքերն ու ուժերը՝ իրեն անհրաժեշտ վորևե իր կամ երևույթ ըմբռնելու համար։ Կամավոր ուշադրությունը կարելի է առաջացնել յերկու կերպ։ Առաջին դեպքում՝ երբ ես ստիպում եմ ինձ կոնկրետ գրգիռներին վոչ մի ուշադրություն չդարձնել։ Ասենք, թե ես մեծ հետաքրքրությամբ կարդում եմ վորևե գիրք, բայց սենյակում աղմուկ է, ինձ խանգարում են։ Այդ դեպքում ես լարում եմ իմ բոլոր ուժերը գրքի վրա

կենտրոնանալու և ազմուկը չլսելու համար։ Կամավոր ուշադրության առաջացման մյուս տեսակն այն է, երբ մարդն աշխատում է խուսափել իր ուշադրությունը խանգարող պատճառներից և կենտրոնանալու ավելի հանգիստ պայմաններ ստեղծել։ Որինակ, ես գիրքը վերցնելով գնում եմ ավելի հանգիստ տեղ վորոնելու՝ այնտեղ պարապելու համար։

Կամավոր ուշադրության ժամանակ մեր գիտակցության մեջ եղած մտքերն ու պատկերացումները կողմնորոշում են ուշադրության բնույթը։ Վորպեսզի ես ինձ ստիպեմ կենտրոնանալ վորևե բանի վրա, ես պետք է նախորոք իմանամ, թե ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել։ Ահա այս դեպքում ես նախորոք պատրաստում եմ իմ միտքը և մկաններն վորևե գործողության կատարելու համար։ Ասենք, թե ինձ հարկավոր է իմ գրադարանից ջոկել մի գիրք, այս բանն ավելի հեշտությամբ կանեմ միայն այն դեպքում, երբ նախորոք իմ մտքի մեջ պատկերացնեմ և միշտ գիտակցության մեջ պահեմ այդ գրքի կազմը, ձևը, կազմի վրա գրված տառերը։ Հելմհոլցը կատարեց հետևյալ փորձը։ Հետազոտվողը պետք է մութ արկղի վրա բացված անցքից նայեր և իր ուշադրությունը կենտրոնացներ իր տեսադաշտի կենտրոնում։ Այդ ժամանակ արկղում հանկարծակի բաց եյին թողնում ելեկտրական կայծ, վորը մի վայրկյանում լուսավորում է հետազոտվողի աչքի ուղղությամբ գտնվող արկղի պատը։ Լուսավորության տևողությունն այնքան կարճ է լինում, վոր փորձարկվողը բոլոր տառերը կարդալ չեր կարողանում։ Նա տեսնում եր միայն մի քանի և հատկապես այն տառերը, վորոնց վրա նախորոք մտքով կենտրոնացրել եր իր ուշադրությունը։

Ակամա ուշադրության հիմքը չի կազմում ավյալ իրերությունը ճանաչելու, ըմբռնելու մեր ցանկությունը, նա կամավոր ակտ չե։ Այս դեպքում, իրերն իրենց անկախ մեր ցանկությունից ինքը, առարկան իր մեծությամբ, գեղեցկությամբ, հետաքրքրությամբ ու իր տարորինակությամբ ու այլ հատկություններով մեր ուշադրությունն է գրավիրում իր վրա։ Որինակ, ես շտապ անցնում եմ փողոցով և բոլորովին ցանկություն չունեմ խանութի ցուցափեղկերին նայելու, բայց կոոպերատիվներից մեկի փեղկերը գեղեցիկ են զարդարված, և ես ակամայից կանգ առ-

նկատի ունենալով ուշադրության դերը։ Փողոցով անցնելիս հանկարծ լսում եմ մի ճիչ, ճիչն սարսափում է ինձ անմիջապես հետևել, անկախ այն բանից՝ թե ինչ գտնկանում եմ այդ, թե վնաս։ Ներկայացումը դիտելիս յերբեմն այնպես եմ տարվում դերասանների խաղով, որ մոռանում եմ ամեն ինչ, հուզվում և ապրում եմ այդ ժամանակամիջոցում միայն նրանով, ինչ որ կատարվում է բեմի վրա։ Բազմաթիվ բառեր, ինչպիսին են՝ «հմայել», «հրապուրել», «գրավել» և այլն, ասում են այն մասին, որ այստեղ ուշադրության հիմքը վոչ թե իրեն՝ անհատի անմիջական ցանկությունն է, այլ իրը, առարկան, յերևույթը։ Շատ անգամ ակամա ուշադրությունը կամավորի յն փոխվում։

Ակամա ուշադրության ժամանակ մեծ դեր են խաղում մարդու զգայմունքները, մինչդեռ կամավորի ժամանակ՝ մարդու միտքը, խոհերը, պատկերացումները։ Այդ դեպքում մարդը գործում է գիտակից, մտածելով, նա պարզ պատկերացնում է, թե ինչի վրա պետք է կենտրոնանալ և ինչու։ Ակամա ուշադրության ժամանակ այդ բոլորը չկան, նրա առաջացման պատճառը ուժեղ, գրավիչ զգայմունքներն են։

Ա ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ

Փորձերը ցույց են տվել, որ մարդը չի կարող շատ յերկար ու անընդհատ լարվածությամբ, ուշադրությամբ դիտել վորևե մի իր, առարկա։ Մենք մի առարկայից անցնում ենք մյուսին, ամեն մեկի վրա ուշադրությունը դարձնելով միայն վորոշ ժամանակամիջոցում։ Ցերեխաների ուշադրության վոչ կայուն լինելու պատճառով տատանումները ավելի շատ են, քան մեծերի մոտ։

Լսողության տատանումները ուսումնասիրելիս ժամանակ նկատվեց հետևյալ յերևույթը։ Նույն ինտենսիվությամբ տրվող ձայնը հետզհետվուղի կողմից մերթ ուժեղ և լավում, մերթ՝ թույլ։ Յեթե փորձենք անընդհատ լսել ժամացույցի չխչխքոցը, նույնը կկատարվի նաև մեզ հետ։ Մենք կտեսնենք, որ թեև թըխթըխոցի ձայնը չի փոխվում, միշտ նույն և նույնը, բայց այդ ձայնը մենք մերթ ուժեղ կլսենք, մերթ թույլ և մերթ էլ բո-

լորովին չենք լսի։ Նման փորձեր կատարել են նաև այլ ղեկա-
վարությունների ժամանակ, ըստ որում միշտ միևնույն հետե-
վանքներով։

Մեր հոգեկան կյանքում ուշադրության տատանումները մեծ նշանակություն ունեն։ Դաստիարակության հիմնական խնդիրներից մեկը՝ մարդու ուշադրությունն ավելի կայուն, մշտական, յերկար կենտրոնացումների ընդունակ դարձնելն է։ Ուշադրությունը կարելի յե կայուն դարձնել տարբեր միջոցնե-
րով՝ կամ սովորեցնելու, ուժ գոյծադրելու, կամ վոչ անմիջական, անուղղակի ճանապարհով, այսինքն, յերբ մարդն աշխատում է ուսումնասիրման որյեկտն ավելի հետաքրքիր ու գրավիչ դարձնել։ Հոգեբան Ջեմսը վորևե խնդրի վրա տաղտկավոր մարդկանց կողմից տարբիներով ուշադրություն դարձնելու ըն-
դունակության պատճառը համարում է հետևյալը. տաղտկավոր մարդը, շնորհիվ իր բնավորության բաղմակողմանիության, ա-
մեն մի առարկայի մեջ տեսնում է մի շարք հետաքրքիր կողմեր՝ յուրաքանչյուր նոր առարկային նայում է բազմաթիվ տեսանե-
կյուններից. դրա շնորհիվ նրա ուշադրությունն ավելի մեծ շան-
սեր ունի յերկարատև ու կայուն լինելու։

Բացի ուշադրության տատանումներից, հարկավոր է կանգ առնել նաև նրա մի այլ կարևոր կողմի վրա։ Վորոշ մասնա-
գիտություններ պահանջում են կենտրոնացած ուշադրություն (որինակ՝ վիրաբուժի, նկարչի, գիտնականի և այլն), վորոշ մաս-
նագիտություններ էլ վոչ թե մի որյեկտի, այլ մի քանիսի վրա կենտրոնանալու ընդունակություն (որինակ՝ հեռախոսի կենտ-
րոնում աշխատողի, շոֆերի և այլ աշխատանքներ)։ Այդ բանը հնարավոր և դառնում այն պատճառով, վոր մեր ուշադրությու-
նը կարողություն ունի նաև ցրվելու և այնուամենայնիվ միա-
ժամանակ կենտրոնանալու վոչ թե մի իրի, այլ մի քանիսի վրա։

Ուշադրության ծավալի խնդրում մենք տեսնում ենք ան-
տաղտկալի բավականին ուժեղ տարբերություններ։ Վարժվելը առհասարակ պրոֆեսիոնալ ունակությունները յեվս կարող են ազդել ուշադրության ծավալի վրա։

Ցրվածություն և միակողմանի կենտրոնացում. Ուշադիր լինելու, կենտրոնանալու ունակությունը հակադրվում է ցրված-

ծությանը։ Ցրվածության դեպքում ևս, ի հարկե, մեր ուշադրությունը բոլորովին չի կորչում, այլ նրա անցումը մի օբյեկտից մյուսը շատ արագ է կատարվում՝ առանց այդ օբյեկտներից որևէ մեկի վրա յերկար կենտրոնանալու։ Ցրվածության ժամանակ մեր մտքերը հնարավորություն չունեն ընթանալու կանոնավոր ու ծրագրված կերպով։ Ցերբեմն ցրվածությունն այն աստիճանի յի հասնում, որ մեզ ուղղված հարցերին անգամ պատասխանել չենք կարող և առանց հասկանալու, տեղին կամ անտեղի պատասխանում ենք «այո», «ոչ», «ճիշտ է» և այլն։

Խոսելով ցրվածության՝ իբրև բացասական մի յերևույթի մասին, որը մեծ մասամբ հետևանք է հոգնածության կամ ջղային էմոցիոնալ վիճակի, մենք չպետք է ցրվածության և ծայրահեղ կենտրոնացման միջ հավասարության նշան դնենք։ Ցրված մարդը ապավորության հոսքի մեջ այնպես է խորտվում, որ ոչ մի հնարավորություն չի ունենում ապավորություններից որևէ մեկի վրա, թեկուզ և կարճ ժամանակ կենտրոնանալու։ Կենտրոնացված ուշադրության հետևանքով առաջացած ցրվածությունը, ընդհակառակը, հնարավորություն է տալիս ուժեղ կերպով կենտրոնանալու մի որևէ օբյեկտի վրա։ Այս տեսակետից ճիշտ է Վիգոտսկին, որը գրում է՝ «Լինել ուշադիր որևէ գործի նկատմամբ, նշանակում է անուշադիր լինել ծիածան ապավորություններին»։

Անհատը տարվելով ուշադրության ինտենսիվության, կենտրոնանալով ապավորությունների վորոշ նոր շրջանի վրա, ինքնըստինքյան իր տեսադաշտում չի կարողանում ընդգրկել ավյալ շրջանից դուրս ծագող ապավորությունները։ Ուշադրության թուլացումը կարող է արտահայտվել կամ որևէ ուղղությամբ կենտրոնանալու դժվարությամբ և կամ տարբեր օբյեկտների վրա հավասարապես ուշադրություն դարձնելու թուլությամբ։

Յերեխաների ուշադրությունը. Յերեխաների ուշադրությունը բնորոշ է նրանով, որ ցածր հասակում նրանց մոտ տիրապետողը շատ փոփոխվող, զգացմունքային բնույթի անկայուն ուշադրությունն է։ Փորձի կուտակման և մտածողության զարգացման հետևանքով, յերեխաները հետզհետե ձեռք են բերում

իրենց ուշադրությունը կամավոր կերպով վորևե ուղղությամբ կենտրոնացնելու և վորոշ ժամանակ պահելու ընդունակությունը։ Միաժամանակ ուշադրությունը հետզհետե ազատվում է պասսիվ զգացմունքային բնույթից և դառնում է ավելի ակտիվ ու խոհական։

Յերեխաների մոտ գիտակցական կամքի անզարգացած լինելու հետևանքով, վճռական ակը գրավում է ակամա ուշադրությունը։ Յերեխաների մոտ ակամա ուշադրության ուժի մասին կարելի չի պատկերացում կազմել նրանով, վոր նրանց հեշտ է գրավել վորևե փայլուն իրով կամ շարժուն խաղալիքով, նույնիսկ այն ժամանակ, յերբ յերեխան ուժեղ ցավ և զգում կամ սոված է։ Յերեխաների մոտ բավականին ուժեղ է զգացմունքային ուշադրությունը։ Յերեխան մեծ հաճույքով, դիմքին լարված ուշադրության արտահայտություն տալով լսում է գրավիչ հեքյաթներ կամ հոդից ու ավազից պատրաստում է իր տնակը։

Յերեխայի ուշադրության կայունացումը մի անգամից չի կատարվում, այլ պահանջում է վորոշ ժամանակ։ Յերեխան առհասարակ դանդաղ է մտածում և հարցերին միանգամից պատասխանել չի կարողանում։ Յերեխան դժվար է գլխի ընկնում։ Այդ պատճառով, հատկապես քննությունների ժամանակ, յերեխայի գլխին հարցերի տարափ չի կարելի թափել և առհասարակ անթույլատրելի չի մի անգամից, առանց յերեխայի ուշադրությունը նախապատրաստելու, անցնել նոր նյութի։

Ուշադրությունը և դպրոցի կահավորումը. Դպրոցի կահավորումը, և հատկապես դասարանի տեսքը, վոչ միայն առողջապահական, գեղարվեստական ճաշակի զարգացման, զգացմունքային նշանակություն ունի, այլ և խոշոր չափով ազդում է յերեխայի տրամադրության, ինքնազգացման, վողջ հոգեկան վիճակի և հատկապես նրա ուշադրության վրա։

Ուրեմն ինչպես կահավորել դասարանը։ Բազմակողմանիության սկզբունքի հիման վրա, դասարանին ավելի ուրախ, հաճելի տեսք տալ, թե՛ յերեխայի ուշադրությունը կողմնակի գրգիռների վրա չգրավելու համար հրաժարվել դասարանի կենտրոնախ կահավորումից, տալ նրան միապաղաղ բնույթ։ Այս հարցին պետք է պատասխանել այսպես։ Ուսուցիչը խորը սխալ կատա-

բած կլինեն, յեթե դպրոցի կահավորման մեջ աշխատի միակողմանիությունն և շաբլոնությունը մոռնալը։ Միասեռությունը վոչ միայն չի ուժեղացնում ուշադրությունը, այլ և խիստ կերպով թուլացնում է, վորովհետև միասեռությունը քուն և առաջացնում։ Բերենք այդ առթիվ մի ուսանելի օրինակ։ Ցեվրոպայի կենտրոններից մեկում ուսումնական շենք կառուցողները, յերկար մտածելուց հետո, վորոշում են դասարանները բոլորովին առանձնացնել վոչ միայն փողոցի աղմուկից, այլ և առհասարակ մեկուսացնել կողմնակի տպավորություններից։ Այս առողջ մտքը նրանք կենսագործում են ծայրահեղ չափով։ Բոլոր դասարանները նրանք ներկում են մոխրագույն գույնով, նույնիսկ դասարանի անկյունները հարթում, վորպեսզի վոչ մի խիստ անվողրկ գիծ սովորողների ուշադրությունը չգրավի։ Դասարաններում բացի ուշադրավ վոչինչ չներկայացնող նստարաններից և գրատախտակից, այլ կահավորում չկա։ Ցեվ ստացվեցին բոլորովին անսպասելի հետևանքներ։ Բոլոր ներկա յեղողները, նույնիսկ սկսած ամենահետաքրքրվողներից, դասախոսությունների ժամանակ քնելու անդուսպ պահանջ ունեն։

Մենք արդեն ծանոթացել ենք ուշադրության ֆիզիոլոգիական հիմքի—դոմինանտ պրոցեսի հետ։ Մենք գիտենք, վոր կողմնակի տպավորությունները, յեթե նրանք գերիշխող դառնալու շանսեր չունեն, դալիս, ուժեղացնում են հիմնական տպավորությունը, ավյալ դեպքում դասախոսությունը։ Պարզ և, վոր մեկակողմանի, միասեռ շրջապատը վոչ միայն քնեցնում է մարդուն, այլ և թուլացնում և գլխավոր գրգռիչի՝ դոմինանտի ուժը։ Նրան հնարավորություն չի տալիս վոչ դոմինանտ գրգիռների ներգիան յեվս այդ կողմնակի գրգիռներից խլելու և իր ոգուտին ոգտագործելու։ Այստեղից պարզ և, վոր դպրոցի կահավորման խնդրում չպետք է ընկնել ծայրահեղությունների մեջ, դասարանը չի կարելի այնպես կահավորել, վոր դասի փոխարեն դասարանը դառնա գերիշխողը։ Միաժամանակ պետք է խուսափել վնասակար միասեռությունից։

Ուշադրությունը և սարսափը. Պարզ և, վոր ուսուցիչը աշակերտներին կարող և տալ գիտելիքների համապատասխան քանակը և ամրապնդել այն նրանց ուղղությամբ միայն այն ժամանակ, յերբ աշակերտների մեջ կառաջացնի ուշադիր վերաբեր։ Ուսուցի-

չը հաշվի առնելով յերեխաների ուշադրության՝ մեծերի հետ համեմատած, ավելի պասսիվ բնույթը, պետք է մշտնջենը ձեռք առնի դասը հետաքրքիր և ուշադիր անցկացնելու համար։

Բուրժուական մանկավարժ Հերբատն առաջարկում է մարմնական պատժի սպառնալիքն տակ ստիպել աշակերտին ուշադիր լինել և լսել ուսուցչին։ Ճիշտ է, մեզ մոտ դպրոցներում մարմնական պատիժը բոլորովին վերացված է, բայց ունենք ուսուցիչներ, որոնք դասի ժամանակ վախի ազդեցությամբ աշակերտների մեջ ստեղծում են քաշացած, արհեստականորեն ուշադիր վիճակ։ Այդպիսի ուսուցիչներին բացարձակ կերպով պետք է ասել, որ վախը, սարսափահար անող սպառնալիքը ֆիզիոլոգիապես թուլացնում է որգանիզմի բոլոր ուժերը և դրանով իսկ անմիջականորեն խանգարում ըմբռնման գործը։ Բացի դրանից, վախը յերեխաների մեջ կարող է ստորաքարշությունն և քծնանք առաջացնել ուսուցչի հանդեպ։ Յերեխաները արտակարգ արագությամբ կկարողանան արտաքնապես հարմարվել ուսուցչի պահանջներին, ցույց տալ, որ ուշադրությամբ լսում են, բայց իրականում, ի հարկե, նրանց ուշադրությունը բոլորովին այլ կողմն է, իրականում նրանք սիմուլացիայով են սկսում պարապել։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է ուշադրությունը, վո՞րն է նրա դերն ու նշանակությունը։

2. Ի՞նչ բան է դոմինանտ գրգիռը, վո՞րն է սուբդոմինանտը։ Բացատրեցեք դոմինանտի և սուբդոմինանտի փոխհարաբերությունը և անցնումները։

3. Ի՞նչ է պերսեվերացիան։

4. Բնորոշեցեք ապերցեպցիան. նշեցեք նրա տեսակները։

5. Վո՞րն է ներքին ուշադրությունը և արտաքին ուշադրությունը։

6. Վո՞ր ուշադրությունն է կոչվում անմիջական և վորը՝ ոչ անմիջական։

7. Ի՞նչ բան է կամավոր ուշադրությունը, վո՞րն է նրա նշանակությունը։

8. Բնորոշեցեք ակամա ուշադրությունը։

10. Ուշադրության կայուն գարձնելու միջոցները։

11. Ի՞նչ է ցրվածությունը, նրա ինչպիսի արատաւորություններ գիտեք։

12. Ցրվածություն և ներտրոնացած ուշադրություն։

13. Ցերեխաների ուշադրության առանձնահատկությունները։

14. Ինչպես կահավորել դասարանը։

16. Սարսափ և ուշադրություն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կորնիլով.—«Հոգեբանության ձեռնարկ»։

2. Рубинштейн.—«Основы психологии».

3. «Психология», под ред. Корнилова, Теплова и Шварца.

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Մեր առօրյա տպավորություններից շատերը չեն անհետանում, չեն կորչում, մոռացվում, այլ ամրապնդվում են մեր ուղեղում և պահպանվում։ Մեր ուղեղում ամրապնդված ու պահպանված այդ տպավորությունների (մտապատկերների) վերարտադրման և ճանաչման պրոցեսը հիշողությունն է։ Առհասարակ արտաքին աշխարհից ստացված բոլոր տպավորությունները պահպանվում են և կարող են վորոշ ժամանակից հետո վերարտադրվել այն տարբերությամբ միայն, վոր վորոշ տպավորություններ շուտ են մոռացվում, ժամանակավորապես կամ ընդմիշտ չքանում մեր գիտակցության դաշտից։

Հիշողության նշանակությունը. Զարգազանց խոշոր և հիշողության դերը մարդու կյանքում։ Առանց հիշողության մենք չէինք ունենա անցյալ, չէինք կարող ոգտվել այն հարուստ փորձից ու բազմաթիվ սովորություններից, վոր մենք ձեռք ենք բերել մեր կյանքում։ Առանց հիշողության կյանքը կդառնար վայրկյանական, վորովհետև վոչինչ սովորել չէինք կարող, սովորելուց հետո յել անմիջապես կմոռանայինք և ստիպված կլինեյինք նորից սկսել, այսինքն շարունակ կանգնած կլինեյինք միևնույն աստիճանի վրա։

Մեծ է հիշողության դերը ըմբռնման գործում։ Ինչպես տեսանք, անցյալի փորձը վոչ միայն հարստացնում, արագացնում ու բազմակողմանի յե դարձնում ըմբռնումը, այլ և առհասարակ խիստ էական դեր է կատարում ըմբռնման պրոցեսում։ Մեր գործունեությունը մեծ մասամբ կախված է նաև հիշողության միջոցով ձեռք բերած բազմաթիվ տպավորություններից։

Առանց հիշողության անհնար կլիներ խոսել։ Հայտնի յե, վոր վորոշ հիվանդությունների ժամանակ, յերբ մարդ կորցնում է իր հիշողությունը, (աֆազիա—հիշողության քայքայում), նա դադարում է վոչ միայն խոսելուց, այլ և հասկանա-

լուց, չի կարողանում հիշել ամենապարզ բառերն անգամ։ Հնգելն իրավացիորեն գրում է. «Արտադրական հիշողության բարձրը ստեղծագործությունը լեզուն է, վորը լինում է հնչյունային և գրավոր»։ Իր հերթին խոշոր և նաև խոսքի աղղեցությունը հիշողության վրա. խոսքի շնորհիվ հիշողությունը վոչ միայն բազմակողմանի է դառնում, այլ և բոլորովին փոխում է իր բնույթը։ Նույնը պետք է ասել նաև մտածողության ու հիշողության փոխհարաբերությունների մասին։ Ընդգծելով հիշողության այդքան կարևոր նշանակությունը, չպետք է մոռանալ, վոր նա մարդու գոյը արտահայտող գիտակցության ֆունկցիաներից մեկն է։ Յեթե հիշողությունն անջատենք մըտածողությունից, կամքից և այլն, ապա նա բոլորովին կկորցնի իր արժեքը։

Հիշողության զարգացումը. Դեռ ևս անկենդան բնության մեջ տեսնում ենք մի կարևոր հատկություն, այն է՝ պլաստիկականություն, այսինքն փիչ թե շատ խոշոր ապավորությունների հետքերը պահպանելու, ինչպես և նախկին դիրքը վերականգնելու ընդունակություն (ճմռած շորը, թուղթը, անիվի հետքերը ճանապարհի վրա և այլն)։ Այդ հատկությունները ավելի ուժեղ կերպով արտահայտվում են որգանական մատերիայի մեջ այն չափով, վոր հայտնի ֆիզիոլոգ Դյորինգը հիշողությունը համարում է որգանական նյութի հիմնական ֆունկցիան։ Որգանական աշխարհի, հատկապես կենդանի որգանիզմի պլաստիկականությունն ավելի ուժեղ է և՛ քանակապես, և՛ վորակապես։ Մկին ու եղվարդը ապացուցեցին, վոր ավազանը ջրով լցնելու շրջանը յերկարացնելով, կարելի է վատարեններին սովորեցնել վորպեսզի նրանք իրենց խնդիրները յերկար ժամանակ բաց չանեն։ Պրոֆ. Յեզրաս Հասրաթյանը գորտերին սովորեցրեց իրենց ցատկումները կատարել միայն հատակի այն մասի վրա, վորտեղ ելեկտրական լիցք չկա և այլն։ Այս յերևույթների պատճառը, ինչպես Դյորինգն և իրավացիորեն նկատում, ֆիզիոլոգիայի հետևյալ որենքն է. «Ամեն մի գրգռիչ թողնում է իր ֆիզիոլոգիական հետքը կամ կնիքը, վորը կազմում է հետագա վերարտադրման հիմքը»։

Կենդանական աշխարհի զարգացման, ներվային համակարգության առաջացման ու կատարելագործման հետ միասին

գրգիռների հետքերի պահպանման ու վերարտադրման հատկությունը կենդանու վարքի համար ստանում է որոշ նշանակություն։ Գլխի ուղեղի և նրա կիսագնդերի կեղևային շերտի առաջացումը ձեռք բերված անհատական փորձի կուտակման և հետագա ոգտագործման հնարավորություն է ստեղծում։ Ներվային համակարգի զարգացման այդ բարձր աստիճանում որգանիզմի պլաստիկականությունը արդեն փոխվում է նոր վորակի՝ հիշողության։

Դեռ ևս Արիստոտելը հիշողությունը համարում էր կենդանական աշխարհի հատկություններից մեկը և վորոշ առումով նա իրավացի էր։ Կենդանուն հիշողությունից զրկելը, ինչպես վարվում են բիհեվիորիստները, ճիշտ չի լինի, վորովհետև նրա հիշողությունը որգանական մատերիայի զարգացման ընթացքում առաջացած և նրա վարքն ավելի ակտիվ դարձնող մի կարևոր գործոն է։ Կենդանու հիշողությունը հիմնականում ճանաչողական բնույթ ունի, նա տեսնելով առաջներում իր փորձում յեղած առարկան, յերևույթը, ճանաչում է այն, հիշում և իր ճանաչումը ոգտագործում է գոյության պայքարի համար։ Այսպիսով կենդանու հիշողությունն առաջանում է այն ժամանակ, յերբ նա անմիջականորեն տեսնում է այն, ինչ վոր առաջ ընկալել էր։ Ծանկացած դեպքում իր հիշողության մեջ յեղած պատկերների վերարտադրման և ոգտագործման հատկությունը կենդանիների մոտ միայն սաղմնային բնույթ ունի, և միայն մարդու հիշողության առանձնահատուկ կողմն է կազմում։

Մարդու հիշողության վորակական առանձնահատկությունը պայմանավորված է նրա ներվային համակարգության զարգացման ամենաբարձր աստիճանով, բայց գլխավորապես նրա հասարակական և անհատական պրակտիկայի հարստությամբ։ Մարդու հիշողությունը տրամաբանական է, մտածված։ Մարդու հիշողական մատպատկերները, շնորհիվ նրա մտածողության, ընդհանրված են, ջոկված և վորոշ չափով պրոֆեսիոնալ բնույթ ունեն, այդ պատճառով էլ զարգացման ընթացքում մի կողմից նրա հիշողության ճանաչողական, տրամաբանական կողմն ավելի է զարգանում, մյուս կողմից՝ մարդը կարողանում է հետզհետե ազատ վարվել իր հիշողական մատպատկերների հետ, ցանկացած դեպքում նրանց համապատասխան դասավորում տալով՝ ոգտագործել։

X ՎԵՐՀԻՇՈՒՄ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիշողությունը ոչ միայն մեզ հնարավորություն է տալիս ոգտագործել անցյալի փորձը, այլ և ապրելու անցյալի վոր-ոշ մոմենտներով։ Մեզանից յուրաքանչյուրը հնարավորություն ունի իր հիշողության պատկերները լոկալիզացիայի ենթարկելու, այսինքն հիշելու անցյալի տպավորությունը, նրա ընթացման տեղն ու ժամանակը։ Բայց այն, ինչ վոր սովորել ենք, այժմ գիտենք, մենք հնարավորություն ունենք այդ ոգտագործելու ցանկացած դեպքում, բոլորովին անկախ այն բան-ից, թե յերբ ենք ըմբռնել և վորտեղ։ Մեզանից յուրաքանչյուրը վորևե նյութի մասին պատմելիս, կարող է բոլորովին էլ չհիշել, թե յերբ և վորտեղ է սովորել այն։ Կարող է պատահել նաև, վոր նյութի բովանդակությունը մոռանալով, հիշենք միայն նրա ըմբռնման ժամանակն ու տեղը։

Վերհուշը տեղի ու ժամանակի հետ կապված, տեղայնացված պատկերների վերարտադրումն է, վորը անքակտելի կերպով կապված է անհատի ձեվավորման, կազմակերպման հետ։ Դրա շնորհիվ է, վոր մենք մեզնից չենք ոտարանում և մեր անցյալը ներկայիս կարում։ Հիշողության շնորհիվ է, վոր հնարավորություն ունենք մեր դիտակցության մեջ արտացոլել մեր անհատականության անցած ճանապարհը, նրա ծագումը, զարգացումն ու փոփոխումը։ Հիշողությունը կազմում է ինքնաճանաչման, ինքնագնահատման հիմքը։ Այդ տեսակետից հիշատ է ֆիզիոլոգ Ա. Գերցենը (մեծ հեղափոխականի վորդին), վորն ինքնաճանաչման հիմնաքարը համարում է հիշողությունը։

Մոռացում. վերարտադրման, վերհուշի հակառակը հանդիսանում է մոռացումը։ Ցավոք մոռացումը չլիներ, յեթե յուրաքանչյուր տպավորություն, անկախ նրա նշանակությունից, ստիպողաբար ամրապնդվեր և պահպանվեր մեր ուղեղում, ապա մեր գլխում խառն ի խուռն, իրար վրա թափված տպավորությունների այնպիսի քաոս կստեղծվեր, վորի միջից դուրս գալ չէինք կարող։ Առանց մոռացման հնարավորություն չէինք ունենա մեր ուղեղը դարձնել մասնագիտության ու հիշողության կարևոր արսենալը։ Միաժամանակ պետք է ընդգծել և այն կարևոր հանգամանքը, վոր մեր ուղեղը, վորքան էլ նա համայնապարփակ լիներ, բազմաթիվ ոգտակար և անոգուտ տպավո-

Լուծյունների ծանրությունից կհոգներ և հնարավորություն չեր ունենա նոր, արժեքավոր տպավորություններն ըմբռնելու։ Այդ պատճառով էլ յերբեմն գիտակցաբար մոռացության ենք տալիս յերկրորդական, անկարևոր, անարժեք տպավորությունները, վորպեսի յերևույթը մարդու մտածության հիմնական հատկանիշներից մեկն է։ Բացի դրանից, մեր ուղեղի ժեջ մշակվել և նաև հետևյալ հատկությունը. այն տպավորությունները, վորոնք մեզ հարկավոր են միայն վորոշ ժամանակաշրջանում, մեր ուղեղում պահվում են այնքան, վորքան անհրաժեշտ են, բայց հենց վոր այլևս այդ տպավորությունների պահպանումն անհրաժեշտ չի դառնում, նրանք մոռացվում են։ Որինակ՝ մատուցարարը մինչև ճաշարանի փակվելը, յուրաքանչյուր որվա ճաշացուցակն անգիր կհիշի, իսկ մյուս որը նախորդ որվա ճաշացուցակը բոլորովին կմոռանա և նրա փոխարեն կհիշի նոր ճաշացուցակը։

Մոռացումը յենթակա յե նաև մի այլ որենքի։ Մենք կարող ենք միատեսակ տպավորություններ ստանալ բազմիցս անգամ։ Ասենք մեր կյանքի ընթացքում նույն մարդուն կարող ենք հանդիպել հարյուրավոր անգամ, վորպիսի դեպքում մեր ուղեղը պահում է վոչ թե ամեն մի հանդիպման տպավորությունները առանձին-առանձին, այլ տարբեր ժամանակներում այդ մարդուց ստացված տպավորությունների դումարը միայն, այսինքն, մեր բազմաթիվ տպավորություններից հիշում ենք միայն ընդհանուրը, տիպիկականը, բնորոշը։

Նպատակահարմար մոռացման մի այլ որենք հայտնաբերված է Ֆրեյդի կողմից, բազմաթիվ փաստերով նա ապացուցում է, վոր անցյալի ծանր և հատկապես վշտային բնույթի տպավորություններն աստիճանաբար մոռացվում են, թեև վոչ բոլորովին անհետանում։ Հետագայում այդ տպավորությունները միշտ չե, վոր հիշվում են և հիշվելիս էլ այնպես ցնցող չեն լինում որգանիզմի համար, ինչպես վշտի որերում եյին։ «Ժամանակը,—ասում է գրողներից մեկը,—մարդու հոգեկան վերքերի ամենալավ բուժիչն է»։ Կան մարդիկ, վորոնք ունեն հիվանդագին, այսպես կոչված աֆֆեկտիվ հիշողություն։ Այսպիսի մարդիկ ծանր տպավորություններից ազատվել չեն կարողանում, «վհուռածները իշխում են նրանց վրա» (Իքանես)։

—Ֆրեյդի մոտ տեսակետից այդ ճիշտ կարծիքին հակադրվում է Բլոնսկին, գտնելով, որ ծանր տպավորությունները, ընդհակառակը, միշտ մնում են, իսկ ուրախ հուշերը մոռացվում. բայց նա համոզվածությամբ չի բերում այդ պատճառները։

Խանգարիչ մոռացություն. Խանգարիչ մոռացությունն առաջանում է այն ժամանակ, երբ մոռացումը վերաբերվ հիշված սահմաններից դուրս է գալիս։ Այս դեպքում մարդը դառնում է ցրված, անուշադիր, մոռանում է ոչ միայն չեզրկորդականները, այլ և հիմնականները։ Նման հիշողությունը, որը խանգարում է հոգեկան կյանքի նորմալ ընթացքը, ծագում է որգանական բնույթի ֆիզիոլոգիական հիվանդագին պատճառներից, որոնք հատկանիշ են գլխավորապես դերհոգնածության։ Ժամանակին հանգստանալը, աշխատանքի ու հանգստի կանոնավոր ռեժիմ ունենալը, ժամանակին ու կանոնավոր սնվելը, մաքուր ոդը և առհասարակ աշխատանքի առողջ պայմանները հնարավորություն են տալիս պայքարելու դերհոգնածության դեմ։ Հիշողության վրա բացասական իմաստով ազդում են նաև վորոշ հիվանդություններ։ Ծանր հիվանդությունները ազդելով վողջ որգանիզմի վրա, թուլացնում են նաև հիշողությունը։ Որգանիզմի ուժերի վերականգնման հետ միասին վերականգնվում է և հիշողությունը։ Նորհոդրդ և տրվում ծանր հիվանդություններից առողջանալուց հետո ժամանակից չծանրաբեռնել ուղեղը մտավոր աշխատանքով, այլ աստիճանաբար։

Հիշողության ախտաբանությունը. Հիշողության հիվանդությունը կոչվում է ամնեզիա։ Սովորական մոռացման դեպքում մեր ուղեղից անհետանում են, քիչ կամ շատ չափով, պատահական տպավորությունները։ Հիվանդագին հիշողության ժամանակ մեր ուղեղից անհետանում են հիշողության ամբողջ խմբեր և նույնիսկ մեր կյանքի ամբողջ շրջաններ։ Ամնեզիան կարող է լինել ընդհանուր և մասնակի։

Մասնակի ամնեզիան ժամանակավոր է և վերաբերում է հիշողությունների միայն մի շրթայինն։ Որինակ, անգլիական բժիշկ Գոլլենդն ածխահանքերն այցելելիս, հոդնածության հետևանքով բոլորովին մոռացավ պերմանեբենը և այդ լեզվով կարողացավ խոսել հանգստանալուց հետո միայն։ Ընդհանուր ամնե-

գիաՑ՝ կյանքի մի ամբողջ շրջանի ապավորությունների մոռացումն է։ Ռուսական տաղանդավոր փիլիսոփա Գերցենն իր «Հոգու ընդհանուր փիլիսոփայություն» գրքում բերում է ընդհանուր ամենահետաքրքիր օրինակը։

«Մի չահել կին, վորը շատ էր սիրում իր ամուսնուն, ծանր կերկունքի ժամանակ ուշաթափվեց։ Ուշաթափությունը տեվեց բավականին կերկար, արթնանալուց հետո նա բոլորովին մոռացավ այն ամենը, ինչ վոր պատահել էր նրա հետ հարյուրներից հետո։ Կյանքի մյուս տասնյակները մինչև ամուսնալը, նա լավ էր հիշում։ Ուշքի գալուց հետո խեղճ կինը սարնալը, նա լավ էր հիշում։ Ուշքի գալուց հետո խեղճ կինը սարսափահար նայեց իր ամուսնուն և կերեխային, չհիանալով, թե ովքեր են նրանք և ինչ գործ ունեն իրեն հետ։ Ծնողները ովքեր են նրանք և ինչ գործ ունեն իրեն հետ։ Ծնողները նրան մի կերպ հասկացրին, վոր այդ մարդն իր ամուսինն է, իսկ փոքրիկն իր կերեխան։ Զնայած դրան, նա ներքնապես կերբեք չհամոզվեց։ Նա ակնապիշ նայում էր իր ամուսնուն և կերեխային, չհասկանալով, թե այդ ինչպիսի կախարդությամբ նա հանկարծ միանգամից ունեցավ և՛ ամուսին, և՛ կերեխա»։

Ընդհանուր ամնեզիան կերբեմն լինում է պարբերաբար, այսպես օրինակ, բժիշկ Ազանի նկարագրած հիստերիկ կինը Ֆելիդն ուներ «կերկու կյանք»։ Նրանցից մեկում նա տիրում էր և հիշում իր կյանքի միայն այն դեպքերը, վորոնք համապատասխանում էին նրա տրամադրությանը։ Մյուս վիճակումն ամեն ինչ նորից սովորել՝ քայլել, խոսել, կարդալ և այլն։ Վորոշ ժամանակից հետո նա նորից ուշաթափվեց և ուշքի գալով մոռացավ իր կյանքի կերկրորդ շրջանը, դարձավ այնպիսին, ինչպիսին առաջ էր։ Ապա նա ուշաթափությունից հետո նորից անցավ կերկրորդ վիճակին, մոռանալով առաջինը։ Ցեվ այդպես նրա մոտ հաջորդում էին կերբեք չունեցող կերկու կյանքի շրջանները։

Հիշողության տիպերը. Հիշողության բնույթը տարբեր է տարբեր մարդկանց մոտ։ Պատճառը և՛ անհատական, և՛ պրոֆեսիոնալ առանձնահատկություններն են, այլ պատճառով էլ հոգեբանությունը հիշողությանը մոտենում է դիֆերենցիալ կերպով, այսինքն խոսում է տարբեր մարդկանց մոտ հիշողության տիպերի մասին։

ջողութիւնների առանձնահատկութիւնների (տիպերի) մասին։ Կան մարդիկ, որոնց մոտ մեխանիկական հիշողութիւնն ավելի ուժեղ է, կան էլ մարդիկ՝ արտաբանականը։ Մի մասը լավ է հիշում կոնկրետ իրերը, մյուս մասը՝ վերացական գաղափարներն ու հասկացողութիւնները։ Կան այնպիսի մարդիկ, որոնք կայծակի արագութեամբ իրենց ուղեղում կատարում են մաթեմատիկական ամենաբարդ հաշիվներ։ Թվական հիշողութիւնը նրանց մոտ շատ ուժեղ է, իսկ գույները, գեպքերը, անունները, բառերը հիշելու ունակութիւնները՝ թույլ։ Կան մարդիկ, որոնք հրաշալի յիշաժշտական հիշողութիւն ունեն, իսկ բառերի՝ թույլ, կամ հակառակը։ Այսպես՝ կոմպոզիտոր Մոցարտը միայն մեկ անգամ լսած յիրկար յիպռնակը կարող էր անսխալ վերհիշել նույնիսկ տարիներ անցնելուց հետո։ Նկարիչներ—Գուասոռվը, Դորեն և Հանս Մակարտը տեսողական հրաշալի հիշողութիւն ունեյին, նրանք իրենց միայն մեկ անգամ տեսածը ամենայն մանրամասնութեամբ կարողանում էյին հրաշալի կերպով նկարել։ Կուլրերի մոտ չափազանց ուժեղ են շոշափելիքային հիշողութիւնները։

Ընդհանուր առմամբ հաճի և հոտի հիշողութիւնը թույլ է, բայց վորոշ մարդկանց մոտ այդ ևս հանդում է ապշեցուցիչ չափերի։ Այստեղ հիշատակենք, վոր այդպիսի արտակարգ, բայց միակողմանի հիշողութիւնները միշտ չեն, վոր մարդու ընդունակութիւնների ապացույց են հանդիսանում։ Մի ոտար մարդ իրենց դյուղում յերեսունհինգ տարում յեղած բոլոր մեռելների թաղման ծիսակատարութիւնները լավ հիշում էր, նա գիտեր նրանց թաղելու ամիսն ու թիվը, կարող էր անսխալ կերպով թվարկել ննջեցյալների անունները ու տարիքը, նրանց գերեզմանների տեղը, սակայն, բացի դրանից նա ուրիշ վոչ մի հարցի պատասխանել չէր կարողանում և ուրիշ վոչինչ չգիտեր։ Նա նույնիսկ ինքնուրույն կերպով ուտել չէր կարողանում։

Ըստ հիշողութեան վերարտադրման ձևի, մարդիկ կարող են ունենալ յերեք տիպի հիշողութիւններ՝ տեսողական, լսողական և մկանա-շարժողական։

Հիշողութեան տեսողական տիպն ամենից ավելի շատ է տարածված։ Այդ տիպին պատկանող մարդիկ ամեն ինչ պատկերացնում են տեսողական արբատների ձևով։ Հիշելով ծա-

նոթ մարդուն, նրանք վերարտադրում են նրա դեմքի, գույնի հագուստի պատկերները, բայց վոչ նրա ձայնը։ Մատնելով կարդացած գրքի մասին, նրանք իրենց յերեվակայության մեջ տեսնում են գրքի թերթերը, նույնիսկ հիշում են տպագրական տառերի ձևը։

Համեմատաբար ավելի քիչ են պատահում հիշողության լսողական տիպի մարդիկ։ Այդ տիպի մարդիկ վերհիշելիս վորևե մեկին, պատկերացնում են վոչ թե նրա տեսքը, այլ ձայնը։ Վերհիշելով իրենց կարդացած գիրքը, նրանք իրենց յերեվակայության մեջ չեն տեսնում գրքի թերթերն ու տառերը, այլ կարծես լսում են բառերի արտասանությունը։

Մկանա-շարժողական կամ մոտորային տիպին պատկանող մարդիկ իրերն ու առարկաները գերազանցապես պատկերացնում են շարժողական կամ մկանային որըազների ոգնությամբ։ Մատնելով իրենց կարդացածի մասին, նրանք միաժամանակ շատ թույլ կերպով արտասանում են բառերը, շրթունքները շարժում են այնպես, վոր կարծեք բարձրաձայն կարդում են։ Այդպիսի մարդիկ յերկար ու լարված աշխատելիս այնքան են հոգնեցնում իրենց ձայնալարերը, վոր նրանց ձայնը կորվում է։ Ամբողջովին մկանա-շարժողական տիպին պատկանող մարդ շատ հազվագեպ է պատահում։ Մարդկանց մեծ մասի հիշողությունը խառն տիպի յի լինում, բայց հիշողության տիպերից վորևե մեկը գերակշռում է։

✗ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հուզմունքության տեսություն. Հուզմունքի մասին տեղեկություններ կան դեռ Արիստոտելի ժամանակվանից։ Հուզմունքում ասելով հասկանում ենք հեռևյալը։ Գիտակցության մեջ առաջ ներում յեղած պատկերացումները ձգտում են առաջացնել իրենց հետ այս կամ այն կերպ կապված տպավորություններ։

Հուզմունքությունները լինում են յերեք տեսակի՝ Ախրությունի կամ կողբ-կողբի, ցնծության և հակադրության։ Ախրության հուզմունքության հիմքը կազմում են տպավորությունները կողբ-կողբի ըմբռնելու և նույն կարգով էլ վերարտադրելու սկզբունքը։ Միաժամանակ կամ շատ կարճ ժամանակամիջոցի տարբերություններ ըմբռնված զգացումները, տեղափոխելով նրանից, թե նրանք ի-

ըար նման են, թե վոչ, ամբարտավանվում են մեր ուղեղում այն կարգով, ինչպես վոր ըմբռնվել են, այսինքն շղթայածև։ Վեր-արտադրվելիս էլ վոչ թե վերարտադրվում են ըստ տրամաբանական կապակցությունների, այլ ըստ ըմբռնման բնույթի։ Տպավորությունների ամբողջ շղթայի արթնացման համար բավական է հիշել միայն նրանցից մեկը։ Որինակ՝ ասենք, թե դու մի ընկերոջ հետ ծանոթացել եմ գնացքում, այժմ նրան պատահելով հիշում եմ վոչ միայն գնացքը, այլև մյուս ուղեկիցներին և ծագած մանրամասնությունները։ Կամ, ասենք, թե դու ծանոթանում ես մի նոր գլխարկ վորի նման վոչ մեկը չի ծածկում։ Հետագայում, Թբիլիսիում տեսնելով նման գլխարկ ծածկած մեկ ուրիշին, իսկույն և դու հիշում եմ Ցերևանի իմ ծանոթանալը։ Այստեղ արդեն ծանոթանալը հիշելու պատճառը դարձյալ գլխարկը, վոր, ի հարկե, Ցերևանում նման գլխարկ ծածկող բարեկամանալու հետ վոչ մի արդյունական կապ չուներ, վորովհետև իմ ծանոթանալին կարող էր բոլորովին այլ գլխարկ ծածկած լինել։

Նմանության զուգորդության հիմքը կազմում է ընկալվող իրի և վերարտադրվող իրի նմանությունը։ Մի ծանոթ իր հիշեցնում է մյուսին։ Որինակ, բոլորովին մի անծանոթ ընկերոջ վորոշ գործերը հիշեցնում են իմ մի այլ ծանոթին։

Հակադրության զուգորդությունը հետևյալն է. մի վորևե տպավորություն կարող է արթնացնել բոլորովին հակադիր հիշողություն։ Որինակ, ամառվա շոգ որերին մենք հիշում ենք ձմեռվա սառնիկ ցրտերը, բարձրահասակը հիշեցնում է ցածրահասակին և այլն։ Վորոշ հոդվածններ հակադրության զուգորդությունը համարում են նմանության զուգորդման մի այլ տեսակը, պատկով, վոր իրրև չեզոք տարրականների մասին մեր ունեցած միջին հասկացողության, կիրկու հակադիր կողմերն էլ նման են միմյանց։ Որինակ, կյանքում շատ քիչ են պատահում և՛ շատ ուժեղները, և՛ շատ դժբեղիկները։ Վերջին կիրկու որինակներն էլ իրրև մարդու գեղեցկության մասին մեր ունեցած միջին հասկացողության շեղում, նման են միմյանց։

Զուգորդության տեսությունների բննադատությունը. Ցերեկը ճիշտ չի լինի ամբողջ հիշողության պրոցեսը բացատրել զուգորդությունների օրինքներով, վորովհետև զուգորդության տեսու-

թյունը տալիս է միայն մարդկային հիշողության ամենացածր տեսակի՝ մեխանիկականի բացատրությունը։ Ցավ, իսկապես, ըստ զուգորդության օրենքների, մեր հիշողությունն իր թե իրենից ներկայացնում է իրար հետ վոչ մի էական կապ չունեցող, միայն միևնույն ժամանակում և տարածության մեջ ըմբռնված բազմաթիվ ապավորությունների մեխանիկական գումար։ Մեր հիշողության մեջ նման կապակցություններ անպայման կան և կարող են լինել, բայց հիմնականը՝ մարդու հիշողության համար այդ չէ։ Ինչպես տեսանք, մարդու հիշողությունը ճանաչողական է և մտածված։ Այս նշանակում է, վոր մեր ուղեղում յուրացած ապավորությունները վոչ թե զգայությունների մի անկապ շարան են, այլ բազմաթիվ փաստերի ու ընդհանրացումների տրամաբանական կապակցություններ, վորոնց մարդը ձեռք է բերում իր ակտիվ գործունեության, զգայնական ակտիվ պրակտիկայի ու գիտակցական մտածողության շնորհիվ։

Հիշողության կառուցվածքային (տարուկտուր) տեսությունը մեխանիզմայն առաջնում է գուգորդության տեսության այն հիմնական սկզբունքի դեմ, ըստ վորի մեր հիշողությունն իրար հետ օրգանական կապ չունեցող տարրեր զգայությունների մեխանիկական գումարն է։ Տարուկտուր տեսության ներկայացուցիչները գտնում են, վոր մենք վոչ թե ըմբռնում ու վերարտադրում ենք իրար հետ վոչ մի էական կապ չունեցող ապավորությունների շարանները, այլ ըմբռնման ամբողջ տեսադաշտն իրրև մի ամբողջություն։ Որինակ, ուսուցիչը վոչ թե ըմբռնում և դասարանում յուրացած ամեն մի աշակերտին առանձին-առանձին և դրա հետ կապված նստարանները, նրանց տետակները ու գրչները, վոչ թե ըմբռնում և վերաստեղծում, լուսամուտները, պատերը և այլն, այլ ամբողջ դասարանի պատկերը՝ դասարանի մեջ մտնող ամեն մի աշակերտ և առարկա իրրև այդ դասարանի մի մասը։ Այդ վերարտադրման պրոցեսն էլ կատարվում է հետևյալ կերպ. բավական է տեսնել միայն մի աշակերտի, վորին ըմբռնել ենք իրրև դասարանի մի մասը, և անմիջապես ամբողջ դասարանի պատկերը կրկին կվերականգնվի մեր հիշողության մեջ։ Ամբողջական ապավորության վերականգնումն, տարուկտուր հոգեբանության ներկայացուցիչները բացատրում են այսպես. առանձին հանդես եկող յուրաքանչյուր մաս ձգտում

և ամբողջանալ, այսինքն լրացվել մյուս բացակայող գծերով։ Որինակ՝ — այսպիսի նկարը մենք ըմբռնում ենք իբրև յեռանկյունի, թեպետ և նա վոչ մի անկյուն չունի։

Սարուկտուր տեսության ընթացքը. Սարուկտուր տեսության ներկայացուցիչները պարզորոշ կերպով հայտնաբերեցին ըմբռնողության տեսության ամենախոցելի կողմը։

Մեր հիշողությունը յերբեք մի քանի տպավորությունների մեխանիկական շարաններից չի կազմված, նա ամբողջական է։ Սակայն սարուկտուր տեսության ներկայացուցիչներն ունենալով իդեալիստական, ռեակցիոն դիրքավորում, ըմբռնման ամբողջական լինելու հնարավորությունը բացատրեցին ըմբռնողի տպարատի իբր թե յուրահատուկ բիոլոգիական կառուցվածքով և նույնիսկ աշխատեցին դրա հիմունքները գտնել կենդանական ըմբռնման մեջ։

Մարդկային ըմբռնումի այս կամ այն ընդլայնը վոչ թե պայմանավորված է անհատի ըմբռնող տպարատի յուրահատկությունով, այլ արտացոլումն է միայն կենդանի իրականության։ Սարուկտուր թեորիան տգավաղում է մասի և ամբողջի կապը։

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հիշողության հիմքը կազմող ֆիզիոլոգիական պրոցեսների մասին առայժմ սպառիչ վորևե բան ասել չի կարելի։ Ուղեղային կեղևի ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր ուղեղային գալարումները միացած են իրար հետ այսպես կոչված զուգադրման թելիկներով, վորոնք կարող են լինել յերկար կամ կարճ, նաև, թե իրարից ինչպիսի հեռավորության վրա գտնվող ուղեղային գալարումներ են նրանք միացնում։ Բացի զուգադրման թելիկներից սպիտակ մասում գոյություն ունեն այսպես կոչված պրոեկցիոն թելերը, վորոնք վոչ թե գալարումներն են միացնում միմյանց, այլ ուղեղի կեղևը կապում են ավելի ցածր գտնվող կենտրոնների և ծայրամասերի հետ։

Ուսումնասիրելով նոր ծնված յերեխայի ուղեղային սաղմերը, հոգեբույժ և անատոմ Ֆլեգսիգը գտավ, վոր ուղեղի մասերը տարբերվում են իրարից։ Ուղեղի վորոշ մասերում գերակշռում են զուգադրման թելերը, վորոշ մասերում էլ պրոեկցիոն

Ֆլեզսիկն առաջադրեց մի հիպոթեզ, ըստ որի այդ զուգորդման ինչ-որ տարրական մասերում կատարվում են հոգեկան բարձր պրոցեսները։

Հիշողության հիմքը կազմում են հենց այդպիսի ֆիզիոլոգիական պրոցեսները, որոնք կատարվում են գլխի ուղեղի կիսագնդերում։ Նրանց որևէ մասի խանգարումը ազդում է սովորությունների առաջացման վրա։

Ձևափոխման տեսության ներկայացուցիչները հիշողության հիմքը համարում են նեյրոային ճանապարհների հարթվելու պրոցեսը։ Նրանք պնդում են, որ ամեն մի գրգիռ սկզբում տարածվում է ամբողջ ուղեղում և ապա կենտրոնանում համապատասխան մասում։ Այդ ճանապարհն անցնելիս գրգիռը հաղթահարում է նեյրոային որոշ դիմադրություն, իսկ գրգիռը կրկնվելիս ճանապարհը հարթված է լինում և նեյրոային էլեմենտի դիմադրությունն էլ թուլացած։ Ուղեղային հետքերի առաջացումը բացատրվում է նեյրոային էլեմենտի դիմադրության թուլացմամբ։ Պարզ է, որ գրգիռների վերականգնումն ավելի հեշտ է կատարվում այդ հարթված ճանապարհով։

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հիշողության զարգացումը ուսումնասիրող գիտնականները (Մոյման, Նեչայով և ուրիշները), բավականին ընդհանուր և կոպիտ գծերով տալիս են հիշողության զարգացման հետևյալ տախտակը։ Հիշողության դանդաղ զարգացումը, որը տևում է մինչև մանկության շրջանը, սկսում է ավելի արագանալ 16 տարեկանից։ 20—25 տարեկան հասակում հիշողությունը հասնում է իր ծաղկուն վիճակին։ Այնուհետև նորմալ աշխատանքի ու հանգստի պայմաններում մարդկային հիշողությունը չի թուլանում, մնում է նույն մակարդակի վրա մինչև 50—55 տարեկան հասակը, որից հետո օրգանիզմի ընդհանուր թուլացումը որոշ չափով ազդում է նաև հիշողության վրա։

Խոսելով ծնրերի հիշողության թուլացման մասին, Մոյմանը և ուրիշները մոռանում են մի կարևոր հանգամանք, որ դուրս դորձման կապերի՝ անցյալի փորձի հարատևությունը վոչ միայն ոժանդակում է ըմբռնման ամբողջացման գործին, այլ և ավելի ոժանդակում է ըմբռնման ամբողջացման գործին, այլ և ավելի հեշտացնում ու արագացնում է այդ, այնպես որ ճիշտ չի լինի

խոսել ծերերի հիշողության բացարձակ թուլացման մասին։ Անցյալի հարուստ փորձը, որ կա ծերերի մոտ, խոշոր չափով փոխարինում է թուլացող հիշողությանը, այդ պատճառով էլ թուլացումն աննկատելի է դառնում։ Միաժամանակ գիտենք, որ հանճարեղ մարդիկ (Գյոթեն, Պավլովը, Կուստոդիևը և այլն) ամենածեր հասակում անգամ հանդես են բերել զարմանալի հիշողություն։

✕ ՅԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Յերեխան մինչև մեկ տարեկան հասակը իրեն շրջապատող առարկաներն ու իրերը կարողանում է պրիմիտիվ կերպով ճանաչել, թեև նրա ճանաչման շրջանը շատ նեղ է։ Շատերը պատմում են, որ յուր յերեխան իր կյանքի յերկրորդ տարում արդեն կարողանում էր հիշել իր հարազատներին։ Յերեխան ճանաչում է իր անմիջական շրջապատը ծննդյան օրից 2—3 շաբաթ հետո։ Յերեք տարեկան հասակում յերեխան կարողանում է հիշել մոտիկներին, նույնիսկ նրանց մի քանի ամիս չտեսնելուց, իսկ չորս տարեկանում՝ մի ամբողջ տարուց հետո։

Մանուկային հասակում, հատկապես այդ հասակի առաջին շրջանում, յերեխայի հոգեկան կյանքում խոշոր տեղ են գրավում զուգորդումները։ Մայրական կուրծքը և ընդհանրապես մոր տեսքը զուգորդման ենթարկվում կուշտ լինելու հետ, հոլը տեսնելիս յերեխան հիշում է մի շարք միջոցներ իր պահանջները բավարարելու համար և այլն։ Զուգորդման շնորհիվ է, որ յերեխան սովորում է առանձին բառերը՝ «մամա», «պապա», «տատի» և այլն։ Այսպիսի ճանապարհով յերեխան հետզհետե շատացնում է իրեն ծանոթ առարկաների քանակը։ Յերեխայի հիշողության զարգացման ճանապարհը բաղկացած է հետևյալ շրջաններից։

Առաջին շրջան—հիշողության հիմքը կազմում է ճանաչումը։ Որովհետև յերեխան տեսնելով իրը, առարկան ճանաչում է՝ հիշում, որ այդ իրն իրեն արդեն ծանոթ է, ինչ, որ մի տեղ տեսել է։ Այս շրջանում յերեխայի հիշողությունը դեռ չի կարողանում ազատվել անմիջական ըմբռնման շրջանակներից։

Յերկրորդ շրջան—յերեխայի ազատագրումն անմիջական ըմբռնումներից, պատկերացումներից, և վերհուշի առաջացումն է։

Այստեղ արդեն զուգորդման օրենքներն սկսում են գործել, յերեխայի մոտ մի իր կարող է առաջացնել մի այլ իրի վերհուշ։ Շտերնը այս շրջանի մասին պատմում է, որ իր մի տարի և չորս ամսական յերեխան տեսնելով դրատախտակը, ասում է՝ «պապա վառ-վառուն» (յերեխայի լեզվով նշանակում է շուռը), այնինչ դրատախտակի վրա վոչինչ նկարված չեր։ Բանից պարզվեց, որ յերեխայի մայրը դրանից յերկու և կես ամիս առաջ դրատախտակի վրա նկարել է շան, կատվի և ձիու գլուխները, որոնք յերեխային մեծ հրճվանք էին պատճառել։ Ցավ ասա, այդ դեպքից յերկու կես ամիս հետո, յերեխան տեսնելով մաքուր դրատախտակը, հիշեց նրա վրա նկարված շունը։

Հիշողության զարգացման յերրորդ շրջանն արտահայտվում է նրանով, որ յերեխան արդեն կարողանում է կամավոր կերպով վերարտադրել իրեն հարկավոր հուշերը և ոգտագործել այն։ Հիշողության այս ասպեկտը մարդկային հիշողության առանձնահատկությունն է կազմում։ Այս շրջանումն է, որ յերեխան իր սեփական նախաձեռնությամբ սկսում է հիշել վերջին քան։ Այդպիսի հիշողության մասնակի օրինակները Շտերնը դիտել է իր յերեխաների մոտ՝ սկսած յերկու տարեկանից։ Բայց հիշողության այս հատկությունը վերջնականապես ձևավորվում ու իշխող է դառնում միայն 6—7 տարեկանից հետո։ Դպրոցական հասակումն է, որ ակամա հիշողությունը դառնում է կամավոր։ Յերեխան այդ հասակից արդեն սկսում է ուշադիր կերպով սովորել։ Իհարկե, նա ավելի վոքր հասակումն էլ սովորում է։

Տղատոյը, խիստ չափազանցություններին մեջ ընկնելով, գրում է, որ ինքը մինչև չորս տարեկան հասակը շատ ավելի քան է սովորել, քան իր ամբողջ կյանքի ընթացքում։ Բայց այդ սովորելու պրոցեսն ու պատճառները տարբեր են նախադպրոցական և դպրոցական հասակներում։ Նախադպրոցականի մոտ ուսուցման ակամա ձևն է այդ։ Յերեխան, տարվելով ներկայով, դեռևս չի կարողանում ջանքել, համապատասխան նյութ ընտրել ապագայի համար՝ սովորելու նպատակով։ Նա հիշում է այնքան, որքան նյութն է պահանջում, նրա հիշողությունը պասիվ է։

Նախադպրոցական հասակում առաջանում են պատմական հիշողության միայն նախադրյալները։ Մարդը, վորը մինչև իր կյանքի վերջը չի մոռանում մանկական հասակում ձեռք բերած ունակություններըը (քայլել, խոսել, հագնվել և այլն), համարյա բոլորովին մոռանում է իր առաջին տարիների հուշերը։ Հոտագողները (Անրին և Շմուացը) ապացուցին, վոր մարդկանց ընդհանուն տոկոսը մինչև իրենց չորս տարեկան հասակի մասին վոչ մի հիշողություն չունի։ Միայն «հինգ տարեկան հասակի վերաբերյալ կարելի չե ասել—գրում է Շաերնը,—վոր մարդն ունի մանկական հիշողություն»։ Հետագայում նույնն է տեղի ունենում նաև սեռական հասունացման՝ արբունքի շրջանում։ Մենք այդ հասակի հիշողություններ շատ քիչ ունենք։

Դպրոցական հասակում սովորելը դրվում է նոր հիմքի վրա, դառնում է վերակցված աշխատանքի մի տեսակը, դառնում է վորոշակի՝ բղխելով կոնկրետ նպատակներից ու առաջադրություններից։ Այս դեպքում արդեն չերևան պետակցաբար և աշխատում յուրացնել այս կամ այն նյութը։

Հիշողության զարգացման հետագա ամենանշանակոր շրջանը՝ արտաբանված հիշողության առաջացումն է, վորն սկսում է շրջել կերպով հանդես գալ 13—14 տարեկան հասակից։ Ցերեխան աբստրակտ մտածողության զարգացման հետ միասին, կարողանում է հիշել աբստրակտ նյութը։ Զարգացման այդ շրջանում հիշողությունը խիստ կերպով կապվում է մտածողության, հատկապես նրա մտահանգման պրոցեսի հետ և այդ չերկուսը դառնում են միասնական։

* ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Հիշողության ասպարիզում կատարված փորձերի չեզրակացությունները խոշոր նշանակություն ունեն ուսուցման գործի խելացի կազմակերպման համար։

Ամենից առաջ լավ հիշելու գործում խոշոր նշանակություն ունի ըմբռնման բնույթը։ Ցեթե մենք անտարբեր և դեպի ըմբռնվող առարկան, չի իմանում, թե ինչու և ինչը պետք է ըմբռնել և մտապահել, նա շատ քիչ բան կհիշի իր տեսածից, լսածից, դրա համար էլ յուրաքանչյուր նոր նյութի ըմբռնման

համար պահանջվում է ուղեղի նախապատրաստում և հետաքրքրությունն ու յուրացնելու ցանկության առաջացում։ Այս տեսակետից վորոշ առումով ճիշտ է Հերբարտը, վորը մանկավարժական մեթոդների հիմքում դնում է հետաքրքրությունը։ Ցավ իրոք, յեթե նախնական հետաքրքրություն, նյութը յուրացնելու ցանկություն սանձված չեն, ապա նյութը չի ըմբռնվի, չի մտապահվի։ Լավ հիշելու հիմնական նախապայմաններից մեկը նյութի բազմակողմանի ու լրիվ յուրացումն է։ Ըմբռնման բնույթն անպայման մեծ նշանակություն ունի հիշողական պատկերների վերարտադրման համար։

Հաշվի նշանակություն ունի նաև կրկնողությունը։ Դեռ ևս շատ հին առածն ասում է՝ «կրկնողությունը գիտությունների մայրն է»։ Նյութը լավ, ամուր ամրապնդվում ու պահպանվում է ուղեղում միայն այն ժամանակ, յերբ նա կրկնվում է։ Այս սկզբունքի հետ միասին պետք է ընդգծել նաև, վոր միապաղաղ կրկնությունը մեղսունում է ամեն մի հետաքրքրություն, դառնում է ձանձրալի, թուլացնում է հիշողությունը։ Կրկնությունը լավ է այն դեպքում, յերբ կրկնողի համար նա այնքան էլ զգալի չի լինում։ Իսկ այդ հնարավոր է միայն այն ժամանակ, յերբ հինը կրկնենք նորի հետ միասին, կամ թե չենք կրկնությունը այնպես կազմակերպենք, վորպեսզի նյութի յուրացումն ավելի բազմակողմանի դառնա։ Այսպիսով, հասկանալի է, վոր կրկնողության ընթացքում նոր ելեմենտի առկայությունը յուրացման հիմնական պայմաններից մեկն է։

Բազմաթիվ հետազոտություններ են կատարված ավելի լավ անգիր անելու, նյութի բաշխման նպատակները, ձևը վոշոշելու համար։ Երինհաուզը և ուրիշները ցույց տվեցին, վոր լավ կլինի կրկնությունը կատարել վորոշ ընդմիջումներով, ըստ վորում ընդմիջումների ժամանակամիջոցը մեկ րոպեից ավելի չպետք է լինի։ Պիերսոնը ցույց տվեց, վոր նույն նյութը կես ժամը մի անգամ կրկնելիս յուրացնելու համար պահանջվում է տասն և մեկ կրկնություն, յերկու ժամը մեկ անգամ՝ յոթ և կես կրկնություն, հինգ ժամը մեկ անգամ՝ վեց կրկնություն և տասը ժամը մեկ անգամ՝ չորսից հինգ կրկնություն։ Ինչպես թվերը ցույց են տալիս, կրկնությունների թիվը մոտ յերկու անգամ կրճատվում է, յերբ կրկնությունը վոչ թե անընդհատ է լի-

նում, այլ վորոշ ժամանակամիջոցում, նա ով հապճեպ կարդով և պատրաստվում քննութիւններին, շուտ ել մոռանում և, դրա համար ել քննութիւններին պետք և պատրաստվել ամբողջ տարվա ընթացքում։ Ամենից ավելի նպատակահարմար և համարվում պարապել յերեկոները և առավոտները։ Վորոշ հոգեբաններ խորհուրդ են տալիս յերեկոյան սովորել, իսկ առավոտյան կրկնել, սակայն պետք և ընդգծել, վոր վերոհիշյալը պարտադիր չի կարող լինել, սովորութիւնը մեծ դեր և խաղում ժամերի ընտրութեան նկատմամբ։ Այսպես որինակ, յեթե յես լինեմ ստիպում եմ պարապել ժամը հինգից հետո, ապա այդ սկզբում վորոշ դժվարութիւններ կհանդիպի, բայց հետզհետե, սովորելու շնորհիվ կդառնա պահանջ։ Խորհուրդ և տրվում նաև պարապել միշտ միևնույն սենյակում, միևնույն անկյունում. դասախոսանոցը, գրիչը և առհասարակ պարապելու պայմանները չփոխել։

Հետևյալ հարցն այն և, թե ավյալ նյութն ինչպես սովորել մաս-մաս, թե ամբողջական բաժիններով։ Լաբորատոր հետազոտութիւնները ցույց ավեցին, վոր ամբողջական հատվածների կրկնութիւնը հիշողութեան մեջ ամրապնդելու համար ավելի նպատակահարմար և, քան նյութն առանձին տողերի բաժանելն ու կրկնելը։ Սա առանձնապես վերաբերում և իմաստավոր նյութերին, իսկ անիմաստ նյութերը անգիր անելն ավելի նպատակահարմար և կատարել մաս-մաս։ Մոյմանը և ուրիշները պնդում են, վոր կրկնողութիւնն առհասարակ զարգացնում և մարդու հիշողութիւնը, իսկ մենք դտնում ենք, վոր այդ դեռ վերջնականապես ապացուցված չե։

Վոմանք հիշողութեան կատարելագործման արհեստական միջոց են առաջարկում այսպես կոչված մնեմոնիկան—այն դեպքը, յերբ մենք անծանոթ բառերը հիշելու համար, այդ բառը կապում ենք մեզ համար արդեն ծանոթ այլ բառերի հետ։ Որինակ Բուենոս-Այրես քաղաքի անունը հիշելու համար յես հիշում եմ յերկու ծանոթ բառերի զուգակցութիւնը՝ «Բուեն» և «Այրես»։ Ցերբեմն առաջարկում են թվերի փոխարեն հիշել պայմանական տառերից կազմված բառեր, վորտեղ յուրաքանչյուր տառ փոխարինում և մի թվի։ Ասենք, թե ուզում եմ հիշել Մոսկվայի հրդեհման թվականը՝ 1812 թիվը։ Ցես հիշում եմ Ալաբ բառը (Ա—1, լ—8, Ա—1, բ—2)։

Մնեմոնիկան, ինչպես հենց առաջին հայացքից կարելի չի նկատել, խիստ արհեստական ու անհուսալի միջոց է և կարող է ոգտակար լինել միայն բացառիկ դեպքերում։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է հիշողությունը։

2. Վի՞րն է հիշողության նշանակությունը մարդու կյանքում։

3. Հիշողություն և ըմբռնում, խոսք և մտածողություն։

4. Ի՞նչ բան է անորգանական նյութի պլաստիկականությունը։

5. Վի՞րն է կենդանու հիշողությունը և ինչո՞ւ է կազմում նրա հիմքը։

6. Վորո՞նք են մարդու հիշողության վորակական առանձնահատկությունները։

7. Ի՞նչ յերեվույթ է վերհուշը։ Մարդու հիշողության վի՞ր հատկությունն է կոչվում պատմական։

8. Ի՞նչ բան է մոռացումը։ Վորո՞նք են մոռացման որենքները։

9. Ինչպե՞ս մոռացկոտությունը, նրա յերեվույթները, նրա դեմ պայքարելու միջոցները։

10. Հիշողություն և ուսուցում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рубинштейн.—«Основы психологии».

2. «Психология», под ред. Корнилова, Теплова и Шварца.

3. Կորնիլով.—«Հոգեբանության ձեռնարկ»։

ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (ՖԱՆՏԱԶԻԱ)

«Մենք ունենք մեր սեփական նկարիչը,—գրում է արվեստի հանճար Ստանիսլավսկին,—նա մի վայրկյանում անվճար կերպով կկատարի ձեր բոլոր պահանջները։ Նրա համար վոչինչ չարժի մի ակնթարթում հյուրասենյակը, դահլիճը, սրահը դարձնելու այն, ինչ վոր կցանկանաք։ Այդ նկարիչը մեր սեփական յերևակայությունն է։ Տվեք նրան պատվեր»։

«Ֆանտազիայի ազատ գործունեությունը,—գրում է Հեգելը յուր «Եստետիկայում»—իր յերևակայական կառուցումների մեջ ավելի ազատ է, քան ինքը բնությունը։ Այս ազատ ու ամենակարող յերևակայության ոգնությամբ մարդը նույնիսկ կարող է իրականության մեջ գոյություն չունեցող առարկաներն այնպես պատկերացնել, վոր կարծեք թե նրանք իրականում գոյություն ունեն»։ Հոգեկան այն ֆունկցիան, վորի ոգնությամբ մենք կարող ենք բավականին վատ ու կնոջ պատկերացնել այն, ինչ վոր չկա, կամ այն, ինչ վոր իրական է, բայց մեր փորձում բացակայում է, այսինքն այնպես, ինչպես պատկերացնում ենք այժմ, առաջ չենք ըմբռնել, կոչվում է յերևակայություն կամ ֆանտազիա։

Յերևակայության միջոցով մենք կարող ենք պատկերացնել հեռավոր կամ մոտ անցյալի, մեր ծնվելուց շատ առաջ կատարված իրադարձությունները, ներկայի այլ վայրերում գտնված իրերը, առարկաները կամ անցքերը, վորոնք անմիջականորեն մեր տեսադաշտի տակ չեն, և, վերջապես, կարող ենք պատկերացնել և այն, ինչ վոր դեռևս չի առաջացել, բայց հավանաբար կիրականանա, վորովհետև նրա ծագումն ու զարգացումը բղխում է իրերի բնական ընթացքից։

ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հսկայական ու անդնահատելի է յերևակայության նշանակությունը վոչ միայն արվեստի ու դիտության բնագավառում, այլև մարդկային պրակտիկ կյանքի ու մտածության ամեն մի առաջադեմում։

Մարդու փոխհարաբերությունները իր միջավայրի հետ ծրագրված են խելացի։ Մարդու աշխատանքը նպատակահարմար է, մտածված, պլանաչափ։ Աշխատանքի ծրագրված ու նպատակահարմար լինելն արտահայտվում է նրանում, որ մարդը՝ նախքան յուր գործունեության հետևանքներին հանդելը, այդ արդյունքները պատկերացնում է յուր ուղեղում. «... ամենավատ ճարտարապետին ամենալավ մեղվից տարբերում է այն հանգամանքը,—գրում է Մարքսը,—որ ճարտարապետը քջիջը յուր գլխում է շինած լինում, նախքան մեղրամոմից շինելը։ Աշխատանքի պրոցեսի վերջում առաջ է գալիս մի հետևանք, որ հենց աշխատանքն սկսելիս արդեն կար բանվորի պատկերացման մեջ, հետևաբար իդեապես արդեն գոյություն ուներ» (Մարքս, «Կապիտալ», հ. I, էջ 144, հայ. հրատ. 1933 թ.)։

Յուրաքանչյուր մարդ կատարում է որոշ աշխատանք, նախորոք պատկերացնելով այն հաճույքը, որ նա պետք է ստանա իր աշխատանքի վերջում։ Այդ պատկերացումն է, որ մարդուն թեվ ու թափ է տալիս, ստիպում մոռանալ իր հանգիստը, մտածել վտվտ մասին, պայքարել գալիքին դիմավորելու։ «Յեթե մարդս միանգամայն դուրկ լիներ այդ կերպ յերազելու ընդունակությունից,—գրում է ռուս խորամիտ քննադատ Պիսարեվը,—յեթե նա չկարողանար մերթընդմերթ առաջ վազել և իր յերևակայությամբ մտահայել ամբողջացած և ավարտված պատկերի մեջ հենց այն ստեղծագործությունը, որ նոր միայն սկսում է կազմավորվել իր ձեռքերի տակ,—այն ժամանակ, յես վճռականորեն չեմ կարողանում յերևակայել, թե ինչ ղրդիչ պատճառ կարող եր ստիպել մարդուն նախաձեռնել և մինչև վերջը հասցնել լայնածավալ ու հոգնեցուցիչ աշխատանքները՝ պրկիատիկ, գիտության և գործնական կյանքի բնագավառում»*)։

Յերևակայությունը մեզ հնարավորություն է տալիս մտածել, ընդհանրացումներ կատարել, ընդգրկել իրերի ու առարկաների փոխհարաբերությունները, կոնկրետից գնալ դեպի վերացականը։ «Ամենահասարակ ընդհանրացման մեջ,—գրում է ընկ. Լենինը,—ամենատարրական ընդհանուր դաղափարի մեջ,

*) Ծիտատը վերցված է ընկեր Լենինի «Ինչ անել» գրքից, գլուխ V, § բ, վերջին հատվածից, Պետհրատ 1939 թ։

կա փաստագիայի մի կտորիկ» (Ленин, «Философские тетради», стр. 336):

Ցեվ ընդհակառակը, նույն այդ յերևակայությունն ստեղծում է բոլոր հնարավորությունները, ամենաընդհանուր գաղափարներն անգամ կոնկրետացնել, մարմնացնել, ոգնում է մեզ պատկերացնել այն, ինչ մոր չեյինք կարող մոչ մի դեպքում, յեթե մեր փանտազիայի ուժը չլիներ։

Մարդը բնության մի հյուլեն է միայն, մորն իր «յերկաը խելքով» (Հ. Թումանյան), իր անհուն ու անսահման յերևակայությամբ կարող է պատկերացնել տիեզերքի բազմամիլիոն պատմությունը, նրա փոփոխությունները ու զարգացումը, նրա զարմանահրաշ բազմաթիվ արտահայտությունները։ Ամանց յերևակայության, մորն իր մեջ ունի «անհուն հնարավորություններ» (Հեգել), բնության բազմաթիվ որևնքների ուսումնասիրությունն ու նրանց շոշափելի պատկերացումն անհնար կլիներ։ Ամանց յերևակայության չեր լինի և ապագայի վառ ու ցայտուն պատկերացում։ Այսինքն մենք՝ բնության անհրաժեշտությունների հանդեպ կույր կլինեյինք, չեյինք հասկանա այն գալիքը, մորը բղխում է դեպքերի իրական ընթացքից, հետևաբար և չեյինք ունենա ակտիվ մասնակցություն՝ աշխարհը փոխելու գործում։

Ընկեր Լենինը յուր «Ի՞նչ անել» գրքում գիտելով Պիսարեվի հոյակապ ու ապագիչ բնորոշումը՝ յերևակայության, յերազանքի մասին, ընդգծում է առողջ յերևակայության հսկայական դերը բանվորական շարժման մեջ։

Յերևակայությունը մեզանից յուրաքանչյուրին տալիս է յերազանքի սքանչելի վայրկյաններ։ Ամեն մարդ յուր սրտի խորքում ունենում է մորոշ նպատակներ, նա ապրում է այդ նպատակներով, փայփայում նրանց, խոկ յերբեմն էլ նայելով կապույտ յերկնքին, բարձր սարերին, լսելով ալիքների ձայնը, ունկընդիր լինելով անտառների շաչյունին, սկսում է յերազել և անուրջների աշխարհում ահռելի յուր նպատակը, յուր ոդային ամրոցները իրականացված։ Անցնում են տարիներ, ոդային ամրոցները գառնում են յերկաթ-բետոնային իրական ամրոցներ, բայց մարդն էլի չի դադարում խորհրդելուց, յերազելուց, վոր կեշտեթա պատկերները կատուցելուց։ Շատ քիչ բան միայն կարող

և համեմատվել այն մեծ հաճույքի հետ, որ ստանում է մեզանից յուրաքանչյուրը յերազանքի հրաշալի վայրկյաններում: Շատ լավ և ասել մեծ պոետ Լերմոնտովը՝

Люблю мечты моей созданье
С глазами полными лазурного огня,
С улыбкой розовой, как молодого дня
За рощей первое сиянье.
Так царства дивного всесильный господин—
Я долгие часы просиживал один
И память их жива по ныне...

Խոսելով յերևակայության մասին, շեշտելով նրա նշանակությունը մարդկային կյանքում, անմիջապես պիտի ավելացնենք, որ խոսքը՝ առողջ, իրականության հետ կապված, իրականությունից չկտրված ֆանտազիայի մասին է:

Ինքը յերևակայությունը մի միապաղաղ ֆունկցիա չէ այլ ունի իր արտահայտության բավականին տարբեր ձևերը: Սովորաբար յերևակայությունը բաժանում են յերկու տեսակների՝ վերարտադրական, ստեղծագործական և անպտուղ:

ՎԵՐԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Վերարտադրական (ռեպրոդուկտիվ) յերևակայությունը շատ նման է հիշողությանը, թե՛ հիշողությունը և թե՛ յերևակայությունը հիմնվում են մեր ուղեղում կուտակված նախկին ըմբռնումներից քաշած մատպատկերի վրա: Բայց դրանից, հիշողության և յերևակայության միջոցով մենք ավելի կամ պակաս ճշմարտությամբ վերարտադրում ենք կյանքն այնպես, ինչպես կա, առանց մտքի բան ավելացնելու նրա վրա: Չնայած այս ընդհանուր գծերին, վերարտադրական յերևակայությունը պետք է տարբերել հիշողությունից. յեթե հիշողության շնորհիվ մենք վերարտադրում ենք մեր տեսածը, ըմբռնածը, ապա պատկերացնում ենք այն, ապա յերևակայության շնորհիվ մենք վառ պատկերացնում ենք այն, ինչ մոր իրոք այդպիսին մենք չենք տեսել, բայց մտքի պատկերացման համար մեր հիշողության մեջ ունենք բավականին տվյալներ: Մեզ մնում է միայն այդ տվյալները

կոմբինացիայի չենթարկել, ջոկել, ընտրել հարկավորները, վորպեսզի առաջացնենք հետ ապատասխան վերարտադրական կերևակայություն։

Որինակ, անապատ պատկերացնելու համար կարիք չկա անպայման լինել անապատում։ Ճիշտ է, դուցե մենք անձնապես չենք տեսել այդ իրական անապատը, բայց նրա մասին լսել ենք, կարդացել, սովորել, հիմա մենք տեսնել, այսինքն ունենք ըոլոր տվյալները պատկերացնելու համար մեր կողմից անմիջականորեն չդիտված անապատը։ Նա, ով անապատը տեսել է, կարող է հիշել այդ մասին, իսկ նա՝ ով չի տեսել, բայց պատկերացնում է, ապա ուրեմն նա այդ պատկերացնում է վերարտադրական կերևակայության միջոցով։

Այսպիսով վերարտադրական կերևակայությունն առաջանում է մատպատկերների ջոկման, ընտրության ու նրանց կոմբինացիաների չենթարկելու ճանապարհով։

Բայց այս հիմնական առանձնահատկություններից, վերարտադրական կերևակայությունը հիշողությունից տարբերվում է հետևյալ դեպքով։

Վերարտադրական կերևակայությունն իրար մատնցնում է ամենահեռավոր մատպատկերները, փոխում է նրանց վերնիպիսի կենտրոնում ընկած դասավորման կարգը և նրանցից կառուցում է բոլորովին նոր պատկերներ։

Ինչպես արդեն տեսանք, հիշել նշանակում է պատկերացնել այն, ինչ վոր մի ժամանակ մեր կողմից ընտրված և ցեղելությամբ հիշողության ճանաչվում է, այսինքն մեզ համար վերնուշ և պատում միայն այն ժամանակ, երբ նա կապված է վորոշ ժամանակի և տարածության հետ, այնինչ վերարտադրական կերևակայությունը տեղայնացման կենտրոնում չի, այսինքն նա չի կապվում կոնկրետ ժամանակի և տարածության հետ։ Գիտը և ընդգծել նաև կերևակայական պատկերների ավելի լավ, արագ փոփոխվող և շարժուն լինելու հանգամանքը, մինչդեռ հիշողական պատկերները բավականին մրափատող են, վորոշ չափով ընդհանուր և մասամբ տատանվող։ Որինակ, տեսնք նույն իսկ մեր սիրելի մայրիկին հիշելիս մենք նրան պատկերացնում ենք ընդհանուր, ընտրյալ կողմերով և մի քիչ էլ մշուշապատ։

Պետք է նշել նաև յերեվակայությունը հիշողությունից տարբերող մի այլ հանգամանք։ Սովորաբար ասում են, թե հիշելիս մեր մարմինը անհանգիստ, շարժուն դրության մեջ է լինում, մինչդեռ յերեվակայությունը պահանջում է հանգիստ, կենտրոնացած հայացք, մի կետի ընվեռած վիճակ։ Շատ դեղեցիկ է ասել բանաստեղծներից մեկը նկարչի մասին՝

Ակնապիշ, անձայն, խորհուրդը ճակատիդ,
Պատանի ձեր ես մաքով մոլորված...

Մեծ է վերարտադրական յերեվակայության նշանակությունը մարդու կյանքում, սակայն նրա մարդը չեր կարող ունենալ մտքի թռիչք, պարփակված կլիներ կոնկրետ առարկաների շրջանակում, չեր կարողանա վերանալ կոնկրետից դեպի աբստրակտը, այսինքն չեր կարողանա մտածել։ Ընկեր Լենինը գտնում է, վոր ամենահատարակ ընդհանրացման մեջ անգամ կա յերեվակայության մի մասնիկ։ Պարզ է, վոր առանց յերեվակայության անհնարին կլիներ մարեն բան սովորել։

Որինակ, մարդն առանց վերարտադրական յերեվակայության քարտեզից վոչինչ հասկանալ չեր կարող, դրա շնորհիվ է, վոր մենք քարտեզի վոքրիկ գծերն ու կետերը պատկերացնում ենք իբրև վիթխարի լեռներ, գետեր և բազմամարդ քաղաքներ։

Գանի վոր վերարտադրական յերեվակայությանն իր նյութը վերցնում է իրականությունից, ապա հասկանալի է, թե այդ ֆունկցիայի համար վորքան մեծ նշանակություն ունի մեր ուղեղի՝ զգայարգման կատարելությունները, այսինքն փորձով հարստանալը։ Կարելի է առանց այլևայլության ասել, վոր վերարտադրական յերեվակայության ճոխությունը կախված է փորձի հարստությունից։

ԴԱՏԱՐԿ ՑԵՎ ԱՆՊՏՈՒՂ ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Դատարկ կամ անպտուղ է կոչվում այն գիտակցությունը, վոր ի մեջ իրականությունը պատկերացված է իլյուզիոնար՝ պլեի վրա շուռ ված կերպով։ Յերեվակայությունը դառնում է դատարկ և անպտուղ այն ժամանակ, յերբ յերեվակայության և իրականության մեջ վոչ մի կապ չկա, յերբ մարդը չի հավատում իր յերազին, յերբ մարդը համհամատության չի գնում իր նվաճերն ու յերազները իրականության հետ, յերբ նա չի պայ-

քաղում իր ոգային ամբոցներն իրական գործնելու համար, յերբ յերևակայությունը վոչ թե բղխում և իրերի զարգացմանն ընթացքից, այլ ընդհակառակը, շեղվում և նրանից։ Դատարկ կամ անպատում յերևակայության շարքին պետք է դասել նաև զանազան կրոնական հավատալիքները, նախապաշարումները, առասպելները և այլն։

Դատարկ յերևակայությունը իր մատերիալը վերցնում է իրականությունից, նա կյանքից բոլորովին կտրված չէ. այդ այդպես է, բայց նրա մեջ իրականությունը թարմված է, աղավաղված։ Որինակ, առասպելները՝ յոթը գլխանի վիշապի մասին, վորոնց բերանից իբր թե կրակ է դուրս գալիս։ Հասկանալի է, վոր յոթը թվաբանական իրական հասկացողություն է, դա ասելով մեր ժողովուրդը հասկանում է չարասիրտ, նախանձոտ մարդ, կրակ իրական, նյութական պայման է և այլն։ Սակայն քանի այն է, վոր այս իրական հասկացողություններն աղավաղված են, անբնական դարձնելու չափ ուռճացված։

Ինչ խոսք, վոր դատարկ ֆանտազիան շատ վնասակար է մարդկանց համար։ Մենք պետք է դաստիարակենք այնպիսի մարդիկ, վորոնք մեր խնդիրների մասին՝ սոցիալիստական շինարարության հաղթանակի մասին կարողանան յերազել և ամեն կերպ, խելոք ու համարձակ պայքարեն այդ յերազները գործի վերածելու համար։

✓ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՑԵՐԵՎԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործական յերևակայության առանձնահատկությունն այն է, վոր նա կյանքում յեղած յերևույթների սոսկական կրկնությունը չէ։ Ստեղծագործական յերևակայության միջոցով մենք վոչ միայն վերարտադրում ենք իրականությունն այնպես, ինչպես վոր կա, այլ մի վորոշ նորություն ենք մտցնում կյանքի մասին մեր ունեցած հասկացողության մեջ։ Այդ նոր խոսքը կարելի չէ ասել վոչ միայն գեղարվեստական ստեղծագործության ընթացքում, այլ և գիտության նորերի, տեխնիկայի և մարդկային գործունեության բազմաթիվ այլ ասպարեզների մասին։ Կարելի չէ ասել, վոր այն ամենը, ինչ մարդկությունն ստեղծել և հաղարամյոր տարիների ընթացքում, ստեղծվել և ստեղծագործական յերևակայության անմիջական մասնակցությամբ։

Խոշորագույն հոգեբան Ռիբոն ստեղծագործական յուրահատկության մասին գրում է հետևյալը. «Յուրաքանչյուր գյուտարարություն, լինի դա մեծ կամ փոքր, նախքան գործնականում կենսագործվելը, նախապես պատկերացվում է յուրահատկության միջոցով, այսինքն այն համախմբումների և փոխհարաբերությունների կառուցումով, որոնք մենք կատարում ենք մեր ուղեղում»։ Հայտնի չէ, թե գյուտերի հակասական մեծամասնությունը ում կողմից և արված, մոլորվելու պահպանվել են միայն մի քանի մեծ գյուտարարների անունները, չնայած դրան, յուրահատկության արդյունքները, այսինքն կատարված գյուտերը միշտ մնում են, կան—ում միջոցով էլ առաջացած լինեն դրանք՝ առանձին անհատների, թե կոլեկտիվ միջոցով։ Մեզ շրջապատող, մարդու ձեռքով ստեղծված բոլոր առարկաները էլ, առանց բացառության, սկսած ամենահասարակից ու պարզից, հանդիսանում են այսպես ասած «բյուրեղացած յուրահատկություն»։

Ճիշտ է նկատում Վիգոդսկին, երբ ընդգծում է այն հանգամանքը, որ ճիշտ չէ ստեղծագործողներ համարել միայն այն մարդկանց, որոնք հայտնի են պատմության մեջ իբրև մեծ գիտնականներ, գյուտարարներ կամ գեղարվեստական յուրի ստեղծողներ։ Այդ տաղանդների ու հանճարների հայտնագործություններն ու ստեղծագործությունները նախապատրաստվել են ժողովրդի կողմից, ժողովրդի ծոցից դուրս եկած բազմաթիվ անհայտ գյուտարարների ու տաղանդների կողմից, որոնք մասնավոր սոցիալական և հատկապես կապիտալիստական հասարակարգում խեղդվում էին, ճնշվում, ոչնչանում։ Սոցիալիզմը հնարավորություն տվեց այդ ժողովրդի մեջից դուրս եկած տաղանդներին լայն կերպով զարգանալու, իրենց հայտնաբերելու։ Այսպիսով պետք է խիստ բացասաբար մոտենալ բուրժուական գիտնականների այն պնդումին, որ, իբր թե, ստեղծագործությունը հատուկ է միայն որոշ մարդկանց՝ ընտրյալներին։

Ի հարկե սրանով մենք չենք ուզում ասել, որ անհատական ընդունակությունները, տաղանդը, հանճարը գոյություն չունեն։ Ինչ խոսք, որ ամեն մարդ չի կարող դառնալ Պուշկին, Լերմոնտով, Գյոթե, Թումանյան։

Հենց բանն էլ այն է, որ սոցիալիզմն ստեղծելով բոլոր հնարավորությունները ժողովրդական տաղանդների զարգացման,

անհատական ընդունակությունների ծաղկման, բարդավաճման համար, մեր յերկիրը դարձնում է հերոսների և տաղանդների յերկիր:

Դավիթ Այատարխը, վորը հոգեմտավոր ջանքերի Բրյուսելի միջազգային կոնկուրսում, պատասխանելով բուրժուական ժուռնալիստների այն հարցին, թե ինչով պիտք է բացատրել խորհրդային ջութակահարների մեծ հաջողությունը, ասում է. «Մորդրդային արվեստի ներկայացուցիչների, դաշնակահարների և ջութակահարների հաջողության պատճառն ամենից առաջ մեր յերկրի սոցիալիստական կառուցվածքի մեջ է: Ձեվ իսկապես,—շարունակում է նա,—վերցնենք մեր պատանի լաուրեատների արտիստական ուղին: Բուսյա Գոլդշտեյնի, Միշա Ֆիխտենգոլցի, Լիզա Փիլտսի և մեր յերկրի հարյուրավոր ու հազարավոր յերիտասարդ դաշնակահարների, ջութակահարների ու յերգիչների ուղին: Կապիտալիստական յերկրներում դեկավարվելով առևտրական հաշիվներով, կկործանեին Բուսյա Գոլդշտեյնի տաղանդը, չհամաձևլով նրա յերաժշտական ընդունակությունների զարգացման մասին: Մեր յերկրում Բուսյան շրջապատված է իր պետության հոգատարությամբ ու խնամքով: Նա ապահովված է իր ստեղծագործական զարգացման համար անհրաժեշտ բոլոր նյութական և բարոյական պայմաններով: Այսպիսի պայմաններում են դաստիարակվել բոլոր մնացած լաուրեատները: Կարելի յե համարձակ պնդել,—ասում է Այատարխը,—վոր մեզ դաստիարակել ու մշակել է ամբողջ յերկիրը: Այն պայմանները, վորոնց մեջ մենք ենք ապրում, հետևանք է աշխարհիս միակ արդարացի սոցիալական կարգի, վորն ստեղծված է մեր յերկրում խորհրդային ժողովրդի կողմից»:

Յերեվակայության տիպերը յերեքն են՝ տեսողական, լսողական և շարժողական: Սովորական մարդու յերեվակայական տիպը, ինչպես և մարդու հիշողական տիպեր շատ հազվադեպ յերեվույթներ են, կյանքում կան մեծ մասամբ խառը տիպեր: Հոգեբան Ջեմսն իր «Հոգեբանություն» աշխատության մեջ բերում է տեսողական և լսողական տիպերին պատկանող յերկու դրամատուրգների օրինակը: Նրանցից մեկը պատմում է, վոր պիեսներ գրելիս նրան թվում է, թե ինքը վորպես հանդիսատես նստած է մեջտեղի կարգերում և կարծես թե տեսնում է

յուր դրամատուրքը պատկանում է տնտեսական յարեվակայական տիպին։ Մյուս դրամատուրքը պիեսը գրելիս կարծեք թե իր լսողական յարեվակայութիւնը լսում է դերասաններին։

Բեթհովենի մասին գրում են, որ նա իր վերջին աշխատութիւնների մեծ մասը ստեղծագործել է նվագելով լարեր չունեցող դաշնամուրի կլավիշների վրա։ Շարժողական տիպի յարեվակայութիւն ունեցող մարդիկ կարծես թե իրենց մկանային զգայութիւնը կենդանացնում են իրենց յարեվակայական պատկերները։

Է ԴԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի՞նչ է իրենից ներկայացնում դեկարվեստական ստեղծագործութիւնը։ Արդյոք դա ստոնարյուն, զուտ բանականութիւնը ու հաշիվ ստաշնորդվող մի աշխատանք է, որ կարող է կատարել յուրաքանչյուրը։ Դեկարվեստական ստեղծագործութիւնը պահանջում է արդյոք հոգեկան վորոշ հատկութիւններ, որ ամեն մարդ չունի։ Ստեղծագործական պրոցեսի մասնակիցները միայն մտածութիւնն ու կամքն են, թե՞ այստեղ մեծ դեր է խաղում նաև ավյունը, սիրտը, զգացմունքները։ Մասնակցում է արդյոք ստեղծագործութիւնը մեզ համար ստեղծված ներշնչում կոչված յարեվույթը։

Այս հարցը, հին, դեռևս վոչ լիովին չափով լուծված է խիստ հետաքրքիր հարց է։ Տարբեր գիտնականներ, արվեստագետները այս խնդիրը տարբեր կերպ են լուծում։

Գիտնականների և արվեստագետների մի մասը գտնում է, որ բոլոր մարդիկ էլ ունեն հավասար ունակութիւններ։ Ցեթե այդ մարդկանցից յուրաքանչյուրը համապատասխանութիւնը զարգացնի յուր ունակութիւնները, նա ստեղծագործել կարողանա այն ասպարեզում, որը կցանկանա։ Այս տեսակետի ներկայացուցիչներից մեկն է իտալական հայտնի արտիստ Գուստավո Սալվինին (աշխարհահռչակ արտիստ Թոմազո Սալվինիի որդին), որը պնդում էր, որ ամեն մի պատահական մարդ կարող է մեծ արտիստ դառնալ, յեթե նա համապատասխան աշխատի իր վրա։ Ինչպես ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանն է

պատմում, Դուսաուլո Սալվինին հատատում էր, որ արտիստի իսկական վարպետությունը կայանում է ոչ թե ներքին զբաղվածականության, ոգեշնչման և զգայունության մեջ, այլ դերի բանական, մաթեմատիկորեն ճշգրիտ աշակման մեջ։

Վորոշ գիտնականներ ու արվեստագետներ էլ գտնում են, որ ինքը՝ ստեղծագործական պրոցեսը արտահայտվում է համոզիչ խիստ զրգռվածությամբ, ինքնամոռացման հասնող բուռն վոգևորությամբ, վորի շնորհիվ ինչ վոր ներքին անգիտակից թևաթափությունով, հանկարծ միանգն աշխատում և պայծառ կերպով և, անկախ ստեղծագործողի բանական ուժերի մոբիլիզացիայից, գյուտը կամ յերկը կատարվում է, զրվում և ինքնըստինքյան։

Հայտնի չի, վոր Ֆաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանին» գրել է մի շնչով։ Աբովյանի մեջ համոզիտնալ զրգռվածությունն այն աստիճանի չի հասել, վոր շարունակել և անհանգստացնել նրա որգանիզմը՝ նույնիսկ քնած ժամանակ և տանեցիներին տեղիք է տվել մտածելու, վոր Աբովյանը խելագարվել է (տես «Վերք Հայաստանիի»-ի առաջաբանը)։ Հռչակավոր պարուհի Այսիդորա Դունկանն իր մասին ասել է. «Նախ քան բեմ բարձրանալը, յես իմ հոգու մեջ պետք է ինչ վոր մի մոտոր գտնեմ։ Նա ներսում կսկսի աշխատել, յես այն ժամանակ վոտներս ու ձեռներս, մարմինս իրենք իրենց, անկախ իմ կամքից, կսկսեն շարժվել»։

Ի միջի այլոց ասենք, վոր հին ժամանակներում, արևելյան ժողովուրդներից շատ շատերը մեծ պատկառանքով են մոտեցել բանաստեղծներին ու աշուղներին, նրանց համարելով հատուկ մարդիկ, անշնջ հուրով լեցուն։

Մի կողմ նետելով կրոնական իդեալիստական տեսությունները՝ «աստվածային ներշնչման», հանճարի ու տաղանդի «ի վերուստ» տրված լինելու մասին, մենք չենք կարող բոլորովին ժխտել տաղանդի ու ներշնչման դերն ստեղծագործության մեջ, այսինքն՝ չենք կարող վաննայի կեղտոտ ջրի հետ միասին դեն շպրտել և յերեխային։

Ամենից առաջ՝ ինչ պետք է հասկանալ գեղարվեստական ներշնչում ասելով։ Այս հարցում պետք է ամբողջովին համաձայնվել ներշնչման հեգելյան բնորոշման հետ։ Ըստ Հեգելի՝

ներշնչման վիճակում գտնվող անձնավորությունն այնքան է տարվում յուր առարկայով, վոր չի հանգստանում, մինչև նրան չի տալիս համապատասխան գեղարվեստական ձեվավորում՝ մինչև վերջը հասցնելով այն գեղարվեստական կատարելության:

Սաանխալավակին ներշնչման հարցում համարյա նույն կարծիքին է. «Շարունակելով իմ դիտողությունները ինձ վրա և ուրիշների վրա,—գրում է Սաանխալավակին,—կա խմացա (այսինքն զգացի), վոր ստեղծագործությունն ամենից առաջ հոգեկան և մարմնական ամբողջ բնության լրիվ կենտրոնացումն է (ընդգծումը Սաանխալավակունն է—Մ. Մ.): Նա յուր կողմն է քաշում վոչ միայն տեսողությունն ու լսողությունը, այլև մարդու բոլոր հինգ զգայարանները: Բացի դրանից, նա հավաքագրում է նաև մարմինը—և՛ միտքը, և՛ խելքը, և՛ զգացմունքը, և՛ հիշողությունը, և՛ յերևակայությունը» (Станиславский, «Моя жизнь в искусстве», стр. 536):

Այսպիսով, ներշնչվել հենց այնպես չի կարելի: Ներշնչվելու համար հարկավոր է, վոր ստեղծագործողն ունենա ներշնչման օբյեկտ: Նա յուր ներշնչման օբյեկտը վերցնում է կյանքից, կենսական յերևույթների մանրակրկիտ ուսումնասիրության, ընդհանրացումների տիպականության արտահայտման ձեվերի տեխնիկական կատարելագործման ճանապարհով:

«... Ներշնչումը չի կարելի... առաջացնել միայն ստեղծագործելու հոգեկան ձգտումով:—Գրում է Հեգելը,—Նա ով վորոշում է ներշնչվել... վաղորոք չունենալով իր մեջ ներշնչման հովանոցակալությունն և միայն հիմա յե սկսում դես ու դեն ընկնել մի ինչ վոր բովանդակություն ճարելու համար, այդպիսին, ինչպիսի տաղանդ էլ վոր ունենա, այնուամենայնիվ ի վիճակի չի լինի... ստեղծել արվեստի կատարելագործված արտադրանք» (Гегель, Собр. соч. т. XII, стр. 295):

Այսպիսով՝ ներշնչումը չի գալիս ինչ վոր պատահական դարձումներից: Ներշնչման համար հարկավոր է վորոշ, խորը կերպով ուսումնասիրված ու ստեղծագործողի սրտին մոտ օբյեկտ: Նախքան ներշնչման միջոցով գեղարվեստական ձեվավորում առնելը, մարմնավորվելը, այդ օբյեկտը պետք է մանրակրկիտ ուսումնասիրության յենթարկվի բանականության կողմից, խորը կերպով գիտակցվի և ապա միայն այդ գիտակ-

ցուքյունն առաջացնի հարատառութքյուն հեղինակի հոգու մեջ, սառնա համոզիունալ գունավորում և պոեմի ստեղծագործութքյան ժամերին։ Զգացմունքը, ներքին ապրումները մեծ չափով պետք է ոգնեն բանաստեղծությանը միտքը գեղարվեստականորեն արտահայտելու համար։

Ներշնչման պրոցեսը բավականին մանրակրկիտ ուսումնասիրված է ֆիզիոլոգների կողմից։ Միտիոլոգներն ապացուցել են, որ գեղարվեստական ներշնչման ժամանակ արյան ուժեղ հոսանք և սկսում դեպի ուղեղը (նույնիսկ գլխի քաշն ղգալիորեն ավելանում է), սիրտն ալագ է բաբախում, աչքերը յուրահատուկ փայլ են ստանում, որգանիզմի կենսական ուժերի զսպանակ՝ ներքին սեկրեցիայի գեղձերը գործում են մեծ աշխուժութքյամբ, որի շնորհիվ ուղեղի գրգռվածութքյունը հասնում է բարձր աստիճանի։ Հայտնի է նաև, որ մի շարք առեղծգործողները աշխատել են արհեստական կերպով առաջացնել ներշնչման պրոցեսը։ Վոլտերը՝ վոտները սառը ջրի մեջ դնելով արյան ուժեղ հոսանք էր առեղծում դեպի ուղեղը, Ռուսսոն ոծխված, մերկ գլխով էր մոն գալիս արեվի տակ, վորպեսզի «արյունը գլխին խփի», վոմանք էլ (որինակ Ջեկ Լոնդոնը) դիմում էին ալկոհոլի կամ կոֆեյի ոգնութքյանը և այլն։ Պարզ է, որ հին գրողները, կյանքից վոգևորվելու վոչինչ չստանալով և սպասելու հնարավորութքյուն էլ չունենալով (ապրել էր հարկավոր), աշխատում էին արհեստականորեն առաջացնել այն, ինչ վոր կյանքը նրանց չէր տալիս։ Սրանով պետք է բացատրել հաճախ իրենց կամքից անկախ «ներշնչում առաջացնելու» այն տարօրինակ միջոցները, վորին դիմում էին վոչ միայն վերոհիշյալ, այլև ուրիշ շատ արվեստագետներ և գիտնականներ։

Միաժամանակ պետք է ասել, որ գեղարվեստական ներշնչումը ամեն մեկին հատուկ չէ. դրա համար հարկավոր է ունենալ վորոշ տաղանդ։ «Աբվեսը պահանջում է ապեցիֆիկ (ընդգծումն Հեգելինն է—Մ. Մ.) նախապրյալներ և հակումներ, վորոնց մեջ եյական տ'ոմաննտը հանդիսանում է նաև առանձնահատուկ բնական ոժտվածութքյունը» (Հեգել)։

Վերևում մենք բերելով Ոյատլախի խոսքերը, նշեցինք, որ բնական ոժտվածութքյունը դեռ տաղանդ չէ, այլ միայն նախադրյալ։ Այդ նախադրյալը զարգանում, կատարելագործվում

կամ վոչնչանում և սոցիալական կյանքում, մի ջամայրի հետևանքով։

Բերև մեր այս յինդիանների յեզրափակում Ստանիսլավսկու «Իմ կյանքն արվեստի մեջ» գրքից բերենք մի հատված։

«Մինչև այժմ բավականաչափ տարածված և հնադույն կարծիքն այն մասին, որ բեմի վրա գանվող դերասանին հարկավոր և միայն տաղանդ և ներշնչում... Փորձեցեք ասել այդպիսի կարծիք ունեցող արտիստներին, որ փչ են տեղյակ իրենց արվեստին, որ դուք ընդունում եք տեխնիկան, և նրանք արհամարհանքով կկսեն բղավել. «Ընշանակում և դուք հերքում եք տաղանդը, ավյունը»։

Բայց կա և այլ կարծիք, որը շատ և տարածված մեր արվեստի մեջ՝ այն, որ ամենից առաջ հարկավոր և տեխնիկա, իսկ ինչ վերաբերում և տաղանդին, ապա նա չի խանգարի։ Այս տեսակի արտիստները լսելով ձեր խոստովանությունը տեխնիկայի մասին, առաջին րոպեին կկսեն ձեզ ծափահարել, բայց յերբ դուք կփորձեք նրանց ասել, որ տեխնիկան տեխնիկա յե, բայց ամենից առաջ, այնուամենայնիվ, հարկավոր և տաղանդ, ներշնչում, դերպիտակցություն, ապրումներ, որ նրանց համար և գոյություն ունի տեխնիկան, որ նա դիտակից կերպով ծառայում և գերպիտակցական ստեղծագործությունը պրպտելուն, նրանք տարտափ կենթարկվին ձեր խոսքերից. «Ապրումները,—կբղավին նրանք,—հնացած են»։

Նրա համար չէ արդյոք, որ այդ մարդիկ այդպես վախենում են կենդանի զգացմունքներից, բեմի վրա ունեցած ապրումներից, վորովհետև իրենք չեն կարողանում թատրոնում վեչ զգալ և վեչ էլ ապրել... վորքան շատ տաղանդ, այնքան ավելի շատ տեխնիկա ու վերամշակում և պահանջում նա»։*)

Ստանիսլավսկին սրվեստի մեջ ամենավճռականը դերը հատկացնում և նաև ներշնչմանը։ «Առանց ներշնչման՝ նույնիսկ ամենակատարելագործված ներքին տեխնիկան և ամենահրաշալի ներքին ավյալները՝ անուժ են»։

Ժամանակակից խորհրդային թատրոնի ամենախոշոր ուժերից մեկը՝ ժողովրդական արտիստ Վախթանգովի աշակերտներից մեկը՝ ժողովրդական արտիստ Վասիլի Փափազյանը, վորի արտիստական տաղանդը գարգացել և ծավրուցայի բեմի ամենատաղանդավոր դերասանների ազդեցությունների տակ, ասում և հետևյալը։

*) К. С. Станиславский, «Моя жизнь в искусстве», стр. 712-713 Академия 1923

թյան տակ, յուր «В театрах мира» ինքնակենսագրական աշխատասիրությունի մեջ նշելով այն հակայական մանրակրկիտ ու գիտահետազոտական աշխատանքը, որը նա տարել է շեքսպիրյան տիպերը կերտելու ասպարիզում, առանձնապես ընդգծում և նկարագրման վճռական նշանակությունը, նույնիսկ այն դեպքերում, որը նա խաղում է յերկու հազարից ավելի անգամ, գրում է հետևյալը. «Ոթելլոյի որբազը յես տեսնում եմ ու շոշափում այնքան ցայտուն ու վորոշակի, վոր ուղղակի ֆիզիկապես զգում եմ նրա հպումը և շնչառությունը, իսկ իմ նկարչին ըղգայնությամբ նույնիսկ լսում եմ նրա ձայնը»։ «... Ցեզ հակայական, յերեք-յերեք ու կես մետր յերկարությամբ թուիչքով յես հարձակվում եմ քնքուշ յերեխայի (Դեզդեմոնայի—Մ. Մ.) վրա ու բարձրացնելով նրան բմբուլի նման (ինձ հաճախ պատահել է վերցնել իրրև իսկական բմբուլ բավականին սոլիդ քաշ ունեցող Դեզդեմոնաներին, վորոնց փորձի ժամանակ յես դժվարությամբ կարողանում էի միայն թեթևավոր բարձրացնել) ձգում եմ պղծված անկողնու վրա, ինչպես ինձ է թվում, և խեղդում եմ նրան իմ ձեռքով, միաժամանակ ծածկելով նրան արցունքներով ու համբույրներով»։

Վերոհիշյալ որինակները մեջ բերինք միայն դերասանի ստեղծագործությունները։ Ապացուցելու համար վերևում նըշված հիմնական սկզբունքը, նույնպիսի բազմաթիվ որինակներ կարելի յե բերել և՛ գրականությունից, և՛ կերպարվեստից, և՛ յերաժշտագետներից։

Գեղարվեստական ստեղծագործությունը կյանքի որբազային արտացոլումն է։ Դեղարվեստագետը վոչ միայն պետք է ունենա տաղանդ, այլև շարունակ պետք է կատարելագործի յուր տեխնիկան, պետք է կարող նա մանրակրկիտ կերպով զննել, դիտել իրականությունն ու գեղարվեստական ընդհանրացումներ կատարել։ Նա պետք է իր ուղեղում մշակվածը գեղարվեստականորեն կերտի՝ նկարչական, գերգիտակցական ճանապարհով։

ՑԵՐԵՎԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ցերեվակայական պատկերների կառուցումը կարող է կատարվել կամ ակտիվ, կամ պասսիվ ձևով։

Պասսիվ յերեվակայությունն առաջանում է անկախ մեր ցանկությունից ու կամքից։ Այս դեպքում յերեվակայության պատճառ կարող է հանդիսանալ արտաքին աշխարհի վորևե մի ազդակ, վորևե միտք, հուշ։

Որինակ՝ նայելով սլացող ոդանավին, ակամայից քեզ պատկերացնում ես ոդում, ամպերից էլ վերեվ սավառնակի մեջ ճախրելիս և քո մտքով, քո յերեվակայության ուժությամբ ձիլ դիտես, ձեր ես արշավում։

Կամ՝ բավական է նայել գեղեցիկ ամպերին, վորպեսզի քո մեջ առաջանա յերեվակայական բազմազան ու հրաշագեղ պատկերներ։

Լավագույն գեղարվեստական յերկը, գեղեցիկ նկարը, հատկապես յերաժշտությունն ունեն կախարդիչ ընդունակություն՝ պահելու մարդկանց առկա սիտուացիայից ու պարուրելու յերեվակայության, յերազների աշխարհում (որինակ՝ Շուման «Անրջանքները»)։

Ակտիվ յերեվակայության կատեգորիաներն ստեղծվում են մեր գիտակցության թելադրանքով և ստանում համապատասխան բնույթ ու ուղղություն՝ մեր ցանկության համաձայն։

Ակտիվ յերեվակայությունը պահանջում է յերեք պայման։

1. Ձգտել և ստիպել յերեվակայությանը գործելու, չպետք է բռնադատել այն։ Յեթե մենք ուզում ենք մեր յերեվակայական պատկերացումների սառը դիտողը միայն լինել, այդ դեպքում վոչինչ դուրս չի գա։ Այն բոլորը, ինչ վոր մենք ուզում ենք պատկերացնել յերեվակայության միջոցով, պետք է հրավիչ ու հետաքրքիր լինեն մեզ համար։ Մենք պետք է ապրենք մեր յերեվակայությամբ։ Միայն կողմնակի դիտողը դուրս լինելով յերևակայել չի կարելի։

2. Միաժամանակ չի կարելի թուլլատրել, վոր յերեվակայությունն իշխի մեզ վրա և անդեկ ծառացած նավի նման քշի մեզ այնտեղ, վորտեղ ինքը կցանկանա։ «Ձգետք է մոռանալ, վոր յերեվակայությունն իր ոդտակար հատկություններից հետ միասին ունի և բացասական գիծ՝ և՛ պատահականություն, և քմահաճույք» (Հեգել)։

Միայն այն յերեվակայությունն է ընդունելի, վորը յեղնում է իրական փաստերից, այդ փաստերին նայում է վոչ թե

այնպես, ինչպես որ իրեն ցանկալի է տեսնել, այլ այնպես, ինչպես նրանք կան իրականում: Ամենախիզախ փանտազիան անգամ թեվաթափ և լինում, չէրբ կորչում և ռեալականությունից:

3. Այդ չերեվակայությունը պետք և ակտիվ լինի, շարժուն, պրոգրեսիվ, նա չպետք և կապչի չեզածին, այլ պետք և խիզախի և համարձակորեն առաջադրի նոր խնդիրներ, տա նոր, ռեալ հեռանկարներ:

Ակտիվ չերեվակայության ստեղծագործական աշխատանքը կարող և ընթանալ չերեք ճանապարհով.

1. Յերբ մենք ցանկանալով մարևե բան պատկերացնել, ուշնենալով պատկերացման ընդհանուր նպատակ, աշխատում ենք գտնել այն ելեմենտները, վորոնց օգնությամբ մեր ստեղծագործական չերեվակայությունը կկառուցի չոր չինքը:

Որինակ՝ նկարչի առաջ խնդիր և դրված՝ ստեղծել մեծ քանաստեղծ Նիզամիի պորտրեն: Նիզամիից վոչ մի նկար կամ քանդակ չի հասել մեզ. նկարիչն իր չերեվակայությամբ պետք և վերականգնի Նիզամիի դիմագծերը: Այս դեպքում նկարիչն ուսումնասիրում և նրա դարաշրջանը, այդ դարաշրջանից ստացած մարգինոց նկարները, հագուստը, կինցագը, կարդում և իրեն՝ Նիզամիին, նրա մասին չեղած փաստերը, լեգենդները և այդ բոլոր մաթիվ ավյալների բազմատման ճանապարհով ընտրում և նրանցից միայն մի քանիսը, այն, ինչ վոր իր կարծիքով տիպիկական պետք և լինի իրեն՝ Նիզամիի դիմագծի համար:

2. Յերբ չերեվակայական պատկերացման աշխատանքը դուռ չկա, այլ առաջանում և գտնում ստեղծագործական մթանոլորտն ուզղորդումների ճանապարհով: Այս դեպքում գիտնականը հավաքում և բազմաթիվ փաստեր, կոտորում բազմաթիվ դիտողություններ և ստուճաններ, ինդուկտիվ ճանապարհով հասնում ընդհանրացումների, ընդհանուր գաղափարի:

Այս տիպի գիտնական եր ակադեմիկոս Պավլովը, վորն սկզբում բոլորովին ել մտադրություն չուներ զբաղվելու կենդանիների բարձր ներվային համակարգի ուսումնասիրությամբ: Նա սկզբում զբաղվում եր մարսողական գեղձերով, վորոնց ուսումնասիրությունն ստուճանաբար նրան տարավ դեպի ուղիղային որինաչափությունները:

Նպիլեպսիան քնի միջոցով բուժելու մասին յուր վերին նշակավոր դյուտը նա կատարեց աստիճանաբար, բազմաթիվ դիտողություններուն ճանապարհով. նա մինչև մի փաստը առանց անդամ չատուգեր և նման դեպքեր չիուատակեր, ընդհանրացումներ չեր անի։

3. Վարդ մեծ ատենդագործողներին, հատկապես գեղարվեստական վարպետների մոտ էլ գաղափարը և այն մարմնացնող պատկերները միասին են հանդես գալիս։ Այս դեպքում քիչ են ատենդագործական պրպտումները, իր խոհերն ու գաղափարները մարմնավորելու ձգտումները։ Այդպիսի յերկեր ստեղծվում են «մի շնչով», բուռն ոգեվորության ազդեցության տակ։ Նման մի որինակ մենք անցանք հանձինս Մաշտոցի Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի։

Ստանիսլավսկին՝ խոսելով Իրսենի «Դոկտոր Շտոկմանն»-ի դերակատարության մասին յուր կոմսից, գրում է. «Կարդալով պիեսն առաջին անգամ, յես անմիջապես հասկացա այն ու կենդանացրի, թաղացի առաջին իսկ փորձի ժամանակ։ Ըստ յերևույթին ինքը՝ կյանքը ժամանակին հոգացել էր այն մասին, վորպեսզի կատարի բոլոր նախապատրաստական, ստեղծագործական աշխատանքն իմ մեջ և կուտակի համապատասխան հոգևոր մատերիալ, ինչպես և դերին համապատասխան կենդանի զգացումներ»։

Վերջում պետք է հիշատակենք, վոր հնարավոր են անցումներ ակտիվ յերևակայությունից դեպի պասիվը և ընդհակառակը։ Որինակ՝ ուրիշի կոմսից առաջադրված մի խնդիր կարող է ինձ այնպես դերել, վոր պասիվ յերևակայությունը վեր ածվի գիտակցականի, ակտիվի։

ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՊԱԹՈԼՈԳԻԱՆ)

Մարդիկ սովորաբար իրենց յերևակայության բնույթով, արագությամբ, ուժով, ծավալով և ինտենսիվությամբ բավականին տարբերվում են միմյանցից։ Չնայած դրան, այնուամենայնիվ հնարավոր է վորոշ նորմա դնել մարդկային ֆանտազիայի։

Յերևակայության ախտաբանությունը կամ քայքայումն արտահայտվում է հիվանդի ֆանտազիայի անսահման ուժե-

դացումով։ Մտապատկերների վերարտադրումը խիստ վառ ու ռելիեֆ է դառնում։ Ցերեկվա կյանքի պատկերներն արագ են ըստեղծվում ու այնպիսի կենդանություն ստանում, որ հիվանդը հաճախ յուր ֆանտազիաներն ընդունում է իրականության տեղ։

Անչափ ուժեղ յերեկվա կյանքով տառապող վորոշ անձինք տարվելով իրենց ֆանտազիաներով, խաբում են միամիտ մարդկանց, իրենց ներկայացնելով իբրև նշանավոր անձնավորություններ և իրենց դերն այնպես են խաղում, վոր շատ ուշ են բռնվում և հոգեկան հիվանդանոց ուղարկվում։

Սրանից մի քանի տարի առաջ Գերմանիայում տեղի ունեցավ զավեշտական մի դեպք։ Բախտախնդիր մի անձնավորություն, հեշտությամբ ոգտագործելով վերմանական մանր-բուրժուական, միշչանական տարրերի հպատակային զեղումները դեպի պաշտոնատարի կայզերը, իրեն ներկայացնում է իբրև քաջաժառանգ և շարքեներ շարունակ մոլորեցնում է տպավ մեջ չաններին, ժան ածում նրանց քթերից բռնած, ծլծաղելով նրանց մոնարխիստական զգացմունքների վրա։

Պրոֆեսոր Կորսակովը բերում է հետևյալ օրինակը։ Բավականին ունեվոր ընտանիքից մի յերիտասարդ իրեն ձեվացնում է գնացքի կոնդուկտոր, ճանապարհորդում գնացքներով, ամենամանր հաշվարկումներ և կատարում գնացքի տարբեր կայարանների ժամանման ու գնացքների հանդիպման ժամանակը մասին և նույնիսկ յուր հուշատետրում տարտագրում և գնացքի կոնդուկտորի նման։ Գնացքներով յերկար ճանապարհորդություններ կատարելով նա վարժում է իսկական կոնդուկտորի նման և հագնած վիճակում վերադառնում էր տուն։

Վորոշ հոգեկան հիվանդներ էլ, վորոնք իրենց կյանքում յերբեք նկարիչ կամ բանաստեղծ չեն յեղել, ընկնելով հոգեբուժարան, հանկարծ սկսում են տարօրինակ բաներ նկարել կամ գրել բանաստեղծություններ, յերբեմն նույնիսկ հաջող։ Պրոֆ. Լոմբրոզոն իր պրակտիկայից բերում է նմանօրինակ բազմաթիվ փաստեր։ Հետաքրքիր փաստեր է բերում նաև պրոֆեսոր Կորսակովը։

Այսպես կոչված «մեծության մանյան» նույնպես վերաբերում է յերեվակայության ախտաբանությանը, յերբ հիվանդն իրեն պատկերացնում է իբրև տաղանդավոր գրող և հիանում է

իր անմիտ ստեղծագործություններով, կամ իր ագիտությունն ընդունում է իբրև դիտություն։

Հոգեկան հիվանդությունների վորոշ ձևերում էլ պատահում է ընդհակառակը։ Ցերեկակյացու ընդունակությունը կամ թուլանում է, կամ բոլորովին կորչում, վորը տեղի չի ունենում հոգեկան ընդհանուր ուժերի անկման պատճառով։

Ցերեխաների չերեկակայությունը. Ընդհանրապես մանկական հասակը, մինչև զարգացական տարիքը, համարվում է ուժեղ չերեկակայության շրջան։ Ինչպես գեղարվեստագետներից մեկն է նկատում, տարիքի հետ միասին մարդն էլ զրկվում է չերեկակայությունից, դառնում է լուրջ, խոհուն, զուսող, բայց այդ միայն մասամբ կարելի չի ճիշտ համարել։ Մենք արդեն տեսանք, վոր անհնար է պատկերացնել մարդկային պրակտիկան առանց չերեկակայության։ Ինչ վերաբերում է մանկական հասակին, անկասկած է, վոր այդ հասակի անբաժան ուղեկիցը չերեկակայությունն է կազմում, վորը թե իր վորակով և թե իր քանակով տարբերվում է հասակավորի չերեկակայությունից, և կարծիք անհրաժեշտ նախապատրաստական հասակ է կազմում մեծի ստեղծագործական չերեկակայության համար։

Ցերեխայի չերեկակայության հիմքը կազմում է այն անհերքելի ճշմարտությունը, վոր կա իրական հնարավորություններ և իրենց՝ չերեխաների ցանկություններ միջև։ Մեր իրականության մեջ չեք կարող գտնել մի չերեխա, վորն իրեն մանուկ համարի և գոհ լինի իր փոքրահասակ լինելուց։ Սովորաբար չերեխաները լսելով զանազան հնարքներ, հերոսական պատմվածքներ, վոգևորվում են և մեծ ցանկություն ունենում կատարելու նմանօրինակ հերոսություններ։ Ցերեխան մեծ ընդունակություններ, ծագող, աճող ուժերի հակայական պաշար ունի։ Յուրաքանչյուր չերեխա իրեն մեծ հերոս և պատկերացնում՝ Զկալով, Զապայով, Պապանին, իսկ նրա տարիքը, ուժերը, դիտելիքները նրան հնարավորություն չեն տալիս իսկական Զկալով դառնալու, դրա համար էլ նա այդ բանն իրականացնում է առայժմ յուր չերեկակայությամբ միայն։

Ցերեխայի չերեկակայությունը վորակի տեսակետից նշանակալից չափով ագքատ է։ Մենք արդեն տեսանք, վոր չերեկակայության հարստությունը նշանակալից չափով պայմանավոր-

ված և կենսափորձի բազմազան լինելուց, կյանքը դիտելու ու հասկանալու ունակությունից:

Ցերեխայի կենսափորձն աղքատիկ է, շատ հասարակ, պարզ և այդ է պատճառը, որ մանուկն իր յերեվակայության միջոցով հարուստ կառուցումներ կատարել չի կարող: Այդ տեսակետից էլ յերեխաների յերեվակայությունը շատ հետ է մնում մեծերի յերեվակայությունից, քանի որ յերեխայի ապրումները, տպավորությունները ու դիտողությունները շատ քիչ են և հնարավորություն չեն տալիս նրա մտքին մեծ թռիչքներ կատարելու:

Մյուս կողմից էլ պետք է ընդգծել յերեխայի սրամտաբանական մտածողության թույլ զարգացած լինելը, իսկ պատճառականության կապակցությունների տեսակետից՝ շատ հետ մնալը: Յեվ ահա պարզ հասկացողություն չունենալով հնարավորի և անհնարի, իրականի և մտացածինի մասին, յերեխան աշխատում է իր յերեվակայությամբ փոխարինել իր կենսափորձի աղքատությունը: Ցերեխայի յերեվակայությունը կարող է ամեն բան պատկերացնել, ինչպես Գյոթեն է ճիշտ նկատում, «յերեխան ամեն բանից կարող է ամեն ինչ սեղծել»: Նրա յերեվակայության ուժով տիկնիկը կենդանանում է, շնչում, ծիծաղում, հիվանդանում կամ բուժվում: Միևնույն աթոռը նույն յերեխայի համար մերթ իսկական նժույգ է, մերթ գնացք և մերթ էլ բնակարան, իսկ մատյանը լրացնում է յերեվակայությունը: Հայտնի է, թե ինչպես մի քանի 8—10 տարեկան յերեխաներ յերկաթուղու տոմսի համար մի կերպ մի քանի ռուբլի հավաքելով, Մոսկվայից ճանապարհորդել են Իսպանիա, իսպանական ժողովրդի պայքարին սպնելու համար և առաջին իսկ կայարանից հետ են դարձվել միլիցիոներների կողմից: Այդ յերեխաները վոգեվորվել են իսպանական պիոներների օրինակով, մատյանը լրացրել և նրանց յերեվակայությունը: Մեզնից յուրաքանչյուրս մեր մանկության տարիներին վոգեվորությամբ յերեխաները Ջապաևի են խաղում և կամ «արշավանք կազմակերպում» պետի թեմու:

Ցերեխան դեռևս չունի ճշմարտության չափանիշը, այդ պատճառով էլ նրա մոտ իրականն ու յերեվակայականը դեռ չեն տարբերվում, նրա քննադատական միտքը զարգացած չեն,

նա չի կարող ամեն դեպքում յերևակայածը ճշտել իրական-նության միջոցով։ Այստեղից էլ՝ յերեխայի սուտ ասելը։ Յերեխայի սուտ ասելը, յեթե, ի հարկե, պատճառը վախը չէ, հետևանք է նրան, որ նա փորձի պակասը վոչ թե միայն լրացնում է յերևակայությամբ, այլ և իրական բնույթ է տալիս իր ֆանտազիային։ Վեցից-յոթ տարեկան յերեխային փորձեք հարցնել, թե նա ոդանավ նստել է։ Յեթե նույնիսկ նստած էլ չլինի, նա անպատճառ այո կասի և... կշարունակի պատմել իր, իբր թե կատարած քաջագործություններների մասին և գնալով ավելի ու ավելի կվոգեվորվի։ Այս տեսակետից յերեխայի սուտը բավականին նման է Գոգոլի «Ռևիզորի» հերոս Խլեստակովի ստին։ Խլեստակովը սկզբում դիտավորյալ է ստում... բայց վորովհետև մոռանում է, վոր ինքը ստում է, տարվում է իր ստով և ավելի փքուն բաներ պատմում, ու վորքան ավելի յի վոգեվորվում, այնքան ավելի յե ստում և հավատում իր ստին։ Յերբ յերեխան լսում է հեքիաթներ, նա վոչ միայն հավատում է այդ հեքիաթներին, այլ և պատկերացնում նրանց։ Յերեխայի համար անհնարին վոչինչ չկա, նա հավատում է, վոր ոձը լինում յե առնում, կամ գորտը պայթում է և միջից դուրս է գալիս մի գեղեցիկ պատանի և այլն։

ՅԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն մեկ համար պարզ է, վոր յերևակայությունը վոչ միայն մանկական հասակի անբաժան ուղեկիցն է, այլ և միջոց է նրա հոժար իրականությունը հասկանալու, պատկերացնելու, իր կենսափորձը հարստացնելու։ Յերևակայությունը բնական յերևույթ է և հակայական դեր է խաղում մարդկության մտավոր զարգացման գործում։ Մյուս կողմից էլ, համապատասխան կոնտրոլ չլինելու դեպքում, ճշմարտության չափանիշի բացակայության պատճառով, յերևակայական պատկերները կարող են կորվել իրականությունից, դառնալ պատարկ ֆանտազիա, ապրելակերպի և վարքագծի ուղղացնել ավելորդ ու ձևասակար յերազկոտություն։ Կյանքից կորված յերևակայությունը յերեխային կարող է դժբախտացնել իրականությունը, կյանքի որյակիկ պայմանները հասկացնել, փոխարինել յերևակայությամբ և այլն։ Բայց այդ նման ֆանտազիան յերեխայի մեջ կարող է առաջացնել ջղային վիճակ։

վախկոտությունն, հուսալքությունն և այլն։ Որինակ, իմ ծանոթի երեխաներից մեկը, լսելով մի հեքիաթ այն մասին, որ խորթ մոր դրդմամբ հայրն իր երեխաներին տանում է կորցնելու, այնպես էր ազդվել, որ հոր հետ լինելիս շարունակ զգոն ու ջղային վիճակի մեջ էր և սպասում էր, որ հայրն իրեն «կորցնե՛նի»։ Այդ պատճառով էլ իր հորից մի քայլ չէր հեռանում։

Այս փաստերից չպիտք է այն եզրակացությանն հանգել, որ պետք է բոլոր միջոցներով երեխաներին զրկել երեւակայելուց, նրանց դարձնել վաղաժամ խելացի, ինչպես առաջարկում էին կեղծ գիտության ներկայացուցիչները, այսպես կոչված մանկաբաններ։ Սա միայն ասում է այն մասին, որ մենք պետք է համապատասխան միջոցներով ուղղություն տանք երեխայի երեւակայությանը, ոգտագործելով նրա ֆանտազիայի առանձնահատկությունները։

Ճերեւակայության առանձնահատկությունը հիանալի կերպով բնորոշել է Դյուվոքդյու. Նա ասել է. «Ճերեւակայությունը կրակի նման լավ ծառա է, բայց վատ տեր»։ Դրա համար էլ երեխայի երեւակայությունը վոչ թե պետք է ճնշել, այլ հղկել դաստիարակել։ Դաստիարակել երեխայի երեւակայությունը նշանակում է, առանց անմիջականորեն, կոպիտ կերպով խառնվելու ու խանգարելու երեխայի առանձնահատկությունները, միջոցներ ձեռք առնել, վորպեսզի նրա երեւակայությունն իր մտաերքային վերջնի անմիջականորեն իրականության հետ աստիճանաբար ծանոթացնելու միջոցով պետք է պարզացնել երեխայի մտածողությունը և պայմաններ ստեղծել, վորպեսզի նրա կամքն իշխի ֆանտազիային։

Թող երեխաներն ապրեն երեւակայության հրաշալի պատկերներով, ոգային ամբողջներով ու հուզե-փերիներով։ Նրանք մեծանալով կտեսնեն, վոր մեր մեծ կերկիրն ավելի գեղեցիկ ու քան ամենահրաշալի ֆանտազիան։ Նրանք առայժմ մանկական հասակում թող իրենց պատկերացնեն հերոսներ և անձնազոհ ստեղծներ, նրանք հետագայում կյանքում զգոց կզարձնեն իրենց ոգային ամբողջները, կլինեն իսկական հերոսներ։

Այսպիսով, երեխաների երեւակայության դաստիարակությունը պետք է ընթանա նրա ֆանտազիան իրականության հետ կապելու նշանաբանի տակ, իսկ դրա համար ամենից

առաջ անհրաժեշտ է բոլոր միջոցներով ծանոթացնել յերեխաներին մեր հրաշալի միջավայրին, բնությանը, կենդանական աշխարհի հետ։ Այստեղ յերեխան հրաշալի շատ բան կգտնի իր յերևակայությունը վերակառուցելու համար։

Մանկական յերևակայության դաստիարակության գործում խոշոր դեր է խաղում նրա գիրքը, մանկական գրականությունը, լինի դա կլասիկ, թե մեր հրաշալի առօրյան պատկերացնող։

Մեծ է այս գործում նաև մանկական, հատկապես տիկնիկային թատրոնի, ոպերայի, բրեկոսի և այլն դերը։ Այստեղ պետք է ընդգծել, որ խոսքը միայն մանկական թատրոնի, կինոյի ոպերայի մասին է։ Մեծերի համար տրվող նկարագրությունները հաճախելը յերեխայի համար վոչ միայն հոգնեցուցիչ է ու անոգուտ, այլ և վորոշ դեպքերում վնասակար։

Խոշոր նշանակություն պետք է տալ նաև մանկական խաղերին ու խաղալիքներին, վորոնց դերը, մինչև դպրոցական հասակը, վճռական և յերեխայի զարգացման գործում։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է յերևակայությունը։
2. Ի՞նչ նշանակություն ունի յերևակայությունը մարդու կյանքում։
3. Վերն է վերարտադրական յերևակայությունը։
4. Համեմատեցեք վերարտադրական յերևակայությունը հիշողության հետ։
5. Վոր յերևակայությունն է կոչվում դատարկ։
6. Ինչով է տարբերվում ստեղծագործական յերևակայությունը վերարտադրականից։
7. Ստեղծագործական պրոցեսի եությունը։
8. Ինչպես վերաբերվել գեղարվեստական ներշնչման փաստերին։
9. Յերևակայության ախտաբանությունն ինչպես է արտահայտվում։
10. Յերևակայության տիպերն ու սեռակները։

11. Ի՞նչ առանձնահատկություններ ունի երեխայի վերաբերմունքը։
12. Ինչպե՞ս դաստիարակել երեխայի վերաբերմունքը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рубинштейн.—«Основы психологии».
2. «Психология», под ред. Корнилова, Теплова и Щварца.
3. Կորնիլով.—«Հոգեբանության ձեռնարկ»։

ՄՏԱԾՈՒԹՅՈՒՆ

*Մենք արդեն տեսել ենք, որ օբյեկտիվ իրականության ճանաչման ապրյուրը զգայնություններն ու ըմբռնումներն են։ Այդ տեսակետից ամբողջապես ճիշտ եր Արիստոտելը, որ կա-տեգորիկ կերպով ընդգծում եր մեր զգայնությունների միջոցով աշխարհի որևնքների ճանաչման հարցը, «Որովհետև նա, ով զգայնություն չունի, ոչինչ չի ճանաչում, ոչինչ չի հասկա-նում»։ Ընդհուպ մոտենալով դիալեկտիկական մատերիալիզմին, Արիստոտելը մեր ուղեղում յուրաքանչյուր մտապատկերները համա-րում եր նույն զգայնությունը, միայն թե մատերիայի անմիջական ազդեցության բացակայության ժամանակ։

Բայց մարդը իրերի և առարկաների մասին ունեցած յուր հասկացողություններն չի սահմանափակում զգայնություն-ների և ըմբռնումների շրջանակով։ Նա աշխատում է ավելի խո-րըն ու բազմակողմանիորեն ճանաչել բնության պրոցեսների ամ-բողջությունը, նա աշխատում է որքան կարելի չի խորը, ճշգրիտ, լրիվ արտացոլել իրականությունն իր ուղեղում։ Լրիվ ճանաչողության համար բավական չէ միայն ուսումնասիրել բնության յուրաքանչյուր իրերն ու առարկաները առանձին-առան-ձին, չէ՞ որ բնությունն ինքը յուրաքանչյուր արտահայտություններն մեխանիկական, քարացած, անշարժ գումարը չէ։ Բնությունն իրե-նից ներկայացնում է հարատեվ փոփոխությունների, փոխա-բարերություններ, փոխանցումների մի որինաչափ շարան, որտեղ բոլոր իրերն ու առարկաները կապված են իրար հետ կենդանի, բազմակողմանի, այդ հարաբերությունների մեջ իրենց իսկ գոյությունը պայմանավորող կապերով։ «Յուրաքանչյուր իրի (յերևույթի etc) հարաբերությունը վոչ միայն բազում կեր-պով տարբեր է, այլև ընդհանուր է, ունիվերսալ։ Յուրաքան-չյուր իր (յերևույթ, պրոցես etc) կապված է մյուս ամեն մի իրի հետ» (Ленин, «философские тетради» стр. 212)։ Ահա հասկանալու համար կյանքն այնպես, ինչպես վոր կա,

արտահայտելու համար և՛ ընութեան, և՛ մարդկային հոգու սրենքները, մենք չբավականանալով զգայնութեամբ ու ըմբռնողութեամբ, դիմում ենք մտածութեան ոգնութեանը։ Մտածութեան շնորհիվ և, վար մարդը կարողանում է իր ուղեղում արտացոլել օբյեկտիվ իրականութիւնը, վորն իրենից ներկայացնում է «առանձինն վերցածվելն ընդհանուրի, պատահականի, անհրաժեշտութեան հակադրութիւնների փոխադարձ կապ» (Լենին)։

Այսպիսով՝ մտածողութիւնն այն հոգեկան փուլկցիան է, վորի շնորհիվ մենք կարողանում ենք պարզել, յերեվան հանել իրերի և առարկաների փոխհարաբերութիւնը, այն բազմաթիվ կապերը, վորոնց շնորհիվ մի առարկա ազդում է և փոխազդվում մյուս առարկաներից, այն ընդհանուր ու եյական կողմերը, վոր կան ավելի կամ սակաս չափով բնութեան բոլոր առարկաների մեջ։

*

«Մտածութիւնը նրանով և տարբերվում զգայնութիւնից, —գրում է Ժոլիոբրաքը,—վոր նա ոգնում է մարդուն գնալ դեպի ընդհանուրը, հաղթահարելով յեղակի սահմանափակութիւնը, տալիս է հնարավորութիւն անցնելու զգայնական փորձից դեպի ընդհանուրի և վերացականի ուսոլ ասպարեզը»։

Մտածութեան եյութիւնը լավ հասկանալու համար համառոտ կերպով պարզենք՝ յեղակիի և ընդհանուրի իրական միասնութիւնը։

ԸՆԴՀԱՆՈՒՐԸ ՅԵՎ ՄԱՍՆԱՎՈՐԸ

Յեթե մենք աշխատանք առանձին իրերի ճանաչման պրոցեսը մանրամասն, կտեսնենք, վոր նա բաղկացած է հետեյալ յերեք մասերից.

1. Միայն տվյալ իրին պատկանող, յեղակի առարկային հատուկ սպեցիֆիկ կողմերից.

2. Այնպիսի հատկութիւններից, վորոնք բնորոշ են վոչ միայն տվյալ օբյեկտին, այլև նման առարկաների մի ամբողջ խմբի համար.

3. Այնպիսի կողմերից, վորոնք ընդհանուր են բոլոր առարկաների համար, առանց բացառութեան։

Ըրինակ՝ իմ ձեռքում յեղած գրիչն ունի այնպիսի հատկութիւններ, վորոնցից մյուս գրիչները կարող են և չունենալ

Անհնար է, որ իմ գրքերը սև գործի չեն, վանկարկից, ունի վարձ հատուցություն, բարակ և գրում, ծայրը մի քիչ ժանգոտած և և այլն։ Դրանք իմ գրչի մանուածոր կողմերն են։ Միաժամանակ նա գրիչ և և վոչ թե մի այլ առարկա այն պատճառով, վոր նա ունի այնպիսի հատկություններ, վորոնք հատուկ են և ընդհանուր բոլոր սեռակի, մեծության, գույնի, ձևի և այլ գրիչների համար։ Դրանք ընդհանուր հատկանիշներ են, վոր ընդունում են ավյալ կոնկրետ առարկայի ինչ լինելը, յերևույթների վեր խմբին պատկանելը։ Դրանք իմ գրչի ընդհանուր կողմերն են։

Այդ ընդհանուր և մասնավոր հատկությունների հետ միասին իմ ձեռքում գտնած գրիչը, իբրև բնության մի կտորը, մանրակը, ամբողջական յենթարկվում է բնության օրենքներին և այդ օրենքներից դուրս գալ չի կարող։ Ուրեմն բացի առանձնահատուկ, մասնակի կողմերից, գրիչն ունի մի շարք առարկաների հետ ակտ ապրակցություն և միաժամանակ համընդհանուր կապ բնության, հետևաբար նրա կոնկրետ արտահայտություններից յուրաքանչյուրի հետ։ Ինարկե, իմ գրչի հատկություններն այդպիսի մասերի՝ առանձինի, ընդհանուրի և համընդհանուրի բաժանելը կատարելիք միայն տեսականորեն, հարցն այն վրա պարզելու համար։ Իրականության մեջ նշված հատկություններից և վոչ մեկն առանձին-առանձին գոյություն չունի և չի գործում, մասնատված չե, այլ՝ մնացած բոլոր կողմերի հետ միասնության մեջ է։

Այսպիսով, մեր այս փոքրիկ անալիզը ցույց տվեց, վոր յուրաքանչյուր առարկա մասնավոր, ընդհանուր և համընդհանուր հատկանիշների միասնություն է։ «Նշանակում է հակադրություններն (առանձինը հակադրվ. և ընդհանուրին) նույնություն են։ Առանձինը գոյություն չունի այլ կերպ, քան այն կապի մեջ, վորը տանում է դեպի ընդհանուրը» (Լենին)։

Հիմա տեսնենք, թե ինչպես են առաջացել առարկաների ընդհանուր մասնությունը և համընդհանուր կողմերի մասին մտապատկերները, հասկացությունները, մտածողությունը։ Նրանք առաջացել են առանձիններից, կոնկրետ, զգայական առարկաներից։

Ընդհանրացում կատարելու համար, մի շարք կոնկրետ զգայական առարկաներ պետք է համեմատության մեջ դնենք

իրար հետ, մասավորապես վերանանք այդ առարկաների առանձին, սպեցիֆիկ կողմերից և սահմանենք ընդհանուր գաղափարը, մի այն այդ բոլոր իրերին հատուկ գծերից։ «...մենք մի կողմն ենք ետևում մի շարք հատկանիշներ, որպես պատահական բան, մենք եզականն անջատում ենք յուրահատկից ու հակադրում մեկը մյուսին» (Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» էջ 422)։ Ուրեմն, առանձատակ ընդհանուր գաղափար գոյություն չունի, այլ կա մի շարք կոնկրետ առարկաների բաղդատությունից առաջացած ընդհանուրը՝ «ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջոցով» Լենին)։

Իրերի և առարկաների այդ ընդհանուր կողմերը պատահական չեն նրանց համար, այլ՝ եզական, հատկանշական,—քանի որ սկզբում իրի ինչ լինելը, բնության մեջ նրա բոնած տեղն ամենից առաջ բնորոշվում է այդ ընդհանուր կողմերով։ Միաժամանակ պետք է նշել, որ յուրաքանչյուր առարկայի առանձին լինելը բացարձակ չէ, այլ հարաբերական։ Նա առանձին է մի շարք այլ առարկաների նկատմամբ, իսկ առարկաների մի այլ խմբի համար նա ընդհանուր է։ Որինակ՝ վարդ հասկացությունն է առանձին լինելով ծաղիկ հասկացության համար, ընդհանուր է կոնկրետ, առանձին վարդերի համար։ Ծաղիկն ընդհանուր է վարդի, մանիշակի, հասմիկի և այլնի համար, իսկ բույս հասկացության հետ համեմատած նա մասնավոր է և այլն։

Առանձինը և ընդհանուրը անբաժան կապված լինելով, փոխադարձաբար իրար պայմանավորելով, միաժամանակ հակադրվում են, տարբեր, որովհետև «ամեն մի ընդհանուր միայն մոտավորապես է ընդգրկում առանձին առարկաները։ Ամեն մի առանձին լրիվ չի մտնում ընդհանուրի մեջ»(Լենին)։

Ընկեր Լենինն իր այս հիմնական դրույթն ապացուցելու և համար վերցնում է ամենապարզ որինակները՝ Իվանը մարդ է, Փուչկան շուն է, սա ծառ է և այլն։

Ձեզ իսկապես կոնկրետ Իվանը տարբերվում է բնության մյուս յերևույթներից նրանով, որ նա աշխատանքային հարաբերությունների ծնունդ է և ուժեղ և բարձր կազմակերպված մատերիայի՝ ուղեղի հատկությամբ, մտածողությամբ։ Բայց միաժամանակ Իվանը կոնկրետ մարդ է, որն ունի իվան հատկանիշներ, այսինքն՝ դուռ անհատական,

մարդկանց համար վոչ պարտադիր գծեր։ Սխալ կլիներ, վոչ ճիշտ, յեթե Իվանի մասին խոսելիս, Իվանին ուսումնասիրելիս նրան մտաենայինք առանձին չափանիշներով, առանց հաշվի առնելու Իվանի անհատականությունը պայմանավորող առանձին գծերը։

Այս բոլորից պարզ է, վոր իրերի և տարրականների բազմակողմանի ուսումնասիրությունը խիստ բարդ աշխատանք է, և, վոչ մի դեպքում, միայն առանձին տարրականների անջատ ուսումնասիրությամբ չի սահմանափակվում։ «...բնության մեջ վոչ մի յերևույթ չի կարող հասկացվել, յեթե այն վերցնենք մեկուսացած ձևով, շրջապատող յերևույթների կապակցությունից դուրս...» (Համկ(բ)Կ պատմության հարցատետր դասընթաց, էջ 142)։ Նա սկսում է անմիջական հայեցողությունից, ըմբռնումից և բարձրանում դեպի վեր, դեպի ընդհանրացումները, դեպի գաղափարը, դեպի մտածողությունը, վոր «իսկական միտքը, գաղափարը, ամենատարրականն և ամենաօբյեկտիվ ընդհանրությունն է» (Гегель, Т. XII, стр. 109)։

ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ

Իդեալիստական հոգեբանությունը (ասոցիոնալիստները, ապոնոստիկները, պրագմատիկները և այլն) աշխատում են մտածողությունը կտրել նրա հիմքից՝ օբյեկտիվ իրականությունից։ Ըստ իդեալիստների՝ մտածողությունը վոչ միայն իրական չի, վոչ միայն չի արտացոլում բնությունն այնպես, ինչպես վոր կա, այլև կառավարվում է բոլորովին ինքնուրույն, բնության հետ վոչ մի կապ չունեցող օրենքներով։ Ուրիշներ՝ ըստ Կանտի (1724 1804) փորձը՝ ղեկավարությունը չին կարող ընդհանուր և իսկական գիտելիքների աղբյուր հանդիսանալ։ Մարդը յուր ղեկավարության ներով գործ ունի քաոսային յերևույթների հետ։ Միայն մեր մտածողությունն է, վոր անկախ փորձից կարգ ու կանոն և մշակվածություն մտցնում այդ քաոսային յերևույթների մեջ և ստեղծում ընդհանուր և անհրաժեշտ կանոններ, կատեգորիաներ (ժամանակ, տարածություն և այլն)։ «Բանականությունը,— ասում էր Կանտը,— չի վերցնում իր օրենքները բնությունից, այլ թելադրում է այդ օրենքները բնությանը»։

Այսպիսով իդեալիստները վոչ միայն առանցնացնում են մտածողությունն իրականությունից, այլև վորոշ դեպքերում իրականությունը պայմանավորում մտածողությունով։

Դիալեկտիկական մատերիալիզմը, հակառակ իդեալիզմի, գիտականորեն ապացուցում է, վոր մարդու մտածողությունը վոչ միայն ինքնամփոփ, առանձին որենքներով կառավարվող չէ, այլև ամբողջովին բնության մեջ կատարվող պրոցեսների արտացոլումն է։ «Ցրամաբանական ձևերը և որենքները,—գրում է Լենինը,—դատարկ թաղանթ չեն, այլ օբյեկտիվ աշխարհի արտացոլումը» (Ленин, «Философские тетради», стр. 174)։

«Այսպես կոչված օբյեկտիվ դիալեկտիկան իշխում է ամբողջ բնության մեջ,—գրում է Ենգելսը,—իսկ այսպես կոչված, սուբյեկտիվ դիալեկտիկան—դիալեկտիկական մտածողությունը, միայն արտացոլումն է բնության մեջ ամենուրեք հակադրությունների տեղի ունեցող շարժման, հակադրություններ, վորոնք և պայմանավորում են բնության կյանքն իրենց հարատև հակասություններով և ի վերջո, իրար կամ ավելի բարձր ձևերի փոխարկվելով» (Ենգելս, «Բնության դիալեկտիկա», եջ 56)։

Մտածողությունն իր որենքները, իր զարգացման ձևերն ու կատեգորիաները ամբողջովին վերցնում է իրականությունից, վորովհետև նա վոչ այլ ինչ է, քան իրական պրոցեսների, փոխհարաբերությունների, փոխազդեցությունների, հակադրությունների միասնության պայքարի ճիշտ կամ սխալ արտացոլումը մեր ուղեղում։

Մտածողության շնորհիվ ըմբռնելով, ուսումնասիրելով իրերն այնպես, ինչպես վոր կան, մենք հնարավորություն ենք ունենում ընդգրկելու, ճանաչելու բնությունը, յուրացնելու նրա պարավոր գաղտնիքները։ Ինքը՝ մտածողությունն այդ ճանաչման պրոցեսում ավելի ու ավելի խորանում է, հարստանում ու մոտենում բնության ճիշտ արտացոլմանը, դրնելով մարդուն մարդկային կյանքը գիտակից և նպատակ հարմար կերպով կառուցելու։

«Մտածողությունը ծագելով կենդանիից և գնալով դեպի բացականը, չի հետանում—յուրն նա ճշգրիտ է (NB),—ճշմարտություններից, այլ մոտենում է նրան։ Ատոմիայի, բնության որենքների աբստրակցիան, արժեքի աբստրակցիան և այլն, մի խոսքով բոլոր գիտական (ճշմարիտ, լուրջ, վոչ դատարկ) աբստրակ-

ֆիանները արտացոլում են բնությունը խորը, ճշգրիտ, լրիվ կեր-
պով։ Կենդանի հայեցողությունից դեպի արտացակ մտածո-
ղությունը և նրանից դեպի պրակտիկան, այն է ճշմարտության
ճանաչման, օբյեկտիվ իրականության ճանաչման դիալեկտիկա-
կան ճանապարհը» (Ленин, «Философские тетради». стр. 166).

ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ԼԻՆԵԼՈՒ ԶԱՓԱՆԻՇԸ ՊՐԱԿՏԻԿԱՆ Ե

Մարդկային մտածողությունը միշտ չէ, որ ճշմարիտ է արտացոլում իրականությունը, նա կարող է հեռանալ իրականությունից, մոլորվել, իրականության պատկերը տալ միակողմանի, ոչ ճիշտ կերպով։ Դրա համար էլ, իսկական մտածողությունը իր ուղեցույցներն ստուգելու, ճշտելու համար միշտ դիմում է պրակտիկային, անվում, դինվում պրակտիկ կյանքի տվյալներով։ Տեսական դիտարկացությունները, ինչպես և ինքը պրակտիկան՝ հատու և ամենակարող են դառնում այն ժամանակ, երբ բուժվածք են ստուգված իրականության ճիշտ արտացոլող տեսություններ։

«Կյանքը ծնում է ուղեղը։ Մարդու ուղեղում արտացոլվում է բնությունը։ Ստուգելով և կիրառելով յուր պրակտիկայում և տեխնիկայում այդ արտացոլման տեսությունը, մարդը հանդում է օբյեկտիվ ճշմարտությանը (Ленин. («Философские тетради», стр. 193)։

Մարքսիզմ-լենինիզմը միշտ էլ նշել է, որ մարդկային մտածողության ճիշտ կամ ոչ ճիշտ լինելու, իրականությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու հարցը վերացական հարց չէ, այլ ապացուցվում է, վճռվում պրակտիկայում, որ այդ հարցի պրակտիկայից դուրս լուծումը վեր և ածվում սխոլաստիկայի։

Իրականում, հասարակության ու գիտության զարգացման ընթացքում ստուգված բնության, հասարակության և մարդկային հոգու օրենքները լրիվ կերպով արտացոլող միակ ճիշտ մտածողությունը դիալեկտիկական մտածողությունն է։

ԽՈՍՔի ՅԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Խոսքի և մտածողության փոխհարաբերության հարցը հոգեբանության ամենահին, հետաքրքրական և պատասխանատու հարցե-

րից մեկն է։ Ակադեմիկոս Մառն այս պրոբլեմը համարում է մեծագույն պրոբլեմներից մեկը, յուրաքանչյուր ոք, ով ամենաչնչաղույնը հոգեբանության և լեզվաբանության բնագավառում։ Գիտնականներից շատերն ուղղակի գնում են խոսքի և մտածության պրիորիտետի (առաջնության) ընդիրը և լուծում են տարբեր կերպ։

Որոշ գիտնականներ բոլորովին անջատում են խոսքն ու մտածությունը, պնդելով, որ նրանք տարբերվում են միայն իրենց սոցիալական արմատներով, այլ և ըստ էության։

Այսպես օրինակ, խորհրդային տաղանդավոր հոգեբան, հանգուցյալ Վիգոտսկին յուր «Речь и мышление» արժեքավոր յերկասիրության մեջ պնդում է, որ խոսքը և մտածությունը ոչ միայն տարբեր յերևույթներ են, այլ և տարբեր ակզբնապատճառների արդյունք։ Ուշագրավ սայթաքում կատարելով մտաբրիալիզմի դիրքերից, նա պրիորիտետը տալիս է խոսքին և աշխատում է նրա հիմունքները գտնել կենդանական արտահայտիչ հնչյունների մեջ։ Այս տեսակետի կողմնակիցներն իրրև արիական բերում են նայիլ յերեխայի մտածությունը, Հայտնի յե, որ յերեխան սկսում է մտածել նախ քան խոսել սովորելը։ Այսպես մտածող գիտնականները չեն ուզում հասկանալ, որ յերեխան նախ քան խոսել սովորելը հասկանում է ուրիշների ասածը, յուր ուղղում ունի խոսքային բնույթի բազմաթիվ արբազներ, որոնց ոգնությամբ եր նա, ըստ յերեվույթին, մտածում է։

Գիտնականներից վոմանք էլ (Գեյգեր, Բոդուանով և այլն) գտնում են, որ անկարելի յե մտածել առանց խոսքերի, հետևապես և իրր թե առաջնայինը, կարևորը խոսքն է, իսկ մտածությունը նրա արտահայտության ձևերից մեկն է։

Իրրև առարկություն վոչ ճիշտ մտածող նման գիտնականներին պետք է ասել, որ խոսքն էլ առանց իմաստի անմտություն է և այդ պատճառով էլ վոչինչ չարտահայտող խոսքն արժեքազուրկ է։

Վերջապես գիտնականների մի խումբն էլ, հատկապես բիհեվիորիստները, խոսքը նույնացնում են մտածության հետ և չեն տեսնում նրանց վարքային առանձնահատկությունները։ Բիհեվիորիստները մտածությունը համարում են ավելի բարդ

բնության շարժուն, ներքին ավտոմատ ռեակցիա և ուրիշ վոչինչ. «Մտածողությունը խոսք է, հանած հնչյունը»—ասում են նրանք։

Այս տեսակետներից և վոչ մեկի հետ համաձայնել չենք կարող։ Խոսքը և մտածողությունը իրար հետ սերտորեն կապված, միևնույն սոցիալ-պատմական արմատներ ու տարբեր յուրահատկություններ ունեցող առանձին փուլեր են։

Ձեվ խոսքը, և՛ մտածողությունն առաջացել են աշխատանքից, մարդու հասարակական պրակտիկայից։ Բնության, հասարակության և յուր էության մասին վոչ մի հասկացողություն չունեցող մարդն աշխատանքի շնորհիվ աստիճանաբար կարողացավ պարզել ու յերեվան հանել բնության բազմաթիվ որենքները։ «Ձևոքի զարգացմամբ, աշխատանքով սկսվող տիրապետությունը բնության վրա,—գրում է Ենգելսը,—յուրաքանչյուր քայլափոխում ընդարձակից մարդու հայեցողությունը։ Բնության իրերի մեջ նա շարունակաբար հայտնաբերեց նոր, մինչ այդ անծանոթ հատկություններ»։

Մենք տեսանք, վոր մտածողությունն առաջանալով աշխատանքից, պայմանավորվելով աշխատանքային հարաբերությունների, նա իր ծավալների ստուգելու համար գիմում է յուր մորը՝ աշխատանքին։

Ինքը, խոսքն էլ պատմական է և նույնպես առաջացել է մտածողության հետ միաժամանակ՝ աշխատանքի պրոցեսում։ Աշխատանքի շուրջը մարդիկ ստիպված էին համախմբված, միասին պայքարել բնության դեմ կռվելու միջոցները հայթայթելու համար։ Աշխատանքային փոխհարաբերությունների ընթացքում միմյանց մտքեր հաղորդելու պահանջն առաջացրեց խոսքը։ Խոսքը զարգացավ և կատարելագործվեց հասարակության մեջ և զուտ հասարակական գիտակցության ամենակարևոր գործիքներից մեկը։ Խոսքի զարգացման որինաչափությունները պետք է փնտրել մարդկային գոյի մեջ։ «Հնչյունային խոսքը—գրում է Մարքս,—մարդկության ստեղծածն է։ Մարդն ստեղծել է յուր լեզուն աշխատանքի պրոցեսում, վորոշ հասարակական պայմաններում... Իրերի ժառանգականությունն առաջված խոսքի արմատները չեն գտնվում վոչ արտաքին աշխարհում, վոչ էլ ներսում, մեր ֆիզիկական բնության մեջ, այլ գտնվում են հասարակականության մեջ, նրա նյութական բազայի՝ տնտեսա-

թյան և տեխնիկայի մեջ» (академик Марр, «Вопросы языка в асвещений Яфетической теории», стр. 178)։

Ձեվ խոսքը, և մտածողությունն առաջանալով աշխատանքից, փոխադարձաբար ազդել են մեկը մյուսի վրա և զարգացման հուժկու թռիան հանդիսացել։ Սրանք էլ իրենց հերթին ազդել են և ազդում են մարդկային աշխատանքի վրա՝ մեծ եներգիա ու թափ մտցնելով մարդկային պրակտիկայում։ «Նախ՝ աշխատանքը,—գրում է Ենգելսը,—ապա՝ դրանից հետո ու դրա հետ միաժամանակ՝ լեզուն—սրանք են այն երկու գլխավոր խթանները, որոնց ազդեցության ներքո կապիկների ուղեղը հետզհետե կարող էր փոխվել մարդկային ուղեղի, որը իր նմանությամբ հանդերձ՝ գերազանց է առավել մեծությամբ ու կատարելությամբ... Ուղեղի և նրա ենթակա զգայարանների, հետզհետե ավելի պայծառացող գիտակցության, աբստրակցիայի ու յուրացության ունակության զարգացման փոխադրեցությունն աշխատանքի ու լեզվի վրա, յուրաքանչյուր համար էլ հետագա զարգացման նոր ազդակ հանդիսացավ» (Ենգելս, «Բնության դիալեկտիկա», էջ 83—84)։

Խոսքը և մտածողությունն ունենալով միևնույն սոցիալական պատճառները, չեն նույնանում իրար հետ, այլ պահում են իրենց տարբեր վարքականոն առանձնահատկությունները։ Դեռ ավելին. վոչ միայն հնարավոր է, այլ և իրականության մեջ խոսքը գոյություն ունի խոսք առանց մտածողության և մտածողությունը առանց խոսքի, թեև մտածողությունից անջատ խոսքը զանազանվում է թեմպերամենտի և կրքոտության առանձնահատկություններից շատ շատերը, մտածողությունն ինքն էլ առանց խոսքի զանազանվում է շատ փոչ աբժեքավոր։

Առանց մտածողության խոսքի մեծ մասամբ հանդիպում ենք պատանեկական մարդկանց մոտ։ Բերենք այդպիսի մի օրինակ շիզոֆրենիկի խոսքից. «Ձեզնե չես շատ եմ խոսում, ինձ մոտ ստացվում է պայքար կապիտալիզմի դեմ։ Ձեզնե տաք ոդը կուտակվում է իմ տամոքսի և ափքնների մեջ, ստացվում է լարում։ Թեպետ ձեր պատահաղեպտը սպիտակ է, բայց դուք չքավորության եք... Ձերը յերեխան ծնվում է, պետք է դիակին ինչպես են ծնվում մանուկները Պալեստինում։ Ձեզնե ծնվելը կա, պետք է շատ յերեխաներ ունենալ, յերեխան կանչ

նրան պետք և տալ լարված իշխանության պայմաններ, 42 տարիական հաշվում նա նկատելի կլինի ըստ այս ֆորմուլայի. $17+18+6=42^1/_2$: Ուղեղաթաղանթի բնորոշումը թույլ չի տալիս գլխի ընկնել: Ձեր տունը սխալ է կառուցված, ոչ էլ այդ ֆորմուլը կատարելա» (տես «Судебная психиатрия» под ред. Бунеева и Фейцберга, стр. 161, изд. 1938 г.):

Կ. Ս. Ստանիսլավսկին յուր «Работа актера над собой» կարևոր բերում է ասանդ մասածության խոսքի հետևյալ և բազմաթիվ օրինակները. բերենք նրանցից միայն մեկը. «Արվարդյ Նիկոլայևիչը մեզ համար բնավոր խաղաց մի ամբողջ պիես, նրա խաղը նշանակալից էր յուր ասպանդով, վարպետությամբ և դերասանական տեխնիկայով: Նա սկսեց ինչ որ մի վատանալ, վարն արտասանեց խոսք արագ և հիմնավոր կերպով: Բայց մեզ ոչ մեկը չդարձավ, այնպես, որ մենք վազինչ չհասկացանք»: Ստանիսլավսկին ընդգծում է, որ մի շարք դերասաններ շարակրասում են բեմի վրա, ասանդ հասկանալու այդ խոսքերի իմաստը, միայն հիմնական համար: Վերջապես աֆֆեկտով խոսքը, ինչպես վերևում տեսանք, վազ մասածության միջոց և և վազ էլ սոցիալական փոխհարաբերությունների արդյունք: Նա միայն արտահայտում և ներքին զգացմունքներ, որոնք բանականությունից անկախ են, Զգացողությունը նույնպես բառերի տարափ և ասանդ մոտիվ:

Հիմա բերենք մի շարք օրինակներ, ցույց տալու համար, թե ինչպես են և նույնիսկ մոտիվն արտահայտում են ասանդ խոսքի: Այսպես կոչված աֆֆեկտիների մասին (տես խոսքի տեսության պլանը), ինչպես վկայում և պրոֆ. Ոսիպովը, «Մասնագիտությունն աշխատում և, բայց նրանք բառեր արտասանել չեն կարողանում»: Վարժհետև բառերի հիշողության և արտասանության կենտրոնների միջև կապը կտրված է: Մասնագիտությունն ասանդ խոսքի բնորոշ և նաև բնածին խոսք և հավելյալ մասն: Ինքնապաշտպան պարզ և, որ խոսքերն ու համրերը, ստրեսը բառային տպավորություններ չառաջացնեն, չկրկնի և կապող մասնիկ խոսքերի միջոցով:

Իհարկե աֆֆեկտիների և խոսքի ու համրերի մասնագիտության մասին մենք շատ քիչ բան գիտենք, բայց միտումնա-

նակ չենք կարող համաձայնվել պրոֆ. Բլոնսկու*) այն դրույթի հետ, որ այդ պատճառով էլ բոլորովին պետք է հրաժարվել խոսքի և մտածողության փոխհարաբերությունների հարցը լուծելուց, այնպիսի կարևոր փաստից, ինչպիսին է բնածին խոսելու համբերի մտածողությունը: Սովորական դիտողությունն անգամ ապացուցում է, որ խոսելու համբերը, որոնց ուղեղում բառերի տպավորությունների նշույլ անգամ չկա, մտածում են, հետևաբար և մտածում են առանց խոսքի:

Ինչ վերաբերում է նորմալ մարդկանց, ապա Ստանիսլավսկին բերում է մի շարք որինակներ այսպես կոչված «ներքին տեսողության», «ներքին լսողության» մասին, երբ մարդկանց միջև առաջանում է անխոս հաղորդակցություն, ինչ որ մինչև այժմ չուսումնասիրված ֆիզիկո-քիմիական հատագայթների միջոցով: «Ձերեկ իմ բարեկամների տանն ականատես եղա,—գրում է Ստանիսլավսկին,—ջահել հարսի և փեսայի միջև եղած մի տեսարանի: Նրանք կավել էին, այլևս իրար հետ չէին խոսում, նստել էին իրարից հեռու: Հարսն այնպիսի տեսք էր ընդունել, որ իբր թե չի նկատում փեսային... իսկ փեսան մեղավոր ճաղարի աչքերով, անշարժ, աղերսական հայացքով նայում էր հարսին, աշխատելով շեշտակիորեն թափանցել իր հայացքով նրա մեջ: Նա հևալից վորսում էր նրա հայացքը, վորպեսզի դրա միջոցով հասկանա, թե ինչ է կատարվում նրա սրտում: Նա նշան էր բռնել նրա հոգու մեջ: Նա տեսողությամբ շոշափում էր նրա կենդանի հոգին: Նա խորանում էր նրա հոգու մեջ յուր աչքերի անտեսանելի մագիլներով... բառերը բոլորակայում էին, առանձին բացատրություններ չկային, միմիկան, շարժուձևերը, գործողությունները նույնպես, բայց դրանք փոխարեն գործում էին աչքերը, հայացքը: Դա յերկու հոգիների ուղիղ, անմիջական, մաքուր հաղորդակցություն է՝ կատարված աչքերի կամ մատների մատների միջոցով, մարմնի առանց աչքերի համար տեսանելի ֆիզիկական գործողություններ» (Станиславский, «Работа актера над собой», стр. 414—415):

---

*) Տես Блонский, «Память и мышление», стр. 147.

Մեր կարծիքով մարդկային հոգու խոշորագույն վարպետ Ստանիսլավսկու այս հոյակապ դիտողությունը ամբողջապես հերքում է Բլոնսկու այն դիտողությունը, ըստ որի, իբր թե, ինտելեկտուալ փոխհարաբերություն մարդկանց մեջ, առանց խոսքի հնարավոր չեն։ Ինտելեկտուալ, անխոս հաղորդակցությունը հնարավոր է բացառիկ դեպքում, մոտերիմ, հարազատ, մի՛ հայացքով իրար հասկացող մարդկանց մոտ։

Զեռքիս գաստակից բռնեց, պինդ պահեց,
Ցավ իր բազուկի հեռավորությամբ յուր-յուր գնալով
Ցավ իր մյուս ձեռքն այսպես գնելով ունքերի վրա՝
Սկսեց այնպես յերկար զննել,
Վորպես թե ուզեր պատկերս քաշել։
Ցավ յերկար այսպես նա կանգնած մնաց։
Ի վերջո, թեվս մի քիչ ցնցելով
Ցավ յերկը անդամ—այսպես—գլուխը վերավ տանելով՝
Այնպիսի մի խոր և սրատեսիլի հառաչ արձակեց,
Վոր կարծես թե այդ ջարդից ու փշրից նրա վոդջ կազմը։
Ցավ նրա կյանքին վերջ տված մեկին, այդ տեսլուց հետ
Զեռքս բաց թողեց և գլուխը շրջած իր ուսի վրա՝
Կարծես դանդաղ եր ճանապարհն առանց աչքերի
Ցավ առանց նրանց ուժանգակության դռնից դուրս գնաց,
Մինչև վերջը նայվածքն իմ վրա հառած։

(Շեքսպիր, «Համլետ», թարգմ. Հովհաննես Թումանյանի)

Այստեղ Համլետի և Ոֆելիայի մեջ մի ամբողջ դրամատիկ տեսարան անցավ, առանց խոսքերի և նրանք յերկու սիրահարները շատ լավ հասկացան իրար։ Այստեղ կար և՛ հանդիմանություն, և՛ թախիծ, և՛ հուսահատություն, և՛ սեր։

Ինտելեկտուալ, անխոս հաղորդակցությունը բնորոշ չի մարդկանց համար, քիչ և, չնչին նրա տեսակարար կշիռը։ Բայց այնուամենայնիվ նա կա, գոյություն ունի, թեև նրա հիմքը կազմող ֆիզիկո-քիմիական յերևույթները դեռ բոլորովին ուսումնասիրված չեն։

Այսպիսով իրականում սկզբում կա խոսք՝ առանց մտածության և մտածություն՝ առանց խոսքի։ Բայց կա իրի

կամ լայնաբերյուն, կամ հիմնադրին յերևույթ։ Ուրեմն մի կողմից խոսքը և մտածությունը չեն նույնանում, նրանք տարբեր յերևույթներ են և միաժամանակ նրանց անջատումը ճշտապրական և գոյնում միմյանց համար։ Իսկական խոսքը իմաստալից է այնքան, որքան մտածության արդյունքի արտահայտիչ է, իսկ մտածությունն իմիջ անմիջական իրողություն է դառնում խոսքի, բառերի միջոցով։

Ակադեմիկոս Մառը շատ ճիշտ է քննադատում այն վերլուծություններին, որոնք արտահայտում են նրա հետ ամուր կերպով կապված մտածության պրոբլեմը։

Հեգելը բերում է Միսոների սրինակը, որը ցանկանալով սրբագրել տառից խոսքերի, բիչ մնաց խեղաթյուրության ստիճանին հասներ։

Ինչու չենք մենք խոսքով մտածում։

*Ինչպես տեսանք, մտածությունը վերանում է անմիջական գործնական ըմբռնումներից, կտրվում և արտահայտվում իսկ կոնկրետ ըմբռնումներից հեռանալու պատճառով էլ մեզ հարկավոր է իմ միջոց՝ տարբերելու տարբերությունները վերացնելու համար։ Այդ միջոցը բառն է, որն իրրև նշան, խորհրդանշան ներկայանում է, արտահայտում անմիջական տարբերությունները։ Ինչ կարող եմ մտածել այնպիսի տարբերությունների մասին, որոնք անմիջականորեն չեն գոյություն իմ տեսադաշտում։ Ինչ կարող եմ իմ գործողությունները և յերբարեկությունները կատարել ցուցամատով ճանապարհով (մտավոր ինդուկցիա, մտավոր դեդուկցիա այլն), որպեսզի այդ իրական տարբերությունները, նրանց իմաստն ու նշանակությունն արտահայտող բառերին, և յեթե այդ բառերը չլինեին, մենք պիտի և տանջված լինենք փնտրել, գտնել նրանց վերացրնող, նրանց ներկայացնող այլ սիմվոլներ (որինակ ժեստերի սիմվոլը՝ խոսք և համրերի մատները, որոնք տակավաճիվ են և յերբեք իրենց մեջ մարդկային մտքի հարստությունն արտացոլել, արտահայտել չեն կարող։ Այդ խոսք-սիմվոլը տանջալով և, զարգացել կատարելագործվելի դառել մտածության հզոր գենք հարյուրավոր ու հազարավոր տարիների մարդկային հասարակության բարդ վերաբերմունքում։ Ահա թե ինչու մի այլ սիմվոլ չի կարող վերացրնել հազարաշխված խոսքին։

Մի ժամանակ չպետք է մոռանալ, որ խոսքն ինքը մարմնացած մտածություն է։ Չի՞ որ յուրաքանչյուր բառ, անգամ հատուկ անուն, արտահայտում է ոչ միայն առանձին առարկա, այլ և ամենից առաջ ընդհանրացումներ, հյուսկան, հատկանշական, ընդհանուր կողմեր։ Գիրք բառը ոչ միայն այս իմ գրասեղանի վրա գտնվող կոնկրետ գրքի արտահայտությունն է—սեփականը, այլ և մյուսի ու մյուսների գրքերի։ Նա իր մեջ ընդգրկում է ոչ միայն այս գրքի, այլ առհասարակ բոլոր գրքերի հատկացուցչությունը։ Բառն ինքը արտաքին չէ։ Իսկ վերջինից է առաջացել բառ արտաքինքան։ Պարզ է, որ նա ընածին չէ, այլ սոցիալական պրակտիկայի արտահայտությունն է, որ արտացոլում է իրական հարաբերությունները։ Նա օբյեկտիվ տարբերանների հյուսկան կողմերի ընդհանրացումն է, որը հնարավոր է միայն մի ճանապարհով՝ մտածության միջոցով, անմիջական զգայական ըմբռնումներից վերանալու ճանապարհով։

Իմաստավորված բառը ոչ միայն մտածության միջոց է, այլ և միաժամանակ մտածության արգասիք։ Յեթե ճիշտ է այն, որ առանց խոսքի մտածությունը պատահական է, անհետաքննական, անգոր, ապա անհետաքրքրություն է և այն, որ անկասկած բառը, անկասկածված փրազը բոլորովին կորցնում է իր սոցիալական արժեքը, մարդկանց համար փոխադարձաբար ազդելու, մտքեր հաղորդելու և մտածելու միջոց լինելու հատկությունները, այսինքն կորցնում է իր ամենակարևոր փունկցիան։

Այսպիսով խոսքը և մտածությունը տարբեր փունկցիաներ են ուրույն, սպեցիֆիկ որինաչափություններով։ Չի կարելի նրանց հավասարացնել, միաժամանակ և ոչ մի դեպքում չի կարելի անջատել և պատկերացնել խոսքի և մտածության գործությունը մեկը մյուսից անկախ։ Նրանք սերտ կերպով կապված են մեկը մյուսի հետ և ոչ միայն ժամանակում, այլ և փոխադարձաբար լրացնում են միմյանց։ Կյանքում պատահած որևէ փաստերը, որոնք խոսում են նրանց առանձին արտահայտությունների մասին, ոչ միայն չեն ժխտում խոսքի և մտածության միասնությունը, այլ և ապացուցում են այդ։ Նրանք առանձին-առանձին հանդես գալու դեպքում կորցնում են համարյա իրենց ամբողջ յուրահատկությունները, հզորությունն ու ուժը։

ա) Մտապատկեր և գաղափար. Մտապահումն առանձին առարկաների ընդհանրացումն է և նրանց բոլոր կողմերով մեր ուղեղում։ Որինակ, ես ունեմ մեր տան մտապատկերն իր բազմապատկությամբ։ Իմ տունն առանձին ես մի հարկանի է, թիթեղյա կտուրով, բարկացած է չորկուս սենյակից, ունի փոքր բակ և այլն։ Այդ բոլոր հատկանիշների միահամրուխությունը, վորը ես ընդունում եմ իմ զգայարանների միջոցով իմ ուղեղում առաջացնում է նրա յեզակի մտապատկերը։ Յերբ ես ասում եմ տուն առհասարակ, այստեղ արդեն առանձին տներին հատուկ կողմերը մոռացվում են, վերացվում է միայն այն, ինչ վոր ընդհանուր է բոլոր տների բնակարանների համար։ Այս դեպքում իմ պատկերացման ազդյուրը վաչ թե մի առարկա է, այլ բազմաթիվ առարկաներ։ Ստանալով տպավորություններ բազմաթիվ առարկաներից, ես աշխատում եմ գտնել նրանց մեջ եղած ընդհանուր էական կողմերը, այսինքն կատարում եմ ընդհանրացում, աբստրակցիա։ Այս ընդհանրացումների հետևանքով է, վոր իմ մեջ առաջանում է գաղափար առարկաների տվյալ խմբի մասին։ Այսպիսով, մտապատկերը և գաղափարը նույնը չեն, հակադիր են այնքան, վորքան մտապատկերն առանձին առարկաների արտացոլումն է մեր գլխում, իսկ գաղափարը բազմաթիվ առարկաների կապակցությունների արտացոլումն է։ Միաժամանակ և գաղափարն ու արտացոլումը հակադիր բևեռներ չեն, այնքանով վորքան և՛ մտապատկերը, և՛ գաղափարն իրենց հիմքում ունեն զգայական ըմբռնումներ, այսինքն յեղնում են օբյեկտիվ իրականությունից և այդ իրականության արտացոլումից մեր ուղեղում։ Ինքը, մտապատկերը դեռևս հնարավորություն չի տալիս առարկան ամբողջովին, լիովին ճանաչելու, վորովհետև չի արտացոլում տվյալ առարկայի բազմաթիվ կապակցությունները մյուս առարկաների հետ։ Իրերն ու առարկաներն ավելի խորը ճանաչելու, նրանց օբյեկտիվ ու էական փոխհարաբերությունները արտացոլելու համար հարկավոր է զգայական ըմբռնումներից վերանալ և հասնել գաղափարին, ընդհանրացմանը։ Այսպիսով գաղափարը մտքի սոսկական խաղը չե կամ առարկաների նման կողմերի մեխանիկական, մեր ցանկության համաձայն

կատարվող գումարումը չի, ևս իրականության արտացոլման ա-
մենահիմնական նանապարհներից է։

Ծարմալ տրամաբանությունը չի ընում և այն սկզբունքից, վոր իբր թե վորքան շատ յերևույթներ և ընդգրկում ընդհանուրը, դաղափարը, այնքան նրա բովանդակությունը խեղդվում է, սեղմվում, աղքատանում։ Ծարմալ տրամաբանության ներկայացուցիչները առարկաները պատկերացնում են մեկը մյուսից անկախ, անշարժ, քարացած, անփոփոխ։ Այդ պատճառով էլ նրանք առարկաների մեջ յեղած կապակցությունները համարում են պատահական, անհշան, մակերեսային։ Չկարողանալով տալ իրական-նության յեղության բանալին՝ ուսումնասիրել յերևույթների փոխադարձ կապակցությունը, ինքնաշարժման պրոցեսը, նրանք ժխտում են դաղափարը վորպես իրականության արտացոլման ձև։

Ինքը, դաղափարը բազմազանության միասնության արտացոլումը լինելով, բարձրացնում է մարդու ճանաչողությունը և նրան ժամեցնում ճշմարտության ըմբռնմանը։

«(Աբսարակտ) դաղափարների առաջացումը և ոպերացիաները նրանց հետ արդեն իրենց մեջ պարունակում են աշխարհի ըդեկտիվ կապերի օրինաչափությունների պատկերացումը, հասկացողությունը, գիտակցությունը... բացահայտ դաղափարների օբյեկտիվությունը, ընդհանուրի օբյեկտիվությունը չեզակիի և առանձինի մեջ անհնար է.... Ինչպես արժեքի պարզ ձևը, առանձին ավյալ ապրանքի փոխանակությունը մեկ ուրիշի հետ չդարգացած ձևով պարունակում և արդեն կապիտալիզմի բոլոր ղլխավոր հակասությունները, այնպես էլ ամենահասարակ ընդհանրացումը, գաղափարների (դատողություն, մտահանգում և այլն) առաջին ու պարզագույն առաջացումը նշանակում է, վոր մարդն ավելի ու ավելի խորն է ճանաչում աշխարհի ըդեկտիվ կապերը» (Ленин, «Философские тетради», стр. 173)։ Բուրժուական հոդեբանությունը, չկարողանալով հասկանալ մտապատկերի և դաղափարի փոխհարաբերությունը, նրանց հակադրությունների միասնությունը, կամ անջատում է դաղափարը մտապատկերից և կամ նույնացնում նրանց։ Որինակ, Ֆորմալ տրամաբանության ներկայացուցիչներից մեկը, Միլլը գոնում է, վոր արտերակցիան, ընդհանացումը առանձնացնում է զգայնական տպավորությունների դաղկացուցիչ մասերը, բայց զգայնությունների վրա վոչ մի նոր

բան չի ավելացնում (դիտում եմ ըստ Կաուբրևի «Познание и действительность» գրքի)։ Այսպիսով Միլլը փաստորեն գոյաբերը և մատրաստվերը նույնացնում է՝ գրանք համարելով նույն յերևույթի տարբեր ձևերը։ Ընդհակառակը, ապրիորիստները ստացարկելով «մտքում մոտածության» իրականությունից անջատ, գոյաբերական ըմբռնումներից անկախ գոյափաբերների հարցը, ընդհանուր են իդեալիզմի դիրքը։

Դատողություն. Վարեվ կոնկրետ ստարկայի ինչ լինելը պարզելու համար նախ աշխատում ենք պարզել, թե մեր ստացաշում գտնվող ստարկան յուր հյսական կողմերով իրերի ու ստարկաների վրա խմբին և պատկանում։ Այդ բանը վարշելու համար ավյալ, գոյունական իրը համեմատում ենք սրդեն մեր ուշադրում յեղած գոյափաբերների հետ և հանգում համապատասխան յեզրակացության։ Դատողությունը կարող և լինել նաև ժխտական, յերբ մենք չենք համաձայնվում կոնկրետ ստարկայի ավյալ խմբի պատկանելիության հետ։ Այսպիսով դատողության ժամանակ մեր ուշադրում գոյունական ըմբռնումների ու արտաքինության հետևանքով ստացված հայտնի գոյափաբերներն ակտուալանում, գնում են նոր, կոնկրետ յերևույթը ճանաչելու համար։ Դատողությունը նորից և նորից ստուգության և ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության իրական լինելու հանգամանքը։

Այսպիսով դատողությունը հոգեկան այն պրոցեսն է, յերբ արդեն հայտնի ծանոթ գաղափարների ոգնությամբ վորոշում ենք նոր, անմիջական զգայնության ճանաչվող ստարկայի ինչ լինելը։ Այդ ստարկան, վորի մասին դատում ենք՝ կոչվում է սուբյեկտ կամ տրամաբանական յինթեկտ, այն գոյափաբերը, վորի ոգնությամբ վորոշում ենք դատվող ստարկայի՝ սուբյեկտի ինչ լինելը, կոչվում է պրեդիկատ կամ տրամաբանական ստորոգյալ։ Որինակ «Սա գիրք է» նախադասությունը հանդիսանում է մի դատողություն։ Սա դիտանունը փոխարինում է այն կոնկրետ ստարկային, վորի մասին դատում ենք, այսինքն սուբյեկտին։ Գիրք բառը այս դեպքում դառնում է դատողության պրեդիկատը։

Մտահանգումը մտածության այն պրոցեսն է, վորն արդեն հայտնի մի կամ մի քանի դատողություններով հաստատում կամ ժխտում է մեկ ուրիշ նոր դատողություն։ Մտահանգման

պետն ունի երկու բաղադրություն՝ ա) նախադրյալներ, բ) յեզրակացություն։ Նախադրյալներն տակա յեն ուղեղում կանխատես, իրըև համոզում, վոր հետևանք են նախկին փորձերի, իսկ յեզրակացության հետևանքն և այն համոզմունքը, վոր կատարվում և տակա համոզմունքի և նոր գաղտնության մեջ։

Մտահղացման մի օրինակ.

ա) Նախադրյալ) Բոլոր հերոսները և.
Նա ժողովրդի սիրելին և։

բ) Յեզրակացություն — բոլոր հերոսները ժողովրդի սիրելիներն են։

Մտահղացումն ունի երկու ձև՝ ինդուկտիվ և դեդուկտիվ։ Ինդուկտիվ մտահղացումն առաջանում և այն ժամանակ, երբ մենք տառնձին յեղակի փաստերից անում ենք ընդհանրացումներ, այսինքն յերբ մտածողը գաղտնություններից յեզրակացնում ենք ընդհանուրը։ Որինակ՝

Վարպը բուրավետ և.
Վարպը ծաղիկ և։
Հետևաբար բոլոր ծաղիկները բուրավետ են։

Ինդուկտիվ յեզրափակումը ճիշտ և, յերբ յեզրակացումն արդյունք և բազմաթիվ ստուգված փաստերի։ Ինդուկցիան անճիշտ և, յերբ փաստերը քիչ են, ստուգված չեն, կամ չեն ընդգրկում նյութին կողմերը։

Քանի վոր յերևույթի կողմից իրականության ճանաչողությունը տահմանափակ և, ուրեմն և նրա կատարած գործողությունը սահուն և, վոչ լրիվ, նյութը յերկրորդականից տարբերելու գործողությունը թույլ, ապա և նույն այդ յերևույթի յեզրակացությունը շատ հաճախ կլինի սխալ կամ պակասավոր։

Ջուկովսկին ընթրում և յերեխայի սխալ ինդուկտիվ մտահղացման խիստ սրամիտ ու հետաքրքիր օրինակներ։ Յերեխաներից մեկը ծովափում տեսնելով, թե ինչպես արևը մայր մտավ և «թաց նվնվաց» ծովի մեջ, ստացավ և ծովի ջրի յեռ գալուն և խիստ զարմանում և, յերբ հանդարտ ջուրը ճոճում և նախկին տաք վիճակում։

Մի այլ յերեխա լսելով, վոր այդ ժամանակ, յերբ Մոսկվայում տաք ար և, Ամերիկայում սկսվում են ցրտերը, խիստ ուրախանում և և բացականչում։ «Հենց այդպես էլ պետք և բուրժուներին»։

Դեդուկտիվ յեղրափակման ժամանակ ոգտագործում ենք ուղեղում յեղած համապատասխան գաղափարները, նայ կոնկրետ դատողությանը հանգելու համար, այսինքն ընդհանուրի ոգնությամբ ընորոշում ենք կոնկրետը։ Այսպիսով դեդուկցիան՝ ինդուկցիայի հակառակ պրոցեսն է։

Ուրեմն, տաքությունից մարմինները լայնանում են։

Գդալը տաքացել է։

Նշանակում է գդալի ծավալը ևս լայնացել է.

Դեդուկտիվ մտահանգումը հնարավորություն է տալիս կիրառել անմիջական պրակտիկայում այն որենքները ու յեղրակացությունները, որ մենք ձեռք ենք բերել մեր կյանքում կամ անձնական փորձի և կամ դիտությունների հիման վրա։ Ուրեմն՝ իմանալով, որ չծածկված հեղուկ նյութերը գոլորշիանում են, յես վակում եմ և իմ թանաքամանի բերանը։ Իմանալով, որ այսինչ գերատեսուհին հրաշալի յի խաղում, յես շտապում եմ թատրոն նախորոք արդեն համոզված լինելով, որ այդ յերեկո յես ստանայու յեմ մեծ բավականություն և ունենալու եմ խորն ապրումներ։

Այսպիսով յերթե դեդուկտիվ մտահանգումը չլիներ, մենք կը-զրկվեյինք մեր կենսափորձի ոգտագործման հնարավորությունից, այդ դեպքում մեր գիտելիքները կդառնային մեռած կապիտալ, որը չի կիրառվում, չի կենսագործվում։ Մենք սովորում ենք, կենսափորձ ենք ձեռք բերում միայն թե սոսկական հետաքրքրությունից դրդված, այլ որոշ պրակտիկ նպատակների համար, այսինքն՝ նկատի ունենք հարկ յեղած դեպքում այդ գիտությունները կիրառելու անհրաժեշտությունն ու հնարավորությունները։

Ինդուկցիան և դեդուկցիան տարբեր պրոցեսներ լինելով հանդերձ, սերտորեն կապակցված են ու փոխադարձաբար պայմանավորում են միմյանց։ Ինդուկտիվ մտահանգումն հնարավոր է անալոգիայի ճանապարհով և դրա համար էլ իր մեջ ունի ընդհանրության որոշ տարրեր, այսինքն յուրաքանչյուր ինդուկցիա այս կամ այն չափով նաև դեդուկցիա յի։ Միաժամանակ ինդուկտիվ մտահանգման արժեքը գերոյի հավասարվեր, յերթե նա մնար ուղեղում իբրև քարացած ու անշարժ և չկիրառվեր պրակտիկայում, այսինքն չվերածվեր դեդուկտիվ մտահանգման։

Մյուս կողմից դեղուկախիվ մասհանգումն ամբողջապես ինդուկցիայի արդյունք է այնքան, որքան բոլոր ընդհանրացումները, սինթեզները, փորմուլները, գաղափարները մենք ձեռք ենք բերել կոնկրետ փորձի հետևանքով, այսինքն անհատականից, յեզակիից, առանձինից անմիջական զգայնական ըմբռնումներից դեպի ընդհանուրը։ Որքան ճիշտ է ինդուկցիան, այնքան հաստ չի, կարող է իրական և դեդուկցիան։

Վերջի-վերջո դեդուկտիվ մտահանգումն պրակտիկայի ճանապարհով ստուգված և գտնում ևս ավելի ճշգրիտ ու բազմակողմանի։ Այն հարցը,—գրում է Մարքսը,—թե առարկայական ճշմարտությունը հատուկ է մարդկային մտածողությանը, չերբեք եղ տեսության հարց չէ, այլ պրակտիկ հարց է։ Պրակտիկայում պետք է մարդ ցույց տա իր մտածողության ճշմարիտ լինելը, այսինքն՝ նրա իրականությունը, ուժը և այս աշխարհյան լինելը։ Պրակտիկայից մեկուսացած վեճը՝ մտածողության իրական կամ ոչ իրական լինելու մասին՝ զուտ սխոլաստիկ հարց է (Մարքս Թեզեր Ֆոյերբախի մասին, չերկրորդ թեզ)։

Այն դեպքում, չերբ մտահանգումը չի չեղնում պրակտիկայի, չի ստուգում իր ավյալները պրակտիկայում, գտնում է ֆանտաստիկ, այսինքն չի արտացոլում իրական կապերն ու փոխհարաբերությունները։ Ընկեր Ստալինը կուսակցության 18-րդ համագումարում աված զեկուցման մեջ քննադատելով և արժանի հակահարված տալով ֆանտաստիկ, իրականությունից կորցրած չեղուկների ներկայացուցիչներին, բերից հետևյալ որինակը՝ «Ի՞նչ ժամանակաշրջանի ընթացքում կարելի չ ոնտեռոպես անցնել կապիտալիստական գլխավոր չերկրներից չուգունի արտադրության քանակով առաջ ընկնելու։ Պետպլանի հին կազմի մի քանի աշխատողները չերկրորդ հնգամյա պլանը կազմելու ժամանակ առաջարկում էին չուգունի արտադրությունը չերկրորդ հնգամյակի վերջում պլանով նախատեսել 60 միլիոն տոննի չափով։ Այդ նշանակում է, որ նրանք տեսել 60 միլիոն տոննի չեղնում էին չուգունի ձուլման տարեկան տասը միլիոն տոննի չափով աճելու հնարավորությունից։ Այդ, ի հարկե, ֆանտաստիկա չեր, չեթե վոչ ավելի վատ։ Ի միջի այլոց, այդ ընկերները ֆանտաստիկայի մեջ էին ընկնում վոչ միայն չուգունի արտադրության բնագավառում։ Նրանք գտնում էին, որինակ, որ

յերկրորդ հնգամյակի ընթացքում բնակչության տարեկան աճը ԽՍՀՄ-ում պետք է կազմի 3—4 միլիոն հոգի, կամ նույնիսկ գրանից ավելի։ Այդ նույնպես ֆանտաստիկա չէր, չեմ վոչ ավելի վատ»։ (Ստալին, «Հաշվետու զեկուցում կուսակցության 18-րդ համագումարում», Պետհրատ—Քաղ. գր. հրատ. էջ 27—28)։

Այդ մտահղացումը, վորը գուտ մահալեզուական է, իրականության հետ վոչ մի առնչություն չունի և իրենից ներկայացնում է տավտալոգիա, տոկունան բառախաղ, վորի շնորհիվ հնարավոր է դառնում միաժամանակ մեկնաբանել յեղափոխական մեջ և՛ հաստատել, և՛ ժխտել տարաշարված սկզբունքը, կռվում է սոֆիզմ։ Սոֆիզմը (սոփեստականությունը) պրոտեական մտածողության դարձնում է ձևհնածություն, լուռ վորում այսպես ճարպկության որյակը վոչ ֆի տարեկաններն են, այլ բառերը։

«Բնության մեջ վոչ մի հնարավոր չունեցող գաղափարները,—գրում է 18-րդ դարի ֆրանսիական խոշոր մտածիրյալ Դիդրոն,—կարելի յե համեմատել հյուսիսի այն անասունների հետ, վորոնց ծառերը չունեն արմատներ։ Բավական է քամու թեթև ատակությանը, այդպիսի մի ամբողջ անասուն շուռ տալու համար, բավական է ամենաչնչին մի փաստ, վորպեսզի գաղափարների մի ամբողջ անասուն շուռ տրվի» (Дени Дидро, Сочинение, т. I, стр. 304—305։

ՄՏԱԾՈՒԹՅԱՆ ԱՆԱՏԱՐՆՈՒԹՅՈՒՆԸ

Մտածության խանգարումները կարող են արտահայտվել յերկու կերպ՝ կամ արգելակմամբ և կամ ծայրահեղ պրպտածությամբ։

Մտածության արգելակման դեպքում մարդը խիստ դժվարանում և հավաքել յուր մտքերը, գլխում դղում և ինչ վոր տարակուսյուն ու դադար։ Յեթե ուղղում վորոշ մտքեր առաջանում են, դրանք խիստ սահմանափակ են լինում, աղքատ, աննշան։ Հաճախ այդպիսի հիվանդները բարբառվելն առանձնանում են իրենց շրջապատից, վոչնչով չեն հետաքրքրվում, աշխատում են հեռու մնալ մտերիմներից, հարազատներից, ընդհանրապես կորցնում են իրենց սոցիալական կապերն ու դառնում են մենակյաց, մելամաղձոտ ու ինքնամփոփ։

Մտածողության պրկվածության դեպքում անհատի մտքերն ու խոհերը խիստ արագ են ընթանում ու անընդհատ հաջորդում են մեկը մյուսին։ Մարդու ուշադրությունը լցվում է բազմաթիվ մտքերով, զարգացից և վոչ մեկը յերկար չի մնում ուշադրության մեջ, այլ մեծ արագությամբ անհետանում են մարդու գիտակցության միջից։ Հանկարծակիորեն ծագող ու չքացող մտքերի տարափից հիվանդը գլուխ հանել չի կարողանում, վորի պատճառով արտաքնապես հարուստ թվող դատողություններն ըստ յության դատնում են վոչ տրամաբանված, ազգատ, անկապ ու խիստ մակերեսային։ Տառապում է այսպես կոչված անընդատակ մտածողությունը, վորը սակայն անմիջապես արտահայտվում է արտաքնապես շատ ճոխ, բայց բուն յության վոչինչ չնշանակող բառերի տարափով։ Այսպիսի բառերն իրար հետ շաղկապված են վոչ թե արտամտանորեն, այլ պատահականորեն, զուտ արտաքին նմանության։

Տրամաբանական մտածողության քայքայումը կարող է արտահայտվել տարբեր ձևերով. «Մի դեպքում հիվանդի մոտ ամբողջապես դադարում է արտամտանելու ունակությունը, տառնում է խորը թուլամտություն, մարդը բոլորովին հնարավորություն չի ունենում մի միտք շաղկապել մյուսի հետ, մի շարք դեպքերում էլ արտամտանական գործողությունները հնարավոր են լինում միայն շատ սահմանափակ չափով և արտահայտվում են իրարից հատված դատողություններով, վորոնք արտամտանորեն իրար միացած չեն։ Այլ դեպքերում ձևական արտամտանությունը պահվում է, արտաքնապես դատողությունները ճիշտ են, բայց բայակայում է խելացի, ներքին կապն առանձին դատողությունների միջև և վերջապես՝ ավելի թուլ քայքայումների ժամանակ նկատվում է մտավոր ենթրդիայի նվազումը» (Корсаков, «Психиатрия», стр. 135)։

Այսպես կոչված լաբիրինթոտային մտածողության ժամանակ մարդիկին միտքը վերջ ի վերջո արտահայտում է մի բան, միայն թե կոմիկական ու վոլտերապատկան ճանապարհներով։ Այսպիսի դեպքերում մարդը պատմում է՝ շեղվելով ավելորդ մանրամասնությունների վրա, վորոնք մի քանի

անգամ կրկնվում են, ստացվում և բառերի տավտալոգիա, միա-կերպ կրկնություն։

Վերոհիշյալ հիվանդությամբ տառապող 12 տարեկան մի երեխա, պրոֆեսոր Ոզորեցկու այն հարցին, թե ինքը բարեկամներ ունի, թե ոչ, տվեց այսպիսի պատասխան՝ «Ցեղբայրս Փիլիպոսն է։ Նրան Փիլիպոս են կանչում։ Նա քաղաքից է յեկել։ Նա քաղաքում է ծառայում, նա քաղաքից է յեկել, շատ նվերներ է ստացել նա, ո՛, վորքան ուժեղ է։ Վերցնում է այսպես մի փութ, ձեռքով ու բարձրացնում (ցույց է տալիս ձեռքով, թե ինչպես յեղբայրը բարձրացնում է փութը), նրա համար ամեն բան վոչինչ է, նա մի անգամ հարյուր տարվից ներքև կշռավ, նա ուժեղ է, այդ նրա համար վոչինչ է։ Վեր կացավ ու յերգեց։ Դյուղում նրան քեռի Փիլիպոս են կանչում, հարգում են։ Կնոջը դվաչոր եր բերել կիսախոշիկներ, բոլորը նրան գիտեն, նա քաղաքից է յեկել, հարգում են նրան» (Озорецкий, «Психопаталогия детского возраста», стр. 437, Учпедгиз 1932 г.)։

Մտածության խանգարումն անմիջապես ազդում է գրավոր և բանավոր խոսքի վրա խանգարման խստության, վորովհետև խոսքը և մտածությունը սերտորեն կապված են իրար հետ և փոխադարձորեն պայմանավորում են միմյանց։

ՑԵՐԵԽԱՅԻ ՄՏԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ցերեխայի մտածության յուրահատկությունների ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ դիտնականներ։ Հատկապես այս ասպարիզում արժեքավոր աշխատանք է տարել շվեյցարական դիտնական Պիաժեն, վորն իր յերեխայի մտածությունը նվիրած աշխատության մեջ բազմաթիվ սրամիտ փորձերի ու դիտողություններին հիման վրա կարողացավ ապացուցել, վոր յերեխան իր բոլոր հատկություններով մեծ վերբերյալած պատճենը չէ, ինչպես կարծում էին մինչև այդ մի շարք բուրժուական դիտնականներ։ Պիաժեն ընդգծեց, վոր մեծի և փոքրի մտածության տարբերությունը միայն քանակական չէ, այլև վորակական։

Իբրև յերեխայի մտածության ու խոսքի համար բնորոշ հատկություններ, Պիաժեն առաջադրում է եգոցինտրիզմը և սինկրետիզմը։

Ըստ Պիաժեյի յերեխայի մտածության եգոցենտրիզմը և սինկրետիզմը պայմանավորված և մաքուր բիոլոգիական պատճառներով։ Յերեխայի հոգեբանությունը յուր հիմքում ունի բիոլոգիական և վոչ սոցիալական որենքներ։ Յերեխայի մտածության եգոցենտրիզմը կայանում և նրանում, վոր նա աշխարհի առարկաներին ու իրերին մոտենում և յուր սուբյեկտիվ տեսանկյունից յնկնելով։ Իրերի ու առարկաների գոյությունը յերեխան պատճառաբանում և իրենով։ «Կովը նրա համար և վորպեսզի ինձ կաթ տա», «Աթոռը նրա համար և, վորպեսզի յես նրա տեմ» և այլն։ Առաջարկելով յուր սուբյեկտիվ հասկացողությունը, յերեխան այդ ընդունում և իրրև ճշմարտություն։ Միաժամանակ յերեխան չի կարողանում հասկանալ ուրիշների տեսակետը, համեմատել յուր կարծիքը իրերի մասին ուրիշ մարդկանց կարծիքների հետ։ Նա հոգ չի քաշում յուր հայացքները հասկանալի ու համոզկուցիչ դարձնելու մասին։ Յերեխան միշտ կարծում և, վոր անկասկածելիորեն ինքը միշտ ճիշտ և։

Յերեխայի մաքի սինկրետիզմն այն և, վոր նա չի աշխատում յերեվույթները դասավորել ըստ պատճառակցական կապակցությունների, յերեխայի ընդհանուր յեզրակացությունները պատճառաբանված չեն, այլ ուղղակի մի շարք փաստերի մեխանիկորեն դումար են։ Ընդունելով ընդհանուր սխեմաներ, յերեխան անսիզի չի յենթարկում դրանք, այլ ուղղակի կամայնորեն յուր մըտքով անցածը հատարում և այդ սխեմայի հատկությունը։ Որինակ, յերբ փոքրիկ Ալաբեկին հարցրին, թե ինչու ամպերը ներքեվ չեն ընկնում, նա անմիջապես պատասխանեց, վոր ելեկտրական թելերը բռնում են և թույլ չեն տալիս ընկնելու։ Պիաժեն գըտում և, վոր զուտ բիոլոգիական պատճառներ ունեցող եգոցենտրիզմը և սինկրետիզմը հետագայում սոցիալական պայմանների և հատկապես ուսուցման ազդեցության տակ բոլորովին վերանում են, անհետանում և դրա փոխարեն մարդն սկսում է մտածել պատճառաբանորեն, օբյեկտիվորեն, հասարակայնորեն։

Իհարկե եգոցենտրիզմի վորոշ տարրեր անպայման յերեխաների մոտ կան, չպետք է մոռանալ վոր աշխարհի իրերի ու յերեվույթների հետ ծանոթանալը յերեխան սկսում է իրենով, ինքնաճանաչությամբ։ Բայց Պիաժեյի ընդհանուր կոնցեպցիան ճիշտ չե, իդեալիստական և։

Յուրաքանչյուր կենսափորձի առաջին աստիճանը դա յուրաքանչյուրը, հարուստը, այն անձնական, որի մեջ նա ապրում է, այն մարդը, որը նրան կերակրում է, խնամում, նրա մասին հոգ տանող հայրիկն է, նրա խաղալիքներն են և այլն։ Ուրիշ և զարմանալի ոչինչ չկա, որը յուրաքանչյուրի սկզբնական շրջանում իրերի և առարկաների մասին հասկացողություն ունի այնքան, որքան նրանք փորձի ունենում իրենց, յուրաքանչյուր մարմնական պահանջների հետ։ Այս հասկությունը յուրաքանչյուր մեջ մաքուր բնազդական վոչինչ չի պարունակում, այլ սոցիալական փորձի առաջին աստիճանն է, զարգացման անհրաժեշտ նախապայման։ Սա եզրակացություն չէ և յուրաքանչյուր անհատապաշտական վոչինչ չունի։ Վարպետ ծնողներ դաստիարակում են, որ իրենց յուրաքանչյուրը չեն պիղծում խաղալիքները ուրիշներին, չեն բաժանում իրենց համար պինդ քաղցրավենիքն ուրիշ յուրաքանչյուրի հետ, և վախենում են, որ յուրաքանչյուր խիստ յուրաքանչյուր պատիժ չեն հասկանում, որ այսպես առանձնապես վատ բան չկա։ Յուրաքանչյուրն անկարող եղակի լինելով յուր պահանջները ինքնուրույն կերպով բավարարել չի կարող, այսինքն նա հնարավորություն չունի ցանկացած խաղալիքը կամ քաղցրավենիքը գնելու, այլ պատճառով էլ նա յուր ունեցածը հեշտությամբ չափով և պիղծ ուրիշներին։ Ուրիշ բան է, երբ ծնողները արհեստականորեն աշխատում են յուրաքանչյուրի մեջ մայրենի յուրաքանչյուրություն, հակադրել նրան ուրիշ յուրաքանչյուրի։ Այս դեպքում եգոիզմը, որը յուրաքանչյուրի հոգու զարգացման անհրաժեշտ ու անցողիկ ժամանակավոր մի երեույթ է, - դառնում է ախտաբանական, այլասերում է յուրաքանչյուրին։ Այս մասին ավելի մանրամասն կխոսենք կամքի դաստիարակության ժամանակ։

Ինչ վերաբերում է սինկրետիզմին, ապա դա նույնպես բնական է և ոչ թե զուտ պաթոլոգիական, այլ հիմնականում սոցիալական պատճառներից։ Յուրաքանչյուրն ունի բավականին սուր հետազոտող ուղեղ։ Նա շրջապատի յուրաքանչյուրներին անդադար վերաբերվել չի կարող, նա ուզում է դիտել, քննել, իմանալ ինչպես են և ինչու։ Կենսափորձի պակասությունը հնարավորություն չի տալիս նրան յուրաքանչյուրները ճիշտ պատճառաբանել, դրա համար էլ նա դիմում է կամայական բացատրությունների, որոնք նույնպես իմաստ-պատճառ, ոչ լրիվ փորձի հետևանք են։ Յուրաքանչյուրը

տալիս է յերեվույթների վոչ օբյեկտիվ, բայց որիգինալ ու սրտաշարժ բացատրությունը: Ջուկովսկին բերում է հետեվյալ օրինակը. այն հարցին, թե ի՞նչպես կարող է կռասակցական լինել—պատասխանում է յերեխան,—չե վոր նա մամային շարունակ հայհոյում է վատ է վարվում նրա հետ: Եակերը բերում է յերեխայի մտածողության օրինակներ հետևյալ հետաքրքիր օրինակը. «Փոքրիկ Դիլդան գիտեր, վոր տատիկն ունի ժամացույց մանյակի հետ միասին: Նման ժամացույց նա ուրիշ վոչ վոքի մոտ չեր տեսել: Դիլդան մի անգամ լսել, վոր հայրն ասում է մորը՝

— Ինչ ևլ հարիավոր է այդպիսի մանյակ վնել—զարմացած հարցնում է՝ «Ջի վոր մաման տատիկ չէ, ինչպես կարող է մանյակ ունենալ»:

Աչալուրջ այն, ինչ վոր Պիաժեն համարում է բիհեվիորիստ ու անփոփոխ՝ նաև փղոցոգիական և նույնիսկ ավելի բարձր հետևակի, յերեխաների համար, վոչ այլ ինչ է, քան սոցիալական մտածողության զարգացման անհրաժեշտ մի հետապ, վորը փոխվում է ու վերակառուցվում յերեխայի սոցիալական վարքի, գործունեության ընթացքում:

Պիաժեյի և բուրժուական մի շարք այլ գիտնականների հիմնական սխալն այն է, վոր նրանք խոսում են յերեխայի մտածողության մասին ընդհանրապես, առանց նկատի ունենալու, վոր յերեխան աճում է, մեծանում սոցիալական միջավայրում, վորն իր կնիքն է դնում յերեխայի մտածողության բնույթի վրա: Նա բիհեվիորիական ընդմիշտ տրված քարացած մի բան չե, այլ ունի զարգացում ու փոփոխություններ: Զարգացման յուրաքանչյուր հետապ խիստ անհրաժեշտ է հաջորդի համար, վորովհետև նա և՛ նախապատրաստվում է, և՛ փոփոխված կերպով նույնպես մտնում է հաջորդի մեջ: Յերեխայի մտածողության զարգացման բոլոր շրջանները որգանապես, օբյեկտիվորեն, անքակտելիորեն կապված են իրար հետ:

Մտածողության ևլեմենտներ կան այն յերեխաների մոտ, վորոնք դեռևս չեն սովորել խոսել: Շտերնը յերեխայի մտածողության առաջացումը կապում է խոսքի առաջացման հետ և նույնիսկ ավելի ուշ, այն մոմենտի հետ, յերբ յերեխան կատարում է յուր այն պլանը, «վոր ամեն մի իր ունի յուր անունը»: Մեր

կարծիքով Շահրնը մոռանում է, որ յերեխայի մոտ նախքան խոսելը կան բառային պատկերացումներ, այսինքն պասիվ խոսք։ Յերեխան ուրիշների ասածը հասկանում և շուտ, ավելի վաղ քան սովորում է խոսել։ Մենք ունենք բազմաթիվ փաստեր, որոնք հերքում են Շահրնի վերոհիշյալ կարծիքը։ Որինակ, փոքրիկ անատամ Մարիամն, չկարողանալով ամբողջ ու չկլպած դեղձն ուտել, դիմում է մամային՝ «ապապա». ուզում է ասել, որ մամա դու կծի, մորպեսզի յես կարողանամ ուտել։ Գառլը պատմում է, թե ինչպես ինքը յերեխային դրված մոր հետ զբոսնում էր պարտիզում։ Յերեխան ուզեց մորենի ուտել, այդ պատճառով էլ նա ձեռքով ցույց տվեց մորենու թուփը և մեծ ինքնավստահությամբ պահանջեց։ Հայրը վճռականորեն մերժեց։ Այդ ժամանակ յերեխան հոր գլուխը անցավ մոր գիրկը և մորից պահանջեց մորենի։ Պարզ է, որ յերեխան ուզեց փորձել իր բախտը։ Յերեխան մոտեցավ, յեթե հայրիկի մոտ չհաջողվեց, գուցե մայրիկի մոտ կհաջողվի։

Կանոն չառնելով յերեխայի մոտածողության զարգացման հոսանքների վրա, համառում կերպով պետք է ընտրություն նախադպրոցականի և դպրոցականի մոտածողության առանձնահատկությունները, ինարկե, չմոռանալով այն անհատական առանձնահատկությունները, որ կան տարբեր յերեխաների մոտ։

Նախադպրոցականի մոտածողությունը հիմնականում կոնկրետ ձեվ ունի։ Յերեխան դժվարանում է կատարել բարդ տրամաբանական կապակցություններ և դատողություններ կազմել իրերի և սարկանների մասին ընդհանրացում։ Նախադպրոցականի կենսափորձը շատ էլ հարուստ չէ։ Նա դեռևս լրիվ տեսակցություն չունի որևիցե աշխարհի մասին։ Նրա ճանաչողությունը հաճախ սահմանափակ է և հիմնականում ընդգրկում է միայն յերեխային անմիջապես շրջապատող առարկաներն ու իրերը։ Այդ իրերի ու առարկաների մասին ունեցած նրա հասկացողությունները էլ հիմնականում բխում են այն անմիջական հարաբերություններից, որ յերեխան ունեցել է նրանց հետ։ Այդ պատճառով էլ տարբեկան զգացմունքային վերաբերմունքը հանդեպ սեռն մի յերեվույթի, հաճախ գերակշռում է իմաստը։ Յերեխան մոտածում է կոնկրետ կերպով և զգացմունքային դատողությամբ։ Նախադպրոցական հասակի

յերեխային միշտ պետք է ցույց տալ, թե ինչի մասին է խոսքը, կոնկրետ առարկաների ոգնությամբ միայն ստիպել մտածելու։ Որինակ՝ տասը նրա համար կամ տասը խնձոր է, կամ տասը մատ և այլն։ Ընդհանրապես տասի մասին նա հասկացողություն չունի։ Յերեխան չի հասկանում հնարավորն ու անհնարը, թույլատրելին և անթույլատրելին, բարին ու չարը և առհասարակ «ընդհանրապես»-ը։

Այս կամ այն բանի թույլատրելի և անթույլատրելի, հնարավոր և անհնարին լինելու մասին նա հասկանում է կոնկրետ, անմիջական սիտուացիային վերաբերող առարկաների, յերևույթների նկատմամբ։ Այդ է պատճառը, որ զարմանալի դիտողությունը միշտ չի զուգակցվում դատողությունների հետ։ Յերեխան դիտում է, փաստեր հավաքում, ծանոթանում և կոնկրետ առարկաների հետ, լայնացնում է իր մտահորիզոնը, նախապատրաստվում է աբստրակտ դատողություններին անցնելու համար։ Իհարկե յերբեմն պրեմիսով, յերբեմն էլ խիստ որիգինալ յեզրափակումներ յերեխան անում է, բայց այդ դատողություններն ավելի սուբյեկտիվ բնույթ են կրում, քան օբյեկտիվ։

Յերեխայի մտածության մյուս կարևոր հատկանիշը մտքափրի հավաքման, դատողության պրոցեսի դանդաղ ընթացքն է։ Յերեխան արագ մտածել, կռահել, անմիջապես մտքերը հավաքել չի կարողանում։ Դրա համար պահանջվում է վորոշ ժամանակ։ Դանդաղկոտությունը ընորոշ է յերեխայի համար ոչ միայն մտածության, այլ և հոգեկան այլ ֆունկցիաների (հատկապես ըմբռնման և հիշողության) համար։ Եքսպերիմենտալ հոգեբանության ներկայացուցիչները, իհարկե վոչ առանց չափազանցությունների մեջ ընկնելու, գտնում են, վոր յերեխայի մտածության տեմպը մեծերի հետ համեմատած հինգ անգամ ավելի դանդաղ է։

Այստեղից պարզ է, թե վորքան զգույշ պետք է լինել յերեխայի հետ նրա գիտելիքների քանակն ստուգելու տեսակետից։ Ինտելեկտների ժամանակ յերբեմն թույլատրելի չի յերեխային շշմեցնել հարցերի տարափ թափելով գլխին։ Պետք է նրան ժամանակ տալ մտածելու, հասկանալու, թե իրենից ինչ են ուզում, մտքերը հավաքելու և գտնելու համար։

Միաժամանակ բնորոշ է նախադպրոցականի մտածողության համար և հարցերի ինքնուրույն լուծման ձգտումը: Նախադպրոցականն ունի բավականին անհանգիստ, պրպտող ուղեղ, նրան զբաղեցնում է ամեն ինչ, նա ուզում է յուրաքանչյուր հետաքրքիր երևույթի բացատրությունը գտնել հնարավոր չափով ինքնուրույն կերպով: Առաջին քայլն այդ ասպարիզում խաղալիքները չարգելն է: Ցերեխան ուզում է պարզել, իմանալ, թե ինչ տիկնիկը, ձին, արջուկը և այլն ինչից են կազմված: Ըստ մորում նա չի հետաքրքրվում յուր չկրակայությունների ճշտությամբ: Նա բավարարվում է միայն ընդհանուր, անորոշ, հաճախ վոչ բնորոշ պատասխաններով: Յուր կեղտափակուճների մեծ մասը նա կատարում է շատ մակերեսորեն: Տեսնելով, վոր հավի ձագուկները դուրս են գալիս ձվից, ցերեխան կեղտակացնում է, վոր կատուն էլ է ձու ածում, վորպեսզի նրանցից ձագուկներ դուրս գան:

Հետզհետե անհատական կենսափորձի հետ մեծերի ազդեցության տակ ցերեխան կարողանում է վոչ միայն հարատացնել իրերի և առարկաների մասին ունեցած յուր հասկացողությունները, այլ և քննադատական մոտեցում ունենալ այդ հասկացողությունների հանդեպ:

Ցերեխայի դատողությունները այլևս թեթև, մակերեսորեն չեն, ցերեխան փնտռում է, աշխատում է պարզել իրականության այնպես, ինչպես վոր նա կա: Նա արդեն գտնում է առարկություն յուր ցերեվակայածի և իրականության մեջ, այնքան տարբ և դալիս պրակտիկան իրերի ճշմարտության չափանիշ ընդունելու սկզբունքը: Մտածողությունը դառնում է իրերի և առարկաների փոխհարաբերությունների իրական արտացոլումը: Ցերեխան արդեն կարողանում է ջոկել և գտնել թվացողից, անհրաժեշտը պատահականից: Զարգանում է նաև ցերեխայի կամավոր, ակտիվ ուշադրությունը, վորը լորմաբար նախան մտածողության ամենատնհրաժեշտ նախապայմանն է հանդիսանում:

Հատկապես մեծ չափով ազդում է դպրոցականի մտածողության զարգացման վրա ուսուցիչը: Ցերեխան դպրոցում ստանում է սիստեմատիկ ու հետևողական, դիտավորյալ կերպով պատճառաբանված գիտելիքներ շրջապատող կեր-

վույթների, ձայնի կապակցությունների ու գործող ներքին որենքների մասին։ Դիտելիքների սիստեմատիկ և վոչ պատահական կուտակումը զարգացնում է յերեխայի մտածողությունը և հնարավորություն է տալիս նրան հանելու և՛ ճշով, և՛ բովանդակությամբ ավելի ճիշտ ընդհանրացումներ, համեմատություններ, դատողություններ, յեզրափակումներ։ Մտածողությունը վորպես փոխվում է մինչ ավագ դպրոցի հանդեպ ակտիվ ու ավելի խելացի վերաբերմունք ունենալու շնորհիվ։

Ընկ. Մ. Սաֆրոնյանի կատարած հետազոտությունները (հետազոտված է յեղել 165 յերեխա Մոսկվայում) ցույց տվեցին, թե ինչպես յերեխայի հասակային զարգացման հետ միասին նրա մոտ յեղած ընդհանուր բնորոշումներն ստանձնաբար դիջում են տրամաբանական յեզրակացություններին։

Ահմանի հետազոտությունները տալիս են ճիշտ տրամաբանական յեզրափակումների հետևյալ պատկերը։

Տարիք	6—7	8—9	9,—9,6	9,6—10	11—13
ճիշտ յեզրափակումների տոկոսը	33	39	45	63	84

Այս աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպիսի դպրոցի և հասակային կենսափորձի աճող ազդեցության տակ մեծ չափով ավելանում է ճիշտ յեզրափակումների քանակը։ Սա հատկանշական է հատկապես 9 տարեկան հասակի համար (3-րդ դասարան) ի տարբերություն վոչ լրիվ միջնակարգ դպրոց անցնելու պահին։

† ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՂՈՒՆԸ

Յերեխաների մտածողության խնդիրներին ինքնուրույն ու ջննադատական մոտեցում ունենալու և լուծելու գործում մեծ դեր ունի կատարելու ուսուցիչը։ Լավագույն ուսուցիչն աշակերտին յերբեք պատրաստի հայեցողի դերում չի թողնում, այլ դործադրելով դատավանդման ակտիվ մեթոդներ, հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն մտածելու և ուսուցչի ղեկավարությամբ հանելու համապատասխան յեզրակացություններ։ Նա չե լավ ուսուցիչը, ով այնպես պարզ ու սպառիչ է բացատրում

դասը, որ աշակերտին այլևս ոչինչ չի մնում ինքնուրույն անելու։ Լավագույն ուսուցիչը տալով հիմնական պրոբլեմները, աշխատում է շարժել յերեխայի ուղեղը, տալ նրան հնարավորություն ինքնուրույն կերպով հանգելու համապատասխան գիտական յեզրակացություններին։ Պետք է հասկանալ, որ այնտեղ, որտեղ չկան դժվարություններ, ամեն ինչ հարթ ու հայելու նման պարզ է, այնտեղ չի պործում մարդու միտքը, հետևապես և չի զարգանում, չի կատարելագործվում այն։

Միաժամանակ ուսուցիչը յուր դասը այնպես պետք է կառուցի, որ աշակերտի համար դառնա մտածողության ուղիներ։ Որինակ՝ պետք է ամենից առաջ պարզ ու շեշտակի դրվի հավապատասխան առանցքային հարցերը, որոշվի նրանց նշանակությունը և այն նախադրյալները, որոնցից յելնում ենք այլ հարցերը առաջադրելիս։ Ուսուցիչը սիստեմատիկաբար և տրամաբանորեն պատճառաբանելով փաստերը, յերկաթյա լոգիկայով, քայլ առ քայլ պետք է հասցնի աշակերտներին անհրաժեշտ գիտակցին, իրականությունից բղխող յեզրակացություններին։

Այնտեղ, որտեղ ուսուցչի միտքը թափթփված է, տրոհված, անսիստեմ, տարտամ, վոչ հետևողական կամ վորտեղ ուսուցիչը մեխանիկորեն կրկնում է դասագրքի տողերն առանց բացատրելու, թե ինչու, ինչպես և այլն, այնտեղ յերեխան էլ սովորում է թափթփված մտածել։ Ճիշտ մտածելու համար վճռական նշանակություն ունի դիալեկտիկական մատերիալիզմին տիրապետելը։ Լավագույն ուսուցիչը հենց սկզբից, նույնիսկ առանց փիլիսոփայական բարդ տերմիններին ծանոթացնելու, այնպես դիտականորեն կշարադրի յուր նյութը, որ յերեխաները նախապես (նախքան դիալեկտիկական մատերիալիզմին ծանոթանալը), արդեն կարողանան մտածել դիալեկտիկորեն։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է մտածողությունը։
2. Ի՞նչ հարաբերություն կա զգայնության և մտածության միջև։
3. Ի՞նչպես են իդեալիստները բացատրում մտածությունը։ Տվեք այդ բացատրության քննադատությունը։

4. Ի՞նչ դեր և խաղում պրակտիկան մտածության մեջ։

5. Ի՞նչ տեսակետներ կան խոսքի և մտածության փոխհարաբերության մասին, քննադատեցնք այդ տեսակետները։

6. Ի՞նչպես և մարքսիզմը լուծում խոսքի և մտածության փոխհարաբերության պրոբլեմը։

7. Ի՞նչ և մտապատկերը և ինչ և հասկացությունը. ինչ հարաբերություն կա նրանց միջև։

8. Ի՞նչ և աբստրակցիան։

9. Ի՞նչ և դատողությունը։

10. Ի՞նչ բան և մտահանգումը։

11. Վի՞ճն և ինդուկտիվ մտահանգումը։

12. Վի՞ճն և դեդուկտիվ մտահանգումը և ինչ նշանակություն ունի։

13. Ի՞նչ բան և սոֆիզմը։

14. Ի՞նչպես են արտահայտվում մտածության հանգամանքները։

15. Քննադատեցնք Պլատոնի դրույթները յերեխայի մտածության եգոցենտրիկ և սինկրետիկ լինելու մասին։

16. Ի՞նչպես և զարգանում յերեխայի մտածությունը։

17. Յերեխայի մտածության դաստիարակությունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ենգելս.—«Բնության դիալեկտիկա», եջ 56, 157—162։

Լենին.—«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» և «Դիալեկտիկայի հարցի շուրջը»։

Ленин.—«Философские тетради», стр. 173, 193, 212 и др.

Рубинштейн.—«Основы психологии».

Психология. под редакцией Корнилова, Теплова и Шварца.

Կորնիլով.—«Հոգեբանության ձեռնարկ»։

ԽՈՍՔ

Խոսքը պրակտիկ լեզուն է։ Յերբ կենդանի մարդիկ իրար հետ փոխհարաբերությունների մեջ մտնելիս ոգտվում են վորևե լեզվից հատուկ հնչյունային և սիմվոլական սխատեմներից, այդ

դեպքում խոսքը դառնում է լեզու։ Լեզուն ինքն իրեն հասարակական գիտակցության արտահայտման ձև, իրեն վերնաշենք հիմքում և իմաստավորների զարգացման բոլոր որոնքներին. «Լեզուն ընդհանրապես,— գրում է ակադեմիկոս Մառը,— հետևաբար և՛ գծային, և՛ ավելի քան հնչյունայինը, վերնաշենքային կատեգորիա չի, պայմանավորված արտադրության և արտադրական հարաբերությունների»։

Չի կարելի խոսքը և լեզուն վրչ նույնացնել, վրչ էլ անջատել մեկը մյուսից։ Նրանք փոխադարձաբար պայմանավորում են իրար։ Յուրը մարդկանց փոխհարաբերության կամ մտածության համար կազմակերպված մորևե լեզու չի ոգտագործվում, այլ նա դառնում է մեռած լեզու, այսինքն չի գարգանում։ Իրեն մեռած լեզվի օրինակ կարելի է բերել գրաբարը, որն այլևս չի փոխում իր տարածությունը, նա մեռում է նույնը։ Լեզուն փոխվում է, գարգանում, կատարելագործվում խոսքի միջոցով։ Խոսքն ելիր հիմնական բնույթն ու կառուցվածքն առանում է մորևե մի լեզվից։ Մենք խոսում ու մտածում ենք մորևե լեզվով։ Խոսքի ապրյուրը լեզուն է։ Չկա խոսք առանց լեզվի։

Միմեանցից խոսքը և լեզուն նույնացնել չի կարելի։ Յես կարող եմ խոսել շատ վատ, աղավաղված ֆրանսերենով, գրել, նույն, ինարկե, ֆրանսերեն լեզուն վոչնչով հանցավոր չէ։ Այս դեպքում մենք կարելի է իմ աղավաղած ֆրանսերենից յեզնելով՝ գաղափար կազմել այդ լեզվի մասին։ Յես ընդհակառակը, իմ խոսքը կարող է գերազանցել ավյալ լեզվի հնարավորությունները։ Յես իմ խոսքը կարող եմ ավելի դիպուկ ու շեշտակի դարձընել, ոգտվելով այլ լեզուներից։

Լեզուն գերազանցապես լեզվաբանական կատեգորիա է և ուսումնասիրվում է լեզվաբանության կողմից, իսկ խոսքի որոնքներով հիմնականում զբաղվում է հոգեբանությունը։

✗ ԽՈՍՔԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Խոսքի ֆունկցիաները յերեքն են՝ կոմունիկատիվ, սիգնիֆիկատիվ և աֆֆեկտիվ։

Խոսքի կոմունիկատիվ ֆունկցիան այն է, վոր նա սոցիալական փոխհարաբերությունների, մտքերի արտահայտման, միմյանց բան ասելու միջոց է։

Հնչյունային խոսքը պատմական և, առաջացել և բավականին ուշ, մարդկային հասարակության զարգացման ավելի բարձր աստիճանում։ Խոսքն առաջացել և աշխատանքային կուլեկտիվի անդամների կողմից միմյանց բան ասելու պահանջից։ Ինչպես ընկեր Լենինն և շեշտում, լեզուն՝ «մարդկային փոխհարաբերությունների կարևորագույն միջոց է»։

Ենգելսը յուր «Աշխատանքի մասնակցությունը կապկի մարդացմանը» հոդվածում աշխատության մեջ այսպես և բացատրում լեզվի և խոսքի առաջացումը. «...աշխատանքի զարգացումն անհրաժեշտաբար նպաստեց հասարակության անդամներին ավելի սերտորեն կապվելու իրար հետ, որով հաճախակի դարձան փոխադարձ աջակցության, համատարած գործակցության դեպքերը, և այս համագործակցության գիտակցության դիտակցությունը յուրաքանչյուրի համար պարզ դարձավ։ Կարճ ասած՝ ձևավորվող մարդիկ հասան այն կետին, որ կարիք զգացին մի բան ասելու իրար։ Պահանջն ստեղծեց իր օրգանը—կապկի անզարգացած խոսկասիրը դանդաղ, սակայն հաստատուն կերպով վերակերպվեց՝ միշտ ավող մոդուլացիայի շնորհիվ, և բերանի օրգանները հետզհետե վարժվեցին հոդարաշխ հնչյուններն իրար հետևից արտաբերել» (Ենգելս, «Դիալեկտիկա», 1936, եջ 82)։

Կենդանիների խոսքը հոդարաշխված չե, յուր հիմքում ունի բիոլոգիական օրենքներ միայն, նա սոցիալական պայմաններին չենթակա չե։ Մարդու խոսքը սոցիալական և, պատմական և առաջացել և աշխատանքի ընթացքում, աշխատանքի հետևանքով։

Աշխատանքի շնորհիվ առաջացած մարդու և նրա լեզվի զարգացումը վորոշ չափով ազդել և նաև մարդու հետ մոտ չափով ունեցող կենդանիների վրա, իհարկե, պասիվ խոսքի հնարավորության սահմաններում։ «Վոր աշխատանքի հետ ու աշխատանքի միջոցով լեզվի ծագման այս մեկնաբանությունը միակ ճշտի՞ն է, ապացուցում և համեմատությունը կենդանիների հետ։ Այն քիչ բանը, վոր այս վերջիններս, անգամ նրանց մեջ ամենից զարգացածները, ունեն իրար հաղորդելու, կարող են հաղորդել նաև առանց հոդարաշխ խոսքի։ Բնական վիճակում վոչ մի կենդանի չի զգում խոսելու կամ մարդկային լեզուն հասկանալու դեպքի չի ունենում։ Բոլորովին այլ է, յերբ նա ընտելացված է մարդու կողմից։ Շունը և ձին, մարդու հետ շփվելով՝ ձեռք են բերել այնպիսի զգացողություն, վոր նրանց ուշադրությունը մարդկային խոսքի նկատմամբ այնքան զարգացավ, վոր նրանք հասկանում են մարդկային խոսքի մեծ մասը իրենց տիրոջ տոնից, ինտոնացիայից։ Շունը և ձին, մարդու հետ շփվելով՝ ձեռք են բերել այնպիսի

պիսի զգայուն լսողություն հոգեբաշխ խոսքի համար, որ նրանք սովորել են դյուրությամբ ըմբռնել ամեն մի խոսք, որքան այդ թուլատրում է նրանց պատկերացումների շրջանակը» (Ենգելս, «Բնության դիալեկտիկա», 1936, էջ 82 83)։

Խոսքի սիգնիֆիկատիվ ֆունկցիան արտահայտում է նրանում, որ նա ոչ միայն փոխհարաբերության միջոց է, այլև մտածելու համարյա միակ հնարավորությունը։ Մենք մտածում ենք խոսքերով, միայն թե այդ մտածողությունը միշտ չէ, որ ընդհանային բնույթ ունի։ Իհարկե մեր մտածողությունը և սոցիալական է, նա ուղղված ներփակված չէ, այլ առանում է կոնկրետ արտահայտության խոսքի կոմունիկատիվ ֆունկցիայի միջոցով։ Զափազանց դիպուկ է նկատում ակադեմիկոս Մառը, թե «լեզուն միայն հնչյուն չէ, այլ՝ մտածողություն է։ «Լոգոսն» նախապես կապված է (тяготеет) մտածողային գործած լինելու անհնքի, որը (մտածողն) այսոհետ հանդես է գալիս հանձին ոչ առանձին շերտերի, հանձին հնչյունների, կարճ ասած՝ հանձին լեզվի։ Լեզուն նույնքան հին է, որքան և գիտակցությունը։ Լեզուն հանդիսանում է առարկայական, ուրիշ մարդկանց համար էլ գոյություն ունեցող և միայն դրա շնորհիվ ինձ համար էլ գոյություն ունեցող, իսկական գիտակցություն, և, ինչպես գիտակցությունը, լեզուն էլ առաջ է գալիս ուրիշ մարդկանց հետ հաղորդակցելու անհրաժեշտությունից»*)։

Խոսքի մտածողության միջոց լինելու պատճառը հետևյալն է.

Ցուրաքանչյուր խոսքի ակնհայտն է կապվում բառը։ Բառը ոչ այլ ինչ է, քան առարկայի ներկայացուցիչը, փոխանորդը։ «Խոսքը ոչ միայն ինչ որ օբյեկտիվ բան է իմաստավորում, այլև արտացոլում է, ներկայացնում այն» (Բյուլլեր)։

Թեթև բառը չի իմաստավորում որևէ օբյեկտիվ բան, չի արտահայտում այն, նա կորցնում է իր նշանակությունը, դառնում է անհեթեթ։ Բառն առարկայից դուրս վոչինչ է, անիմաստ արժեքազուրկ։ Զմտնելով առարկայի մեջ, չհանդիսանալով նրա կազմացվող առարկայի բաղկացուցիչ մասը, բառը դառնում է առարկայի սիմվոլը, փոխանորդը, ազդակը։ Եթե մենք մտածելիս սահմանափակվեյինք առանձին կոնկրետ առարկանների ըմբռնումներով, այդ դեպքում խոսքի կարիք չէյինք զգա-

*) Маркс и Энгельс—«Немецкая идеология», стр. 20.

Բայց մտածությունն էլ չենց մտածությունն է նրա համար, վոր նա իրեն չի սահմանափակում առանձին զգայությունների շրջանակներով, իրերն ու առարկաները բազմակողմանի ու լրիվ ըմբռնելու համար մենք կատարում ենք ընդհանրացումներ, այսինքն կոնկրետ զգայություններից գնում ենք դեպի վերացականը։ Այս բանը կատարում ենք խոսքի միջոցով, վորովհետև առանձին բառերը փոխարինում են զգայական ըմբռնումներին մեզ։ Որինակ՝ այժմ ամառվա շոգին չես կարող եմ մտածել ձմեռվա անելիքիս մասին, թեև ձմռան ցուրտն անմիջապես չեմ զգում, սպիտակ ձյունը չեմ տեսնում։

Մուքն արտացոլում է, արտահայտում վոչ թե առանձին առարկաների սպեցիֆիկ կողմերը, այլ իր մեջ իմաստավորում է մի շարք առարկաների ընդհանուր հատկանիշները։ Նշանակում է, նա արտացոլում է այն ընդհանուրը, վոր բնորոշում է մի շարք առարկաների եությունը, նրանց տեղն ու դերը բնության մյուս երևույթների շարքում. «Ըստ եության,—գրում է Հեգելը,—լեզուն արտահայտում է միայն համընդհանուրը»։ Որինակ, մերը չես զործ եմ ածում ժամացույց բառը, զրանով չերքիք էլ չեմ շեշտում վորևե կոնկրետ ժամացույց։ Ժամացույց բառը փոխարինում է, արտահայտում միևնույն ֆունկցիա և բազմաթիվ ընդհանուր կողմեր ունեցող մի շարք առարկաների եական հատկանիշների միասնությունը։

Այսպիսով բառն ինքը զազափարն է, աբստրակցիա, ընդհանրացում։ Մենք տեսանք, վոր մտածությունը հնարավոր է միայն ընդհանրացումների, զազափարների ճանապարհով։ Ահա թե ինչու բառն ինքն աբստրակցիա լինելով, հանդիսանում է մտածության անմիջական գործիքը, միջոցը։

Միաժամանակ պետք է նշել, վոր բառ ընդհանրացումն իր մեջ արտացոլում է առարկաների մեջ իրականացող գոյություն ունեցող կապեր ու փոխհարաբերություններ, վորովհետև մտածության նման բառ-զազափարն էլ առաջացել է անմիջական զգայական ըմբռնումներից, կոնկրետից դեպի վերացականն ընթացող ճանապարհով։ «Մարդիկ առանձին անուններ չեն տալիս,—գրում է Մարքսը,—առարկաների աշխարհ դասին, վորոնց արդեն նրանք իրենց փորձում տարբերել են մյուս արտաքին աշխարհից, մարդիկ տալիս են այդ առարկաներին հա-

տուկ (սեռային) անուն միայն նրա համար, որ իրենց արվեստի հայտնի չի այդ առարկաների մարդկային կարիքները բավարարող հատկություններն...»:

Այսպիսով խոսքը, լինելն հանդես և գալիս մտածության հետ միասին և հանդիսանում է ոչ միայն մտածության միջոց այլև իրականության ու մարդու պրակտիկան արտացոլող իմացական մի ձև: Խոսքի սիգնիֆիկատիվ ֆունկցիան հատուկ և միայն մարդուն և պահանջում է բավականին զարգացած, աշխատանքի միջոցով կազմակերպված ուղեղ: Ցեվ ոչ մի կենդանի նրանցից ամենաազարգացածներն անգամ ոչ միայն չեն մտածում բառերի միջոցով, այլև առհասարակ նրանք զուրկ են սիմվոլիստական մտածության ընդհանրություններից: Կենդանիները ոչ մեկը չեն հասկացել և չեն կարող հասկանալ, որ նրանց զգայարաշարի տակ գտնվող որևէ մի առարկա կարելի չի փոխարինել պայմանական նշանով և առարկայի բացակայության ժամանակ նրան փոխարինել պայմանավորված սիմվոլով, խորհրդանշանով, լինի դա հնչյուններից մի սիստեմ, թե նկար, թե մի այլ արտահայտման միջոց:

Գիտնականների կատարած բոլոր փորձերը կենդանիներին սիմվոլական խոսք սովորեցնելու՝ ապարդյուն են անցել: Այդ և պատճառը, որ բոլոր հետազոտողները համարյա միաբերան ժխտում են խոսքի սիգնիֆիկատիվ ֆունկցիայի գոյությունը կենդանիների մոտ:

Խոսքի ազդեկտիվ ֆունկցիան արտահայտվում և նրանում, որ մենք կարող ենք բառերի, հնչյունների ոգնությամբ արտահայտել միայն մեր զգացմունքները, մեր հոգեկան վիճակները, դեպքում, երբ ծայրահեղ լարված դրության մեջ ենք գտնվում: Ազդեկտիվ խոսքը կարող և տանջանալ մեխանիկորեն, հեռանալ մեր կամքից ու մտածությունից և նույնիսկ անկախ մեր ցանկություններից: Հիմնականում ազդեկտիվ խոսքը ոչ մտածության միջոց է, ոչ էլ հաղորդակցության, միմյանց մեքեր հաղորդելու միջոց, նա ավելի շատ բնազդային ռեֆլեքսների արտահայտություն է:

Պետք է տարբերել խոսքի ազդեկտիվ ֆունկցիան իրենից ազդեկտից, մտքերի հաղորդումն առանց արտահայտիչ, զգացմունքային բնույթի շարժումների խիստ դժվար է: Ազդեկտիվ

խոսքը վոչ թե մտքերի հաղորդումն է, այլ շատ անգամ անպիտանակից վիճակի արատահայտությունն է։ Այնպիսի ձայնարկություններ, ինչպիսին են՝ «ախը», «ոֆը», «վայը» և այլն, կարող են արատահայտվել մարդու կողմից ինքնաբերաբար, առանց ինտելեկտուալ նպատակադրումների։ Աֆֆեկտիվ խոսքը բնորոշ չէ մարդու համար, նյարդան չէ և սակավաթիվ է։ Նա կենդանական խոսքի առանձնահատկություն է։ Ցավ խնայելս չեթե ուշադիր ուսումնասիրելու լինենք այն սակավաթիվ և վոչ հաղորդակցված հնչյուններըը, վորոնք կենդանական խոսք են կոչվում, կըտեսնենք, վոր նրանք համարյա ամբողջովին վոչ հաղորդակցության համար են գործածվում և վոչ էլ մտածողության։ Այդ վոչ հաղորդակցված հնչյուններն ուղղակի նրա որգանական վիճակն են արտահայտում։

Հովհաննես Թումանյանը պատմում է, թե լինելս լուսնկիները լավ են հասկանում գայլի լեզուն։ Միայնակ գայլի վոռնոցը տարբերվում է վոհմակի մեջ գտնվող գայլի ձայնից։ Սոված գայլի վոռնոցն այլ է, կուշտ գայլինը այլ և այլն։ Շատ և գայլերի «լեզվի» մասին շատ արժեքավոր դիտողություններ ունի խոշոր բնագետ վիսկոնտ Ջեկ Լանդոնը։

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԸ

Բանավոր խոսքն ունի հետևյալ ձևերը.

Ա) Մենախոսություն — *երբ խոսում է մեկը, իսկ մյուսները լսում են առանց անմիջական մասնակցության ունենալու խոսակցության պրոցեսին։ Երբեմն մենախոսության որինակ կարելի է բերել դիկտոգոնին, հռետորին, դասախոսներին և այլն։*

Բ) Դիալոգ — *երբ կան խոսակիցներ, այսինքն երբ խոսակցության մասնակցում են երկու կամ ավելի անձնավորություններ։*

Լինում են դեպքեր, երբ մենք բավականին լավ հասկանալով ուրիշների մտածողները, չենք կարողանում արտահայտվել։ Որինակ, մեկը կարող է մեկ ուրիշի ֆրանսերեն լեզվով խոսածը բավականին լավ հասկանա, բայց չկարողանա այդ լեզվով խոսել։ Այս դեպքում մենք գործ ունենք այսպես կոչված պասսիվ խոսքի հետ։ Հայտնի է, վոր պասսիվ խոսքի զարգացումն ավե-

լի շուտ է տեղի ունենում, քան ակտիվ խոսքինը։ Որինակ՝ յերեխան ավելի վաղ է սովորում ուրիշների ասածը հասկանալ քան խոսել։ Անմիջական խոսքը միշտ հետ է ընկնում պասիվ խոսքից։ Սա վերաբերում է նաև այն դեպքերին, յերբ մենք վորևէ նոր լեզու յենք սովորում։ Դրա համար էլ ուսուցիչները պետք է վոչ միայն պասիվ լեզվի (բառածը և կարգացածը հասկանալու) վրա ուշադրություն դարձնեն, այլ և աշխատեն աշակերտների մեջ զարգացնել անմիջական, պրակտիկ խոսակցություններ։

Ինչպիսի մեթոդով էլ ուսուցիչը յանկանա անցկացնել դասը, վերջ ի վերջո, միշտ էլ ծանրության կենտրոնը՝ իրեև կրթության և դաստիարակության հիմնական միջոց, կդառնա նրա խոսքը, դրա համար էլ ուսուցիչը պետք է վոչ միայն լավ տիրապետի յուր առարկային, այլև պետք է կարողանա գեղեցիկ, արտահայտիչ ու դիպուկ կերպով խոսել։

Ուսուցչի խոսքը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

ա) Նա պետք է լինի գրագետ։ Ուսուցիչը պետք է խոսի մաքուր գրական լեզվով, առանց գավառաբարբառի։ Խոսելիս նա պետք է խուսափի այնպիսի ավելորդ ու անխմաստ բառերից, վորոնք խանգարում են մտքերի ճիշտ արտահայտումը և ծանրաբեռնում են լեզուն։ Որինակ, պետք է խուսափել հետևյալ բառերի հաճախակի և անտեղի կրկնություններից՝ «այսպես ասած», «բայց», «սակայն», «ուրեմն», «որինակի համար», «ինչպես տեսնում եք» և այլն։ Այսպիսի դեպքերում աշակերտներից շատերը հաճախ փոխանակ ուսուցչի ասածն ըմբռնելու, հաշվում են նրա դործածած «ուրեմն»-ների կամ «ը»-յերի թիվը։

բ) Ուսուցիչը պետք է խոսի պարզ, վորոշակի, նրա խոսքը չպետք է լինի մշուշոտ և յերկիմաստ, անհասկանալի։ Ոտար բառեր չպետք է շռայլել։ Խոսելիս պետք է հաշվի առնել թե վոր դասարանումն ես պարապում և ըստ այնմ էլ համապատասխան բառապաշար գործածել։ Ուսուցչի խոսքը տրամաբանության որինակ պետք է լինի։ Նա պետք է խոսի կապակցված, նյութը շարադրի սիստեմատիկ և հետևողական կերպով։ յուրաքանչյուր նոր մտք պետք է բղխի նախորդից և հող պատրաստի հետագա մտքերի համար։

գ) Ուսուցչի խոսքը պետք է զգայունքային գունավորում ունենա։ Աշակերտը պետք է հասկանա, որ այն, ինչ ասում է ուսուցիչը, թանկ է նրա սրտին, կարեվոր է, արժեքավոր։ Ուսուցիչը պետք է տպրի յուր առարկայով և տպրեցնի աշակերտներին։ Անտարբեր, ոտը, քար պատշաճի, առանց զգացմունքի տալած բառերը տպավորիչ չեն լինի, չեն առաջացնի աշակերտների մեջ հետաքրքրություն, սեր դեպի անցնելիքը նյութը։

դ) Պետք է խուսափել շարունակ խոսելուց։ Պետք է խոսքն ամրապնդել այլ զգայությունների միջոցով տրվող տպավորություններով։ Ուշ միայն պետք է խոսել լսանալ, այլև կարողանալ խոսեցնել աշակերտներին։

✗ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Գրավորը՝ գիրքը յուր մեջ լուվին ընդգրկում է խոսքի ամենահիմնական հատկությունները։ Նա և՛ մտածության արտահայտման, և՛ տպորդակցության միջոց է։

Հավաքյուտ դեպքերումն է միայն, որ մարդն իր համար է գրում (կոնսպեկտ կազմելը և այլն)։ Նույնիսկ բոլորովին ինտիմ բնույթի հուշատետրը գրելիս, մենք անոլայման ի նկատի կունենանք ուրիշներին, որոնք մի որ կարող են կարդալ մեր մեմուարները։ Մենք սովորաբար աշխատում ենք մեր մտքերը, խոհերը, դիտողությունները, յեզրակացությունները և այլն հայտնել ուրիշներին գրավորի միջոցով, տպորդակից անել նրանց, համոզել, խնդիրներ առաջադրել ու այդ խնդիրների աթծաթծանքը մասնակից դարձնել նրանց։

Գրավոր խոսքը մասսաների զանգվածական, առաջավոր մտքերի տարածման, դիտողությունների մասսայականացման ամենահիմնական դենքերից է։ Ընկերը Լենինը կոմունիստական լրագիրը համարում էր կոլեկտիվ կազմակերպիչ և ագիտատոր։

Գրավոր խոսքը բանավորի հետ համեմատած ունի մի շարք առանձնահատկություններ։ Ամենահիմնականը գրավորի համար անմիջական խոսակցական սիտուացիայի բացակայությունն է, երբ խոսակիցները, այսինքն նրանք, ում վրա ուղղված են մեր մտքերը, գտնվում են մեր (գրողի) տեսադաշտից դուրս։ Ջնայած դրան, մենք պետք է ամեն րոպե պատկերացնենք

խոսակիցներին, վորովհետև գրում ենք նրանց համար։ Լավ է ասել Սմբատ Շահազիզը։

Ձեռ ժամանակից, գրում եմ լեզվով
Վոր առենայն մարդ կարդա, հասկանա...

Խոսելիս մենք տեղնում ենք այն մարդկանց, վորոնց ուզում ենք լսել ասել, մտքեր հաղորդել։ Ձեվի մենք անհետաքրքիր ենք խոսում, կամ բարդ և կամ չափազանց պարզ, իսկույն և չեք կարող ենք ուզիլ մեր սխալը, կենդանացնել զրույցը բազմաթիվ որինակներով, հարմարվել ավյալ աուդիտորիային։ Բայց այլ է խնդիրը գրելիս, չէը խոսակիցներից աւացվելիք այդ անմիջական գրգիռները բացակայում են։ Դրա համար էլ մենք յուրաքանչյուր միտք մի շարք անգամ մշակում ենք, աշխատելով այն հասկանալի գարձնել բոլորի համար, հնարավորին չափ որլինալ լինել, մշուշապատ գարձվածքներ չգործածել և այլն։ Մտքի պարզությունը, հստակությունը, մատչելիությունը և միաժամանակ խոր գիտականությամբ հագեցված լինելը բնորոշ և մարքսիզմի կլասիկների աշխատությունների համար։

Ասելիս լսողները ձեր վորոշ մտքերը կարող են ճիշտ չհեկնաբանել, կամ ուզղակի չհասկանալ։ Վորոշ հարցեր կարող եք նույնիսկ մոռացած լինել, չլուսաբանել։ Լսողները կարող են առարկել ձեզ, չհամաձայնվել ձեր մտքերի հետ, լրացուցիչ փաստարկումներ անել կամ բոլորովին այլ գրություններ առաջադրել, վորպեսի գեպքում դուք հնարավորություն ունեք անմիջապես, տեղն ու տեղը պատասխանել հարցերին, ավելի հստակ ձևակերպել ձեր մտքերը, մոռացածը վերականգնել։ Ըստ հյության առարկողներին նույնպես կարող եք պատասխանել և հաստոգություն կերպով պաշտպանել ձեր մտքերը, թեզերը։ Գրավոր ժամանակ անմիջական խոսակցական սիտուացիայի բացակայությունը զրկում է ձեզ այդ բոլորից։ Դրա համար էլ ստիպված եք ամբողջ պատկերացնել, թե ձեր մտքերն ինչ կերպ կարող են ընկալվել և դրա հիման վրա յել այնպես շարադրել այն, վոր վոչ վոքի համար և վոչ մի գեպքում հնարավոր չի լինի ձեր մտքերը այլ կերպ մեկնաբանել։ Գրելիս դուք աշխատում եք ընդգրկել ավյալ նյութին վերաբերող բոլոր հարցերը և հնարավորության գեպքում սպառիչ լուծում տալ։

Միաժամանակ պետք է պատկերացնել, թե ինչ առարկում-

ներ ու փաստարկումներ կարող են լինել ձեր այս կամ այն մարքի նկատմամբ և նախօրոք պատասխանել այդ առարկություններին։ Ձեզ են վորոշ հարցեր պրոբլեմատիկ են, այդ բանը պետք է նշել։

Այս բոլորից պարզ են և այն դժվարությունները, վորոնց պետք է հաղթահարել գրավոր խոսքի ժամանակ։ Գրավոր խոսքը պահանջում է ինտելեկտուալ և էմոցիոնալ ուժերի մոբիլիզացիա, վարժվածություն, համապատասխան ունակությունների առկայություն, մի խոսքով մեծ աշխատանք յուր վրա։

Պարզ է նաև, թե ինչու գրավոր խոսքը համեմատաբար ավելի ուշ և զարգանում, քան բանավորը։ 9—10 տարեկան յերեխան, վորը կարող է իր տարիքի հետ ժամերով շատախոսել, բոլորովին անուժ է գտնում, յերբ նստում է նույն այդ տարեկին նամակ գրելու։ Ուսուցիչները (վոչ միայն լիովի զաստատուները) շատ լավ հասկանալով գրավոր խոսքի վիճակորի նշանակությունը, պետք է տարիճանաբար, համառ աշխատանքի միջոցով վարժեցնեն, սովորեցնեն յերեխաներին իրենց մարքերը գրավոր կերպով արտահայտելուն, մշակեն համապատասխան ունակություններ։ Այդ տեսակետից ամեն կերպ պետք է վողջունել այն ուսուցիչներին, վորոնք ինքնուրույն գրավոր աշխատանքի վրա հատուկ ուշադրություն են դարձնում տարբերական դպրոցի վերին դասարաններում, իհարկե, հաշվի առնելով յերեխայի հատակային առանձնահատկությունները։

ՆԵՐՔԻՆ ԽՈՍՔ

Ներքին խոսքն ինքը մտածության պրոցեսն է։ Ինչպես հայտնի չէ, թե ինչպիսի մարդիկ ըտբձրաձայն չեն մտածում։ Թատերական մենախոսությունը բարձրաձայն է, վորովհետև այլ կերպ հնարավոր չէ հասկացնել հանդիսատեսին, թե հերոսն ինչ է մտածում։ Մենք մտածում ենք խոսքերի օգնությամբ։ Հոգին պատռում է յուր ծանոթներից մեկի մասին, վորը ձգտելով մտածել առանց բառերի, քիչ ենթարկեր։ Այսպիսով, մտածությունը դա խոսք է, բայց այնպիսի խոսք, վորը հնչյունային արտահայտություն չի ստանում, չի հնչվում, դա ներձայն խոսք է։ Բիհևիորիստներն ասում են, վոր մտածելիս կատարվում են խոսք առաջացնող համապատասխան շար-

ժամանակ, վորոնք սակայն այնքան ուժեղ չեն, վոր հնչյունային արտահայտություն առանան։

Ներքին խոսքի մյուս առանձնահատկությունն այն է, վոր նա մենախոսություն է։ Նա ուղղված չե ուրիշներին, նա խոսակցություն է, վոր վարում է մտածող մարդն իրեն իր հետ։ Ճիշտ է, այդ մենախոսությունն ինքնամփոփ չի մնում մարդու ուղեղում, մտածության հետևանքը լինում է վորևե գործունեություն, փոխհարաբերություն մարդկանց միջև։ Ներքին խոսքն այդ գործունեության նախնական աստիճանն է։

Ներքին խոսքից բղխում է և նրա յերբորդ, հիմնական առանձնահատկությունը, այն, վոր ներքին խոսքը շատ ավելի կրճատ է, քան բանավորը, կամ գրավորը։ Յեթե խոսքն իրեն արստրակցիա չե, ապա ներքին խոսքն արստրակցիաների արստրակցիան է։

Մեր առօրյա կյանքը ցույց է տալիս, թե բառերի պահանջը վորչափ է քչանում, յերբ մտերիմները, հարազատները, նույնիսկ պատահական մարդիկ միևնույն ուղղությամբ են մտածում։ Յերբեմն մի հայացքը, ձեռք տնտղելը շատ ավելի բան են ասում, քան բազմաթիվ նախադասություններ։ Մեծ գեղարվեստագետները (Հերցենը, Տոլստոյը և այլն) իրենց վեպերում և մեմուարներում հրաշալի կերպով արձանագրել են՝ «աչքերով ու հայացքով խոսելու» այդ խիստ հետաքրքրական յերևույթը։ Հիշենք, թե ինչպես Լևինը և Կիտին (Տոլստոյի «Աննա Կարենինա»-յից) նախադասությունների միայն առաջին տառերը գրելով վոչ միայն լրիվ հասկացան իրար, հասկացնվեցին, մտածեցին, այլ և պայմանավորվեցին ամուսնության վերաբերող մյուս հարցերի շուրջը։

Յերբ մտերիմների խոսակցության ժամանակ բառերն այնքան են կրճատվում, վոր ձեռքի մի հպումը կամ աչքի մի նայվածքն ավելի շատ բան են ասում, քան բազմաթիվ ֆրազները, հասկանալի չե, թե ինչքանն ուժով և կրճատվին բառերն այն ժամանակ, յերբ մարդը խոսակցում է ինքն իր հետ, այսինքն մտածում է։ Այս դեպքում բազմաթիվ մարքեր, վոր կարիք կար արտահայտելու, ուրիշներին բացատրելու, հասկացնելու համար, ինքնըստինքյան պարզ են դառնում ու անհասկանալի իրեն՝ մտածողի համար։ Այդ է պատճառը, վոր յերբեմն մեզ համար

ինքնըստինքյան հասկանալի դադարները մենք արտահայտել ժվվարանում ենք խոսքի միջոցով։ Ներքին խոսքը պահանջում է դադարներով մտածելու ու իր մտքերը խոսքով ձևավորելու ունակություն։ Այդ ունակությունը միանդամից ապաջ չի գալիս, այլ զարգանում է յուրահատուկ մտահոգիչների զարգացման հետ միասին։ Ահա թե ինչու փոքրահասակ յուրահանվի մոտ հանդիպում ենք բարձրաձայն մտածելու բավարարի դեպքերի։ Մենք ինքներս էլ յուրը շատ հաճախ ենք լինում, յուրաքանչյուր պիոներ ենք բարձրաձայն մտածությանը։

X ԽՈՍՔԻ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անհամապատասխանությունը խոսքի ասպարեզում արտահայտվում է մի քանի ձևով։

Այսպես կոչված շարժողական ափազիայի ժամանակ մարդը կորցնում է ըստ իր ցանկության խոսելու ընդունակությունը։ Շարժողական ափազիայի ժամանակ մարդու մտածությունը բավականին նորմալ է ընթանում, բայց մարդը զրկված է յուր մտքերը բառերով ձևավորելու հնարավորությունից։ Միաժամանակ մարդը չի կորցնում նաև ուրիշի ասածները հասկանալու ընդունակությունը։ Այսպիսի ափազիայի պատճառը խոսքի շարժողական կենտրոնի, այսպես կոչված բրոկայի կենտրոնի քայքայումն է։ Բրոկայի կենտրոնը գտնվում է ուղեղի ձախ կիսագնդում, յուրաքանչյուր ձախլիկի հետևի մասում։ Ձախլիկների մոտ խոսքի շարժողական կենտրոնները գտնվում են աջ կիսագնդի նույն տեղում։

Սենսորական ափազիայի ժամանակ մարդը հաճախ չկորցնելով խոսելու և մտածելու ընդունակությունը, չի կարողանում գտնել հասկանալ ուրիշների ասածը։ Սենսորական ափազիան առաջ է գալիս այն ժամանակ, երբ փչանում է այսպես կոչված վերնիկեյի կենտրոնը, որը գտնվում է առաջին քունքային ակոսի ձախ կողմում։

Այսպես կոչված պարափազիայի ժամանակ մարդը վոչ միայն պահում է խոսելու ընդունակությունը, այլ և պահում է նաև տրպագիտոս, ըստ վորում արտասանված բառերի տասների մեջ վոչ մի կերպ հնարավոր չէ գտնել արտասանություն։ Շատ դեպքում բառերը վոչ թե կապակցվում են

ըստ իմաստի, այլ պատահականորեն շարվում են իրար կողքի, հաճախ նախադասության կեսին խոսքն ընդհատվում է, խոսակցության թեման փոխվում։

Որինակ, պարաֆազիայով տառապող հիվանդներից մեկը, տեսնելով թռչող ոդանավն ասում է. «Ցղտները բզավում են։ Ոդանավ, ոդանավ, և ահա այնքան բզավեցին, որ ամեն որ անձրևով և գալիս»։ Ցնվ կամ՝ «Ռեզ պետք է համբուրել, միայն ինձ չի կարելի անվել, կիրակրեցնք ինձ»։

Վորոշ դեպքերում ևթ հատկապես մելանխոլիայի ժամանակ, մարդը դառնում է սակավախոս և հոգեկան ճնշված։ Նրա խոսքը քանի գնում ավելի ու ավելի դանդաղ և դառնում է հիվանդը հագիվ է կարողանում մի յերկու բառ ծանրորեն արտասանել իրար յետևից։ Դպրոցական պրակտիկայում ուսուցիչները յերբեմն աշակերտների մոտ հանդիպում են խոսքի զանազան դեֆեկտների (կակազել, շշնջալով խոսել և այլն)։ Խոսքի դեֆեկտները կամ յերեխայի ուշ զարգացման հետևանք են և կամ խոսքի օրգանների (շրթունքների, լեզվի, ատամների, քթի, ամոլր և փափուկ քիմքի և այլն) պակասությունների հետևանք։ Վատ լսելը ևս կարող է խոսքի դեֆեկտի պատճառ դառնալ։ Այդ բոլոր դեպքերում ուսուցիչը ծնողի հետ միասին պետք է միջոցներ ձեռք առնի համապատասխան բուժման համար։ Կակազելը կամ ուժեղ վախ հետևանք է, կամ ծանր ապրումների։

Միաժամանակ պետք է ծնողները հասկանան, որ յերեխայի հետ յերեխայի լեզվով չպետք է խոսել։ Վորոշ ծնողներ, կարծելով, որ դրանով յերեխային ավելի հասկանալի կդառնան, խոսում են յերեխայի հետ մանկական թոթով լեզվով և դրանով արգելք հանդիսանում յերեխայի խոսքի զարգացմանը։ Յերեխաների հետ պետք է խոսել մեծի լեզվով, բառերն ուղղաձիգ, պարզ կերպով։

Կակազության դեմ կարելի յե պայքարել, եթե մենք անվրդով, վախկոտ, քաշվող յերեխաներին ներշնչենք ուժ ու հավատ նրա կարողությունների նկատմամբ։ Խոսքի դեֆեկտ ունեցող յերեխաներին չպետք է համարել մտավորապես հետամնաց, ինչպես անում են դեռ դիտությանս մանկաբանության ներկայացուցիչները։

Պրոֆ. Ոզերեցկին հենվելով մի շարք գիտնականների (կա

բուստին և այլն) ուսումնասիրությունների վրա, պտնում է, որ խոսքի գենետիկները, ինչպես և ուշ խոսել սովորելն ավելի շատ ձախլիկների մոտ է պատահում։ Հաճախ, երբ ձախլիկներին սովորեցնում են աջ ձեռքով գրել, յերեխան սկսում է կակազել։ Կակազելն ընդհատվում է, յերբ յերեխան գազարում է աջ ձեռքով գրելուց։ «Դույլ է ունի,—գրում է պրոֆ. Ոգեբեցկին,—ամուր կերպով հաստատված կարծիք, ըստ որի ձախլիկների աջ ձեռքն այնքան զարգացնելը, որ յերեխան աջ ձեռքով գրելու լրիվ անհակառություն առնա, անհպատահական է, որովհետև յերկու կենտրոնների զարգացումը կարող է նրանցից ամենաուժեղի, որը պտնվում է ձախ կիսագնդում, արգելակման պատճառ հանդիսանալ»։

Նեվրաստենիկ, հոգնած, քայքայված յերեխաների մոտ կարող է կարգալու պրոցեսը խանգարվել, այդպիսի դեպքում յերեխան ճիշտ չի կարդում, տառեր և ամբողջ բառեր է «կուլ տալիս» կամ իրենից ավելացնում է, բառերն ու տառերը տեղափոխում է, խիստ դանդաղ կամ խիստ արագ է կարդում և այլն։ Այդպիսի յերեխաների ուսուցիչները խիստ զգույշ ու խնամքով պետք է վարվեն և յերբեք յերեխաների մեջ չներշնչեն հուսալքություն։

ՅԵՐԵՒԱՅԻ ԽՈՍՔԸ

Ինչպես հետազոտությունները ցույց են տվել, կենդանական խոսքը ժառանգական է։ Մոսկվայի կենդանաբանական այգում ծնված և մեծացած կապիկները վոչ միայն հրաշալի հասկանում են ֆիրիկական կապիկների կոկորդային հնչյունները, այլ և հատպատասխան վերաբերմունք են հանդես բերում, յերբեմն նույնիսկ խիստ լարված վերաբերմունք՝ ըստ յեթե վերջին մին այդ բոլորովին չլսված այդ կապկային բառերի հանդեպ։

Մարդը ծնվելիս բերում է իր հետ հոգեբաշխված խոսքի բոլոր բիոլոգիական հնարավորությունները, նախադրյալները (լեզու, ձայնաարեր, շրթունք և այլն), բայց նա խոսել սովորում է յուր հետագա կյանքի ընթացքում, ուրիշներից։ Սովորաբար յեր խոսքի առաջացումն սկսում է այն մոմենտից, յերբ նա վորոշ նպատակների համար բառեր է աշ-

տատանում և հասկանում և յուր տածի խնամոը։ Բայց այդ կարեվոր ժամինամը, վորից սկսում և զարգանալ խոսկան լեզուն, համեմատաբար ուշ և տատչանում,—մատավորապես մեկ ու կես տարեկան հասակում։ Այդ ժամինամը նախապատրաստվում և լեզվական և տպավորման ընդհանուր մի շարք հանգամանքներով։

Յերեխայի խոսքի առաջին պայմանը համարվում և յերեխայի ճիշը և առհասարակ վոչ հոգեբաշխված խոսքը, վորն ամբողջովին անձնական ընդհանուր ունի և արտահայտում և որգանիզմի վիճակը (յերբ յերեխան ցավեր և զգում տատանքում, սկսում և գոռալ, մոր տաինքը ծծելիս յուրահատուկ ձայներ և հանում և այլն)։ Այս միջոցով յերեխան վոչ միայն վարժեցնում և յուր ձայնալարերը, այլ և տանդիում վորոշ զուգորդումներ վորոշ հնչյունների և որգանիզմի վիճակի միջև, վորոնք հետագան դառնում են հաճելի վորոշ ապրումների նշանակ։ Մենք հաճախ նկատած կլինենք, թե յերեխան ուրտ ժամանակ, հատկապես յերբ ձեռքերը և վոտքերն արձակված են, ինչպես և զեղդում, կարծեք ինքն իր հետ և խոսում։ Փորձված մայրն այդ զեղդումից իսկույն հասկանում և յերեխայի արտահայտությունը։

Բացի նեբրին, բնազդային իմպուլսներից, յերեխայի խոսքի զարգացման անհրաժեշտ նախապայման են հանդիսանում նաև արտաքին աշխարհից ստացած տպավորությունները։

Յերեխան յուր կյանքի 2-րդ կիսամյակում սկսում և կրկնել ստացած լսողական տպավորությունները և յուր կոկորդային հնչյունները նմանեցնել նրանց։ Սկզբում այդ նմանվելը բոլորովին մեխանիկաբար և կատարվում, հատկապես մոր կամ դայակի ազդեցության տակ։ Նա կրկնում և յուր մոր հետ միասին մի շարք վանկեր դու... դու... աու... աու... և այլն։

Յերեխան միաժամանակ շատ մեծ սիրով կրկնում և իրեն ծանոթ կենդանիների (շուն, կատու) հանած հնչյունները. հավ... հավ... մյաու... և այլն, վորը հարստացնում և յերեխայի բառապաշարը, հնչյուններն իրար հաջորդականացնելու ընդունակությունը, ինչպես և վարժեցնում և ձայնական որգանները։

Պրոֆեսոր Ռուբինշտեյնի հավաքած տեղեկությունների համաձայն, առաջին տառերը, վոր արտասանում և յերեխան, նման են ա, յե, ու ձայնավորներին, ապա դրանց վրա ավելանում և մ-ի նման հնչյունը և կոկորդային Ռ-ն։ Բաղաձայ-

նախից՝ յերեխան կաթոցանում և ամենից առաջ արտասանել շրթնային մ, բ, պ տառերը և ապա առաջին դ, տ, և ապա շչական տառերը։ Թոթովանքն սկսում և մոտավորապես յերրորդ ամսի վերջին։ Նա իր մեջ պարունակում է բազմատեսակ հընչյունները, վորոնք իրար հետ այնքան էլ սերտ կապակցված չեն և դրա համար էլ յերեխան հնարավորություն ունի նրանց հետ խաղ անել, այսինքն զատավորել յուր ցանկությանն համաձայն։

Յերեխայի մեջ հետզհետե առաջանում են այնպիսի հընչյունները, վորոնք արդեն կապված են վորոշ առարկաների հետ, արտահայտում են այդ առարկաները։ Այդ ժամանակից էլ յերեխայի խոսքն սկսում է զարգնալ իմաստալից, յերեխան կապողանում է հասկանալ խոսքի իմաստը, վորը, Շաերնի դիտողությունների համաձայն, յերեխայի մոտ կատարվում է մոտավորապես յերկրորդ տարվա սկզբին, ըստ վորում նկատելի յեն անհատական բավականին զգալի տարբերություններ։ Կարող են պատահել նաև տասնամսական յերեխաներ, վորոնք հասկանում են մի քանի բառերի իմաստը։ Միաժամանակ հնարավոր է խոսակցության ուշ զարգացում, վորը յերբեք էլ յերեխայի հետաքրքրության ապացույց չէ և այդ պատճառով էլ չպետք է անհանգստացնի ծնողներին։

Շաերնը կարծում է, վոր աղջիկները տղաներից շուտ են սովորում խոսել։ Խոսակցության ընդունակությունները վաղ են զարգանում այն ընտանիքներում, վորտեղ յերեխան մինուճար չէ։ Շուտ խոսել սովորելու վրա մեծ չափով ազդում է նաև յերեխայով զբաղվելը։ Շատ մայրեր լավ են անում, յերբ որորոցում պառկեցված յերեխայի հետ բառեր են խոսում։ Ի հարկե յերեխան շատ բան չի հասկանում, էլ չենք ասում այն մասին, վոր պատասխանել չի կարող, բայց այսպիսի խոսակցությունն ավելացնում է նաև լսողական տպավորությունների քանակն ուղեղում և զարգացնում է նրա ականջը։ Ինչպես Մեյմանն է ընդգծում՝ յերեխայի առաջին բառերը գերազանցապես արտահայտում են նրա կարիքները, հոգեկան վիճակն ու ցանկությունները և դեռևս առարկաների անվանակոչության ֆունկցիա չեն կատարում։

Առաջին բառերը, վոր արտասանում է յերեխան, ինկատի ունի այդ բառերի հետ ունեցած մի շարք հիշողություններ։

Այսպես օրինակ, ինչպես Շաերբեկն է ճիշտ նկատում, մամա բառը կապված է մի շարք պատմական երևույթների հետ։ Այդ բառով յերեխան դանդաղ կամ անհամարձակությամբ կարող է արտահայտել, ինչպես և ուզում ենք։ Պապա բառը վոչ միայն հայրիկ է նշանակում, այլ և պրիկիլ, յերեխային տանել ըղբոսնելու, խաղ անելու նրա հետ, նրան քաղցրավենիք տալ և այլն։ «Դրանք բնական արմատներ են,—գրում է Շաերբեկը,—վորոնք հատկանշալի չեն, կապված չեն ազգային լեզուների հետ. այդ պատճառով էլ ամենատարբեր ազգերին ու ռասաներին պատկանող յերեխաների լեզուն մի շարք կետերում ապշեցուցիչ կերպով նման են իրար։ Որինակ, շատը վոչ միայն գերմանացի յերեխաներն են վատ, վատ կոչում, այլ և աուստրալը, ֆրանսիացի յերեխաները տատ են ուտում, նիդերլանդցիները վափվափ, (հայ յերեխաները շատը հափհափ են տատ,—Մ. Մ.), ճապոնացիները—վանվան»։

Հետազոտությունները ցույց են տվել, վոր միայն աֆրիկական լեզուներով խոսող ժողովուրդների յերեխաների մոտ հակադարձական չափով տարածված է մամա հնչյունների կոմպլեքսները (մամ, մամ և այլն), վորպիսի հնչյունական արտահայտությունները գոյություն ունեն նրանց լեզուներում։

Նորագույն հետազոտությունները ցույց են տվել, վոր յերեխայի մոր խոսքը վոչ միայն առարկայի սովորական արտահայտիչն է, այլ և նրա իմաստավորումը։ Ինչպես Շաերբեն ու Բյուլլերն են ցույց տալիս, յերեխան 1,6 տարեկան հասակում կատարում է յուր կյանքի մեծագույն գյուտը, նա գտնում է, վոր «Ամեն մի առարկա ունի իր անունը»։ Ինչպես ճիշտ կերպով նկատում են Վալլոնը և Ռուբինշտեյնը, այս ընդհանուր գյուտը յերեխան կատարում է անհատական կենսափորձի հետևանքով, նա ժեծերի ազդեցության տակ սովորում է տիրապետել առարկային և բառերի միջոցով արտահայտել այդ առարկան։

Սկզբնական շրջանում յերեխան կարծում է, վոր բառը մտնում է առարկայի մեջ, իբրև նրա հիմնական բաղկացուցիչ մասը։ Յերեխան գտնում է, վոր բառն ու առարկան անխզելիորեն կապված են միմյանց հետ, այդ պատճառով էլ, ըստ յերեխայի, յերեք փոխվի բառը, կփոխվի և առարկան։ Որինակ,

յերեխային հարցնենք՝ նրա փոխանակ կովի անունը ու վիճակ դնենք, այն ժամանակ նա կասի՝ մահ։ Յերեխան հաստատ հաղորդած կասի՝ ի հարկն վոչ։ Նույնպիսի յերեխան նույնիսկ կարծում է, վոր բառը կապված է առարկայի ընդհանուր ձեվի հետ։ Պիաժեի և Վիգոտսկու փորձերը ցույց տվեցին, վոր յերեխանները միայն 11—12 տարեկան հասակումն են հասկանում այն, վոր բառն առանձին վերցրած վոչինչ չի նշանակում, վոր նա իր իմաստն առնում է միայն այն ժամանակ, յերբ արտահայտում է վորևե կոնկրետ մի առարկա։

Յերեխայի լեզվի հետագա զարգացումը կատարվում է յերկու ճանապարհով, մի կողմից նրա մեջ առաջանում է առարկանների անունները սովորելու ցանկություն (յերեխան կառնում է հարցասեր, ուզում է իմանալ շրջապատի բոլոր առարկանների անունները,—սա ինչ է, սրան ինչ են ասում,—նա անընդհատ այդպիսի հարցեր է տալիս մեծերին) և մյուս կողմից էլ սկսում է նմանվել մեծերին, խոսել մեծերի նման։

Ըստ Բաբիտսի հաշվառումների, միջնակարգ կրթություն ունեցող մեծահասակ մարդու բառապաշարը 30—35.000 է։ Այլ դիտնականներ ասելիս են շատ ավելի նվազ թվեր։ Կիրկպատրիկը և Բրանդենբուրգը մեծահասակների բառապաշարի քանակն իշեցնում են 15—18.000, իսկ ըստ Տերմենի նույնիսկ 11.700—13.500։ Այստեղ պետք է ընդգծել այն, վոր խոսքը վերաբերվում է այդքան քաոսի հասկանալուն։ Իսկ անմիջապես գործածվող բառերը նշանակելիս թվով քիչ են։ Գյոթեի նման հանճարի սահմանագրծությունների մեջ գործածված բառերի թիվը 17 հազար է, իսկ Շեքսպիրինը 19 հազար. ինչ վերաբերում է գործածված բառերի բնույթին՝ Տրեսի ուսումնասիրության համաձայն, յերեխայի բառերը ըստ մասունք բանիի բաժանվում են հետևյալ հերթականությամբ՝ 60 տոկոսը գոյական անուններ են, 20 տոկոսը բայեր, 9 տոկոսը ածական անուններ, 5 տոկոսը մակբայներ, 2 տոկոսը դերանուններ 2,9 տոկոսը նախդիրներ, 1,7 տոկոսը ձայնարկություններ, 0,3 տոկոսը շաղկապներ։

Շատերը տալիս են յերեխայի խոսքի նորմալ զարգացման հետևյալ սխեման.

1. Նախնական աստիճան—կյանքի առաջին տարում թոթո-

վանք, ձայների կոմպլեքսին նմանվելը, արտասանված նախադասությունները պրեմիտիվ կերպով հասկանալը։

2. Առաջին աստիճան—ընդգրկում է մի տարեկանից մինչև մեկ և կես տարեկան հասակը, յերեխան դիտի արդեն իմաստ ունեցող մի քանի հնչյուններ, վորոնք միաժամանակ նախադասություններ են։ Առաջերի տարրերը դեռևս վորոշ քերականական և գազափարների բնույթ չունեն։ Սրյեկտիվը, պայմանականը և աֆֆեկտիվը դեռևս ըստ նշանակության շերտավորման չեն յենթարկված։ Այս շրջանում յերեխայի խոսքը դեռ հիշեցնում է թոթովանքը։

3. Յերկրորդ աստիճան՝ մոտավորապես 1,6—2 տարեկանին առաջանում է խոսքի իմաստի դիտակցությունը («Ամեն մի առարկա ունի յուր անունը»)։ Յերեխան աշխատում է տիրապետել բանավոր խոսքին։ Բառապաշարը հանկարծակիորեն և արագ կերպով աճում է, յերեխայի մեջ առաջանում է առարկաների անուններն իմանալու հարցասիրություն։ Յերեխան հրաժարվում է միտքա նախադասություններից և սկզբում կակազելով, իսկ հետո ավելի համարձակ կապակցում է յերկու, յերեք բառեր մի նախադասության մեջ։

—Բառապաշարի մեջ սկզբում գերդանում են գոյական անունները, ապա նրանց մեծ թվով ավելանում են բայերը և վերջապես յերեխան գործ և ածում առարկաների հատկությունները և հարաբերություններ արտահայտող բառեր։

Յերրորդ աստիճան՝ մոտավորապես 2,0 մինչև 2,6 տարիք ունեցող յերեխան կարողանում է ճիշտ կերպով նշել բառերի վերջավորությունները և սովորում է բառի մեջ կատարել նոսրը ձևական փոփոխություններ՝ հասկանալով այդ վերջավորությունների իմաստը։ Յերեխան կարողանում է խոնարհել, հոլովել բառերի հարաբերությունները պարզել և այլն։ Դեռևս մնալով գլխավոր նախադասությունների շրջանակներում, յերեխան կարողանում է բազմատեսակ (հարցական, հաստատական, բացականչական և այլն) նախադասություններ կազմել։ Յերեխայի հարցասիրությունն ավելի լուրջ ու ակտիվ բնույթ է ստանում։

Չորրորդ աստիճան—մոտավորապես 2,6 տարեկան հասակից, դուռ պարատակտիկ (գլխավոր) նախադասությունների հետ սկսում յերեխան անցնում է առաջ։ Նա արդեն կարողանում է մտքերը

պատավորել այնպես, որ տարբերի գլխավորը յերկրորդականից, գործածելով տարբեր տարբերական նախադասություններ։ Արագ կերպով գտրգռնում է տարբերական նախադասությունների ձևերը գործածելու ընդունակությունը։ Յերեխայի հարցասիրությունը հասնում է պատճառական աստիճանին։

Իհարկե յերեխայի խոսքի զարգացման այս աստիճանները, որ տալիս է Շաերնը, չի կարելի ընդունել իբրև բոլորովին ստուգված ճշմարտություն։ Հետագա հետազոտությունները այս տվյալների հավանականապես որոշ կորեկտիվներ կմտցնեն այս աստիճանների մեջ։ Բայց հիմնականը, էականը, մեր կարծիքով, Շաերնը ճիշտ և կարողացել ընդգծել։ Իհարկե այս աստիճանավորությունները ունիվերսալ չեն, բարացած ու անփոփոխ չեն (ինքը, Շաերնն էլ նշում է այս հանգամանքը), կլինեն ինդիվիդուալ շատ տարբերություններ։ Միաժամանակ չպետք է մոռանալ և այն, որ նախորդ աստիճանը լինելով նախապատրաստական հաջորդի համար, միաժամանակ իր մեջ պարունակում է նորի տարրերը։

Դպրոցական հասակը վճռական նշանակություն և ունենում յերեխայի խոսքի զարգացման ու կազմակերպման համար։ Յեթե յերեխան մինչ այդ տիրապետում էր միայն բանավոր խոսքին, նա այսուհետ սովորում է նաև գրավոր խոսքը, որն ստիպում է նրան հատուկ, սեղմ ու տրամաբանական կերպով արտահայտել յուր մտքերը։ Արտաբակցիայի ունակությունների զարգացման հետևանքով, յերեխան տիրապետում է նաև ներքին խոսքին։

Գիտականությունը հնարավորություն և տալիս յերեխային ճանաչել բառակազմության որենքները, որ մինչ այդ յերեխան գիտեր միայն տարրերային կերպով։ Նա հասկանում է ճիշտ խոսելու գիտական սկզբունքները, որոնց շնորհիվ նրա խոսքը դառնում է ավելի կատարյալ։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Խոսքի և լեզվի փոխհարաբերությունները։
2. Ի՞նչ է խոսքը։
3. Վիրն է խոսքի կոմունիկատիվ ֆունկցիան։
4. Վիրն է խոսքի սիգնիֆիկատիվ ֆունկցիան։
5. Աֆֆեկտիվ խոսքը և կենդանիների լեզուն։
6. Վիրն է բանավոր խոսքը։ բանավոր խոսքի ինչ տեսակները գիտեք։ Ինչ է պահանջվում ուսուցչի խոսքից։

7. Վերոնք են գլխավոր խոսքի առանձնահատկությունները։
8. Ի՞նչ է նեղքին խոսքը։ Ինչով է նա տարբերվում խոսքի մյուս տեսակներից։
9. Պատմեցեք խոսքի ախտաբանության մասին։
10 Ի՞նչպես վարվել այսպես կոչված «ձախլիկների» հետ։
11. Կանդ առեք յերեխայի խոսքի առանձնահատկությունների և զարգացման օրինաչափության վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ենգելս.—«Բնության դիալեկտիկա», էջ՝ 79—94։
Рубинштейн.—«Основы психологии».
Психология. Под ред. Корнилова, Теплова и Шварца.
Կարնիլով.—«Հոգեբանության ձեռնարկ»։

✗ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ԵՄՈՑԻԱՆԵՐ

Մենք մեզ շրջապատող օբյեկտիվ աշխարհի բազմաթիվ ու բազմապիսի առարկաներից և մեր օրգանիզմից շարունակ ստանում ենք բազմաթիվ տպավորություններ ու գրգիռներ, որոնց նկատմամբ անտարբեր լինել չենք կարող, որովհետև այդ տպավորություններից մեզ համար դուրեկան լինելով ախորժելի են առաջացնում, իսկ տհաճ և անդուրեկան լինելով՝ զզվանություն և զայրույթ։ Հաճելի տպավորությունները դիմավորում ենք ուրախությամբ, իսկ տհաճությունն պատճառողներին՝ դժգոհությամբ, տխրությամբ և ատելությամբ։ Ահա, հոգեկան այնպիսի տարբեր ապրումները, որոնք հետևանքն են արտաքին կամ ներքին գրգիռների և վարքի հատուկ են բոլոր մարդկանց, մարդու հոգեկան կյանքի կարեվոր ու անբաժանելի ուղեկիցն են հանդիսանում, կոչվում են զգացմունքներ, եմոցիաներ, հույզեր։ Մարդկային այդ զգացմունքները կարող են հետևանքը լինել հետևյալ պատճառների։

1. Զգայությունների և ըմբռնումների—վարդի հոտը խիստ դուրեկան է մեզ համար, իսկ ապուկը՝ անդուրեկան։ Մանիշակագույն առարկան հանգստացուցիչ ազդումներ է առաջացնում, իսկ դեղնագույնը՝ ջղային տրամադրություն։

2. Հիշողական և յերեվակայական մտապատկերների արգասիք. *որինակ՝ պատկերացնում եմ այն անախորժ խոսակցությունը, որ վարչ պետք է ունենամ իմ ծանոթներից մեկի հետ և այդ պատճառով էլ տրամադրությունս անմիջապես ընկնում է։ Կամքն իմ անցյալից հիշելով մի ուրախ դեպք, միանգամից լարվածանում է տրամադրությունս։ Մեկի անցյալում ունեցած զզվելի վարմունքը այսօր էլ տխրություն է ինձ զայրանալ նրա վրա։*

3. Մտավոր գործունեության հետևանք—*մարդի խոհական աշխատանքը, ինտելեկտուալ՝ բարդ ու դժվարին խնդիրների ինքնուրույն լուծումը, բոլորովին նոր ճշմարտությունների հայտնաբերելը յուրաքանչյուրիս մեջ բարձրացնում տպավորության ինքնա-*

7. Վիրտնք են զրավոր խոսքի առանձնահատկությունները։
8. Ի՞նչ է նեղքին խոսքը։ Ինչով է նա տարբերվում խոսքի մյուս տեսակներից։
9. Պատմեցեք խոսքի ախտաբանության մասին։
10 Ի՞նչպես վարվել այսպես կոչված «ձախլիկների» հետ։
11. Կանգ առեք յերկխոսի խոսքի առանձնահատկությունների և զարգացման ուղիների վրա։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ենգելս.—«Բնության դիալեկտիկա», էջ՝ 79—94։
Рубинштейн.—«Основы психологии».
Психология. Под ред. Корнилова, Теплова и Шварца.
Կարնիալ.—«Հոգեբանության ձեռնարկ»։

✗ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ԵՄՈՑԻԱՆԵՐ

Մենք մեզ շրջապատող օբյեկտիվ աշխարհի բազմաթիվ ու բազմապիսի առարկաներից և մեր օրգանիզմից շարունակ ստանում ենք բազմաթիվ տպավորություններ ու գրգիռներ, որոնց նկատմամբ անտարբեր լինել չենք կարող, որովհետև այդ տպավորություններից մեզ համար դուրեկան լինելով ախտ են առաջացնում, իսկ անդուրեկան լինելով՝ զզայնություն և զայրույթ։ Հաճելի տպավորությունները դիմավորում ենք վոգևորությամբ, իսկ տհաճությունն պատճառողներին՝ դժգոհությամբ, վոմանք վիշտ են առաջացնում մեր մեջ, տիպում են մեզ տանջվել։ Ահա, հոգեկան այնպիսի տարբեր ապրումները, վորոնք հետեվանք են արտաքին կամ ներքին գրգիռների և վարոնք հատուկ են բոլոր մարդկանց, մարդու հոգեկան կյանքի կարեվոր ու անբաժանելի ուղեկիցն են հանդիսանում, կոչվում են զգացմունքներ, եմոցիաներ, հույզեր։ *Մարդկային այդ զգացմունքները կարող են հետևանք լինել հետևյալ պատճառների,*

1. Զգայնությունների և ըմբռնումների—վարդի հոտը խիստ դուրեկան է մեզ համար, իսկ ազմուկը՝ անդուրեկան։ *Մանիշակագույն առարկան հանգստացուցիչ ազդումներ է առաջացնում, իսկ դեղնագույնը՝ ջղային տրամադրություն։*

2. Հիշողական և յերեվակայական մտապատկերների արգասիք. *որինակ՝ պատկերացնում եմ այն անախորժ խոսակցությունը, վոր վաղը պետք է ունենամ իմ ծանոթներից մեկի հետ և այդ պատճառով էլ տրամադրությունս անմիջապես ընկնում է։ Կամքն իմ անցյալից հիշելով մի ուրախ դեպք, միանգամից լարվածանում է տրամադրությունս։ Մեկի անցյալում ունեցած ղժվելի վարմունքը այսոր էլ սաստիկ է ինձ զայրացնում նրա վրա։*

3. Մտավոր գործունեության հետեվանք—*մարդի իսկական աշխատանքը, ինտելեկտուալ՝ բարդ ու դժվարին խնդիրների լուծումը, բոլորովին նոր ճշմարտություններ հայտնաբերելը յուրաքանչյուրիս մեջ բարձրացնում է ինքնա-*

բավականություն և հաճույք և առաջացնում։ Ցավ ընդհակառակը, երբ մեղանից յուրաքանչյուրն զգում է, որ մոլորվել է, չի կարողանում խնդրի ճիշտ լուծումը գտնել, ինչ որ բան անհասկանալի չի և նույնիսկ անհավանական, տհա այդ ժամանակ այնքան ենք ջղայնանում, որ յերբեմն նույնիսկ ժամերով չենք կարողանում հանգստացնել մեզ։

Մարդկային զգացմունքները շատ բարդ են ու բազմապիսի, որի պատճառը մարդու գործունեության առարեղների անառնմանափակ լինելն է և վորը շրջապատի ազդակների շարունակական հարաբերության պատճառով ավելի բազմերանգ ու բազմապատիկ է դառնում։ Այդ է պատճառը, որ նույնիսկ մի նույն ստղծորության, փոփոխվող պայմաններում, միևնույն անհատի համար բոլորովին հակառակ հոգեկան վիճակ կարող է առաջացնել։ Ցավի դրան ավելացնենք և այն, որ միևնույն դրգիռը տարբեր մարդկանց վրա տարբեր ազդեցություն կարող է թողնել, նայած նրանց սոցիալական պատկանելիության, ճաշակին, հետաքրքրություններին, պրոֆեսիային— այդ դեպքում հասկանալի կլինի զգացմունքների բազմապիսի լինելու պատճառները։

ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու կյանքում զգացմունքների դերն ու նշանակությունը մեծ է։ Ցերբ մարդ սիրում է իր աշխատանքը և այդ աշխատանքի արդյունքներից մեծ հաճույք է ստանում, ապրում է իր գործի հաջողություններով ու անհաջողություններով, այդ դեպքում նրա այդ աշխատանքն էլ ավելի մեծ թափ և առնում, տալով բազմապատիկ արդյունք։ Այդ հանգամանքը շատ լավ էր հասկանում ուսս մեծ քննադատ Պիսարեվը, վորը բուրժուական աշխարհի յերիտասարդ մարդու վողբերգության հիմնական պատճառներից մեկը համարում էր բյուրոկրատական, չոր, անշնորհակալ, հատարակական վոչ մի արժեք չներկայող և անհատական հաճույքին այնքան խորթ պարտադիր աշխատանքը։ «Թող յերիտասարդ մարդն իր համար ընտրի այն աշխատանքը, վորը հաճելի կ իրեն... միայն այդ դեպքում և հատկապես այդ ժամանակ նա, մեծ հաճույք ստանալով իր աշխատանքի պրոցեսից, հատարակությանը կտա այն սպասը, վորը կարող է տալ

լրիվ չափով ոգտագործելով իր անհատական ընդունակութիւնները... Ձեր աշխատանքն ոգտակար է՝ դուք այն սիրում եք, նրան եք նվիրում ձեր բոլոր ուժերը, վոչ մի դեպքում չեք համաձայնը վում այն կատարել «հենց այնպես», պատրաստ եք պայքարելու դժվարութիւնների դեմ, նույնիսկ տանել անախորժութիւններ... Այդպես աշխատելով դուք վոչ մի րոպե չեք կարող մոռանալ հասարակական շահը» (Писарев—«Избр. Сочинения», стр. 57, изд. 1935 г.):

Մեր պայմաններում ամբողջապես իրականացված և Պիսարևի անցյալի այս յերազը: Մեր յերիտասարդութիւնը լրիվ հնարավորութիւն ունի ընտրելու իր ուժերին ու ընդունակութիւններին համապատասխանող աշխատանք և հասկանալ իր աշխատանքի հասարակական խոշոր նշանակութիւնը՝ ինչպիսին էլ վոր լինի այն:

«Կյանքն ավելի լավ և զարձել, ընկերներ: կյանքն ավելի ուրախ և զարձել,—ասում է ընկեր Ստալինը,—իսկ յերբ ուրախ ես ապրում, աշխատանքը հաջող է դնում»:

Մենք մարդիկ ենք, մարդկային վոչ մի բան մեզ համար ոտար լինել չի կարող, պիտենք ախրել, ուրախանալ, սիրել ու ատել և, անշուշտ, առանց այդ տպրումների կյանքը կկորցներ իր հրապույրը մեզ համար, և մենք անտարբեր կլինեինք նրա նկատմամբ, վորի հետևանքով մարդն առհասարակ գործունեության և վոչ մի ներքին խթան չունենալով, աշխատանքին համոզիչ դռնավորում չտալով, իր շարժումներն ու գործունեությունը կկատարեր զուտ մեխանիկորեն: Այս տեսակետից միանգամայն ճիշտ է նկատում Հելվիցիուսը զգայնութիւնների նշանակութեան մասին՝ «Զգացմունքը մի դարպաս է, վորի միջից մեր հոգու մեջ են մտնում դուրսեկան տպավորութիւնները: Վորքան շատ զգացմունքային դարպասներ են բացվում, այնքան ավելի հաճույքի մեծ բաժին է ստանում հոգին»:

Կոնդիլյակը մարդկային գործունեության հիմնական աղբյուրներից մեկը համարում է զգացմունքները. «Հաղթությունը և տապալանքը,—ասում է նա,—միշտ էլ պայմանավորում են մարդկային ընդունակութիւնների կիրառումը»: Մեծ մարդկանց կյանքի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, վոր բարձր զգացմունքները հանճարի հիմնական հատ-

կություններից մեկն էր։ Բավական է հիշել բոլշևիկ Կոլխոզացումը—ինչպես բնորոշում է Լենինը ընկեր Սաալինին, բավական է կարդալ Գերցենի սրտի արյունով գրված «Былое и думы»-ն—վորպեսզի համոզվենք այդ բանում։

Ընկեր Սաալինը բնորոշելով Լենինին իբրև գործիչ, իբրև հեղափոխության հանճարի և մարդու, ընդգծում է նրա բնավորության զուգակիռ ու վճիռ լինելը. «Ընտրողները, ժողովուրդը,—ասում է ընկեր Սաալինը,—իրենց դիտավորյալներից պետք է պահանջին, վորպեսզի նրանք ճիան իրենց խնդիրների բարձրության վրա, վորպեսզի նրանք իրենց աշխատանքում չիջնեն մինչև քաղաքական օբիվատելների մակարդակը, վորպեսզի նրանք ճիան լինեն նոյնյան տիպի քաղաքական գործիչների պատի վրա, վորպեսզի նրանք լինեն նույնպիսի պարզ ու վորոշակի գործիչներ, ինչպես Լենինը, վորպեսզի նրանք մարտում լինեն նույնպիսի անվախներ և անոտոքներ դնալի ժողովրդի թշնամիների, ինչպիսին Լենինն էր, վորպեսզի նրանք պատա լինեն վարևի խուճապից, խուճապի նման վարևի բանից, յերբ գործն սկսում է բարդանալ և հորիզոնի վրա ուրվագծվում է վարևի վտանգ, վորպեսզի նրանք նույնպես պատա լինեն խուճապի նման վարևի բանից, ինչպես պատա էր Լենինը, վորպեսզի նրանք բարդ հարցերի լուծման ժամանակ, վորտեղ պետք է քաղմակողմանի կողմնորոշում և բոլոր պլյուսների ու մինուսների քաղմակողմանի հաշվառում, լինեն նույնպես իմաստուն և չափավոր, ինչպիսին Լենինն էր, վորպեսզի նրանք լինեն նույնպես ճշմարտացի ու ազնիվ, ինչպիսին Լենինն էր, վորպեսզի նրանք նույնպես սիրեն իրենց ժողովրդին, ինչպես սիրում էր նրան Լենինը»։ (Սաալին, ճառ Մոսկվա քաղաքի Սաալինյան ընտրողների նախընտրական ժողովում, դեկտեմբերի 11, 1937 թ.)։

Մեծ և նաև մարդկանց զգացմունքների բիոլոգիական-ֆիզիոլոգիական նշանակություն։ Այսպես կոչված օրգանական, ֆիզիկական զգացմունքները (քաղց, ցավ, ծարավ և այլն) նույնիսկ յերբեմն մասնավոր նշանակություն են ունենում մի կողմից մեր օրգանիզմի վիճակի մասին, մյուս կողմից արտաքին աշխարհից կախում ունեցող գործողությունների օպտիմալ կամ հնարավոր լինելու մասին. պետք է հաշվի առնել այդ

դուն պսիխիատր Կորսակովի այն մարքի հետ, ըստ որի մարդկային հոգեբանության մեջ էմոցիոնալ սֆերայի դերը հսկայական նշանակություն ունի։

Մենք ընդգծում ենք զգացմունքների և էմոցիաների խոշոր դերը մարդու կյանքում այն դեպքում, երբ նրանք ինքնուրույն ու անկախ հանդես չեն գալիս, այլ կոնտրոլի են ենթարկվում մարդու կողմից։ Ինքնիշխան, կոնտրոլի չենթարկված զգացմունքները, որոնք իրենից մեր հոգևկան կյանքում ոչ-լրապետող են դառնում (խուճապ, ցասում, սարսափ, լալկանություն), թուլացնում են մարդու կամքը, սթռեսնում նրա գիտակցությունը, անարդյունավետ և նույնիսկ վտանգավոր դեպքերում ջլասակը են դարձնում մարդու գործունեությունը, որպիսի հանգամանքը հիանալի կերպով նկատել և Պիսարևը, որը գրանում է, որ քննադատական մարքին ոչ չենթակա, անպատասխանատու այն զգացմունքները, որոնց մասին մենք մեզ հաշիվ տալ չենք կարող, արգելակում են մեր մտավոր զարգացումը։

✶ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր զգացմունք ունի հետևյալ հատկանիշները.

1. Արտահայտության կեղտնակ կամ ձև, 2. Վարակ, 3. ինտենսիվություն կամ ուժ, 4. խորություն կամ եքսպոնենտիվություն։

1. Զգացմունքի արտահայտման կեղտնակը պայմանավորված է մարդու կյանքի և գործունեության վրա այս կամ այն դրսևորչի միանգամից ունեցած առաջին տպավորություններից։ Ելնելով այդ տպավորությունների հետևանքով առաջացած հոգեկան վիճակներն ընդհանուր հայտարարի բերենք և նշենք նրանցից ամենակարևորները, ապա կատանանք հետևյալ յերկք զույգ արտահայտությունը.

ա) հաճույք և տհաճություն, ընդհանրապես այն տպավորություններն են, որոնք հենց առաջին պահից բավենպատասխան են ազդում մեր հոգեկան և որգանական կյանքի ընթացքի վրա, առաջացնում են դվարթ, դրական զգացմունքներ։ Հանճելի են նաև այն տպավորությունները, որոնք համապատասխանում են իրերի ու յերևույթների մասին մեր ունեցած հատկացուցա-

թյան, ինչպես և մարդկային վարքի այնպիսի ձևերի, վորպիսիք մեր կարծիքով լավ են ու ճիշտ, այսինքն հասարակականորեն ընդունված վարքի սրինակների կանոնները են։ Բայց այստեղ պետք է ընդգծել գրպիռների վիճակամից կամ այսպես ասած սկզբնական շրջանի ունեցած ապրելակերպի հանդամանքը, վորովհետև կարող է պատահել, վոր այդ գրպիռների հետևանքները այնքան էլ ոգտակար չլինեն։ Որինակ, ալիոնոլը կարող է մեր սրտամղությունը միանգամից բարձրացնել, պայծառացնել մեր մարքերը, բայց քիչ ժամանակ անց բոլորովին հակառակ ռեակցիա առաջացնել։

Տնաճառության զգացմունքների պատճառը կամ մեր որպես նիմի համար վոչ բարենպաստ ապրելակերպներ են, կամ թե այնպիսի հիշողական ու կիրեական պատկերացումներ, վորոնք անդրադարձին տպավորություններին հետ են կապված, կամ թե չե՝ կոնֆլիկտի մեջ են մտնում մեր հասկացողությունների ու բարոյական նորմաների հետ։

բ) Արտահայտության չեզոնակը կարող է դրսևորվել զրպվածության ու հանգստության մեջ։ Այսպես որինակ, բարձր, հաճելի կերաժշտությունը մեր որգանիզմը կարող է շարունակ զրպված վիճակի մեջ պահել, իսկ մեղմ ու անուշ չեզոնակները՝ ընդհակառակը։ Տոքը խանգարելով մեր որգանիզմի նորմալ աշխատանքը, խիստ չղայնացնում է մեզ, իսկ վեփյուռը՝ հանգստացնում է։

գ) Զգացմունքային տոնը կարող է արտահայտվել կամ որգանիզմի խիստ լարվածությամբ և կամ պոռթկումով։ Սպասողական ու անսպասելի վիճակը մեր զգացմունքները գնում է լարված գրության մեջ, իսկ այդ վիճակից ազատվելը կարող է արտահայտվել բուռն պոռթկումային ձևով։ Վոչ ուժեղ, թեթև զրպվածությունն ընդհանրապես հաճելի չի, վորովհետև նա տանջացնում է ու վոչ այնքան էլ լարված սրտամղությունն և ընդհակառակը՝ զրպվածության ու լարվածության բարձր աստիճանը ցանկալի չէ, տհաճ է։

2. Զգացմունքի վոքակ ասելով հասկանում ենք մեր հույզերից ամեն մեկի այն վորոշական առանձնահատկությունները, վորոնք մի զգացմունքը տարբերում են մյուսից։ Որինակ՝ արհամարհանքն ունի իր վորոշական առանձնահատկությունները, նախանձը՝ յուր

3. Զգացմունքի ինտենսիվություն ասելով հասկանում ենք միևնույն վորակի հույզի տարբեր արտահայտությունները։ Ոչինչ՝ ժպտալ և ծիծաղել, գայլայնալ և ցասկոտել, սիրել և թախծել։ Զգացմունքի ինտենսիվությունը կախված է օբյեկտիվ և սուբյեկտիվ շարժառիթներից։ Օբյեկտիվ կամ անձից դուրս պատճառներ են՝ 1. տպավորության ուժը, 2. տպավորության տանելու միջավայրը։ Որինակ՝ մութ գիշերին անտառումն վողջույնում ջութակի ձայնը շատ ավելի հուզիչ է, քան նույն այդ ձայնը՝ ցերեկը, տղմկարար փողոցում։

Զգացմունքի ինտենսիվության սուբյեկտիվ, ներանձնյա պատճառը կախված է մարդու արտադրությունից և ընդհանուր հոգեվիճակից, վորն իր հերթին, վերջ ի վերջո, օբյեկտիվ պատճառների արդյունք է։

Որինակ, գեղ խշշոցը մեկին թվում է քաղցրանուշ մեղեդի, վորը մի դեպքում՝ Անուշի վոտամեռ սերն է գովում.

Սգվոր գեղ՝
Ծեր Դեբեսը,
Սիրտը քըքըրած,
Ջուրը փրփրած
Բարտա ափին,
Լեռ քարափին,
Դեռ ծեծում է
Հեծեծում է... (Հովհ. Թումանյան),

իսկ ահաբեկված Սաքոյի համար նույն այդ Դեբեսը՝

Գալարվում է գիժ Դեբեսը մռլի,
Թեւալաբ թռչում քարերի պլխով,
Փրփուր և թքում անդունդ յերախով,
Թքում ու զարկում ժայռատ ափերին,
Փնտռում է կազմած ափերը հին-հին
Ու դառում գիժ գիժ
Վաշ-վիշ, վաշ-վիշ (Հ. Թումանյան)։

4. Զգացմունքների խորությունն ասելով հասկանում ենք մեր զգացմունքների չափը, այն, թե մարդկային ու ձգտումների ինչպիսի ընդգրկում ունի տվյալ զգացմունքը։

Զգացմունքների խորությունը և ուժը (ինտենսիվությունը) միշտ չեն, որ համընկնում են, հաճախ նրանք կարող են հակադարձ հարաբերության մեջ լինել միմյանց հետ։

Որինակ, վախը կարող է խիստ ինտենսիվ, ուժեղ լինել բայց քիչ անց մոռացվել, խորն ազդեցություն չթողնելով մեր հոգևոր կյանքի վրա։ Ընդհակառակը, վրդովմունքը, մեզ ու մեզ մտադիր մեղքից—Սպենդիարյանի «Նիզոյու» առաջին մասը կարող է շատ խորը և երկարատև ազդեցություն թողնել մեր վրա, հաժանել մեզ իր թախծոտությամբ։

Սահմանափակ դեղերի արվեստի ամեն մի հրաշալի ստեղծագործություն իր խորությամբ կարող է այնպես հմայել մեզ, որ նույնիսկ որեր ու ամիսներ զգալ տալ իր ազդեցությունը։

✕ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ (ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱ)

Զգացմունքների դասակարգումը խիստ դժվար է։ Ինչպես տեսանք, մարդկանց զգացմունքները վոչ միայն բարդ են ու բազմապիսի, վոչ միայն սուբյեկտիվ գունավորում ունեն, այլև տարբեր պայմաններում տարբեր դրսևորում ունեն։ Զգացմունքների ասոցիատիվությունը հնարավոր է միայն դասակարգման այդ դժվարությունները հաղթահարելու դեպքում։ Բազմատեսակ ու բազմօրինակ երևույթների դասակարգում կատարելը նշանակում է համեմատել այդ երևույթները միմյանց հետ, գտնել նրանց փոխհարաբերությունները ու փոխազդեցությունները, վեր հանել նրանց ընդհանուր, էական, բնորոշ կողմերը։ Մի խոսքով երևիան հանել այդ երևույթների առանձնահատկությունները։

Ռուսաստանում հոգեբան Ռիբոն, հանրագումարի բերելով այդ հարցի շուրջը կատած բոլոր կարծիքները ու տեսակետները, գալիս է, որ նրանք վերջ ի վերջո հանգում են երեք հիմնական տեսակետի. 1. ամենը բոլոր զգացմունքները վեր են ածում երկու բեվեռային հակադիր խմբերի՝ հաճույքի և տանջանքի. 2. մյուսները դիտնականներ ել աշխատում են զգացմունքները և համոզիչների մեջ գտնել արտաքին, ընդհանուր ձևական կողմեր և դասակարգումը կատարել այնպես, ինչպես ել անում բուսաբանը վարվում է բույսերի հետ, 3. երրորդները կենտրոնում են բացառապես գիտակցության դրսևորման, հակադրելով գիտակցությունը զգացմունքներին։

Դիահերք, թե այդ յերեք տեսակետներից վորը կարելի յե ընդունելի համարել։

Առաջին տեսակետի կողմնակիցները հաճույքը իր բազմազան երևույթներով լրիվ հնարավոր են կամ որգանիզմի համար խիստ վնասակար պայմաններից և կամ նեղքին ուժերի բազմապատկումից։ Դրա համար էլ նրանց կարծիքով հաճույքը դա՝ գեղեցիկ, վսեմ, գրավիչ կյանքի անմիջական հետևանքն է։

Ընդհակառակը, ասած, ցրտում վիճակն ինքնըստինքյան ապացույց է այն բանի, վոր որգանիզմի նկրտում կատարվում է վնասակար ուժերի դեսիմիլացիա, վոր արտաքին պայմանները պատճառում են, արագացնում այդ քայքայման պրոցեսը։

Մեր կարծիքով գիտնականների կողմից համարյա միանգամն ընդունված վերոհիշյալ տեորետաժամանակը խիստ թերի յե հոգեպատմական, մեռնասիքոլոգիական։

Այդ տեորետաժամանակի ամենանշանակալի ու խոցելի կողմը պարզուպզպայմանների ընդհանուր ուսումնասիրությունն է։ Նրանց յելակետը հատարակությունից կտրված անհատն է, վորը միայն ապրում է իր հոգսերով և ուրախություններով։ Ցեթե նա կուշտ է՝ յերջանիկ է, յեթե նա հոգնած է՝ դժբախտ է։ Այսպիսով այս հարցում ևս բուրժուական գիտնականները հավատարիմ են մնում իրենց դասակարգի գաղափարական հիմունքներին։ Նրանք հաճույքը և անհաճույքությունը, դուրսկան և անդուրեկան վիճակը բացատրում են զուտ անհատական, որգանական, ֆիզիոլոգիական պրոցեսներով, նրանց համար խորթ է այն բարձր գործոնը, հպարտության ու յերջանկության այն ուռեն ապրումները, վոր մեղանից, խորհրդային յերկրի քաղաքացիներից ամեն մեկն ունի իր յերկրի, իր հերոսների նկատմամբ։ Նրանք, որինակ, յերբեք չեյին կարող հասկանալ անկոտրում գամված Նիկոլայ Ոստրովսկուն, վորը հետզհետե մոռանում է մահկան և չնայած իր ֆիզիկական անասնելի վիճակին, պարտ ևր շնչում, յերջանիկ ևր, վորովհետև վերջին, արդեն դադարող ուժերով կատարում ևր յուր պարտքը մեր մեծ հայրենիքի հանդեպ։

Բուրժուական գիտնականները մարդու հոգեկան վիճակի տարանիշը համարում են նրա, ինքնամիտի, յուրահատ մարդաբանական վիճակը։ Խորհրդային պայմաններում մարդն իր

զգացմունքներով անընդհատ բարձրանում է, ազատվում կեն-դանական վիճակից ու դառնում իսկական անձնավորություն, լավագույն մարդուն հատուկ բնորոշ գծերով:

Գնաք է նաև չմոռանալ, որ հաճույքը և տհաճությունը բոլորովին հակառակ բևեռներ չեն: Նրանք պայմանավորում են մեկը մյուսին, յերբեմն նույնիսկ միասին են հանդես գալիս: Հաճույքի և տհաճության մեջև հնարավոր են փոխանցումներ, փոխարարքներ: Հաճախ միևնույն ազատվորությունները տարբեր պայմաններում և տարբեր հոգևոր վիճակում կարող են և՛ շատ դրական լինել, և՛ շատ անդրբևեռ: Որինակ՝ նոր հագուստը, որն սկզբում մեծ հաճույքով ես հագնում, հետագայում կարող է ձանձրացնել և զզվեցնել ձեզ: Կուշտ մարդու համար ամենահամեղ կերակուրներն անգամ կարող են անդրբևեռ լինել: Իսկ քաղցած վիճակում՝ նույնիսկ միջակ վարակի կերակուրն էլ համեղ կթվա:

«Ձեռ պիտի մի ձերունուց,—ասում է Մանդելկացը,—որ չէր կարող առանց ֆիզիկական ցավի յոլա գնալ, նա տանջվում էր ցավի բացակայությունից: Նա սկսում էր անասելի կերպով տանջել իր մարմինը, մինչև որ հանգստանում էր»: Ազատ կոչված մելանխոլիայի ժամանակ (առ բժշկական խնամատով), որոշ սիրահարվածներ, իրենց պոետ յերևակայող մարդիկ կամավոր կերպով բարոյապես իրենց տանջում են, տխրում, ան ու վախ քաշում, չեն մասնակցում զվարճություններին, այսինքն արհեստականորեն տանջում են իրենց և դրանով հաճույք են ստանում:

Ցերկրորդ տեսակետի կողմնակիցները, (Բենը, մասամբ Սպենսերը և ուրիշները) համոզիանների դասակարգումը կատարում են զուտ ֆորմալ տեսակետից: Նրանք յելնելով միայն ընդհանուր ձևական նմանություններից, համոզիանները բաժանում են բազմաթիվ խմբերի: Բենը թվում է համոզիաններէ 11 խմբեր—սեր, դայրույթ, վախ, մասնավոր ռեֆլեքսության զգացմունք, հպարտություն, փառասիրություն, մտավոր գործունեության համոզիա, հասարակական, բարոյական և այլն:

Համոզիաների հենց այս սոսկական թվարկումը պարզորեն ցույց է տալիս, թե վերջին հակագիտական և այդպիսի դասակարգումը: Բենը հիմնական զգացմունք է համարում իբրև թե

բնածին ու մարդու հատուկ մասնավոր սեփականության զգացումները և այսպիսով իսկ կամա թե ակամա կեղծելով փաստերը, կանգնում է մասնավոր սեփականության՝ մարդու նյությանը հատուկ չինելու բարժուական հակապիտական, կեղծ, գաղափարային դրույթների վրա, դրույթներ, որոնց նպատակն է թող փչել մասսաների աչքերին, ներշնչել նրանց մեջ կապիտալիզմի մշտնջենականության անհեթեթ միտքը։

Կամ վերցնենք փաստասիրությունը։ Փաստասիրությունը կապիտալիստական իմաստով նշանակում է անհատի հակադրումը հասարակությանը, նշանակում է խաբել, քծնել, թալանել (մեջ չհանական փաստասիրությունը հրաշալի կերպով տրված է խոշոր բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանի «Փաստասիրը» պատմվածքում)։

Մեծ փաքին տիրացող հերոսները մեզ մոտ ժողովրդի սիրելին են, լավագույն մարդու տիպարները։ Ժողովուրդն ինքը գնահատում ու արժեքավորում է այդ մարդկանց։

ԱԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԻ ՑԵՎ ԵՄՈՑԻԱՆԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ*)։

Ինչպես-ասասանք, յուրաքանչյուր զգացմունք որպանիզմի մեջ առաջացնում է բավականի խորը բնույթի ֆիզիոլոգիական փոփոխություններ։ Այդ փոփոխությունները չեն սահմանափակվում միայն արտաքին արտահայտություններով, այլև ընդգրկում են որպանիզմի ներսում կատարվող որդանական պրոցեսները։

Ամերիկյան հայտնի ֆիզիոլոգ Կաննոնն իր յերկարամյա ու խիստ արժեքավոր փորձերի միջոցով մեծ չափով պարզաբանեց ղգացմունքների ու եմոցիաների նյութական, ֆիզիոլոգիական պրոցեսների նյությունը։ Այս ասպարիզում խոշոր նշանակություն ունեն նաև ակադեմիկ Որբելու աշխատությունները։

Բայց Կաննոնի տեսնելի, զբաղվել եմոցիաների գործունեությունը մեծ մասամբ կախված է կենդանու մկանների ուժից և դիմացկունությունից։ ուժեղ աշխատող մկանները կարիք ունեն ուժեղ սննդի, առանց վորի նրանք աշխատել չեն կարող։ Սրընդհատում նյութերը պետք է այնպիսին լինեն, վորպեսզի տարբե-

*) Տես Շարդոդոնովա «Վեգետատիվ նեվային համակարգության» աշխատությունը։

լուծվելիս կարողանան արագ կենտրոնացնել ուշադրությունը որոշակի մասի վրա մեծ ճշտությամբ անհրաժեշտ ենթադրելու։ Այդպիսի հատկություն ունեն առանձնապես ածխաջրերը (շաքար)։ Բացի դրանից, աշխատող որոշները ածխաջրերի այրման պրոցեսի արագացման և այլ քիմիական պրոցեսների ապահովման համար մեծ չափով թթվածնի կարիք ունեն։ Ճիշտ ինդուստրիաները, և՛ թթվածինը մկանային հյուսվածքներն առանձնացնում են արյան միջոցով։ Մկանային հյուսվածքի ուժեղ աշխատանքի հետևանքով առաջացած բարձր պահանջը բավարարելը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մի կողմից արագանա արյան հոսանքը արյունատար անոթների միջից, մյուս կողմից արյան անոթների տարողականությունը ուժգնանա։ Արյան հոսանքի ուժեղացումը հնարավոր է միայն սրտի գործունեության ուժեղացման դեպքում։ Արյան ծավալը կավելանա այն ժամանակ, երբ լայնանան արյունատար անոթները։

Այսպիսով—ուժեղ ենթադրությունները հնարավոր են միայն սրտի աշխատանքի ուժեղացման և անոթների լայնացման դեպքում, որի հետևանքով արյունը կկարողանա մկաններին մատակարարել պահանջված չափով ածխաջրեր և թթվածին։ Ածխաջրերի և թթվածնի քանակն արյան մեջ այնքան չի, որ բավարարի որպնիզմի ավելացած պահանջներին։ Հարկավոր է այդ նյութերի արագ հավաքագրում։ Թթվածնի հավաքագրման ապարատը—թոքերն են, այդ է պատճառը, որ ուժեղ ենթադրությունների դեպքում շնչառությունն արագանում է, որպնիզմն առանում է մեծ քանակությամբ թթվածին, որը խիստ և չեխ կլանվում է արյան կողմից, միաժամանակ ուժեղանում է ածխաթթվի արտաշնչումը։

Ածխաջրերի (շաքարի) հավաքագրման գլխավոր ապարատը լյարդն է։ Սովորական պայմաններում շաքարի նշանակալից պաշար գլիկոգենի կամ կենդանական օսլայի ձևով պահվում է լյարդի մեջ։ Շաքարի այդ կուտակված պաշարը, սիմպատիկ ներվային համակարգության և կամ վերնիրիկամային հորմոնալ գեղձերի՝ ադրենալինի ազդեցության հետևանքով, կարող է հավաքագրվել և վերածվել ավելի քիչ բարդ միացության՝ խաղողաշաքարի։ Այսպիսով առանձին զգացմունքների ժամանակ ուժեղանում և նաև լյարդի և թոքերի գործունեությունը։

Այս բանն ապացուցելու համար կենդանը կատարեց հետևյալ փորձը։ Նա կատուներին դրեց յերկաթալարերից հյուսված ցանցի մեջ և նրա վրա բաց թողեց շանը, որպեսզի սկսեց հալել, նեռվել դեպի կատուները, աշխատելով բռնել նրանց։ Այդ դեպքում կատուները խիստ զայրույթից և վախից կըճատացնում էին ատամները, փշաքաղվում էր նրանց մարմինը, մեջքը թեքվում, այսինքն ընդունում էին «պատերազմական դիրք»։ Այդ վիճակին հասցրած կատուների հետազոտությունը ցույց տվեց, որ արյան մեջ շաքարի քանակը նշանակալից չափով աճել էր, ուժեղացել էր և շաքարի արտադրությունը մեղի հետ միասին (մի դեպքում 0,008-ից 0,62 գրամ մի կիլոգրամ քաշին)։

Նման դեպքեր նկատվել են նաև մարդկանց մեջ։ Բազմաթիվ հիվանդներ, նույնիսկ բոլորովին առողջ մարդկանց մեջ, ուժեղ ապրումների դեպքում, գտել են շաքար, որը սովորաբար մեղի մեջ չի լինում։ Մեղի մեջ շաքար յերևան հանելու բազմաթիվ դեպքեր են նկարագրված ֆուտբոլիստների մոտ՝ հուզիչ և պատասխանատու մրցման ժամանակ։ Նույնիսկ հանդիսատեսների մոտ նույնն է նկատվել։ Կենդանի աշխատակիցները շաքար են գտել նաև ուսանողների մեղի մեջ՝ դժվար քննությունից հետո։

Ակադեմիկ Պավլովի, կենդանի և մյուսների փորձերը պարզեցին նաև ապրումների դեպքում կենդանիների ատամոքսի գործունեության խանգարման վտանգը։ Լինում են դեպքեր, յերբ ցնցիչ ապրումների ազդեցության տակ մարդը ծանրությունն է զգում իր ատամոքսում կամ բոլորովին թուլանում և ատամոքսի աշխատանքը։

Ատամոքսի և աղիքների աշխատանքի թուլացումը հնարավորություն է տալիս որդանիզմին մեծ քանակությամբ արյուն խնայել և այդ գործադրել ավելի մանկնոին որդանիզմին խիստ կարևոր նպատակների համար, այսինքն արյան հոսանքն ուղղել դեպի սիրտը, մկաններըը, ուղեղը։

Այսպիսով, նոգեխանների և զգացմունքների ժամանակ որդանիզմում կատարվում են բոլորովին տարբեր ապարատների գործունեության խիստ համաձայնեցրած ու նպատակահարմար փոփոխություններ։ Այդ դեպքերին որդանների համերաշխ ու մոբիլիզացիոն գործունեությունը դեկավարվում ու կատարվում է սիմ-

պատիկ ներվային համակարգության կազմից: *Սիմպատիկ ներվային համակարգն ուժեղացնում է սրտի գործունեությունը, դանդաղեցնում սառեցնում ու ապիքների աշխատանքը, սեղմում մաշկի ու ներքին անոթները, լայնացնում սրտի և հնարավոր և նույն իսկ ուղեղի անոթները, պայմաններ և առեղծում թոքերի մեջ ավելի մեծ քանակությամբ ոդ ընդունելու համար, հավաքագրում և շաքարը լյարդի մեջ և այլն: Ինչպես կենտրոնի աշխատանքները ցույց տվեցին, համոզիչ նշանակություն ունեն ներվերի մեջ կարևոր ազդող դեր և կատարում նաև վերյերիկամային գեղձերի հորմոնը՝ ադրենալինը, որի գործունեության ուժեղացումը նույնպես սիմպատիկ ներվերի գրգռման հետևանք է:*

Ադրենալինն ազդում է բոլոր օրգանների ու հյուսվածքների (բացի քրանքագեղձերից) վրա: Այսպիսով, համոզիչների և զգացմունքների ֆիզիոլոգիական հիմունքներն են կազմում սիմպատիկ ներվային համակարգը և նրա ազդեցության տակ ադրենալինի արտազատությունը, որի քանակն արյան մեջ համոզիչ գրգռվածության դեպքում խիստ աճում է:

Ա Ֆ Ֆ Ե Կ Տ

Աֆֆեկտային (լատիներեն affectus բառից, որը նշանակում է հոգեկան հուզմունք) վիճակը հոգեկան այն գրությունն է, երբ բուռն զգացմունքների ազդեցության տակ մարդը կորցնում է ինքնատիրապետումը, որի հետևանքով նա ոչ պատկերացում չի ունենում իր արածի հետևանքների մասին: Սովորաբար մեր զգացմունքները չափավոր են և գիտակցության չեն թափանցում: Իսկ երբ նրանք բուռն վոլտորկալից բնույթ են ստանում, դառնում են աֆֆեկտներ:

Աֆֆեկտիվ վիճակն առաջ է գալիս հանկարծակի, անսպասելի ու խիստ ցնցիչ տպավորությունների ազդեցության տակ, կարճ ժամանակամիջոցում իշխելով մարդու վարքի վրա, խիստ հախուռն ընթացք և ստանում, շինչանում է, մարում:

Թորնդայկին Միխեյան հերոս Մրիամի վոլտոպանովը յուր «Ցերկու անգամ բնվեռում» գրքում բերում և աֆֆեկտիվ վիճակի հետևյալ բնորոշ օրինակը:

Այն ժամանակ, երբ նա վայրենք եր կատարում բնվեռում,

վշացավ ոգնաավի ոգիին, վորի հետեվանքով յերկար ժամանակ նրա կյանքը կարվեց Ռուդոլֆի կղզուց, հետեվաբար և վոչ յերկրի հետ։

Ռուդոլֆի կղզում ուսումնասիրությունը լրված կհերոսվ սպասում էր ընդ. Վոդոպյանովի ոգնաավի ոգիությունը։ Լարված ու անընդհատ սպասողական վիճակը Թուլացրեց ոգիության ուժերը, նինջն սկսեց տիրել նրան, յերբ հանկարծ Սարոմիլովը զգուշացավ ու կարծեք քարացավ... ականջափողի մեջ նա լսեց ծանոթ սիրնամներ ու արձակից հոգեցնցիչ, վայրագ մի ձիչ. «Կանչում է»։ Հարևան սենյակում քնած բոլոր մարդիկ վեր թռան իրենց անկողիններից և վազեցին դեպի Սարոմիլովը, կարծելով, թե նա խելագարվել է։ Սարոմիլովը խելագարի պես վազում էր սենյակից սենյակ և ճիչեր արձակում։ Նրան դժվար էր հանգստացնել։

Նա սրընթաց յեռ գարձավ դեպի ոգիս սենյակը։ Նրա յեռեվից սլացան մյուսները...

Յեվ հանգստանալուց հետո միայն Սարոմիլովն ընդունում է առաջին ոգիոգրամը՝ Վոդոպյանովի հաջող վայրէջքի մասին։

Աֆֆեկտը և ֆիզիոլոգիական փոփոխությունները. Աֆֆեկտիվ վիճակի այդպիսի ցնցիչ հոգեկան արտահայտությունը հանդես է գալիս նաև ուժեղ ֆիզիոլոգիական, վոչ միայն արտաքին, այլև ներքին փոփոխություններով։ Որինակ վշտի աֆֆեկտի ժամանակ վոչ միայն մարդու մաքերը դանդաղ են հոսում, կաշկանդված են, ծանր ու մռայլ, այլև թուլացած է վորդնիզմը, մեջքը ծռված է, գլուխը քաշ ընկած, դեմքը յերկարացած է և նեղացած, մարդը վոտների վրա ամուր կանգնել չի կարողանում, ձայնը թուլանում է, ճնշվում, դրա հետ միասին մաշկը գունատվում է, մարդն սկսում է մրսել, բերանում չորություն է զգացվում, շնչառությունը դանդաղում է, ոդի պակասություն է զգացվում (տես Կորսակով «Պսիխիատրիայի դասընթաց»)։

Ձայրույթի աֆֆեկտի ժամանակ մարդը կատարում է արագ ու անկանոն շարժումներ, նա վոտները գետնին է խփում, ձեռները թափ տալիս, բղավում, մի խոսքով նա կատաղի յե դառնում, առաջ է գալիս խփելու, կոտրելու, ջարդելու, ուրիշին ցավ պատճառելու և սպանելու ցանկություն։ Միաժամանակ զայրացած մարդու շարժումները հաստատուն չեն, անկազատակ են,

նրա ձայնը ևս ընդհատվող ու կակազուն է դառնում, ըստ յերեվույթին շարժումների կոորդինացիան խանգարված է։ Նախատեսում է նաև արյունատար անոթների նորմալ աշխատանքը, վորի հետևանքով դեմքը կարմրում է, աչքերն արյունով լցվում։

Աֆֆեկտների տեսակները. Գերմանական խոշոր վիլհոիտա կանաը, յելնելով աֆֆեկտների որգանիզմի վրա ունեցած ազդեցությունից, ընդունում է յերկու տեսակի աֆֆեկտների գոյությունը՝ ստենիկական և աստենիկական։ Ստենիկական (հունական ուժ բառից) աֆֆեկտներն ուժեղացնում են ներքին որգանների և մկանների գործունեությունը և ընդհանուր առմամբ բարենպաստ նշանակություն ունեն որգանիզմի ուժերի մոբիլիզացիայի գործում։ Աստենիկական աֆֆեկտները (հունական թույլ բառից) թուլացնում են և յերբեմն նույնիսկ համաբյա զադարեցնում որգանիզմի գործունեությունը։ Ստենիկ աֆֆեկտներին են պատկանում, որինակ, զայրույթը, ուրախությունը, իսկ աստենիկ աֆֆեկտներն են՝ սարսափը, հոգսը, վիշտը, անզոր արհամարհանքը և այլն։

Գերմանացի պրոֆեսոր Յերուզալիմը աֆֆեկտներն առաջարկում է հետևյալ յերեք խմբերի։

1. Հաճույքի և տհաճության (որինակ՝ ուրախություն, վիշտ), 2. գրգռվածության և ննջվածության (որինակ՝ զայրույթ ու սարսափ), 3. լարվածության և պռոբկման (որինակ՝ լարված սպասողական վիճակ և անսպասելիություն)։

Աֆֆեկտի ինտենսիվությունը կամ ուժը կախված է մի կողմից սրտի գործունեության փոփոխից, իսկ մյուս կողմից ընդհանուր որգանիզմի մկանների լարվածությունից։ Որինակ, զայրույթի ժամանակ մկանների լարումը հասնում է ծայրահեղության, իսկ ցասման կամ սարսափի ժամանակ թուլանում է։

Աֆֆեկտի վորակը կարելի յե պարզորեն նկատել դեմքի վրա։ Այդ տեսակետից մարդու դեմքը՝ նրա հոգեկան աֆֆեկտիվ վիճակի հայելին է դառնում։

Աֆֆեկտների նշանակությունը. Դարվինը յուր «Ենոպկատների առաջացումը» գրքում ընդգծում է աֆֆեկտների կարևոր նշանակությունը՝ կենդանական աշխարհի գոյության պայքարի գործում։ Կենդանու կյանքը շարունակ յենթակա յե վտանգի։

Աֆֆեկտը հնարավորություն է տալիս թշնամու կողմից հանկարծակիի բերված կենդանուն մոբիլիզացիայի ենթարկելու յուր վողջ կենսական ուժերը կյանքի և մահվան վերջնական պայքարի համար, եթե միայն կենդանին հաղթելու վորոշ շանսեր ունի։ Իսկ եթե թշնամին շատ ուժեղ է և պայքարի հեռանկարը պարզ, կենդանին իր ամբողջ ուժով դիմում է խելակորույս փախուստի։ Լինում են դեպքեր, յերբ փախուստն էլ հնարավոր չէ, այս դեպքում մնում է վերկության վերջին միջոցը՝ միամտացնել թշնամուն «սուտ սուռլիկ տալով» և ապա փախուստի դիմել։

Նորագույն հետազոտությունները հաստատում են Դարվինի դրույթը։ Թիվիլոգիան պարզել է, վոր որգանիզմն ունի կենսական էներգիայի անձեռնմխելի ֆոնդ, վորը մսխվում է միայն ծայրահեղ դեպքերում։ Սակայն եթե ինչու աֆֆեկտի ժամանակ կենդանու և մարդու ուժերը բազմապատկվում են և նա դառնում է անճանաչելի։ Որինակ, հոգեբաններից մեկը պատմում է, թե ինչպես սարսափի ժամանակ նա թռել անցել է այնպիսի մի անդունդից, վորին հետագայում նա նույնիսկ վախենալով է մոտեցել։

Մարդկային աֆֆեկտ արտահայտող շարժումները, ըստ Դարվինի, կենդանական նպատակահարմար շարժումների մնացորդներն են։ Որինակ՝ մկաններուի լարումը, բռունցքի սեղմվելը, դայլության դեպքում ատամների կրճտոցը, սրանք այն վաղ ժամանակների մնացորդներն են, յերբ մարդը բռունցքներից և ատամներից բացի ինքնապաշտպանության այլ միջոցներ չուներ (այդ տեսակետը պաշտպանում են նաև Սպենսերը և Մակ-Դուգալը), այս հանգամանքը աֆֆեկտը բացատրում է կենդանական բնազդի մնացորդներով։

Ակադեմիկ Պավլովն աֆֆեկտի բացատրման նոր տեսություն է առաջադրում։ Ըստ Պավլովի աֆֆեկտը հեռանկար և այնպիսի ուժեղ ներվային գրգիռներ, վորոնք հնարավորություն չունեն կենտրոնացու միայն ուղեղի վորևե մի մասում, այլ պատճառով էլ տարածվում են ու իշխում ուղեղային վողջ կենտրոնների վրա։ Այսպիսով ըստ Պավլովի աֆֆեկտի ժամանակ գրգիռ ուժն այնքան մեծ է, վոր ուղեղային արգելակման գրոցեսը ժամանակավորապես անգործության է դատապարտում, վորի շնորհիվ

իրրադացիոն (գրգռի ճառագայթացում) պրոցեսը վոչ մի կերպ հնարավորություն չունի կոնցենտրացիայի յենթարկվելու։

ՋԵՄՍ-ԼԱՆԳԵՑԻ ԱՖՖԵԿՏՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

«Ընդհանրապես ընդունված և կարծել,—գրում է հայտնի հոգեբան Ջեմսը,—վոր առարկաներից ստացված հոգեկան ընկալումները պատճառ են դառնում հույզերի, իսկ հույզերի հետևանք և լինում համապատասխան մարմնական արտահայտությունները։ Ըստ իմ տեսության, ըմբռնման անմիջական հետևանքը, դա մարմնական գրգռվածությունն է, իսկ հույզն այդ գրգռվածության գիտակցությունն է» (Джемс, «Психология», стр. 326)։

Այսպիսով, ըստ Ջեմսի զգայական ընկալումն անմիջապես հույզի չի վերածվում։ Ընկալման հետևանքը լինում է մարմնական, ֆիզիոլոգիական փոփոխությունները, իսկ այդ փոփոխությունները իրենց հերթին պատճառ են դառնում համապատասխան հոգեկան ապրումների։ Այսպիսով՝ «Մենք տխուր ենք, վորովհետև լաց ենք լինում, զայրանում ենք, վորովհետև ուրիշին խփում ենք, վախենում ենք, վորովհետև դողում ենք»։

Ֆիզիքական շարժումները առաջնային լինելը, զգացմունքների հետ համեմատած, պաշտպանում և նաև դանիացի հոգեբան Լանգեն։ Լանգեն պնդում է, վոր ֆիզիքական շարժումներն են աֆֆեկտի հիմքը կազմում։

Պետք է ասել, վոր զգացմունքի ֆիզիոլոգիական շարժումների հետևանք լինելու տեսակետը Ջեմսից և Լանգեից շատ առաջ պաշտպանում եր խորը մտածող Լևսինգը (1729—1781)։ Լևսինգը գերասաններին խորհուրդ եր տալիս կատարել անհրաժեշտ շարժումներ, վորպեսզի կարողանան արհեստականորեն առաջացնել վորոշ ապրումներ։

Ջեմսի, Լանգեյի և մյուսների՝ աֆֆեկտների ու հույզերի մեկնաբանման դրական կողմն այն է, վոր նրանք աշխատում են հոգեկան յերեվույթի հանդիսացող հույզի հիմքում գտնել դեռ նյութական ֆիզիոլոգիական յերեվույթներ։

Չնայած դրան, նրանց տեսությունը խիստ միակողմանի է, բիհևիորիստական։ Նրանք չեն հասկանում մարդկային զգացմունքների սոցիալ-պատմական և գիտակցական լինելը և ամեն

ինչ վեր են ածում զուտ ֆիզիոլոգիական յերեվույթների, նը-
րանց մոտ վերջ ի վերջո հույզի և բնազդի մեջ հավասարության
նշան և դրվում և անտես և առնվում մարդու ինտելեկտուալ
գործունեության հսկայական նշանակությունը եմոցիաների
առաջացման ու նրանց հսկողության գործում։ Ինչպես Ենգելսն
և նշում՝ մարդու զգացմունքները տարբեր պայմաններում,
տարբեր հասարակության մեջ տարբեր են լինում. «Մեր սեռա-
կան սերը հյուսիս տարբերվում է հնդերի զուտ սեռական յան-
կությունից՝ երանից։ Ամենից առաջ՝ այդ յենթադրում է փոխա-
դարձ սեր սիրած էյակի կողմից... Յերկրորդ՝ սեռական սերը
խոր և տևական զգացմունք է, այնպես որ մեկյանց չպատկա-
նելը կամ բաժանումը հանդես և գալիս նրանց համար իբրև
մի մեծ, յեթե չասենք ամենամեծ դժբախտություն։ Միմյանց
պատկանելու համար նրանք շատ բան են վտանգի յենթարկում,
մինչև անգամ կյանքը...» (Ենգելս, «Ընտանիքի, մասնավոր
սեփականության և պետության ծագումը» եջ 38, կուսհրատ
1932 թ.)։

ԿԻՐՔ

Կրքի կլասիկ բնորոշումը տվել է 18-րդ դարի ֆրանսիա-
կան լուսավորիչ Կոնդիլյակը. «Դա մի ցանկություն է, որն ար-
գելում և ունենալ այլ ցանկություններ կամ ծայրահեղ չափով
թագավորում է մյուս ցանկությունների վրա»։ Այդ ցանկու-
թյունն այնքան ուժեղ է, որը վոչինչ չի կարող մարդուն հեռաց-
նել իր ցանկացած առարկայից։ «Նա հիշում է իր կրքի առար-
կային, յերևակայությամբ պատկերացնում, նրա վոչ ընդունա-
կությունները դրսից են բացատրում այդ առարկայով»։

Հելվեցիուսն ուժեղ կիրք ասելով հասկանում է այնպիսի
մի կիրք, որի առարկան անհրաժեշտ է մեր յերջանկության
համար, որը առանց այդ առարկայի տիրապետման կյանքը մեզ
համար դառնում է անտանելի։

Մարդկային կրքերը կարող են լինել նեղ, ցածր, յեսա-
պաշտական, հակամարդասիրական (օրինակ՝ ժլատությունը,
փառասիրությունը, վորկրամոլությունը, կնամոլությունը, գինե-
մոլությունը, խաղամոլությունը և այլն) ու կարող են լինել
բարձր, հումանիստական (կրքոտ սերը դեպի դիտությունը, դեպի
գործը, կրքոտ ատելությունը դեպի ժողովրդի թշնամիները և

այլն)։ Հեղվեցիուսը հոյակապ կերպով տվել է կրքերի գնահատման, նրանց լավ ու վատ լինելու չափանիշը. «Գծուծ միջոցները միշտ առաջացնում են մանր կրքեր և տալիս են չնչին հատվանքներ, իսկ համարձակ ձեռնարկումներին խթան են հանդիսանում մեծ մտադրությունները»։

Բուրժուական հասարակարգն «ուր գագաթ մարդը մարդ է գիշատում», մեծ մտադրություններ առաջադրել չի կարող։ Այստեղ մարդկային ցանկությունները ու կրքերը պատվում են անհատական բարեկեցության, ուրիշների դժբախտության գնով կերկերա սեղծելու, թալանի ու գոփողության ճանապարհով «մարդ դառնալու» խնդրի շուրջը։ «Մաքի կյիր ուզում դառնա,—կենդյիր մարքիք կու թալնդյիր, գողութին կռնդյիր, ինձ նման խղճերուն կուզրկդյիր, քանուհինդ հազար տեղ արնո արտասուքը կու թափել տեյիր» (Սունդուկյան—«Պեպո»)։

Այժմ ծանոթանանք յուսալիրական մի շարք կրքերի հետ, որոնք ամբողջովին մանրամասն սեփականատիրական հասարակարգի ծնունդ են։

Թլատուքյունը կամ վոսկու կիրքը խիստ տարածված է ու բնորոշ մանրամասն-սեփականատիրական հասարակարգի համար։ Իզուր չէ, որ համաշխարհային գրականության մեջ ամենից ավելի ուշադրության արժանացած և մշակված տիպերից մեկը հանդիսանում է ժլատի օբրազը (Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը»—Շեյլոկ, Պուշկինի «Ժլատ ասպետը», Գոգոլի Պլյուշկինը, Վայլաեր Սկոտի վաշխառուն «Ինչարդ առյուծի սիրտ» գրքում, Բալզակի Գոբսեկը, Բաֆիթ Մասիսյանը և այլն)։

Ժլատության կիրքն արտահայտվում է նրանով, որ ժլատը յուր կյանքի միակ բերքանվությունը և խղճը գտնում է վոսկի կուտակելու մեջ։ Վոսկու տենչը, շատ վոչ ուշնայալու ցանկությունը ժլատների մոտ հասնում է այն աստիճանի, որ նրանք վոչ միայն կորցնում են մարդկային-բարոյական իրենց վոչ կերպարանքը, այլ և մեծացնում նույնիսկ ազգակցական ու ծնողական զգացմունքը։ Որոշ ժլատներ նույնիսկ իրենց անձնական, բնական պահանջների բավարարման համար վճարում են մսխել մի քանի կոպեկ։ Որինակ Գոգոլի «Մեռած հոգիներ» պրպտողներից մեկը, Պլյուշկինը ման և գալիս այնպիսի պատառոտված շորերով, որ առաջին հայացքից նրա հագուստից

անհնար և իմանալ ապամարդ և, թե կին։ Ունի հարյուրավոր դեպքերին անտառներ, բայց ամենացուրտ յիսունականներին անգամ չի տաքացնում յուր «բնակարանը», նրա պահեստները լիքն են նեխվող կենսամթերքներով, բայց ինքն ապրում և կիսաքաղց վիճակում, կրծելով հին բոբրոնած հացը։

Ժլատության կիրքը ծնունդ և ու արդյունք հասարակական այն պայմանների, յորը փողը դառնում և մարդկային կյանքի թագավորն ու միակ կարդադրիչը։

Փողի քսակը, փողի քսակը,
Բարձրացնում և մարդու հասակը,
Գեղեցկացնում և հրեշ ագեղին,
Սրբագործում և դարչն ու ապեղին...
Նրա վրա չի աշխարհքը կանգնած,
Նա մեր հոգին և, մեր յերկրորդ աստված։

(Հ. Թումանյան)

Կապիտալիստական հասարակարգում դրամի ամենակարող դերը սպառիչ կերպով տալիս և Բայլդին իր կերտած ամենալավագույն տիպերից մեկի՝ վաշխառու Գոբսեկի բերանով «Վոչ մի բանում մերժում չկա այն մարդու համար, որը մեկնում և ու բաց անում փողի տոպրակը։ Ցնս բավականին հարուստ եմ, որպեսզի գնամ մինիստրներին, դեկավարող մարդկանց խիղճը, —մթթե դա իշխանություն չէ։ Ցնս կարող եմ ունենալ ամենագեղեցիկ կանանց և ազնիվ նրանց ամենաքնքուշ դուրգուրանքներով,—մթթե դա հաճույքի վայելում չէ... Վոսկին,—դա ձեր կյանքը կառավարող գաղտնագրերի բանալին է»։

Պարզ և, որ փողի ամենակարողության պայմաններում որոշ մարդիկ վոսկին, դրամը դարձնում են պաշտամունքի, իդեալի ու նվիրվածության միակ առարկան։ Չհասկանալով, որ փողն էլ ուրիշ առարկա իր մեջ արբազան ու կախարդիչ վոչինչ չունի, որ նա յուր իշխանությունն ստանում և հասարակական ժամանակ ու իրականության կապիտալիստական կարգերում միայն, նրանք փողի մեջ են տեսնում այն, ինչ որ մարդկային հարաբերությունների արդյունք և։

Սոցիալիստական հասարակարգի հաղթանակը մեր յերկրում, իշնցրեց նայիվ փոքր իր կախարդական բարձունքներից և դարձրեց մարդկային աշխատանքի վարձատրման ժամանակավոր միջոցներից մեկը։ Վերջացավ դրամի տիրապետությունը մարդու վրա, դրամն ինքն ընկավ մարդու իշխանության տակ։ Ահա թե ինչու կապիտալիզմին այնքան հատուկ փողատիրությունն ու ժլատությունը միայն բացառիկ դեպքերում և նկատվում մեզ մոտ, այն էլ իբրև հետադիմական վոչնչացվող կապիտալիզմի մնացուկները մեր դիտակցության մեջ։

Կնամոլությունը—հետևանք և այն պայմանների, յերբ կինը տղամարդու հետ համեմատած զրկված է ամենատարրական իրավունքներից ու զբաղված է տիրող դասակարգի կողմից իրեն հաճույքի, անկողնու, տղամարդու կրքերին ամենակոպիտ ձևով բավարարելու։ Կապիտալիստական հասարակարգում կնոջ մարմինը ևս դառնում է ապրանք։ Այստեղից պարզ է, թե ինչու վորոշ վաճառատեսակներով բոլորովին ապահովված, վոչ մի իդեալ չունեցող մարդիկ իրենց կյանքի ամբողջ նպատակն ու հաճույքը գտնում են կանանցի շրջապատի մեջ։ Իրենց տղամարդի կրքերի բավարարման համար, կնամոլները կանգ չեն առնում և վոչ մի միջոցի առաջ՝ խաբելու, կեղծելու, փոքրիհոգությունների, կեղծ աչք ու վախերի, ստահանելիքի, նույնիսկ քրեական հանցագործությունների կատարում։

Կապիտալիստական հասարակության ծնունդ այս կեղտոտ ու զզվելի կիրքը նույնպես մեր յերկրում համարյա ամբողջովին վերացել է։ Մեր յերկրում կինը դառել է ազատ, անկախ, տղամարդու հետ իրավահավասար ընկերանուհի հարգանքի ու մեծարանքի արժանի քաղաքացի, մեր հասարակությունը մեծ արդահատանքով ու զզվանքով է վերաբերվում կնամոլության ռեցիդիվներին։

ԲԱՐՁՐ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԻՐՔ

Բարձր կամ հասարակական կիրքը յուր ելությամբ ու բովանդակությամբ բոլորովին տարբերվում և վերեվում նկարագրված կրքերից։

Բարձր կրքի ժամանակ մարդն ունենում է խելացի ու

վառ այնպիսի ցանկություն, որի հասարակական խոշոր նշանակությունը միանգամայն պարզ է նրա համար։ Այսպիսի դիպքում մարդն իր ամբողջ հոգով, իր մտավոր ու ֆիզիկական ուժերի լողջ կարողությամբ ձգտում է դեպի այդ նպատակը։ Նպատակին հասնելու ասպարիզում կատարված ամեն մի քայլ անսահման հաճույքի հետ միասին, խթան է հանդիսանում, որ նա էլ ավելի կրքոտությամբ ձգտի դեպի նոր նպատակը՝ կանգ չառնելով դժվարությունների առաջ։

Հայտնի չէ, թե ինչպես ուսս ժողովրդի մեծ գավակ, «ձկնորսի տղա» Լոմոնոսովը կրքոտ կերպով ձգտում էր ուրվագիծել դիտության բարձունքներին, թե նա ինչպիսի դժվարություններու հաղթահարումով, ճորտատիրական Ռուսաստանի անտանելի պայմաններում կարողացավ դառնալ համաշխարհային դիտության այն հսկաներից մեկը։ Ակադեմիկոս Պավլովը խորհրդային կրթության տասարդությանը հասցեագրված իր հայտնի դիմումով պահանջում է կրքոտ լինել աշխատանքի հանդեպ։ Այսպիսով, կիրքը՝ այսինքն անսահման սերը դեպի մեր հայրենիքն ու անսահման ատելությունը դեպի դասակարգային թշնամին, դառնում է մեր ժողովրդի բնավորության ամենահիմնական գծերից մեկը։ Կրքոտությունն արտահայտվում է մեր լողջ աշխատանքի ու կյանքի մեջ։

Չի կարելի լորջ չափով չհամաձայնվել Հելվիցիուսի հետեվյալ տողերի հետ. «Դյուտերի ու արվեստի հրաշքների համար մենք պարտական ենք ուժեղ կրքերին, որոնց պետք է համարել մեր մտքի բեղմնավոր սաղմը և մարդու մեծ գործերի հուժկու շարժիչը... Կրքերի ամբողջական բացակայությունը, եթե այդ հնարավոր լիներ, մարդկանց բոլորովին կքթացներ»։

ԵՔՍՏԱԶ

Ամենաուժեղ ու կրքոտ ցանկությունների առաջին իրագործումը ջղային լորջ մարդկանց մոտ եքստազի բնույթ է ստանում։ Եքստազը հետեվանք է ուժեղ բերկրության և արտահայտվում է զմայլվածության և խանդավառության ծայրահեղ աստիճանով։ Եքստազի ժամանակ չտեսնված ցնցում կիրջանկությունը մարդուն դյութվածության և հաղցնում. նրա լողջ միտքն ու էությունը զբաղվում է այն հիասքանչ առարկայով, որն ան-

հուն յերջանկութեան պատճառ և հանդիսանում։ Ըմբռնել վորևվէ կողմնակի գրգիռ, հասկանալ թե յուր շուրջն ինչ և կատարվում, այդպիսի վիճակում անհնար եւ Յերբեմն նուչնիակ ամենաուժեղ ցավ պատճառող գրգիռն անգամ, այդ վիճակում գտնվող անհատի վրա վոչ մի ազդեցութեյուն չի գործում, հաճախ էլ անշարժ կանգնած և մնում վորևե մի դիրքում և համառ կերպով նայում և մի կետի։ Եքստազը յուր բարձրագույն լարվածութեյան և հասնում առանձնացման, մինակութեյան ժամանակ։

Եքստազը կարող և յերկու պատճառից առաջանալ.

1. Արտաքին աշխարհի իրերի ու առարկաների ազդեցութեյունից (որինակ քնութեյան հիասքանչ պատկեր, գեղեցիկ մելոդիա, դյութիչ անսահմանի գրավիչ գեղք և այլն)։

2. Ներքինիով մտապատրանքային և կրոնական ցնորային պատկերացումներու։

Բանաստեղծները մեծ հաճույքով են նկարագրում առաջին սիրո եքստազը, յերբ անսահման գմայլմանութեյան ու յերջանկութեյան հետևանքով սիրող զույգերը մոռանում են ամեն ինչ, նուչնիակ ժամ ու ժամանակն էլ, յերբ ժամերը հասում են ինքնամոռացութեյան վիճակում դտնվող սիրահարների համար, իբրև վայրկյան (տես Գորկու «Ազջիկը և մահը»։

Սիրո-եքստազի դեղեցիկ նկարագրութեյունը տրված և Վահան Տերյանի այս գողտրիկ տողերում՝

Ցես եմ, դու յես, յես ու դու
Գիշերում այս գյութական
Մենք մենակ ենք—յես ու դու
Ցես էլ դու յեմ՝ յես չկամ . . .
Չկան որերն ոտարիու,
Չկան ժամ ու ժամանակ
Ուրվական ենք մենք յերկու
Միշտ խրատ նման, միշտ մենակ . . .

Անտիսպասելութեյան, ապիտութեյան ու միստիկիզմի հետևանք և կրոնական եքստազը, վորն ոգեորվածութեյան մեջ յեկեղեցու «հայրերին» մոտ իբրև «տրբազան», «սուրբ հոգուն միանալու» միջոց՝ հավատացյալներին խրախուս համարը կրոնական եքստազը խիստ ախտաբան-կան բնութեյուն ունի և առաջ և գալիս

միայն խիստ ջղային ու հիշաուժյամբ նկարշնչման չենթարկվող հիվանդ հավատացյալների մոտ։

Մաուգլիին յուր «Հոգու ֆիզիոլոգիան ու ախտաբանությունը» գրքի մեջ հնարավոր կերպ և նկարագրում կրոնական եքստազը. «Նա մեծ չափով՝ և՛ արտաքնապես, և՛ ներքնապես նման է լճատարփային յուղ կատալեպսիային, այնինքն սոմնամբուլիզմի կամ հիպնոզի հոյանի ձևերին։ Անոթների սեղմվածության պատճառով մարդու վողջ մարմը գունատվում է, սպիտակում, զարկերակը հազիվ է նշմարվում, աչքի բիբը լայնացած է, աչքերն անշարժ հառած են լինում վերեվ կամ առաջ, ամբողջ մարմինը կաշկանդված ու անբնական դիրքի մեջ է գտնվում։ Մարդու դեմքը յերբեմն խանդավառության և արտահայտում, աչքերը վառվում են տենդային փայլով»։

Եքստազային վիճակ նկատվում է նաև կենդանիների (ոձերի, ագավնիների և այլն) մոտ. օրինակ՝ սոխակը գարնանային սեռական գրգռվածության շրջանում յուր յերգը դայլայլում է եքստազային վիճակում։

✝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ

Մեզանից յուրաքանչյուրը մեր մեծ հասարակության իրավահավասար անդամ է և վորպես այդպիսին յուրաքանչյուրիս վրա յել հասարակությունը դնում է վորոշ պարտականություն։ Աշխատանքի այդ հասարակական բաժանումը կատարվում է հաշվի առնելով յուրաքանչյուր քաղաքացու անհատական ուժերըն ու կարողությունները։ Մեզանից ամեն մեկը գիտակցում է, վոր խորհրդային յերկրում չեն կարող լինել «փոքր» կամ «մեծ», «անարժեք» կամ «արժեքավոր» պարտականություններ։ Բոլոր աշխատանքն էլ պատասխանատու յե, կարեվոր ու մեծ հասարական նշանակություն ունի։

Բարոյական զգացմունքները հաճույքի ու փառքի այն մեծ ապրումներն են, վոր ունենում են խորհրդային յերկրի բարեփոխիչներն իրենց վրա դրված պարտականությունները բարեխիղճ ու ազնվորեն կատարելիս։ Բարոյական զգացմունքները բղխում են այն գիտակցությունից, վոր կատարածդ աշխատանքը հանրօգուտ է, վոր դու հասկացել ես կյանքիդ իմաստն ու նպատակը,

դա մեր մեծ երկրի ամուր և ու բարգավաճումը, դա սոցիալիզմի վերջնական հաղթանակն է և այդ հաղթանակների գործում քո ունեցած մասնակցությունը։

Բուրժուական բարոյագետներն ու տերտերներն ամեն կերպ աշխատում էին տարածել այն միտքը, թե իբր Քրիստոսի բարոյական կանոններն անխախտ են, մշտնջենական և նույնությամբ տարածվում են բոլոր մարդկանց վրա, անկախ հասարակական կարգերի և դասակարգային պատկանելիությունից։

Ժամանակակից քրիստոնեական բարոյականության հիմունքները տրված են Ավգուստինի (ծնվել է 354 թվին) կողմից։ Ըստ Ավգուստինի մարդն ի ծնե մեղավոր էակ է՝ չարի հիմքով։ Բարոյապես կատարելագործվելու ու փրկվելու համար նա պետք է հավատա աստծուն ու ներանից ապերսե իր մեղքերի թողության։ Այսպիսով, ըստ Ավգուստինի բարոյական մարդը նա չէ, ով չի կորցնում փրկության հույսը, սիրում և արարչին և ապաստում ներանից փրկության։ «Հույս», «սեր», «հավատ»— ահա այն բարոյապետական նորմանները, որից չեղնում են տերտերներն իրենց քարոզները կարդալիս։

Բայց աստված ինքն այդպես չի վարվում մարդու հետ,— ասում է Ավգուստինը։ Մարդու ի ծնե այլասերված բնավորությունը կարելի չէ ուղղել միայն բոնի ուժի միջոցով։ Դրա համար էլ աստված պատժիչ որդան է, նա բարի նպատակից չեղնելով առնչում է մարդկանց, տալիս է ամեն տեսակի չարչարանքներ ու զրկանքներ, դա չի մարդու հոգու փրկությունը։ Մարդը պետք է հեզությամբ ու համբերությամբ տանի կյանքի ամենադժնի պայմանները և ամենատոսկալի պայմաններում անդամ փառք տա արարչին։

Աստծո ներկայացուցիչներն այս երկրում, շարունակում է Ավգուստինը, հանդիսանում են պետության դեկավարներն ու չեկեղեցին։ Դրա համար էլ մարդը պետք է հնազանդ լինի պետության ու չեկեղեցու հանդեպ ու համբերատար կերպով կրի այս աշխարհի դառնությունները՝ իբր իսկ հոգու փրկության համար։

Քրիստոնեությունը պահանջում է, որպեսզի աշխատավորները լուռ ու անտրտունջ տանեն աշխատանքի ու կյանքի դաժան պայմանները, չբողոքեն շահագործման դեմ, չհա-

ժարձակվելն անդամ ժառանգելու կյանքի այլ պայմանների մասին։ Այստեղից պարզ է քրիստոնեության, ինչպես և բոլոր կրոնների ռեակցիոն բնույթը։

Ընդհակ Լենինը պատասխանելով բուրժուազիայի այն գըրպարտանքներին, որ իբր թե կոմունիստները բարոյականություն չունեն, մերկացնում է բուրժուական բարոյականության կեղեքողական բնույթը և դրան հակադրում մարդի միակ ճիշտ, գիտական բացատրությունը։

«Ի՞նչ իմաստով ենք մենք ժխտում մորալը, ժխտում բարոյականությունը։

Այն իմաստով, ինչ իմաստով այդ քարոզում էր բուրժուազիան, որն այդ բարոյականությունը բղխեցնում էր աստվածային պատվիրաններից։ Մենք այս ասթիվ, իհարկե, ասում ենք, որ աստծուն չենք հավատում և շատ լավ գիտենք, որ աստծու անունից խոսում էր հոգևորականությունը, խոսում էին կալվածատերերը, խոսում էր բուրժուազիան, որպեսզի իր շահագործողական նպատակներն իրականացնի...

Մարդկային, դասակարգային հակացողությունից դուրս վերցրած ամեն մի այդպիսի բարոյականություն մենք ժխտում ենք։ Մենք ասում ենք, որ դա կեղծիք է, որ դա խաբեբայություն է, բանվորների ու գյուղացիների մտքի մթագնումն հոգուտ կալվածատերերի և կապիտալիստների շահերի» (Լենին-Ստալին.— Ընտիր երկեր, 2-րդ հատոր, էջ 1028)։

Մարքսիզմը պայքարում է բարոյականության մշտնջենականության ու նրա նորմաների ազատասիրական լինելու իդեալիստական տեսակետների դեմ, տեսակետներ, որոնք «բարոյականությունը կանգնեցնում են վերացական հավերժական հասարակական հարաբերությունների» (Ենգելս)։

Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը ապացուցում են, որ բարոյականության հավերժությունն իբրև իդեոլոգիական վերնաշենք պատմական է, ինքնուրույն չէ, այլ գոյով պայմանավորվող հասարակական գիտակցության ձևերից մեկն է։ Մարդկային վարքն ու բարքը վերջին հաշվով արտահայտում են ու արտացոլում ավելի դասակարգային հասարակական կարգի առանձնահատկությունները։ «Այսպիսով, բարոյականությունը, կրոնը, մետաֆիզիկան և իդեոլոգիայի այլ տեսակները

ու նրանց համապատասխանող գիտակցության ձևերը, կորցնում են թվացող ինքնուրույնությունը։ Նրանք պատմություն չունեն, նրանք զարգացում չունեն։ Մարդկի զարգացնելով իրենց նյութական արտադրությունը և նյութական հարաբերությունը, տվյալ իրականության հետ միասին փոխում են նաև իրենց մտածությունը և իրենց մտածության արդյունքները» (Маркс и Энгельс. «Немецкая идеология», стр. 17)։

«... մարդիկ, գիտակցորեն, թե անգիտակցորեն, իրենց բարոյական հայացքները վերջին հաշվով քաղում են այն գործնական հարաբերություններից, որոնք նրանց դասակարգային դրության հիմքն են կազմում,—անհատական այն հարաբերություններից, որոնց պայմաններում նրանք արտադրում են և փոխանակում» (Ենգելս, «Անտի-Դյուրինգ», էջ 124, 1936 թ.)։

Պրոլետարական բարոյականությունը «դա իսկական մարդկային բարոյականություն է» (Ենգելս), որը չընդելով իսկական հումանիզմից, իր սուր ծայրով ուղղված է դասակարգային շահամիտների, գոփողների, պրոտեկցիոնների, անհատական ու հատարակական կյանքում այլասերված մարդկային տականքների դեմ։ Այդ պատճառով էլ նա է՛ դասակարգային և, է՛ մարդասիրական։ Մեր կյանքում յուրաքանչյուր ավելով քաղաքացի ընդհատակած և դուրդուրանքով, խնամքով ու հոգատարությամբ։ Միաժամանակ և մեր կյանքը անողոք և մարդկային շահամիտների հանդեպ՝ «կյանքը շահամիտներ դիմադրում և, նրան վոչնչացնում են» (Մ. Գորկի)։

Սոցիալիզմը փոխում և մարդկանց, վերացնում նրանց գիտակցության մեջից բուրժուական, ժանտավոր սեփականատիրական կեղծ բարոյականության մնացորդները և դաստիարակում նրանց հասարակական կարգապահությամբ ու ազնիվ վերաբերմունքով հանդեպ աշխատանքն ու հանդեպ կյանքի հրապարակի պայմաններն ստեղծող մարդը։

«Դասակարգային կռիվը շարունակվում և, և մեր խնդիրն և բոլոր շահերն ստորադրել այդ կռվին...

Կոմունիստական բարոյականությունը—դա այն բարոյականությունն և, որը ծառայում և այդ կռվին, որը միացնում և աշխատավորներին ընդդեմ ամեն տեսակ շահագործման, ընդդեմ ամեն տեսակ մանր սեփականության, որովհետև մանր սեփականությունը մեկ մարդ

դու ձեռքն և տալիս այն, ինչ վոր ստեղծված է ամբողջ հասարակության աշխատանքով» (Լենին-Ստալին, Ընտիր յերկեր, 2-րդ հատոր, էջ 1030)։

«Բարոյականությունը ծառայում է այն բանին, վորպեսզի մարդկային հասարակությունը վեր բարձրանա, ազատվի աշխատանքի շահագործումից» (նույն տեղ, էջ 1032)։

ՉԳՈՒՅՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զգայմունքի խանգարման դեպքում մարդկային հոգեկան յերևույթները կամ ծայր աստիճանի արագորեն բռնկվող արտահայտություն են ստանում, կամ վեր են ածվում անտահմանափակ անտարբերության՝ շրջապատի դրդիռների հանդեպ։ Զգայմունքների խանգարումը խիստ կերպով ազդում է մարդու տրամադրության վրա։ Մարդը՝ կամ դառնում է անտահման ջղային, յերբ ամեն մի չնչին բան նրան դրդռում է ու վայրկենական բռնկման պատճառ դառնում և կամ հանդես է բերում ծայրահեղ ապատիա՝ ամեն ինչի հանդեպ։ Նրա համար բոլորը միևնույնն են, մի այն թե իրեն հանգիստ թողնեն։

Կարող է ինչ վոր մի բանի հանդեպ խիստ կարոտ առաջանալ, վորը մարդուն դարձնի միակամազնատ, և, ընդհակառակը, հիվանդը կարող է ամենաչնչին պատճառից ծայրահեղ կերպով ուրախանալ և տրմկալից կերպով արտահայտել յուր ուրախությունը ամենահասարակ դեպքի նկատմամբ։ Ախտաբանական վորոշ դեպքերում մարդիկ ամենահասարակ պատճառից կարող են ուրախանալ և ծիծաղել, բայց նրանց հուզմունքը խորը չենն, այլ անցողիկ, հեշտ մոռացվող։ Վորևիցե ախտոր տեսարան նրանց կարող է հուզել լաց լինելու չափ, բայց նույն այդ մարդը մի յերկու րոպեյից հետո կարող է մոռանալ լացը և մի այլ պատճառի ազդեցության տակ անկեղծ կերպով քրքջալ։

Բարոյական զգայմունքների ասպարիզում՝ ախտաբանությունը արտահայտվում է կամ ծայրահեղ կասկածամտությամբ, յերբ հիվանդին թվում է, վոր յուր ամեն մի քայլով անպատվում է, վիրավորանք է հասցնում ուրիշներին և այդ պատճառով նա յուր ամեն մի անմեղ արարքի համար տանջվում է ու հազար ներողություն խնդրում, և կամ ծայրահեղ կոպտությամբ, պնդաղաքավարությամբ, ցինիկությամբ ուրիշներին հաշվի

չառնելով։ Այդպիսի դեպքում հիվանդը կարող է առնասիրտ կերպով կատարել ամենապզվելի աշխատանք առանց ծոցի ծայրահեղ զգալու, եզրիմը, յուսապաշտությունը ծայրահեղ չափերի չեն հասնում։

Կրաֆտ Եբինգումը յուր «Դատական պսիխոպատոլոգիա» գրքում բերում է հետևյալ ապշեցուցիչ օրինակը. մի յիրեսարդ մարդ, վոնց Լևոնը, վորը փոքր հասակից. աչքի յուր ընկերում յուր յուսականությամբ և վատ հակումներով, վերջ ի վերջո, 19 տարեկան հասակում կատարեց գալանային մի սպանություն՝ սպանեց յուր խորթ մորը։ Դրանից շատ առաջ, յուր հարազատ մոր մահվանից հետո, նա առնասիրտ կերպով ասաց.—«Ավելի լավ, ուռողների թիվը մի հոգով պակասեց»։ Խորթ մորն սպանելուց հետո նա ափսոսում էր, վոր չէր սպանել յուր հորը, քրոջը և դատիարակչուհուն։ Դատական հարցաքննության ժամանակ նա անսասանի ցինիզմով պարծենում էր իր քաջագործությամբ ու բազմաթիվ արատներով։ Նա ասում էր, վոր կարող է այնպիսի հեշտությամբ սպանել քրոջը, ինչպիսի հեշտությամբ սպանում է ճանճին։ Մորն սպանելուց հետո վրա հասած հարեվաններին նա ցույց տվեց իր արյունոտ ձեռները և ասաց—«Ահա իմ ձեռնոցները, վոր հագել եմ հորս հարսանիքին գնալու համար»։ Դատավարության նա հայտարարեց, վոր ավելի լավ է մահապատիժը, քան աշխատանքը։ Մահապատժից հետո վիրահատումը ցույց տվեց, վոր նրա ուղեղը մեծ քանակությամբ հետաձգայության ազդակներ ուներ և թաղանթը բորբոքված էր։

Պետք է ասել, վոր զգացմունքային ասպարիզի խանգարությունները միայն հոգեկան հիվանդություններով բացատրել չի կարելի։ Նրանք մեծ մասամբ վատ դաստիարակության ու խուլիգանական շրջապատի հետևանք են, վորոնք չուղղվելու և ծայրահեղության հասնելու դեպքում, կարող են դատախարակվել միայն ազմինիստրատիվ միջոցներով։

ՑԵՐԵՒԱՆԵՐԻ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ

Նորածնի զգացմունքները դեռ վորոշակի չեն և առաջանում են զուտ ֆիզիկո-քիմիական պատճառներից։ Այսպիսի զգացմունքները, վորոնց Հեֆդինգն անվանում է կյանքի զգա-

մունքներ, առաջ են գալիս որպանիզմի նորմալ կամ անոորմալ գործառնութիւնից (աննպաստութեան, հիւանդութեան և այլն)։ Ծնվելուց քիչ ժամանակ անց արդեն առաջանում են զայրույթը, առաջին ժպիտը, բավականութիւնն ու անբավականութիւնը։ Վարվիճը յուր յիշեխայի մոտ զայրույթի առաջին արտահայտութիւնը տեսավ 8 որական հասակում։ Ամերիկայան հոգեբանները պնդում են, վոր ժպտալու և զայրանալու ընդունակութիւնը յիշեխանները բերում են ժառանգաբար։

Ցիշեխան հաճույք և դգում տաշտակի տաք-տաք ջրից, վոր տինքները ծծելուց, այն ժամանակ, երբ արձակում են նրա վոտներն ու ձեռները ու թուլ են տալիս ազատ շարժուելու մկաններըը և այլն։ Ծնվելուց մի քանի շաբաթ հետո, յիշեխան արդեն հասկանում և գուրգուրանքը և իր բավականութիւնն արտահայտում և վոչ միայն վոռնդ դիմադձերով, այլ և ուրախասուն կոկորդային հնչյուններով։

Ընդհակառակը՝ քաղցը, հոգնածութիւնը, ուժեղ լույսը, աղմուկը, մարմնական անհանգիստ վիճակը յիշեխայի մոտ առաջացնում են ջղայնութիւն։

Ցիշեխայի զարգացման հետ միասին զարգանում և նաև բաղմաթիվ զգլխունների հանդեպ հաժապատասխան վերաբեր մունք։ Հանդես բերելու ունակութիւնը։ Զգայմունքների պատճառներն այլևս զուտ որգանական զգլխունները չեն, այլ և արտաքին աշխարհի տպավորութիւնները։ Զորս ամսական յիշեխան բավականին մեծ հաճույք և ստանում յերաժշտական ձայնից (ռոբոցի յերգը), գույնզգույն առարկաներից և այլն։

Ցիշեխան հետզհետե սկսում է իրեն մտերիմ զգալ վորոշ մարդկանց հանդեպ, նրա մեջ առաջանում են վոչ միայն սիրելու, այլ և ուրիշներին սիրելու պահանջը։ Ցիշեխան հանդես է բերում վորոշ ինքնուրույնութիւն և պահանջում է, վոր իւր հարազատներն էլ խաղան, ուրախանան իր հետ, այսինքն ինքնուրույնութեան հետ միասին առաջանում են սոցիալական զգացմունքների տարրերը։ Այսպիսի խիստ հետաքրքիր երևնակ և բերում Շտերնը։ Հինգ և կես ամսական տղան Բոբին նստած եր իր կոլյասկայում, իսկ ծնողներն ուտելիս։ Յանկարծ Բոբին ձեռքը տարավ դեպի բերանը, դիպավ եյին կարգալով։ Ցիշեխան ձանձրանալով սիկնիկի հետ խաղալուց ու մենակութիւնից, դիմում է ծնողներին հե-

անվյալ հնչյունները, տե, ագգա, ատտա, ախա, ամամ, տեան
լով, վոր իր վրա բոլորովին ուշադրություն չեն դարձնում
սկսում և անհանգիստ շարժուձևեր կատարել, վորովհետև նույնպես
անպատասխան են մնում: Այդ ժամանակ փոքրիկ Բոբին սա
տիկ կատաղում է, բռունցքները սեղմում, աչքերը չռում
ջղայնացած կրկնում է իր տատը: Ձերը յերեխային խղճալ
դրկում են, նրա զեմքի ցասումնային արտահայտությունը փոխ
վում է քնքուշ ժպիտի:

Առհասարակ հենց փոքր հասակից յերեխաներն իրենց
շատ սերտ կերպով կապված են ղղում ծնողներին, յեղբայրներ
ու քույրերի հետ: Այդ հարազատության հրաշալի կապը դան
դնում ավելի յև ամրապնդվում: Յեթե յերեխան 3 տարեկան
հասակում կորցնում է յուր մորը, նա իր հիշողության մե
պահում է յուր մոր մեյն դժգույն պատկերը: Հինգ տարեկան
յերեխան արդեն մոր հետ կապված է բազմաթիվ թելերով,
այն ամենը, ինչ վոր հասուկ էր նրա մորը (քայլվածքը, խոս
վածքը, ժպիտը և այլն), յերեխայի համար դառնում է հարա
զատ: Բանաստեղծներից շատ շատերն իրենց սրտում մինչ
մահ պահում են մոր հրաշալի պատկերը: Վորքան սրտառուչ
հնչում Վահան Տերյանի հոյակապ խոսքերը իր մոր մասին:

Կարծես թե դարձել եմ յես տուն,
Բոլորն առաջվանն և կրկին,
Նորից դուռ հին տեղը նստած
Շարժում ես իլիկը մեր հին:

Մանում ու հեքեաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ,
Սիրում եմ պարզիա քո լեզուն,
Ձեռներդ մաշված ու բարակ:
Նայում եմ մինչև վար անդոր
Գլուխս ծնկիդ և թեքվում,
Նորից յես մանուկ եմ այսօր,
Դրախտ և նորից իմ հոգում:
Արեվը հանգչում և հեռվում,
Գետից բարձրանում և մշուշ,
Հեքեաթդ անվերջ որորում
Իլիկդ խոսում և անուշ...

Ծերեխան նուլնքան ամուր կերպով է կապվում և յուր հետ, յեթե իմարկե հայրը չկռել է նրա համար խակական ոչաւատ հայր։

Անդ, հեռու, ալեվոր
Հայր ունիմ սգավոր,
Վոր միակ յուր վորդուն
Սպասում է որե՜որ...
(Դոդոխյան—«Միջեռնակ»)։

Մանկապարտեզը, նոր շրջապատը, նոր ընկերները ավելի ևս լայնացնում յերեխայի զգացմունքները։

Դրա հետ միասին յերեխայի զգացմունքները դառնում են ուշադրաւոն և ավելի ցնցիչ ազդեցություն ունեցող, քան սկզբնական շրջաններում։ Բայց ինչպես ճիշտ կերպով նկատել է զեղչուն, նուլնիսկ 6—7 տարեկան յերեխաներն այնքան մեծ բարկանություն չեն զգում, յեթե սպասված հաճույքը վոչ թե տոր և լինելու, այլ մի քանի որից հետո։ «Ծես տեսել եմ,—ում է Պերեն,—թե ինչպես հինգ տարեկան յերեխաները, նուլսկ կես տարի առաջ ինձ վոգեվորությամբ պատմում էին իրենց ապրած բերկրանքի ժամերի մասին և միաժամանակ նընք վոչ մի ուրախություն չէին զգում, յերբ սպասում էին նրանց, վոր մի շաբաթից հետո նորից առիթ կունենան այդպիսի բավականություն ստանալու։

Նախադպրոցական հասակում յերեխայի ապրումները ավելի սահմանափակված են ներկայով, քան ապագայով։ Զգացմունքների մեջ սիրաշահող դերը խաղում են առարկայական ըմբռնումները։ Նախադպրոցական հասակի զգացմունքները աչքի չեն ընկնում վոչ իրենց խորությամբ և վոչ էլ տեւականությամբ։ Լացն ու ծիծաղը, ուրախությունն ու զայրույթն արագությամբ հաջորդում են միմյանց։

Նախադպրոցականի զգացմունքները հաճախ ունեն նաև տեղեկատուալ դեռնավորում և նուլնիսկ վորոշ չափով արտայայտված ինֆորմատիվ բնույթ։

Ջուկովսկին պատմում է, թե ինչպես յերեխան վայր ընկնելուց հետո յուր շորս կողմն է նայում և յեթե վոչ վոքի չի տեսնում, լաց չի լինում, բայց բավական է, վոր տեսնի ծնողնե-

բին, կամ ծանոթներին, վորպեսզի սկսի աղիողորմ կերպով լաց լինել։ Նրա լացն այստեղ վորոշ պրակտիկ նպատակ և հետապնդում։ Ինքնատիրապետումն արտահայտվում է նաև նրանում, վոր յերեխան հաճախ հասկանում է, թե ինչն է անթույլատրելին և զսպում իրեն։

Վերջապես, յերեխան կատարում է իր ուժերի հաշվեհարդար և յեթե մի բան նրա կարողություններից դուրս է, ապա նա այդ հետաձգում է վաղվան և հաճախ նա վաղվա համար այսօրվանից է հանգստյք ստանում, վորի հետևանքով էլ նա ոտարացում չի զգում։ Յեթե իրենից մեծահասակ յերեխաները ծեծում են նրան կամ հաղթում, ասում է՝ «Սպասի՛ր, յես մեծանամ, ևոր կխոսնեմ»։

Դպրոցական հասակում զգացմունքների առատությունը հետզհետե յուր տեղը զիջում է գաղափարներին։ Յերեխան սկսում է վորոշ տեսանկյունից մոտենալ յուր զգացմունքներին, իշխել նրանց վրա, նրանց յենթարկել բանականության, վորը ձեվավորվում է մի կողմից շրջապատի ու դպրոցի և մյուս կողմից էլ կարդացած գրքերի ազդեցության տակ։

Զգացմունքները պատանեկական հասակում ավելի խոր են դառնում և, վոր ամենակարևորն է, հասարակական։ Պատանու մեջ առաջանում է անսահման ցանկություն սիրելու և գոհվելու յուր սիրածի համար։ Սկսած և գալիս անձնազոհության նվիրվածության, սիրո, հոգատարության յուր հասարակական զգացմունքները։

Իհարկե գաղափարականության անբրանվածաստ պայմաններում յերեխայի զգացմունքները անհատականից դեպի սոցիալականը չեն գնում։ Վատ գաղափարականությունը պատանուն կարող է դարձնել յեսասեր, չոր, կոպիտ, մարդկային զգացմունքներից դուրկ, իսկ չափազանց քնքուշ գաղափարականությունը նույն այդ յերեխային կարող է դարձնել թուլամորթ, կամազուրկ, դժվարությունների չդիմացող ու խուճապի յենթակա, քնքնուրությունից դուրկ մի էակ։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է զգացմունքը և ինչի հետևանք է նա։

2. Ի՞նչ նշանակություն ունեն զգացմունքները մարդու կյանքում։

3. Վերոնք են զգացմունքի և բանականության փոխհարաբերությունները։

4. Ի՞նչ հատկություններ ունի զգացմունքը, վերն և նրա արտահայտության եղանակը, վորակը, ինտենսիվությունը, կքատենսիվությունը։

5. Զգացմունքների դասակարգման ձևերը։

6. Ի՞նչ ֆիզիոլոգիական պատճառներ են ընկած զգացմունքների հիմքում։

7. Զգացմունքների ինչպիսի արտահայտություն է կոչվում աֆֆեկտ։

8. Աֆֆեկտը և ֆիզիոլոգիական փոփոխությունները։ Աֆֆեկտների նշանակությունը։

9. Բննադատեցեք Ջեմսի և Լանգեյի աֆֆեկտների տեսությունը։

10 Ի՞նչ է կիրքը. կրքի ինչպիսի արտահայտություններ գիտեք։

11. Բնորոշեցեք եքստազը։

12. Պատմեցեք բարոյական զգացմունքների մասին։

13. Ինչպե՞ս է արտահայտվում ախտաբանական զգացմունքը։

14. Բնորոշեցեք յերեխայի զգացմունքների առանձնահատկությունները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рубинштейн.—«Основы психологии».

2. Психология, под ред. Корнилова, Шварца и Теплова.

3. Կորնիլով.—«Հոգեբանության ձեռնարկ»։

ԿԱՄՔ

Այն շարժումները, որոնք կատարում է մարդն արտաքին և ներքին դրգիռներին պատասխանելու համար, բաժանվում են հինգ հիմնական խմբերի՝ իմպուլսիվ, ռեֆլեկտոր, բնազդային, սովորությային և կամային։

Իմպուլսիվ շարժումների մի մասն ավտոմատ բնույթի չի և նպատակ ունի մտնելու օրգանիզմի մեջ կատարված ենթադիան, որն այլ կերպ ծախսել հնարավոր չէ։ Իմպուլսիվ գործողությունների օրինակ կարող են ծառայել ներհայի շարժումները որ արգանդում։ Մենք ինքներս էլ, հաճախ, վազ առավոտյան վեր կենալիս, կամ կուշտ ուտելուց հետո, ակամայից դանդաղորեն շարժում ենք մեր ձեռքերը, բարձրացնում մեր ուսերը և այլն։ Իմպուլսիվ շարժումների բազմաթիվ օրինակներ կարող ենք դանել նաև կենդանական աշխարհում։ Իմպուլսիվ են կոչվում նաև այն գործողությունները, որոնք առաջանում են անմիջապես ցանկությունից հետո, այսինքն, երբ մարդը չի խորհում իր ցանկության նպատակահարմար կամ անհարմար լինելու մասին, այլ անմիջապես ջանում է անպայման բավարարել իր պահանջը։

Այսպիսով, իմպուլսիվ գործողությունները մտածված ու խելացի չեն, վորի պատճառով էլ այդ շարժումները կատարող անհատը կամ գործում է մեխանիապարար, կամ թե բոպեական մոտիվների ազդեցության տակ, առանց հաշվի առնելու իր գործողության հետեվանքները։

Իմպուլսիվ շարժումների բազմաթիվ օրինակների մենք հանդիպում ենք ներհայանների մոտ, հատկապես մանրային հասակում։ Ճերեխան՝ իրեն դուր եկած իրն անմիջապես ուզում է վերցնել, խլել։ Հոգեբանության դասագրքերում բերվում է մի ներհայի օրինակը, վորը հասկացավ լաց էր լինում ու պահանջում, վորպեսզի արեվը տան իրեն՝ խաղալու համար։

Մեզանից ամեն մեկը տեսել է, թե ինչպես չերեխան չհամբերելով, ձեռը գցում է տաք բաժակով լի թեյին կամ կերակրի ամանին և այրում իր ձեռները։

Ռեֆլեկտոր շարժումները նույնպես մեքենայական, ավտոմատ բնույթ ունեն և արտահայտում են օրգանիզմի պատասխանը՝ արտաքին և ներքին գրգիռներին՝ ներվային համակարգության միջոցով։ Ռեֆլեկտոր գործողություններն կամ մենք բոլորովին չենք գիտակցում, կամ սոսկ տեղյակ ենք լինում։ Բոլորովին չգիտակցված ու զուտ ավտոմատ շարժումների օրինակ կարող են ծառայել մեր ոտքերի գալարումները, արյան հատար և ավշային անոթների կծկումն ու լայնացումը, սրտի փականների գործողությունը և այլն։ Ռեֆլեկտոր վարող շարժումներ մենք գիտակցում ենք, թեպետ նրանք կատարվում են մեր «չես»-ի վոչ անմիջական մասնակցությամբ։ Որինակ՝ աչքը թարթելը, հորանջելը, հազալը, փռշտալը և այլն։

Բնազդային գործողությունները շատ ավելի բարդ են։ Բնազդի մեջ գերակշռողը միայն ներվային աշխատանքը չէ, այլ և օրգանիզմի ներսում կատարվող ֆիզիկո-քիմիական պրոցեսները և հատկապես ներքին սեկրեցիոն գեղձերի աշխատանքը։

Բնազդային շարժումները կարելի է բնորոշել իբրև ժառանգականորեն ձեռք բերված ձգտումներ, որոնց շնորհիվ կատարվում են ավյալ անհատի կամ մարդկության գոյության պահպանող նպատակահարմար շարժումներ։ Զուտ բնազդային գործողությունները գիտակցված չեն, այդ շարժումների նպատակի մասին ուղղակը վոչինչ չգիտե, թեև նրանք նպատակահարմար են, որովհետև իրենցից ներկայացնում են սերունդների տասնյակ հազարավոր տարիների փորձը։

Բնազդները քարացած ու մշտնջենական չեն։ Տվյալ անհատի սեփական փորձի կուտակման հետ միասին բնազդն էլ անհատականանում է, փոխվում և բարձր կենդանիների մոտ կիսագիտակից ձեվ ընդունում։ Մարդկանց մոտ բնազդային շարժումները ձուլվում են գիտակից գործողությունների հետ, չեն թարկվում գիտակցությանը, թեև, իհարկե, չեն կորցնում իրենց հիմնական հատկանիշները։

Սովորույթային շարժումները մշակվում են անհատական կյանքի ընթացքում, հատուկ են միայն ավյալ ինդիվիդին և

ժառանգական չեն փոխանցվում։ Սովորությային շարժումներն առաջանում են նպատակահարմար և ուժերի լարում պահանջող շարժումների բազմաթիվ կրկնությունների հետևանքով։ Սպորտային գործողությունների մեջ մեծ դեր են խաղում սովորությունները։ Մեր շարժումների մի մասը կատարվում են գիտակցության պատճով ներկայությամբ (քայլելը, հագնվելը, լվացվելը, բառեր գրելը և այլն), մյուսի շնորհիվ հակայական ուժ ու եռանդ չենք խնայում նոր ու դժվարին խնդիրները լուծելու համար։

Մարդկային սովորությունները համարյա յուրաքանչյուրին, անպիտանությունն չեն մշակվում։ Սովորության համար անհրաժեշտ վարժությունները սկզբում մարդուց պահանջում են կայունություն, մտավոր ու մկանային ուժերի մեծ լարվածություն, հետագայում նրանք աստիճանաբար դառնում են մեքենայական։ Վարպետ որևէ արհեստի կարելի չի վերցնել հեծանիվորդի սկզբնական վիճակը, յուրա նա նոր և սովորում հեծանիվ նստել և վարժվելուց հետո։

Կատարյին շարժումները շատ բարդ են ու բազմակողմանի։ Նրանք դիտական, ծրագրված, մտածված, չափված ու ձևված գործողություններ են, որոնք ուղղված են՝ նախորոք վարոշված խնդրի նպատակին հասնելու համար։

Կամքի դիտական հանճարեղ վարոշումը տվել է ընկեր Ստալինը Թուրքմենստանի ձիավորներին ուղղած իր ողջույնում. «Մի բան նպատակի պարզությունը, նպատակին հասնելու գործում համառությունը, և բոլոր ու ամեն տեսակի խոչնդոտները ջարդող ամուր բնավորությունը,—կարծրացան ապահովել այդպիսի փառավոր հաղթանակ։

Կամավորականների կուսակցությունը կարող է շնորհավորել իրեն, քանի որ նա հաստատուն ոտ հետևություններն է մշակում մեր անծայրածիր հայրենիքի բոլոր ազգությունների աշխատավորության մեջ» («Պրավդա» 1935 թ. սրտաստի 25)։

Ա.յսպիսով կամքի հիմնական էլեմենտներն են՝

ա) Նպատակի պարզությունը. մարդը նախքան որևէ գործողություն կատարելը նախորոք պատկերացնում է այդ շարժումների հետևանքները, այսինքն նախքան որոշ նպատակ գործնականում իրականացնելը, մարդն այդ նպատակի կենսագործումը կատարում է յուր ուղեղում։ Նա, ով գործում է միայն պատահական պահանջներից դրդված, բոլորական ազդեցություններին հետևանքով և բոլորովին չի պատկերացնում իր գործողությունների հետևանքը՝ հատարակության և իրեն համար, նա դրանով էլ ապացուցում է իր կամքի թուլությունը։

բ) Ինքնատիրապետումը. Ենգելսը «Անտի-Դյուրինգ»-ում ինքնատիրապետումը, ինքն իրեն վրա իշխելը համարում է կամքի ամենաուժեղ գծերից մեկը։ Ինքնատիրապետումը վոչ միայն արտահայտվում է նրանով, վոր մարդն իր զգացմունքների ու ցանկությունների գերին չէ, այլ իշխանը, կարդրիչն է, համապատասխան ուղղություն ցույց տվողը, իր ունակությունների լիակատար տերն ու տիրականը։ Դեպի նպատակը տանող ճանապարհների ճիշտ պատկերացումը և ամենաձպատակահարմար ուղիները ընտրելը կամքի հիմնական մոմենաններից են։ Բավական չէ միայն պարզ պատկերացնել նպատակը, հասկանալ այդ նպատակի հանրօգուտ լինելը և ամբողջ հոգով ձգտել նրան։ Հարկավոր է նաև, վորպեսզի մարդը դեպի նպատակը տանող ուղիները լավ իմանա և ընտրի նրանցից միայն ամենալավագույնն ու ոպտակարը։ Ցերեկեն պատահում են դեպքեր, երբ մեզանից վորևե մեկն իր առաջ մեծ նպատակ դնելով հանդերձ, չի կարողանում դտնել այդ նպատակին հասնելու նպատակահարմար ճանապարհներն ու միջոցները։

գ) Դժվարությունների պատկերացումը, այդ դժվարությունները հաղթահարելու պատրաստակամությունը ընտրող և ուժեղ կամքի տեր անձնավորության համար։ Հարկավոր է հասկանալ, վոր մեծ նպատակը պահանջում է մեծ խոչընդոտների հաղթահարում։ Այս հանգամանքը ճիշտ է ընդգծում ռուս մեծ պրող Զեխովը։ Մեծ նպատակները պահանջում են մեծ գործեր։ Նա, ով իր ճանապարհը խիստ վարպետուհն և պատկերացնում, նա, ով կարծում է, վոր դեպի նպատակը տանող ուղին ասֆալտապատած է, իսկ ինքն էլ սուրում է դեպի նպատակը՝ արագընթաց ավտոյով, նա խիստ սխալվում է։ Նպատակի ճանապարհները վարպետուհն պատկերացնող անձինք, առաջին իսկ դժվարության դեպքում, հանկարծակիի կեն գալիս, չեն թաղկվում խուճապի, հուսալքվում են։

Պետք է հասկանալ, վոր մարդու կամքը հղկվում է, կոփվում, պատնում է ամենակարող միայն դժվարությունների դեմ պայքարելիս, ու այդ դժվարությունները հաղթահարելիս։

դ) Ինքնազսահատումը, այսինքն սեփական մտավոր ֆիզիկական ուժերի հաշվհհարդար կատարելը և ըստ այդ կարողու-

թյուններուն համապատասխան նպատակ ընտրելը նույնպես խիստ կարեւոր է ու անհրաժեշտ։

Որինակ, տեսողության կամ լսողության դեֆեկտ ունեցող մարդը չի կարող նպատակ դնել շոֆեր կամ մեքենավար դառնալ, սրտի արատ ունեցողը լավ կլինի իր ուժերն ու կարողությունները փորձարկի վրչ թե ոդաչու դառնալու, այլ համապատասխան մասնագիտություն ընտրելու համար և այլն։

ե) Համապատասխան ունակությունների ձեռք բերելը, գործին պատրաստվելը և գիտելիքներին տիրապետելը կամքի ամենահիմնական պայմաններից են։ Ընկեր Ստալինն ընդգծում է, որ խիղճն ու արիությունը հերոսության միայն մի կողմն են կազմում։ Մյուս, ոչ պակաս կարեւոր կողմը, դա գործել կարողանալն է։ Հերոսությունն ու արիությունը, ասկը՝ քաղաքներ են գրավում միայն այն թնակքում, երբ խիղճն ու արիությունն ասկին պատրաստ լինելը միանում է գիտելիքների պաշարի հետ։ Նպատակի հետ պետք է միացնել փորձի պաշարը, տեխնիկայի տիրապետումը և այլն։

Հյուսիսային բեվեռի նվաճման հերոսական էպոպեայի համար մենք ոչ միայն պատասխան ենք ընկերներ Պապանինին, Կրենկելի, Ֆեդորովին, Շիրշովին և ոդաչուական ու ժամանակակից հերոսական, հրաշալի անհատականն գծերին, այլ և այն մանրակրկիտ ու գիտական խիստ նախապատրաստման, որ կատարեց մեր յերկիրը այդ եքսպեդիցիան հաջող կերպով անցկացնելու համար։ Նախատեսված եր ու նախապատրաստված ամեն ինչ, որպեսզի մեր հերոս ընկերները հանկարծակիի չգային, որպեսզի նրանք շարունակ պատրաստ լինեին արկտիկայի խարդավանքներին դիմանալու ու մեծ Ստալինի առաջադրությունը պատվով կատարելու համար։

Արշիպելագին Միության հերոս բնկ. վ. Կոկկինակին իր «Հնգաթև դեպի արեվելք» գրքում պատմում է այն մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքի մասին, որ նա կատարել եր տարբերների ընթացքում իր հերոսական անվախրիջ թռիչքը Մոսկվա—Հեռավոր Արեվելք կատարելու համար։ «Դժվար է ասել,— գրում է ընկ. Կոկկինակին,—թե յերբ սկսեցինք նախապատրաստվել դեպի Հեռավոր Արեվելք մեր թռիչքին, այդ նախապատրաստումը, ըստ էության, իմ ամբողջ նախկին աշխա-

ամենքն էր՝ Իլյուշինի) մեքենան փորձարկելու գործում։ Ամենօրյա սովորական աշխատանքում, փորձարկելու ընթացքում չես կարողացա հնարավոր գործի համար անհրաժեշտ մի շարք հարկային խնդիրներ լուծել։ Թերագնդ կերպով պատկերացրի մեքենայի վարման ու հնարավորությունները, մոտոռների աշխատանքը, վառելիքի ծախսում թռիչքի տարբեր ռեժիմներում։ Չնայած դրան, թռիչքի նախընթաց ամիսների ընթացքում նախապատրաստական աշխատանքները չթուլացրինք, այլ ընդհակառակը նախապատրաստվեցինք ավելի ուժեղ չափով և մեծ ուշադրությամբ»։

Կամքի խնդրում ամենավճռականն դերը խաղում է <u>սիրքունքային հետևողականությունը</u>, պաղատիարական անհաշտությունը, անխնա պայքարը մարքս-լենինյան գծից կատարվող շեղումների դեմ, անսահման աներկյուղությունը դեպի ժողովրդի թշնամիները։ Մարքսիզմ-լենինիզմին սիրտ պահելը մարդուն տալիս է կոլոսորոշում, անկյալը, նպատակ ու ազատ հասկանալու ամենաուժեղ մի զենք, մարդու գործունեության մեջ մոցընում է կորով, թափ, ինքնադիտակցություն։ Մարդը դառնում է իսկապես վար իր և իր նմանների երջանիկ կյանքը կերտող անհաղթելի մի դյուցազն։

Բնորոշելով բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի՝ կոմունիստական մեծ կուսակցության անդամների աննկուն կամքի մասին, մեծ Ստալինը գրում է. «Ընկերնե՛ր, մենք, կոմունիստներս, հատուկ կազմվածքի մարդիկ ենք։ Մենք հատուկ նյութից ենք ձևվված։ Մենք նրանք ենք, ովքեր պրոլետարական մեծ ստրատեգի բանակը, ընկեր Լենինի բանակն ենք կազմում։ Չկա ավելի բարձր բան, քան այդ բանակին պատկանելու պատիվը։ Չկա ավելի բարձր բան, քան այն կուսակցության անդամի կոչումը, որի հիմնադիրն ու ղեկավարը ընկեր Լենինն է։ Մարդ, որին վիճակված չէ այդպիսի կուսակցության անդամ լինել, Սարեն մեկին վիճակված չէ այդպիսի կուսակցության անդամության հետ կապված տրհավիր գնահատությանն ու փոթորիկներին դիմանալ»։ (Ստալին, «Լենինի մասին», Հայկուսհրատ, 1939 թ. էջ 15)։

*) Ոգանավի կոնստրուկտորի անունն է—Մ.Մ։

Լենինյան-Ստալինյան դրոշն է, որը լուսավորում է մեր քաջարի հերոսների ճանապարհը խաղաղության, փոթորկահույզ ծովերում, թշնամիների դեմ մղվող դաժան պայքարում, գիտության, արվեստի, պրակտիկ կյանքի ամեն մի ասպարեզում։

ԿԱՄՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մենք ուսումնասիրեցինք հոգեկան մի շարք ֆունկցիաներ՝ զգայունությունն, ըմբռնում, մտածողությունն և այլն։ Մենք տեսանք, որ այդ ֆունկցիաները ինքնըստինքյան, մարդկային պրակտիկայից դուրս կամ պայմանական չունեն, կամ էլ անարժեք են, անպատուղ, դատարկ։

Դիալեկտիկական մատերիալիզմը սովորեցնում է, որ մարդկային հոգեկան կարողությունների ու բնության բարձր միասնությունը հանդես է գալիս միայն մարդու հասարակական պրակտիկ գործունեության մեջ։

Մարդու ազդեցությունը բնության վրա, նրա փոխհարաբերությունները իր միջավայրի հետ՝ մտածված և, ծրագրված, խելոցի։ Առաջադրելով վերևն նպատակ, մարդն աշխատում է իր հոգեկան բոլոր ուժերն ու կարողությունները ենթարկել այդ նպատակին, մոբիլիզացիայի ենթարկել և՛ մտածողությունը, և՛ ըմբռնումները, և՛ հիշողությունը, և՛ փանտազիան։ Այլ կերպ ասած, յուրաքանչյուր մարդ իր էության ամեն արտահայտում է հասարակական ակտիվ գործունեության՝ կամքի միջոցով։

«Բնությունն,—ասում է Մարքսը,—մեքենաներ, չուգունաձույլեր, ելեկտրոլինները, ելեկտրական հեռագրիչները, սեղեկատորները և այլն չի ստեղծում։ Այդ բոլորը մարդկային գործունեության արդյունքն են, բնության նյութ, վերոնք վեր են ածվել բնության նկատմամբ մարդկային կամքի իշխանության օրգաններն կամ բնության մեջ այդ կամքի գործադրման օրգաններն»։ (Մարքսի չհրատարակված ձեռագրերից, «Большевик» 1939 թ. № 11—12, եջ 63.)։

Այսպիսով մարդկային հոգեկան բոլոր հատկություններըմիասին, մարդկային պրակտիկայի մեջ ակտիվ կերպով մասնակցում են վերջին կամային գործողություններ։

Կամային ամեն մի գործողություն բղխում է խելացի ծրագրված նպատակից և այդ նպատակի պարզ պատկերացումից։ Այն նպատակները, որոնք առաջադրված են մարդկի ու պայքարում նրանց հասնելու համար, վկայական չեն, մարդկանց ֆանտազիայից կամ նրանց քմահաճույքից չեն բղխում, այլ կախված են նրանց կեցությունից, այսինքն, արտադրության ձևից և այդ արտադրության բնույթից բղխող հասարակական հարաբերություններից։ Մարդկանց սարքեր ու բազմակողմանի գործողությունների մեջ հիմնականը վերջին հաշվով մարդկային կարիքների բավարարումն է։ Մարդկանց գոյության հենց առաջին պայմանը կենսամիջոցների արտադրությունն է յուրաքանչյուր պատմական դարաշրջանում։ Մարդկի իրենց մարմնական պահանջները բավարարելու, այսինքն ուտելու, հագնելու, ցրտից պաշտպանվելու, իրենց ապրուստը պահպանելու և այլն համար ստիպված են եղել պայքարի մտնել բնության դեմ, խլելու բնությունից այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրանց գոյության համար։ Սկզբնական շրջանում մարդու կարիքները շատ չնչին էին, հետզհետե, գիտակցության ու կուլտուրայի զարգացման հետ միասին մի կողմից հարստանում ու ընդարձակվում են մարդու ստորյա պահանջները, մյուս կողմից ծագում են կուլտուրական պահանջներ։ Այսպիսով կարիքը պատմական բնույթ ունի։ «Նյութական կյանքի այս կամ այն կազմակերպությունը, ինարկե ամեն անգամ կախում ունի արդեն գործած կարիքներից, իսկ այդ կարիքների առաջացումը, ինչպես և նրանց բավարարումն ինքը—պատմական պրոցես է, որը չկա մոլեխաների և շների մոտ» (Մարքս)։

Ցարքեր գարաշրջաններում մարդկանց ստորեր կարիքները բացատրելիս պետք է հաշվի առնել հետևյալ պատմական պայմանները։

1. Գիտության ու տեխնիկայի մակարդակը։ Որքան ավելի պատմական գարաշրջանում գիտությունն ու տեխնիկան գարգացած են, որքան մարդը շատ հնարավորություններ ունի բավարարելու իր կենսական և կուլտուրական կարիքները, այնքան նրա պահանջները շատ են, նուրբ, գարգացած, բազմակողմանի։

2. Տիրող դասակարգի և նրա պետության բնույթը։

Հայտնի չէ, որ կապիտալիզմը, ֆեոդալիզմի հետ համեմատած, ստեղծեց աշխատանքի արտադրողականության ավելի բարձր աստիճան։ Բայց կապիտալիզմը պատմության ասպարեզ իջավ մասսաների արյան, դիակների ու անլուր շահագործման ճանապարհով։ Կապիտալիզմը աշխատավոր դասակարգից խլեց նույնիսկ ապրուստի մինիմումը, ստիպելով նրան իր բանվորական ուժը վաճառքի հանել։

«Ցեխ ուտելու մթերքները, և հագուստը, և վառելիքը, և բնակարանները— բոլորի գինը բարձրացավ,—գրում է Լենինը 1912 թ. յուր «Ադեմատացումը կապիտալիստական հասարակարգում» հոդվածում,—բանվորն աղքատանում է բացարձակ ասած, այսինքն նա ուղղակի առաջվանից աղքատ է դառնում, ստիպված է վատ ապրել, կերակրվել աղքատիկ, մեծ մասամբ կիսաքաղց ձևով, կուչ գալ նկուղներում և չերդակներում» (Ленин, Соч. т. XVI, տես 212)։

Սոցիալիզմին նախորդող բոլոր հասարակարգերում մասսաների կարիքները վատնահարվել են տիրող դասակարգերի կողմից, մարդկային պահանջները խեղդվել, ինչպես Մարքսն է ասում, «եգոիստական հաշիվների սուրյա ջրերում»։ Միայն սոցիալիզմն է, որ վերջ միայն տալու է մարդկանց զարհուրելի ճնշումից, վերջ միայն տեղծում է աշխատանքի արտադրողականության ամենաբարձր տեմպ, այլ և տալիս է բոլոր հնարավորություններն՝ մարդկանց նյութական աճող կարիքները բավարարելու համար։

3. Ցեխ վերջապես ավյալ հասարակության, ժողովրդի կուլտուրական զարգացման աստիճանից, որն իր հերթին բղխում է նյութական հնարավորություններից։

Այսպես, որինակ, սոցիալիզմի ազատ յերկրի բնակիչների համար ստեղծված են բոլոր հնարավորությունները խիղախելու, մեծ նպատակներ առաջադրելու և այդ նպատակների կենսագործման համար պայքարելու համար։ Այդ է պատճառը, որ հերոսությունը մոկ է մեր ժողովրդի կենցաղի մեջ, մեր յերկիրը դարձել է հերոսների յերկիր։

Մեր յերկրում այնքան շատ են հերոսության ու արիության դեպքեր, որ մեզանից յուրաքանչյուրը ցանկանում է

նմանվել մեր հերոսներին՝ արդյունաբերության ու կոլխոզային դաշտերի առաջավորականներին, գիտության ու արվեստի առաջավոր մարդկանց։

Ցավ ասա կամքի սաղմերն սկսվում են այդ բարի նախանձից, յուրաքանչյուր լավ որևէ առաջացնում և մեր մեջ վրոշ ձգտում՝ այդպիսին լինելու։ Սովորաբար այդ ձգտումն արտահայտվում է «Ախ, ինչ լավ կլիներ, վոր ես էլ այդպիսին լինեյի» բառերով։ Մեզանից ով չի ցանկացել մասնակցել Ալասանի հերոսական մարտերին, կամ թե լինել Պապանինի հերոսական քաջակի հետ, Ֆուչիկ Զկալովի, Վոդոպյանովի նման, Միչուրինի նման սովորել բնության յենթարկվելու, լինել զեկուցող՝ Ֆիզկուլտնիկների համաշխարհային համագումարում և այլն։ Բայց զժբախտաբար մարդու ուժերը սահմանափակ են, նա չի կարող միաժամանակ և՛ ռազմաճակատում լինել, և՛ ֆիզկուլտնիկ, և՛ գյուղատնտես, և՛ Ալյոշկինի նման ջութակահար։

Մարդկային ձգտումներից մի քանիսը հետզհետե գերակշռող են դառնում, նրանք սերտաճում են մարդու մաքին, սովորում են ուղղվել աշխատել այդ ուղղությամբ։ Մի խոսքով ձգտումների ընտրության հետևանքով առաջ և գալիս կամքի համար խիստ կարևոր ցանկանալու մոմենտը։ Ցանկության հիմքը նպատակի այնպիսի պատկերացումն է, վորը հանգիստ չի տալիս մարդուն։ Մարդը շարունակ իր մտքը կենտրոնացնում է ցանկության ուղղությամբ, սկսում է զգալ վորոշ անհանգստության և գործունեության անսահման ծարավ՝ ցանկալի նպատակին հասնելու համար։ Պատկերացնելով նպատակին հասնելու մոմենտները, անհամբեր նախորոք զգում է մեծ հաճույք, ինչպես և տհաճություն, և դժվարությունները հաղթահարելու համար ուժերի վորոշ մոբիլիզացիա յի կատարում։ Ցանկությունը կրքոտ, պահանջկոտ արտահայտություն է ստանում։ Կամքի այս մոմենտը ևս շատ կարևոր է։

Ցանկությունը վեր է ածվում ուզենալու այն դեպքում, յերբ մարդը գիտակցում է, վոր այդ ցանկությունն իր ուժերով ու կարողությամբ հնարավոր է կենսագործել, յերբ անհատն արգեն ունի վորոշակի ռևալ պլան և միջոցներ՝ նպատակներն իրագործելու համար։ Բայց ցանկանալ և ուզենալ, դա դեռ չի նշանակում կատարել։ Այստեղ առաջանում է մի այլ կարևոր

հարց. արդյոք իմ ընտրած նպատակն ամենալավն է, թե չեմ կարող եմ իմ ուժերի ու կարողության համաձայն ավելի լավ նպատակ ընտրել։ Ցեղ չեմ ուզում նպատակն արդեն ընտրված է, մարդն սկսում է հաշվի առնել նրա իրագործման տևողը, ժամանակը, պայմանները, դրական և բացասական կողմերը։ Պայմանների այս կշռադատման պրոցեսը կոչվում է մոտիվների պայքար։

Մոտիվների պայքարը կամքի ամենավճռական եռապահերից է, նա, ով հաղթել է վորոշում հանում, առանց հաշվի առնելու բոլոր փաստերը, կամ աշխատում է ուշյալ գործին վերաբերող վոչ դրական փաստերը աչքաթող անել, նրա վորոշումը խելացի լինել չի կարող, վորովհետև նա հետագա կասկածների, հուսալքումների, հետևվաբար և խուճապի տեղ է թողնում։

Ընկեր Ստալինը մեծ Լենինի մեծությունը բնորոշող գծերից մեկը համարում է վորոշումից առաջ բոլոր մինուսների և պլյուսների հաշվառումը։

Մոտիվների պայքարի հետևանքով հանվում է վորոշում։ Այդ վորոշումն ինչ կերպ էլ լինի պետք է իրագործել։ Ամեն տեսակի կասկած, վորոնում, թերահավատություն՝ յուր ուժերի նկատմամբ և այլն, պետք է վճռել մոտիվների պայքարի ընթացքում։

Ուժեղ կամքի տեր մարդը չի բավարարվում միայն խելացի վորոշմամբ, նա իրագործում է իր վորոշումը, հանգես բերելով համառություն, հաստատակամություն և ամեն տեսակի դժվարություններ հաղթահարող ամուր քնավորություն։

Այսպիսով, կամքի յեղրափակիչ մոմենտն արտահայտվում է պրակտիկայում, ուժերի և կարողությունների լարմամբ, մարդկային անմիջական գործունեության մեջ։

Այն մոմենտը, յերբ այդ գործողություններն ակնառու չեն, շոշափելի, բոլորի համար տեսանելի և արտահայտվում են արտաքին գործողությունների միջոցով—կոչվում է կամքի արտահին արարք։ Այն մոմենտը, յերբ կամքը չի արտահայտվում, յերբ մարդն աշխատում է պայքարել և հաղթահարել իր նկրքին, վոչ ոլնտանի, վոչ ոտատկար, յերբեմն հատարակության համար դնատատելի ձգտումները—կոչվում է կամքի ներքին արարք։ Ուրեմն՝ ալկոհոլիկը լավ գիտակցելով ալկոհոլի վնասը, սիրում է իրեն

վերջ տալ յուր այդ վատ սովորությանը՝ չմոխել։ Մեզանից շատերը բազմիցս անգամ պայքարել են իրենք իրենց դեմ և հաղթանակով դուրս եկել։

✕ ԿԱՄՔԻ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ*)

Կամքի ասպարիզում յեղած հիվանդությունները բազմաթեսակ են, յերբեմն ծայրահեղ կերպով իրար հակադիր։ Կամքի հիվանդության դեպքում կամ մարդկանց ցանկությունները հասնում են ամենաբարձր աստիճանի, կամ բոլորովին հանդչում, անհետանում են։ Կամքի այն հիվանդությունները, յերբ նա՝ կամքը բոլորովին թուլանում և, ճնշվում, շլչանում, կոչվում և աբուլիա և ունի արտահայտման մի քանի ձևեր։ Ամենախիտ աբուլիայի դեպքում մարդը վոչ մի ցանկություն, վոչ մի ձգտում չի ունենում։ Հիվանդը նստած և անշարժ, յեթե նրա առաջ անգամ ամենահամեղ խորտիկներ դնեք, նա սովից կմահանա, բայց ինքնուրույն վոչ մի քայլ չի անի սեղանի վրայից կերակուրը վերցնելու և ուտելու համար։ Յեթե նրա դիրքը չփոխեք, նա անշարժ նստած կմնա մինչևույն դրության մեջ։ Մեղմ աբուլիայի դեպքում մարդն ունի ամենաքիչ չափով պահանջներ ու ցանկություններ, նա անտարբեր և ամեն ինչի հանդեպ, քչախոս, դանդաղաշարժ, ծայրահեղ չափով ծույլ վոչնչով չի հետաքրքրվում, վոչինչ չի նախաձեռնում։ Մելամաղձոպաթյան (մելանխոլիա) վորոշ ձևերը մեղմ աբուլիայի բնույթ են ստանում, լինում են դեպքեր, յերբ մարդը ցանկություններ շատ ունի, բայց այդ ցանկություններն այնքան ուժեղ չեն, վորպեսզի սահմանն մարդուն գործել, իրականացնել այդ ցանկությունները։

Կան նաև մարդիկ, վորոնք ուժեղ ցանկություններ ունեն, բայց ինչ-ինչ արգելակիչ, հիվանդագին պատճառների հետևանքով չեն կարողանում, ավելի շուտ չեն համարձակվում այդ ցանկությունները կենսագործել։ Հիվանդագին արգելակիչ պայմաններից ամենահիմնականը սարսափն է։ Պրոֆ. Կորսակովը բերում է որինակներ, յերբ մարդիկ վախենում են անցնել հրապարակից, չեն կարողանում վեր կենալ անկողնուց, չնայած, վոր վոտքերը բոլորովին առողջ են, սարսափից պառկած են մնում, չեն կարողանում քայլել և այլն։

*) Տես Կորսակով, «Курс психиатрии», стр. 247—249 և 288,

Լինում են և այնպիսի հիվանդապին դեպքեր, յորը մարդը շատ ցանկութիւններ և ունենում, բայց անվճռականութեան հետևանքով չի կարողանում նրանցից վորևիցե մեկին կերակրութիւն տալ։ Հոգեկան վորոշ հիվանդների մոտ անվճռականութիւնը հասնում է ծայրահեղ չափերի։ Կան հիվանդներ, վորոնք անվճռականութիւնից չեն կարողանում վոչնչով զբաղվել, նույնիսկ վորևե հասարակ քայլ անել։ Այդպիսի անվճռական մարդկանց թվին եր պատկանում Գոնչարովի հռչակավոր վեպի հերոս Օբլոմովը, վորն ուներ հոյակապ ու խիստ գովելի ցանկութիւններ ու ծրագրեր, բայց մատը մատին չեր խփում իր ցանկութիւններից թեկուզ ամենամինիմումը կենսագործելու համար։

Ցանկութիւնների անսահմանն ուժեղացումը նույնպես կամքի հիվանդապին արտահայտութիւն է և կոչվում է հիպերբուլիա։ Հիպերբուլիայի ժամանակ մարդն ուղղակի գլուխ չի գառնում իր ցանկութիւններին։ Հիվանդի մոտ բոլորովին բացակայում է ինքնատիրապետումը, ինքնահսկողութիւնը։ Յուրաքանչյուր ցանկութիւն դառնում է պահանջ և հիվանդն առանց իրեն հաշիվ տալու, առանց իր արարքի հետևանքները հաշվի առնելու, աշխատում է անպայման բավարարել յուր ցանկութիւնները։

Հիպերբուլիայով տառապող մարդիկ խիստ բռնկվող են, ցասկոտ, արագաշարժ և ծայր աստիճանի քմահաճ։ Նրանք վոչ մի իրական փաստ հաշվի չեն առնում։

ԿԱՄՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուրժուական հոգեբանութիւնն առաջ է քաշել կամքի յերեք հիմնական տեսութիւններ՝ ինտելեկտուալ, էմոցիոնալ և վոլյունտարիստական։

Ինտելեկտուալ տեսութիւնը *(Մեյման, Հերբարտ՝ Սլևնսեր և այլն)* կամքի մեջ ամենավճռական տեղը հատկացնում է նպատակների պատկերացմանը։ Ըստ այդ տեսութեան մարդը յուր կյանքի ընթացքում կրկնութիւնների շնորհիվ ձեռք է բերում բազմաթիվ շարժումների ավտոմատ ունակութիւններ։ Բավական է, վոր մարդ պատկերացնի վորևե նպատակ, վորպեսզի այդ նպատակը կենսագործվի, անկախ նրա

ուժեղ ցանկությունները, որոնցից մեքենայաբար գործադրվում են համապատասխան, նրա ուղղությամբ սովորությունների ձեվով ամրապնդված շարժումները։ Ինտելեկտուալ տեսության համաձայն կամքը նպատակի պատկերացումն է, որը մեր հիշողության միջից անմիջապես արթնացնում է այնպիսի մտապատկերներ, որոնք հարկավոր են այդ նպատակին հասնելու համար։ Շարժողական մտապատկերներն էլ, իրենց հերթին, անմիջապես վեր են ածվում համապատասխան գործողությունների։

Ինտելեկտուալ տեսության ներկայացուցիչները կամքը համարում են հետեվյալ պրոցեսների զուգորդում.

1. Վորևե պատճառով գիտակցության մեջ ծագող պատկերացումները, որոնց համապատասխան ուղեղային վորոշ կենտրոններ գրգռվում են։

2. Այդ պատկերացումը վեր է ածվում ձգտման, իսկ ներվային գրգիռն զգացող կենտրոններից անցնում է շարժվող կենտրոններին։

3. Այդ ձգտումին հակառակ առաջանում է մեկ ուրիշը։ Նրանք սկսում են պայքարել միմյանց դեմ՝ ախրապեհման համար։ Այդ պայքարի հետեվանքով ուժեղանում կամ թուլանում են զգացող և շարժվող, պայքարող ձգտումներին համապատասխանող կենտրոնները։

4. Պայքարող ձգտումներից այն, վոր ավելի է համապատասխանում մարդու ավյալ մոմենտի ձգտումներին և զգացմունքներին, հաղթում է և յեթե մղում մյուսին, վորի հետեվանքով անհատը վորոշում է վորևե բնույթի գործողություններ կատարել։ Այդ վորոշմանը համապատասխան ուժեղ կերպով և վորոշ ուղղությամբ գրգռվում են շարժող կենտրոնները։

5. Ձգտումը վեր է ածվում գործողության, վճիռը կենսագործվում է, ներվային գրգիռները շարժող կենտրոններից տարածվում են շարժող ներվերի վրա և առաջացնում մկանների կծկում։

Մենք մի քիչ յերկար կանգ առանք կամքի ինտելեկտուալ տեսության վրա, վորովհետև նա բոլորից ավելի տարածվածն է։ Ինչպես տեսանք, այդ տեսության առաջին տեղը տրվում է մտածողությանը, բանականությանը, իսկ գործողություններին, իրագործելուն՝ յերկրորդական, այսինքն մարդկային գործողու-

թյուններուն հիմքում նրանք դնում են մասնավորական պրոցեսները—«գիտակցությունն և պայմանավորում կյանքը», այս արդեն մաքուր իդեալիզմ է։

Ինքնախոհությունը, արիությունը, համարձակությունը, ուխտին պատրաստ լինելը, վճռակամությամբ արտահայտվում է մարդու կամքը, Մեյմոնի և մյուսների կարծիքով՝ վարժությունների հետևանքով մեքենայաբար կատարվող գործողություններ են։

Կաուֆի եռոգիտնալ տեսության հեղինակ Վունդտ (Վունդտ, մասամբ Բենն) կամքը համարվում է յերկրորդական ֆունկցիա, աֆֆեկտի մի տեսակը։ Ինչպես աֆֆեկտը զգայմունքների մի տեսակն է, նույնպես և կամքն աֆֆեկտի արտահայտություններից է. «Այսպիսով,—գրում է Վունդտը,—մարդկանց և կենդանիների համար ընդհանուրը՝ կամքի առաջնային աղբյուրները աֆֆեկտներն են, վորոնք ծագում են մի կողմից զգայությունների հետևանքով առաջացած զգայմունքներից և նույն չափով էլ տարածված սոցիալական զգայմունքներից, ինչպիսին է սերը, առելությունը, վայրույթը, վրեժը, և վորքան բազմազանակ են աֆֆեկտները, այնքան ընդարձակ են կամքի գործունեության սահմանները» (Вундт, «Очерк по психологии», стр. 218):

Ըստ եմոցիոնալ տեսության յուրաքանչյուր կամային գործողության հիմքը կազմում են անհատական շահերը, այսինքն մարդկային զուտ յեսական զգայմունքները։ «Մարդկային գործունեության մոտիվները կամ նպատակները անհատական հաճույքներն ու տանապանքներն են ... Վերջին հաշվով նրանք են մեր գործողությունների ազդակները—գրում է հոգեբան Բենը։ Յերբ մենք հաճույքից պայմաններում ենք, ամեն կերպ աշխատում ենք յերկարացնել հաճույքի ժամանակամիջոցը։ Իսկ տանապանքն այնպիսի գործողությունների պատճառ է դառնում, վորոնց նպատակն է վերջնացնել տանապանք պատճառող պայմանները»։

Այսպիսով, գուբս և գալիս, վոր մարդկային վոլջ պրակտիկ կյանքի հիմնականը, գուցե և միակ մղիչ պատճառը յեսական՝ անհատական, բիոլոգիական շահն է։ Դուբս և գալիս, վոր մարդը մի անզոր խաղալիք և յուր զգայմունքների ձեռքին։

Եմոցիոնալ տեսության ներկայացուցիչները կամքը կարում են նրա հասարակական-սոցիալական բնույթից և բացատրում

անհատական պատճառներով։ Միաժամանակ կամքից դեն է նետվում նրա ամենահիմնական հատկաններից մեկը՝ գիտակցության նպատակի պարզությունը։ Այս հակագիտական, իդեալիստական թեորիա է։

Միայն մարդուն հատուկ աշխատանքային գործունեության առանձնահատկությունը Մարքսը տեսնում է հենց նրանում, որ այդ աշխատանքում մարդը «կենսագործում է ... իր գիտակցական նպատակը, որին իբրև օրենք ենթարկում է նրա գործողությունների ձևին ու բնույթը և որին նա պետք է ենթարկի իր կամքը»։

Այսպիսով, ուժեղ կամքի տեր անձնավորությունը ոչ միայն իր զգացմունքների գերին չէ, այլ և նրանց տերն ու տիրականն է։ Նա իր զգացմունքները և առհասարակ հոգեկան կյանքի ողջ հյուսվածքը ենթարկում է գիտակցված նպատակներին։ Իհարկե, սրանով մենք բոլորովին էլ չենք ուզում ժխտել զգացմունքների դերը՝ կամային պրոցեսների մեջ։ Այդ դերը խոշոր է։ Մենք ինքներս էլ գիտենք, որ այլ բան է, իրոք վարձ աշխատանք կատարում ենք անկախ մեր ցանկություններից, այլ բան է, իրոք մենք սիրում ենք մեր աշխատանքը, ապրում նրանով։

Վունդտի և մյուսների համար խորթ է այն մեծ հաճույքը, որ առանում է մեզանից յուրաքանչյուրը, թեկուզ և աննշան որոշ պրկանքների գնով, իր հասարակական պարտականությունները գիտակցորեն կատարելիս։

Կամքի վոլյունտարիստական տեսությունը (Ջեմս և մյուսները) մարդու համար բնորոշը համարում է կամքը, որն իբր ինքնուրույն է, անկախ և չի պայմանավորված մտածությամբ և զգացմունքներով։ Ըստ վոլյունտարիզմի կամքն առաջնային է, իսկ գիտակցությունը՝ յերկրորդային, կամայնական։

Ամերիկյան հայտնի հոգեբան Ջեմսը կամքի հակացցողությունը վերծում է հանդիպելիք ուշադրության գաղափարին. «Կամային ջանքը,—գրում է Ջեմսը,—ուշադրության ջանքն է հանդիսանում»։

Կամքի հիմքը կազմում է մեր ուշադրության մոբիլիզացիան (Վունդտի խոսքերով ասած՝ ապպերցեպցիան)՝ ուղղում դեպի բոլոր մատչելի հնարները հիմնական իդեային ենթար-

կելու կամ չեզոքացնելու համար։ Պետք է ուղեղում, գիտակցության մեջ պահել այն փաստարկումները ու հասկացողությունները, որոնք խոսում են հոգուստ մեզ անհրաժեշտ իդեաների, դեն վանելով հակառակին ապացուցող բոլոր փաստերն ու առարկաները։ Այսպիսով, ուշադրության լարումը հնարավորություն է տալիս ուղեղը «զսել» ավյալ իդեայի դեմ խոսող տարրերից և հնարավորություն տալ նրան՝ միակ տիրապետողը դառնալու։ Ջեմսը բերում է ջարդված նավի այն նավաստու որինակը, որը լողում է փոթորկալից ովկիանոսում նավի բեկորների վրա։ Նրա ձեռների մկաններըը սաստիկ ցավում են, վոլջ որգանիզմը ծայրահեղ քայքայվածության վիճակին է հասել։ Նա մեծ բավականության կպատճառի և կքներ, սինչդեռ հարկավոր է կառավարել նավը, լողալ առաջ՝ փրկվելու համար։ Ամեն րոպե նրան կուլ տալու պատրաստ ծովի սոսկալի տեսարանը հետուս է պահում նրան քնով տարվելուց. «Ավելի լավ է ելի մի քիչ տանջվել,—ասում է նա ինքն իրեն,—քան ծովում կործանվել։ Պայքարելու ձգտումը հաղթող է քնելու պահանջից և նավաստին շարունակում է իր փրկության աշխատանքը»։

Այսպիսով, վոլյունտարիստները կամքի հիմքը համարում են մի շարք գաղափարների պայքարը՝ ուղեղում բացարձակապես տիրապետող դիրք բռնելու համար։ Այդ պայքարը տարվում է ուշադրության շնորհիվ, իսկ ինքը՝ ուշադրությունը հոգեկան բոլորովին ինքնուրույն, վոչնչով չպայմանավորվող ֆունկցիա է համարվում։

Ժամանակակից բուրժուական հոգեբանների ամենատարածուն թևն ապակրցեպցիան համարում է կենսուժ, մարդուն տրված աստվածային մի պարգև, վորն ամենակարող և և խորհրդավոր։ Ինչ վերաբերում է տիրապետող իդեայի կենսագործմանը, ապա դա կատարվում է ինքնաբերաբար։

Ըստ Ջեմսի, յուրաքանչյուր իդեային անպայման հաջորդում է գործողությունը, շարժումը։ Միանային շարժումը տիրապետող իդեայի մեխանիկական հետևանքն է. դրա համար էլ հիմնականը կամքի համար՝ ուշադրության կենտրոնացման շնորհիվ մի գաղափարի հաղթանակի ապահովելն է մյուս գաղափարների վրա, վորի հետևանքով ստացվում է այն հոգեկան պրոցեսը, վորին Ջեմսն անվանում է իդեո-մոտոր պրոցես։

Որինակ՝ գետնի վրա ընկած տախտակի վրայով անցնում

ենք առանց զլուխվելու, ուղիղ, համարձակ։ Այլ բան է, երբ այդ սահմանը զրված է անդունդի յերկու յեզրերին և միացնող կամուրջ է հանդիսանում։ Այս դեպքում չվարժված մարդը կաթող է կործանվել, վորովհետև այն միտքը, վոր նա կարող է վայր ընկնել, իսկույն և յեթ վեր է ածվում համապատասխան մկանային շարժման։ Սոսափինների մեջ ֆուտբոլի խաղով տարված դիտող հանդիսականներից վոմանք ակամայից կատարում են ուժեղ շարժումներ, կարծես թե իրենք լինեն խաղացողները և այլն։

Այս և կամքի վոլյունտարիստական տեսությունը։ Այս տեսությունն իր եյությամբ իդեալիստական է, վորովհետև կամքն անջատվում է նյութական մյուս պրոցեսներից ու հակադրվում նրանց, կորվում է յուր սոցիոլոգիական և ֆիզիոլոգիական հիմքից ու դառնում է մի վոր դերբնական, խորհրդավոր, կրոնական մի հասկացողություն։

Մենք վերևում տեսանք, վոր մարդու կամքը զործում է հակական մյուս ֆունկցիաների հետ միասին համերաշխ կերպով և իբրև գիտակցության ֆունկցիա յենթակա չ՝ նրանց բոլոր որենքներին, հետևաբար և ամբողջապես պայմանավորված է ու հանավանք՝ սոցիալ պատմական պատճառների, նա անկախ, ինքնուրույն, թևաթրող ու առաջնային չէ։ «Ենգելսը վերցնում է,—գրում է ընկեր Լենինը,—մի կողմից մարդու իմացությունն ու կամքը, մյուս կողմից՝ բնության անհրաժեշտությունը, և վորևե սահմանման, վորևե դեֆինիցիայի փորարկն պարզապես խաղում է, վոր բնության անհրաժեշտությունն առաջնայինն է, իսկ մարդու կամքն ու գիտակցությունը՝ յերկրորդայինը։ Վերջինները պետք է անխուսափելիորեն և անհրաժեշտաբար համապատասխանեն առաջինին» (Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ», 1933 թ. եջ 214)։

Ինչ վերաբերում է իդեո-մոտոր շարժումներին, պետք է ասել, վոր նրանց զործունեության ընթացքը խիստ սահմանափակ է և քիչ դեպքումն է դուրս գալիս բնազդների սահմաններից։ Բնազդային և լարված զգայմունքների ազդեցության տակ ավտոմատ կերպով կատարվող շարժումները կամքին չեն վերաբերում։ Կամքը գիտակցված, ծրագրված, նպատակահարմար և վոչ թե ավտոմատ զործողություն է։ Քայլ զրանից

Ջեմսը մոտանում է ինքնատիրապետումը, ինքնահավաղությունը, ինքնաքննադատության միջոցով վարող գործողությունները հետևելը, արգելակումը, վարն ակադեմիկ Պավլովի կարծիքով նուրնալես բնորոշ և ուղեղային կենտրոնների համար, վորքան և զրգռվելու ունակությունը: Ուժեղ կամքի տեր մարդը յուր զգայմունքների գերին չէ, այլ նրանց տերն ու տիրակալնն է:

Ա.յսպիսով, կամքի մասին յեղած բոլոր, բազմապիսի խըճըճված տեսությունները, վերջ ի վերջո, հանգում են իդեալիզմին, իսկ վորոշ դեպքերումն էլ անմիջապես տերտերականության: Մեկայն մարքսիզմն է, վոր ապաւիչ կերպով լուծում է կամքի հյության գործավոր պրոբլեմը և ապացուցում բուրժուական տեսությունների անհեթեթությունը:

ԿԱՄՔԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Ջերեխայի շարժումները մինչև յերկուսից յերկու և կես տարեկան հասակը հիմնականում իմպուլսիվ բնույթի յեն: Ջեթե սկզբում իմպուլսիվ և անֆլեկտոր շարժումները կատարվում էին յերեխայի ցանկությունից բոլորովին անկախ, ապա յերկու տարեկանից յերեխան կարողանում է ստեղծանարար տիրապետել յուր մկաններին և կատարել վորոշ շարժումներ (գլխի, աչքի, մկանների և այլն): Իհարկե այդ շարժումները դեռևս պատահական են, չպատճառաբանված և մեծ մասամբ ոչ ֆլեկտային բնույթ ունեն:

Ջերեխաների ցանկությունները հանկարծակի յեն հանդես գալիս տարբեր զրգիռների և դիտավորյալ մեծերի որինակի ազդեցության տակ: Ջերեխան աշխատում է իր մեջ առաջացած յուրաքանչյուր ցանկությունն անմիջապես կենսագործել: Նրա մոտ ցանկության և իրագործման հատվածների միջև բացակայում է տարրդների պայքարը, այսինքն՝ մտածողությունը:

Ջերեխայի կամքի զարգացումը և կատարելագործումը կատարվում է՝ մի կողմից սոցիալական գործոնների ազդեցության տակ, վորոնցից հատկապես պետք է նշել մեր հասարակական առարյան, դպրոցը, պիոներիան, կոմսոմոլը, արվեստը, մյուս կողմից նրա նեղվային համակարգության ամրապնդման հետևանքով:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Վո՞ր շարժումներն են իմպուլսիվ կոչվում։
2. Վարո՞նք են ռեֆլեկտոր և բնազդային շարժումները։
3. Ի՞նչ է կամքը և ո՞րն է նրա նշանակությունը։
4. Տվեցնք կամքի սահմանումը։
5. Մարդկային կարիքների մասին ի՞նչ կասեք։
6. Վո՞րն է մոտիվների պայքարը և նրա նշանակությունը։
7. Ինչպե՞ս կարելի է կամքը ինտելեկտուալ տեսությունը։
8. Ինչպե՞ս կարելի է ամոքինալ տեսությունը։
9. Վո՞րն է կամքի վոլյունտարիստական տեսությունը։
10. Ո՞րն է կամքի զարգացումը։
11. Ո՞րն է կամքի դաստիարակությունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рубинштейн.—«Основы психологии».
2. Психология, под ред. Корнилова, Теплова и Шварца.
3. Կորնիլով.—Հոգեբանության ձեռնարկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I. Հոգեբանության առարկան, պատմությունը և մեթոդները 3
1. Հոգու իմաստասիրական ըմբռնումը . . . 4
2. Հոգու դուալիստական ըմբռնումը . . . 6
3. Մարդկային հոգեբանության մեթոդոլոգիական նախադրյալները 8
4. Հոգու հատկությունները հին հունական փիլիսոփաների մոտ 14
5. Արիստոտելի հոգեբանական մտքերը . . . 15
6. Լայբնից 19
7. Եմպիրիստական հոգեբանություն . . . 21
8. Ընդգրկումնատար հոգեբանություն . . . 22
9. Բուրժուական հոգեբանության ճգնաժամը . . 24
10. Բիհեվիորիզմ 25
11. Պավլովյանության ուսմունքը 26
12. Սարուկասար հոգեբանություն 3
13. Մանկավարժական աղավաղումները և բուրժուական դիտությունը 3
14. Հոգեբանության մեթոդները, մեթոդ և մեթոդոլոգիա 3
15. Ինքնադիտողության մեթոդը 3
16. Որակական օբյեկտիվ ուսումնասիրության մեթոդ . . . 4
17. Ընդգրկումնատար մեթոդ 4
18. Կատարկների ոգտագործելը 4
19. Հոգեբանության այլ մեթոդները 4
20. Հոգեբանության պրակտիկ նշանակությունը . 4
21. Ուսմունք հոգեկան փոխկապակցությունների մասին . . 6

II. Կենդանու խելքը և մարդու գիտակցությունը . .
1. Տրոպիզմներ, բնազդներ և սովորություններ 55, 56,
2. Կապիկների խելքը . . . . . .
3. Մ[illegible]ղու գիտակցությունը և կապկի խելքը . . 6

1. Ուշադրության նշանակությունը . . . 142
2. Ուշադրության ֆիզիոլոգիական պատճառները . 143
3. Ուշադրության տեսակները 145
4. Ուշադրության տատանումները 148
5. Ուշադրությունը և դպրոցի կահավորումը . . 151

VIII. Հիշողություն 155

1. Վերհիշում, պատմական հիշողություն . . . 158
2. Հիշողության ախտաբանությունը 160
3. Հիշողության տիպերը 161
4. Հիշողության տեսությունները 163
5. Հիշողության փիլիսոփայական հիմունքները . 166
6. Ձևերխանների հիշողությունը 168
7. Հիշողություն և ուսուցում 170

IX. Ձևեվակայություն (ֆանտազիա) . . . 174

1. Ձևեվակայության նշանակությունը . . . 174
2. Վերարտադրական ձևեվակայություն . . . 177
3. Դատարկ և անպտուղ ձևեվակայություն . . 179
4. Ստեղծագործական ձևեվակայություն . . . 180
5. Գեղարվեստական ստեղծագործության տեսությունները 183
6. Ձևեվակայության տեսակները 185
7. Ձևեվակայության ախտաբանությունը . . . 191
8. Ձևերխանների ձևեվակայությունը . . . 193
9. Ձևեվակայության դաստիարակությունը . . 195

X. Մտածություն 199

1. Ընդհանուրը և մասնավորը 200
2. Մտածություն և իրականության արտացոլում . 203
3. Մտածության ճիշտ լինելու չափանիշը պրակտիկան է 205
4. Մտածության հիմնական ձևերը 211
5. Դատողություն 216

III. Ակադեմիկոս Պավլովի ուսմունքը պայմանական և անպայման ռեֆլեքսների մասին 68

IV. Ներվային համակարգության ծագումը, զարգացումը և դերը 78

1. Ներվային համակարգության կազմությունը . 83
2. Ռեֆլեկտոր ապդեղ 88
3. Գլխի ուղեղի կիսագնդերը 90
4. Ներզատման գեղձերի մասին 92

V. Զգայնություն 97

1. Զգայնություն, նրա իդեալիստական և մատերիալիստական բացատրությունը, նրա նշանակությունը . 97
2. Զգայնության հատկությունները . . . 99
3. Զգայարանների համեմատական աշխատանքը — սինեստեզիա 102
4. Ընդհանուր կամ օրգանական զգայնություններ . 104
5. Մկանային զգայնություններ 105
6. Տեսողության զգայությունը 106
7. Աչքի ակկոմոդացիան 108
8. Դուլնային զգայնություններ 109
9. Լսողության օրգանը 113
10. Շոշափելիքի կամ մաշկի զգայնությունը . . 115
11. Համի և հոտի զգայարանները 117
12. Վեսթերի և Ֆեխների օրենքը 118
13. Ցերեխայի զգայնությունը 120

VI. Ընդհանում 126

1. Ընդհանում և մտածողություն 127
2. Ընդհանումը և մարդկային սլլակտիկան . . . 129
3. Ընդհանման դասակարգության բնույթը . . . 132
4. Անհատական կենսափորձի նշանակությունը ընդհանման գործում 133
5. Ընդհանման կանխատես լինելը 134
6. Ժամանակի և տարածության ընդհանումը . . 135

VII. Ուշադրություն 142

Аврора — № 37 — 158
Крестьянка — № 34 — 155.
Врубель. Фауст № 34 — 166.
Сирень — № 42. — 178.
Сирень. Натюрморт — № 42. — 188.
Сиреневый куст — № 38 — 199.
Сирень. Натюрморт — № 41 — 214
Этюдик к Одиссее № 44 — 253
Подсолнухи. Натюрморт № 28 — 445.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0023074

ЦЕНА
11
5333